Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

Հներգ
1577

# [illegible]

արարեալ

Գէորգայ Եպիսկոպոսի Բերթումեան Աղա-
մալեանց, միաբանի Սրբոյ Էջմիածնի յա-
ւանդատուր Վարդապետութեան Դիւանի։

ՏՊԱԳՐԵԱԼ ՀՐԱՄԱՆԱՒ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱ-
ՅՈՑ ՍԻՆՀՈԴՈՍԻՆ ԷՋՄԻԱԾՆԻ։

Եւ արդեամբք Բարեպաշտօն Աղայ Թումա-
նու Ալվազեան Բաքուեցւոյ ՚ի յիշատակ իւր
եւ ծնողաց իւրոց։

Ստեփաննոս Փափազեան
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
Բարսեղ

Ի Ս. ԿԱԹՈՂԻԿԷՆ ԷՋՄԻԱԾԻՆ

1857 ամի

04 MAR 2013

1577 - 2014
(4544 / 41)
ԿՖ 1570

# ՅԱՌԱՋԱԲԱՆ ՀԵՂԻՆԱԿԻՆ

Աստուածաբարբառ և հոգեշարժ Աւետարանիչն Մատթէոս յետ պատմելոյ զոմանս առակս՝ բերէ զպատճառն առակելոյ, *Զայս ամենայն խօսեցաւ Յիսուս առակօք ընդ ժողովուրդսն, զի լցցի ասացեալն ՚ի մարգարէէն: *Բացից առակօք զբերան իմ, բղխեցից զծածկեալս ՚ի սկզբանէ աշխարհի (1):

Արդ թէպէտ Տէրն մեր ՚ի բացայայտելն զպայծառութիւն և զօգտակարութիւն Աւետարանին՝ բազմաց իրաց նմանեցոյց, այսինքն, պատուական մարգարտի, գանձի ծածկելոյ, ուռկանի, խմորոյ, և այլն, բայց առակսն՝ մեք մասնաւորապէս խօսիմք, առ ՚ի ըղձալիրաց անձանց համբակագունից զառակսն Քրի. զնշանակութիւս միայն յառաջ բերելով, ՚ի յառաջ եղեալ բանէն բաւականասցուք. զի ըստ որում ասէ՝ բղխեցից զծածկեալսն ՚ի սկզբանէ աշխարհի առայժմ չորից իրաց բերել զնմանութիւն. Նախ՝ աղբեր, որ բղխէ ջուր. Երկրորդ՝ արեգական, որ բղխէ զլոյս. Երրորդ՝ պարտիզի, որ բղխէ զխոտս և զծաղս. Չորրորդ՝ երկրի, որ բղխէ զգանձ:
Արդ նախ՝ թէ առակքն Քրի նմանին աղբեր.

(1) Մատ. ժգ. 34. 35: Սղմ. հէ. 2:

զի որպէս աստղերըն պատճառ են 'ի ցօղոյ և յանձ_
րևաց երկնից, ըստ որում նուաստեալ և ժողո_
վեալ 'ի համբարանս լերանց և բլրոց բղխեն
'ի ծործորս, այսպէս և առաքեալքն Քրիստոսի
երկնային խորհրդովք լցեալք, բղխեցան 'ի ծոր_
ծորս աշխարհիս. ուստի ասէ. * Ակնկալցի իբր
ո՞չ անձրև բարբառն իմ, և իջցեն որպէս ցօղ
պատգամք իմ (1)։

Երկրորդ՝ զի որպէս աստղերըն 'ի վերայ երկրի,
ուր ծածկեալ կան՝ բղխեն, այսպէս և առաքեալքն
'ի վերայ բանին Աստուծոյ, ուր ծածկեալ կա_
յին 'ի սկզբանէ աշխարհի ծածուկ խորհրդով՝
տրամաբանեցան, որ պարունակեն յինքեանս զհր_
րամանն և զպատուիրանն մշտնջենաւոր. վասն ո_
րոյ ասէ Աղբիւր իմաստութեան բանն Աստու_
ծոյ 'ի բարձունս, և մուտք նորա՝ պատուիրան
մշտնջենաւոր։

Երրորդ՝ այս աստղերք երկնայինք՝ 'ի բարձանց հաստա_
տեալ 'ի մերս պարունակօղն առնուակէ զլուսոյ
'ի բերել հոգւոյ մեր զպտուղ, ուստի ասի յեր_
գըս թէ. * Աղբիւր պարտիզաց՝ ջրհոր ջրոյ կեն_
դանւոյ հոսեցելոյ 'ի Լիբանանէ (2)։

Չորրորդ՝ որ 'ի մերս, 'ի ներքուստ բղխէ. բայց այս
ջրհոր 'ի վերուստ 'ի Լիբանանէ հոսէ. եթէ ու_
րուք հոգևոր պարտէզ երաշտ իցէ յառաւա_
ւոր աստղերացն Քրիստոսի, առցէ զջուր 'ի ջըն_





ծուլթի պարտիզի իւրոյ. որպէս հրամայէ մար_
գարէն ասելով. * Առնուցուք զջուր ուրախու_
թեան յաղբերացն փրկութ. (1), այսինքն 'ի փրկէ_
չէն մերմէ. և ինքն ասէր, * Եթէ ոք ծարաւի
իցէ՝ եկեսցէ առ իս և արբցէ (2), զի սա է աղ_
բիւրն յորդ. * որ ելանէր յերկրէն և ոռոգէր
զամ՝ երեսս երկրի (3). և յատկապէս զդրախտն,
այսինքն զեկեղեցին Քրիստոսի։

Ուղխերս այս՝ մի՝ զարմանալի, թէ փոքր գոլով՝
կարիցէ ոռոգել զբոլոր եկեղեցին Քրիստոսի, զի թէ
պէտ քանակութեամբ զգալի աչաց երևի փո_
քր, բայց նորա ոգոյն խորհրդովքն զոր պարու_
նակէ, այնքան է մեծ ունակութեամբ, մինչև
զերաշտացեալ զանձրևային դաշտով։
վասն որոյ՝ նմանի փոքր աստղերն Մուրթքէի, որ
եղև գետ մեծ (4). զի որքան խոկաս՝ այնքան
բազմանայ խորհրդութիւնն, թէպէտ մեր համառօ_
տութեան պատճառ ծաղկաքաղ անցաք։

Վասն այսորիկ ասէ զինքենէ իմաստունն.
* Ես իբրև զխողովակ ջրոյ անհնարին գետոյ. և
թէ՝ Յածեցի առ առաւօտու խորհուրդ նր և խոր_
հուրդ նր յանդնդոց մեծէ։ (5)

Ուրդ արև առաքեալքն Քրիստոսի են իբրև մի մի ան_
դընդախոր ծովք. 'ի յատակ որոյ ոչ ոք կարաս_
ցէ ժամանել մեկնութեամբ բաւականապէս.

(1) Եսայի. ԺԲ. 3։ (2) Յովհան. Է. 37։ (3) Ծննդոց. Բ. 10։
(4) Եսթեր. Ժ. 10։ (5) Սիրաք. ԻԴ. 39։

թէպէտ մեք զայն աղբիւր կոչեցաք ծով, բայց ոչ են երբէք զծով դառըն, այլ երբեմն զըմպե-համ աղբիւր՝ քաղցր:

Ահա այսորիկ աղբիւրք էին ըստ կնքելոյ աղբերըն՝ կնքեալ խորհրդութք · իսկ մեք օժանդակութեամբ Աստուածաբանից, և լուսաւորութ Հոգւոյն Սրբոյ աշխատեալք, բացաք ըստ կարի մերում զհիւթմեղէն անհել համբակաց, զի մի՛ ոք ծարաւ մնասցէ 'ի քաղցրաբուղխ և յուրախարար աղբերացն Քի:

Յայն սակս և զանուն գրքոյս այսորիկ կոչեցաք ԱՂԲԻՒՐ ԲԱՑԵԱԼ · զի որ ոք համբերեսցի ըմպել անօթաբար, պարգևաբեր արասցէ զնորին պարունակ 'ի վայելս փեսային իւրոյ Յի համարձակապէս հրաւիրելով թէ, * Եկեսցէ եղբօրորդին իմ 'ի պարտէզ իւր, և կերիցէ զպտուղս ծառոց իւրոց(1):

Երկրորդ՝ ասացաք թէ՝ Առակքն Քի նմանին ճառագայթից արեգական, զի որպէս ճառագայթք արեգական բղխեալ լուսաւորեն զամ՝ աստեղս, այսպէս և առակքն Քի հանդոյն ճառագայթից արեգական՝ յիմանալի արեգակնէն Քէ բղխեալ՝ նախ լուսաւորեն զամենայն աստեղս, այսինքն՝ զայլաբանական աստեղս աստուածային սուրբ գրոց, փարատելով զխաւարն նսեմութեան և յայտնելով զճշմարտու-

(1) Երգ Եր. Ե. 1:



թիւն, որք կապակցեալք կան 'ի հրաշալի աննօրէնութիւնն Քրիստոսի · ուստի վասն այսորիկ ոչ իմանան հրէայք զմիտս Ածային գրոց· զի ոչ հաւատան 'ի անօրէնութիւնն Քրիստոսի · և այսպէս որքան ընթեռնուն զգիրս օրինաց, նոյն առագաստն Մովսիսի երեսացն՝ որ փռեալ կայ(1), զի Քրիստոսիւ վերանալոց է:

Երկրորդապէս լուսաւորէ զխաւարեալ միտըս մեր, որով իմանամք զկանխասացեալ նախման մարգարէութիւն զՔէ, և զծածկեալ խորհուրդս անօրէնութեան նորա 'ի սկզբանէ աշխարհի · զի խորհուրդն ծածկեալ յազգաց և յաւիտենից, արդ յայտնեցաւ · վասն որոյ ասէ՝ բացից առակօք զբերան իմ, բղխեցից զծածկեալսն 'ի սկզբանէ աշխարհի: Տես՝ թէ առակ անառակին, սամարացւոյն, և մոլորեալ ոչխարին(2), զիա՛րդ լուսաւորանեն մեզ զզանազան խորհուրդս փրկութեան մերոյ · չի՛ք այնքան գործունեայ ճառագայթ զարթուցանող զմիտըս մեր առ հաւատալիսն, որպէս են առակքն, որովք յայտնապէս ճառէ զարքայութէ, զդժոխոց, և զյարութէն և զայլոց · ըստ որում և տեառնն յառակ որոմանց ագարակին · զայսմանէ առակաւոր վարդապետութէ ասէ, *Յաւուր յայնմիկ ծագեսցի Աստուած խորհրդովք իւրովք յերկնից, փառաւոր առնել զմնացորդս

(1) Բ. Կորն. Գ. 15: (2) Ղուկ. ԺԵ. 11. Ժ. 33. ԺԵ. 4:

Յակովբայ (1)։

Որոյ ճրագ մնայցէ առ կայծեալ իցէ և պա_կասեալ ՚իւղոյ, բուռն հարցէ ըմբռնմանէ այսր լուսոյ. զի առօք լուսաւորեալ ՚ի ձեռն շղայից նմանութեանցս, ՚ի խորհրդական նշա_նակութիւն տնօրէնութեանն Քրի մերոյն. զի վասն այսորիկ իսկ առակօք խօսեցաւ Քրիս_տոս, զի թերևս զգալեօքս զիմանալիսն յորդո_րեսցէ զմիտս մեր։

Օրէնս Մովսիսականին ոչ ինչ է ՚ի յիմացման, եթէ ոչ նախ լցեալ ՚ի զգայութիւնս. ուստի որպէս ասէ գագաթն աստուածաբանից մեր Դիոնէսիոս, թէ միտք մեր ոչ կարէ յիմանալի տեսութիւնն յարձակիլ անմիջաբար, եթէ ոչ իւր բնականին և բնակից նըմանութեանն մերում_բառնայցէ։ Աստի՝ այսորիւք առակօք փրկչին աշխարհին ակնարկութե մերում ծածկել կամեցաւ. այլ զի՝ դժուարաւ մնասցէ ՚ի խնդրողական ռամկին, յաղագս որոյ պարզաբանութեամբ իբրու ձեռամբ ածել կամեցաք զհամառօտական ՚ի լոյս խորհրդոց Տեառն։

Նաեւ երկրորդ՝ թէ առակքն Քրի նմանին պար_տիզի. զի որպէս պարտէզն բերէ զզանազան ծաղ_կունս և զծառս, այնպէս Տէրն մեր կազմեաց զայ_սոսիկ իմանալի պարտէզս, որք բերեն զզանա_զան խորհուրդս ծածկեալս ՚ի սկզբանէ աշխարհի։

(1) Եսայի. փ. 2։



Որ որք ըղձան մտանել յայս պարտէզ, մտա_դիւր դիմեսցեն. զի թէպէտ երբեմն էին փա_կեալ դրունք նախամարդութե, բայց արդ բացեալ եղեւ բանալեօք մեկնութե. բայց ՚ի մտանելն զգուշասցի դիմել ՚ի ծառն գիտութե. և մի՛ ըստ հետաքրքիր անձանց առ եպերելոյ զեր_կամտեացն բարբանեաց զմահ, և այնու որպէս զադամ ունայնաձեւն ելցէ ՚ի հոգեւոր եդե_մականս պարտիզացս(1)։

Օր ոչ եթէ մտացածին բանիւք յարձակե_ցաք ՚ի տեսութի սորա, այլ վերամբարձ բարբա_նագէտացն հետեւելով կարծեաց. այլ զանձին օգուտ գիտելով ՚ի զմայլումն հոգւոյն բար_գաց մեղուաջան երկօք քաղեցաք զծաղիկս ա_ռաքինութեանց, և փութացաք ՚ի ծառն կենաց քաղել անտի զպտուղս պատուական խրատու և վար_դապետութե Քրի, զի կերիցէ գործով կա_տարելով և կեցցէ յաւիտեան։

Մտցես ՚ի պարտէզս յայսոսիկ, եթէ կցես բաղձ զբօսանէր. զի տեսցես աստ՝ թէ որպէս ծաղկեալ է որթն յիսուս, որ բերէ զհոտ անմահութեան. և թէ որպէս ծաղկեալ է աա_նունենին Քրիստոս, որ բերէ զպտուղ բարե_խառնութեան. քանզի ՚ի բանէն. Ժամ փայտք մրգաբերք(2), այսինքն նոր կտակարանք առ հը_նովն, զոր եւ մեզ մայր մեր աշ եկեղեցի. եթէ

(1) Ծնունդ. Գ. 23։ (2) Երգ. Երգ. Է. 12։

մինչեւ ուրեմն ՚ի սա, մի՛ հանգոյն անասնոց խո-զից կորացեալ գլխով գետնանախանձ մոլու-թեամբ ապականեր զսա, այլ որպէս հաւատա-րիմ պարտիզպան հաւաքեա՛ զպտուղս սրբին ա-ռաքինութեանց, և պահեա՛ եղբօր որդւոյ քոյ Յիսուսի, * զի բերցես զհազարս մեծին Սո-ղոմոնի(1), որ անդրէն դարձուցանէ քեզ զեր-կերիւրս ՚ի վարձ կրկնապատիկ :

Այլ և չորրորդն թէ՝ առակքն *Քի՛ նմա-նին զանձաւորից երկրի. զի որպէս հանքաւորեր-կիրն բղխէ յինքենէ զարծաթ և զոսկի և զա-կանս պատուականս, նմանապէս և առակքս բղխեն զարծաթ՝ բարոյական մեկնութեամբ. զոսկի՝ այլաբանականաւն. և զականս պատուա-կանս՝ խորհրդականաւն: Վասն որոյ ասէ ՚ի ձեռն առակացն՝ բղխեցից զծածկեալսն ՚ի սը-կզբանէ աշխարհի:

Արդ՝ եթէ խցես քաջ մտադրութեան, հեզա-բար ընթերցմամբ պարտիս արտահանել աստի զհաւատ՝ այլաբանութ̅, զսէր՝ բարոյականութ̅ և զյոյս՝ վերածականութ̅. բայց որպէս զերկս ծանունս կրէ, որ ջանայ ՚ի բովուց երկրի արտա-հանել զգանձ, այնպէս և մեք ծանր աշխատութ̅ զմիտ առակօք խոր ընդ հողով ծածկել զգանձս աստուածային խորհրդոյ՝ պարզաբանել ՚ի յայտ ածաք ձեռնտուութ̅ աստուածաբանից.

(1) Երգ. Եր. Ը. 12 :



քանզի. *Բանք տեառն են բանք սուրբք, որ-պէս զարծաթ ընտրեալ և սրբեալ յերկրէ և պարզեալ եօթնպատիկ ՚ի հողոյ (1):

Ուստի՝ խորհուրդ առակացս, որք երբեմն էին զանձ ծածկեալ, այժմ եղեն գանձ յայտ-նեալ. զի ՚ի սմա գտանի որդին Աստուծոյ Յիսուս, յորում գանձք ամ̅ իմաստութեան և գիտութեան ծածկեալք կան: Այսպէսն * ուր գանձ ձեր յիսուսէ, անդ և սիրտք ձեր եղիցին(2). և ո՞ւր իցէ, եթէ ոչ՝ աստ:

Մի՛ ուրեմն սոսկ տեսութեամբ բաւականա-ցեալ, որպէս ՚ի հայելւոջ զդէմս, զանցանի-ցէք, զի այն՝ մանկաբարոյ անմտաց վայելէ, որք զդոհար քարն լոկ համարելով ՚ի բաց ձգեն, ըստ այնմ, *Իբրև քարի փորձառութե̅ լեցի ՚ի նոսա և ոչ յանձեցին ՚ի բաց ձգել զնոսա (3):

Յայսպիսեացս զգուշացեալ Յիսուս առակօք աւանդեաց զվարդապետութիւն իւր, *զի մի՛ մար-գարիտն իւր արկանիցի առաջի խոզից(4). վասն-որոյ ասէր, թէ որք արտաքինքն են՝ ամ̅ ինչ առակօք լինին, զի տեսանելով տեսանիցեն և ոչ տեսանիցեն. այսինքն, զզգալին միայն նշմարեն, և առ իմանալ-ւոյն՝ ոչինչ փոյթ է նոցա. զի ոչ ունին զաչս և զա-կանջս ներքինս. ուստի և նախապատիւ աստուա-ծաբանն ասէ, Խորհրդական առակացն բա-

(1) Սաղմոս. ժա. 7 : (2) Ղուկաս. ժբ. 34 :
(3) Սաղմ. ճժէ. 22 : (4) Մատթ. է. 6 :

նից է յոյժ վայելուչ ՚ի ձեռն անճառելւոյն և անքըն-օրինակաց թագուցանել, և անմատչելի բազմաց կացուցանել զորբ ընն և զթագուծնն գերբարգաղ իմացութեանն զանճառութիւն, քանզի ոչ ամ որ է Սէգն, և ոչ ամենեցուն է գիտութիւն, որպէս առէ տեղէ գերբարձեան բարբառնին:

Այս՝ պատճառ է ձեզ ընդ առաքեալն զայս զանձ յայտնեալ, ծածկեալ ստանալ առնելով, զի մի՛ և զմեզ տրկանիցէք ընդ մեղադրանօք իբր արկանող զմարգարիտն քրիստոսի առաջի խոզից:

Տես թէ՝ լողակք քանի՞ տաժանելին ՚ի գիւտս մարգարտաց. իսկ որ մնայցէ յանդորր այծուլ անաշխատ գտցէ զգեղեցիկ մարգարիտն Քրիստոս:

Իսկ արդ՝ չորեքկին նմանութեամբ ըստ մասին ցուցեալ զառակացս զօրութիւն բաւականասցուք. մի՛ հեղգար ո՛վ խանդակաթ հոգևոր բանից, առ ՚ի դիմել յառակսն Քրի. զի թէ ծարաւի ես շնորհաց, ահա՛ աղբիւր բացեալ. և եթէ խաւարեալ ես տգիտութեամբ, ահա՛ իմաստութեան ճառագայթ ծագեալ. իսկ եթէ սովեալ ես ՚ի մահ, ահա՛ պատրաստեալ պատրոյն առ ընցեալ. ապա եթէ աղքատ ես հոգւով, ահա՛ հանճարոյ և առատածաւալութեան գանձ բացեալ:
Տես ուրեմն՝ թէ քանի՞ յօժարութեամբ և քանի՞ սիրով պարտիս ընթեռնուլ. և ՚ի վերայ այսր ամի գիտելի է:

Նախ՝ զի առակն Քրի դրեալ խորագոյնք,



՚ի բացում աւելիս առք մասս մերայոց զմեղլով յառակացն խոկութեան, միայն ընդ կարծեաց լողալով անցաք, զոր և բազումք յիմաստնոց առնեն. յայնակիս բազմապատկին մեկնութիւնք գրոց, զի ոչ ըստ կամաց մարդկան տուաւ մարգարէութիւն երբէք, այլ ՚ի Հոգւոյն սրբոյ կրեալք խօսեցան մարդիկ յԱստուծոյ:

Այսորոյ դժուարին է խոկութիւն վերահասուգոյն, զի եթէ առակքն սողոմոնի առ նորաթէ կոչեցան անքննելիք, քանի՛ ևս առակքն Քրիստոսին սողոմոնի. վասնորոյ եթէ յառակս իմաստութեանն Զօրն ոչ կարասցես զմտանս աւելին հանդերձ մեկնութեամբ ՚ի միտ առնուլ, այլ մնացէ տարակուսութիւն, և զմեզ անբաւական համարելով՝ երկիւղածութեամբ անցցուք:

Գիտելի է երկրորդ՝ զի չորրորդ զառակքն Քրի յամենայն աւելիս հերձուածողք մարտ ունին, բայց մեք ոչ յառաջ բերաք զկարծիս նոցին՝ վասն էրից պատճառաց. նախ՝ զի մի՛ ապականեսցուք զմիտս համբակագունից. երկրորդ՝ զի մի՛ ապականեսցուք զշրթունս մեր. *զի որ մերձենայ ՚ի ձիւթ՝ աղտեղանայ (1):

Սակայն *մի՛ յիշեսցին անուանք նոցա ՚ի շրթունս մեր(2) ուղղափառացս: Երրորդ՝ առ համառօտութեան զանց արարաք. զի ոչ էր դիտաւորն մեր լայնատարած մեկնել զառակսն, այլ

(1) Սիրաք. ժգ. 1: (2) Սաղմոս. ժե. 5:

միայն զմտաւն ցուցանել . և զի 'ի հաստատուելն զճշմարտութիւն՝ ստութիւն ինքնին կործանի : Իսկ չորրորդ՝ գիտելի է, որքան առ պատճառ մեկնութեան առակացս. զի ոչ ինքնակամ փութացաք յայս. նաև ամենևին ոչ ունէաք զխորհուրդ ձեռն արկանելոյ 'ի սոյն, բաւական համարելով զտեսութիւն Րաբունապետացն՝ որք յառաջքան զմեզ. բայց սակայն՝ սէր մօրս մերոյ մեծի աթոռոյս ամ Հայոց Էջմիածնի, գըրաւիր օշականցի տր Երեմիա արքեղայն՝ միահարեալ 'ի գեղ առակացն Նրսի, յաղերս մատուցեալ խնդրեաց 'ի մէնջ 'ի մի ժողովել զամ առակսն աւետարանական համառօտ բացատրութեամբ 'ի յուսումն իւր և փափագողաց:

Իսկ մեք թէպէտ չէաք առ այս բաւական, բայց զի մի՛ անկցուք 'ի դատաստան քանքարաթաքոյց ծառային (1), փանորոյ՝ ապաւինել 'ի շնորհսատու մարդասէր Սբ Հոգին Աստուած, և 'ի տեսութիւն Աստուածաբանիցն, ժողովել զամ զառակսն՝ միադրեցաք 'ի սոյն մատենի կարճառօտ տեսութեամբ . յորում եթէ գտցին բանք ինչ պիտանիք, այն՝ սբ Հոգւոյն է պարգևք . իսկ եթէ անպիտան՝ մերոյս տկարութեան տարել զայն , ողջ լերուք :

Ձերում Ազնուութեան
ծառայ պատրաստական
Նախիջևանցի Պետրոս Ա. Ղամալեան :

(1) Մատ . ԻԵ . 30 :



Յորդորակ յառակաւոր բանսն Նրսի :

Մա՛րթ է նորոց՝ գիտել զիմաստ՝ և զհանճար,
որովյանճար՝ զոգւոյ բնչեան՝ գոյն լծար :
Նա ընդունել՝ զարգասուած բանից՝ իմաստնաբար,
առաքարող գոլ՝ զգործ յետին՝ կրել արդար :
Տեղեկանալ՝ խորին բանից՝ և առակաց,
'ի մի առնուլ՝ զհանճար ծերոց՝ խոհականաց,
Րաբել 'ի նոյն՝ զիմաստ սրբոց՝ հրահանգաց,
խոկալ այնու՝ զոր զգիտեր՝ զօրէնս կենաց :
Ուէ՛ր այս՝ նա՛նուէ զառաքս՝ բանին փառաց,
զոր 'ի կարծել՝ չիմաստ զհանճարէ՝ արդարեղինաց :
Սիրով նոքա՝ զունէր ձնել՝ զզարդ առակաց,
զի նմանս՝ ըմբռ բանին՝ զնորքեռուլեաց :
Իմա՛ զառաքն՝ նորոգեցուլեան՝ զրաւնս յաղագին,
որոց դայն՝ լինի ձեղ նոսա՝ 'ի խորս նորին :
Ս֊ այսորիկ՝ ընթեր երա՝ զբանաւլին,
զի 'ի տեղւոյ՝ հնացեն փակ՝ ընդեմ այլոց :
Նշե և ա՛ռ՝ էն զամ գոհարս՝ անապական,
որով զմին՝ որպէս թագի՝ մի բանական :
Րաբա՛ ուրեմն՝ յետամնէ նորոց՝ 'ի ձեր հանճար,
կարել վարուր՝ զոր ծայրեալ՝ անդուգական :
Պարգևել ունի՝ էն զարդս երկնից՝ ընդ ամենայն,
որս զարդարէն՝ զավեսարան՝ բանին կենաց :
Ա բե բոցցես՝ զոխրոր նոյն՝ նորքեալ մեղաց,
ձառագայթեն՝ զլոյս իմաստից՝ և շնորհաց :
Պայծառացն զինք՝ աւետարան՝ զոր սեր խառնվեաց,
է ամրացեալ՝ ախորժակ՝ այս առակաց :

Ընդ ՚ի մէն ամենայն ՚ի յայսմ՝ թագաւորելոց,
անիրաւութեանն են ՚ի չարին՝ հանդերձելոց,
Տէ՛ր փառաց Հօր՝ որ Գթութեամբ զայս յաղթեաց,
Եւ և Որդւոյն՝ և ՍԲ Հոգւոյն իւր փառաւորեաց:
Ի Հաւատոյ՝ ՍԲ Լուսաւորչին՝ հիմնադրեաց,
հայրերց դասուց՝ մերին պարզ՝ ամենագեղաց:

# ԵՂ ՃԻՒՆ ԻԲ ՑԵԼԻ

Յայտնութիւն բանից քոց լուսաւոր է և իմաստուն առնէ զտղայս։

Սաղմոս։

# ՑԱՂԿԱՑ ՏԵՍԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՒԱՏՈՅ։

## ԳԼՈՒԽ Ա։

Փրկիչն աշխարհի տէրն մեր Յիսուս Քս՝ մեղաւորաց բերանովն հեշտաբար յանդիմանէ ասելով ,

Զի՞ կոչէք զիս տէր տէր , և զոր ասեմ՝ ոչ առնէք։
Ղուկ. Զ. 46։

## ՍԿԶԲՈՒԹԻՒՆ

Մեծ նախատինք է հաւատոյ զանձն զոլ տէր, և զոր ասէն՝ չառնել․ ըստ այսմ գանգատէ տէրն մարգարէիւն․ *Եթէ տէր եմ , ո՞ւր է պատիւն իմ , և այլն (1)։ Պատիւ Տեառն կայանայ յերկնչելն ՚ի նմանէ, և յառնելն զհրամանս նորա․ բայց կեղծաւորքն ըստ Պօղոսի բանիւ հաւատան , և գործովք ուրանան․ հաւատն այնպիսեաց մեռեալ է՝ և ոչ է կենդանի, որպէս ասէ առաքեալն Յակոբոս , զոր օրինակ․ *Մարմին առանց հոգւոյ մեռեալ է , նոյնպէս և հաւատք առանց գործոյ (2)։

Զի որպէս նիւթն առանց տեսակի ոչ կա-

(1) Մաղաք. Ա. 6։ (2) Յակոբ. Բ. 26։

րէ կայանալ, այսպէս և հաւատք առանց գործոյ։ Ծանիցի հաւատքն ունի ընդ ինքեան զգործն, (մանաւանդ սիրոյ.) որպէս հոգի և տեսակ. զի որպէս մեռեալ մարդն ոչ է մարդ, այսպէս և մեռեալ հաւատքն. վասն որոյ նմանի հաւատոյ դիւաց, որ ոչ է ստուգապէս հաւատք, զրկեալ գոլով 'ի սիրոյ։ Հաւատքն անգործ, նմանի աներևոյթ և անպատրաստ երկրի. խակ գործունեայն՝ լուսաւորելոյն և պատրաստելոյն ամենայն զարդուք։

Հաւատքն գործունեայ՝ սահմանի յառաջելոյն՝ հաստատութիւն յուսացելոց իրաց. և յանդիմանութի՛ այսինքն երևեցուցանող՝ որոց ոչն երևին. ուստի նմանի աչնի և պայծառ դիտակին. զի որպէս նա զաներևոյթսն և զհեռաւորսն յանդիման առնէ, այսպէս և հաւատքըն՝ զմտայինսն և զծածկեալսն յաչաց հոգւոյն՝ ըստ նարեկացւոյն յայտնէ և առարկէ։ Սա է իմաստութիւն վերին, որովք տեսանեմք զերկնայինսն. զորմէ ասէ քնարն Հոգւոյն սրբոյ. * Դու⁽?⁾ տէր զանյայտս և զծածկեալս իմաստութե՛ քում յայտնեցեր ինձ(1). այսինքն հոգւով սրբով և հաւատով, վասն որոյ՝ Տէրն մեր զերկու աչնիւ նմանութիւն առ այս նիւթ յառաջ բերէ։

Նախ՝ նմանեցուցանէ վառեալ ճրագի. ըստ այնմ,

(1) Սաղ. ծ. 7։



* Ճրագ մարմնոյ աչն է(1), խակ ճրագ հոգւոյն՝ հաւատն։ Եթէ աչն քո առատ է. առատութի՛ ճրագին է լուսաւոր գոլն, որ նշանակէ յատկապէս զանէրն⁽?⁾, զողորմութիւնն, զիմաստութիւնն և զայլ բարեգործութիւնս. ամ՟ մարմինդ լուսաւոր եղիցի. նոյնպէս և հոգին. այսպիսի էր լապտերն իմաստուն կուսանացն առատ իւղով։ Ապա եթէ աչն քո չար է, այսինքն խաւար. նշանակէ զմեռեալ հաւատքն ըստ խորհրդոյն. ամ՟ մարմինդ խաւարին եղիցի. այսինքն խաւարային։

Խորհրդապէս նշանակէ զբոլոր անձն և ըզհաւատ մեղաւորայն. այսպէս էր լապտերն յիմար կուսանաց(2). զի որպէս ճրագ առանց իւղոյ խաւար է, այսպէս և հաւատ առանց գործոյ. վասն որոյ ըստ աւետարանական իրատուն պարտիմք զգոյշ լինել, գուցէ լոյս հաւատոյն՝ որ 'ի մեզ է, խաւար իցէ(3), այսինքն՝ շիջեալ 'ի սիրոյ և անտեսակ։

Այլաբանօրէն՝ ճրագն նշանակէ զգլխաւորն եկեղեցւոյ. եթէ առատ իցէ իւղով իմաստութեան և սիրոյ՝ նախ ինքն, և ապա բոլոր եկեղեցին լուսաւորին և պայծառանան. ապա եթէ նուաղեալ իցէ յիւղոյ իմաստութե՛, սիրոյ, և այնու եղեալ չար, նախ ինքն՝ և ապա բոլոր եկեղեցին 'ի խաւարի եղիցին. այսպիսի են առդէտ⁽?⁾ հովիւքն։

(1) Մատ. զ. 22։ (2) Իե՟. 3։ (3) Ղուկ. ժա. 35։

Երկրորդ՝ նմանեցուցանէ Տէր զգործունեայ հաւատն վիմի՝ որ է հաստատուն. իսկ անգործըն՝ աւազոյ, որ է դիւրասասան. այսպէս ունելով բանիւն: Ամենայն որ լսէ զբանս իմ (1), այսինքն՝ հաւատայ բանից իմոց. քանզի հաւատք 'ի լըոյ են ըստ առաքելոյն. և լուր՝ 'ի բանէն Քրիստոսի (2). և առնէ՝ որով տեսականաւորի հաւատն, նմանեալն առն իմաստնոյ, որ շինեաց զտուն իւր 'ի վերայ վիմի. յայտնի է իմաստնոյ 'ի կերպարանըն զտուն՝ հաստատուն զընել զվէմն և զհիմն: Որ հաւատայ և առնէ, իմաստնոյ է նման. զի դնէ զհիմն տան իւրոյ 'ի վերայ վիմի. վէմն է ինքն Քրիստոս. իւրն իմաստութն զհիմն եդ. *բայց զի հիմն այլ ոք ոչ կարէ դնել քան զեդեալն, որ է Յիսուս Քս. (3), եթէ ոք շինէ 'ի վերայ այսր հիման, ոչ խախտի տունն: Նուիրապետականբան-քըն են գեղեցիկ հոգևոր քարինք՝ որք եդեալք 'ի վերայ հիմնական քարին Քրիստոսի, անշարժ կայանան: *Դուք դուք իբրև զքարինս կենդանիս շինիջիք տաճար հոգևոր (4):

Որ հաւատայ և առնէ՝ նմանի Աստուծոյ, որ զհիմն տան իւրոյ հաստատուն դնէր, *Ի ժամանակի՝ յորժամ հաստատուն դնէր զհիմունս երկրի (5), ընդ նմա էր իմաստութիւն անուանեղծ:

(1) Մատթ. Է. 24: (2) Հռոմ. Ժ. 17: (3) Ա. Կորնթ. Գ. 10. 11:
(4) Ա. Պետ. Բ. 5: (5) Առակ. Ը. 29:



Իջին անձրևք: Նշանակէ զօդային դևսն, որպէս ասէ յԵրգս զայս անձրևէ. *Անձրևք անցին և գնացեալ մեկնեցան (1). ցուցանէ թէ սկիզբն փորձութեան լինի 'ի դիւէն, բայց ոչ առանց Այ նախախնամութե. վասն որոյ ապաւորի յանձրև՝ որ 'ի վերուստ տեղայ:

Յատկապէս նշանակէ աղբերըն դիւին զխոնաւագոյն մեղս մարմնականս, զոր հանգոյն անձրևոյ կաթեցուցանէ 'ի միտս մարդոյ: Խաղացին գետք. այլովքըն հանդերձ. յորձանք գետոց պատճառին յանձրևաց. նշանակէ թէ 'ի գալ դիւին յառնեն մեծամեծ փորձութիւնք, գետն բարոյականապէս նշանակէ զհեղեղս մեղաց ախտին, զոր յարուցանէ 'ի սրտի ազդումն և անձրևն դիւին:

Այլաբանօրէն նշանակէ զհալածանս բռնաւորաց ըստ այնմ. *Ահաւասիկ ես ածեմ 'ի վերայ դոցա զջուր գետոյն, զհզօրն և զյորդն (2). այսինքն՝ զարքայն կուապաշտից, զորս էած 'ի վերայ Իսրայէլի. առքս սաստկական անձրևօք դիւին դրդման:

Շնչեցին հողմք: Հողմք են ունայն բաղձանք աշխարհի մեծութեանց, որք որպէս զհողմս հանգոյն աերևոյ միշտ շարժեն զմիտս մարդկան բայց առաքինի այրն ոչ սասանի 'ի նոցանէ՝ զի հիմն հոգևոր տան իւրոյ 'ի վերայ անշարժ վիմի հաստատեալ է. այլ ըստ սալոյկեանց՝ պատ-

(1) Երգ. Բ. 11: (2) Եսայի. Ը. 7:

բաստէ զինքն և խնդրէ ևս տեղալ։

Այն որ լսէ և ոչ առնէ, նմանեսցի առն յիմարի։

Այդ՝ որ հաւատայ և ոչ առնէ զոր հաւատայն՝ ստուգապէս յիմար է. զի հաւատոյ յանշարժ վէմըն՝ և շինէ ՚ի վերայ աւազոյ. հաւատոյ զերկնաւորն՝ և գործէ զերկրաւորն. այսպիսւոյ հաւատըն է անպտուղ և նման հաւատոյ դիւաց. զինչ օգուտ է ունել զճրագ շիջեալ և զաչս խաւարեալ։ Նա այսպիսիս եթէ տեղայ անձրև մեղաց ախտին, գոլով կաւակերտ տունն՝ փլի. եթէ գետեն գետք բռնաւորաց հալածանաց՝ գոլով աւազահիմն՝ կործանի. եթէ գայցեն մրրիկք փոթորկեալք բազմանաց մեծութեանց, լինի նոցա ՚ի կոխումն. եթէ շնչեսցէ պատրանք աշխարհիս՝ շարժէ ՚ի տեղւոյն, ոչ ևս երևի տեղի նորա. զայսպիսիս յանդիմանէ տէրն ասելով, * Զի՞ կոչէք զիս տէր տէր, և զոր ասեմն ոչ առնէք. ընդէ՞ր հաւատայք, և ոչ առնէք զոր հաւատացէք, այսինքն՝ ճանաչելով զճշմարտութեանն ճանապարհ, և յետս կալով ՚ի մի պատուիրանէ. և այսու բառ կամագէտ ծառային բազում գանից զանձն պարտաւորելով. քանզի պատիժ հաւատացելոց մեղաւորին խստագոյն լինի քան զանհաւատին։

Նաև դու զոր ընթեռնուս, ՚ի մի՛տ առ. և զոր ուսանիս, գործով կատարեա. զի մի՛ գուցէ և դու յանդիմանեսցիս ՚ի տեառնէ՝ թէ զի՞ կոչէք զիս տէր տէր և այլն։



# ՅԱՂԱԳՍ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ

## ԳԼՈՒԽ Ա.

Տէրն մեր Յիսուս Քրիստոս, միջնորդն հաշտութե՟ և խաղաղարար որդին Այ, յօգուտ մեզ հրամայէ ասելով։

Եթէ եղբայր քո ունիցի ինչ ինչ զքէն՝ նախ հաշտեա՛ ընդ նմա, և ապա եկեալ մատուսցես զպատարագ. Մատթ. Ե. 23։

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Հաշտութիւնն է առաքինութիւն ազնիւ, որ զբաժանեալսն խռովութբ՝ անդրէն միաւորէ և շաղկապէ. չորեքկին կարէ լինել խռովութիւն, այսպէս և հաշտութիւնն՝ ընդ Աստուծոյ, ընդ հրեշտակաց, ընդ մարդկան և ընդ անձին. վասն զի մարդն մինչ մեղանչէ՝ զԱծ հայր գթած յարուցանէ ընդդէմ ինքեան արդար դատաւոր. որ ՚ի բաց եդեալ զգութ հայրական, որպէս խռովեալ յառնէ անողորմութբ իբրև յուլաղ, և իբրև զարթուցեալ ՚ի դատաստան վրէժխնդրութեան, որպէս երբեմն ՚ի վերայ տանցն յուդայ և եգիպտի. ուսանի ապաւանայ. * Նա իբրև զխռով եղէց եգիպտի, և իբրև

զխայթոց տանն յուդայ(1)․ յորմէ այլազգ չէ՛ք հնար զերծանելոյ, բայց եթէ զղջմամբ, պատարագօք և աղերսանօք․ և քանզի ամենեքեն մեղանչեմք, որով խռովեմք զտէրն, վասն որոյ հարկաւորիմք զերեսս այնր ահեղ դատաւորի աղաչել բազ յօրայ, և այս 'ի ձեռն պատարագաց և ընծայից (2)։

Նախ՝ երեքկին է պատարագն, իրական՝ որ լինի մատուցմամբ գառինն ա̃յ, բանաւոր՝ որ է աղօթքն, որ 'ի սեղանոյ հոգւոյն՝ կամ՝ յոսկի բուրվառէ սրտին առ աստուած ելանէ․ զայսմանէ սաղմոսերգուն ասէ։ *Պատարագ աստուծոյ հոգի խոնարհ(3)։

Իսկ երրորդ՝ պատարագ մահացուցման, այն է ապաշխարութիւն, որով ըստ սրբոյն Գրիգորի 'ի ճգնաւորական վարս՝ հրով սիրոյն ա̃յ ողջակիզեալ մատուցանի աստուծոյ՝ որպէս բոլորապտուղ պատարագ կենդանի։

Նախ՝ յերից աստի որով և իցէ, եթէ մատչիցի որ հաշտեցուցանել զդատաւորն արդար, հարկ է նմա ոչ ունել ոխս, կամ՝ չարախօս և կամ՝ խէթկալ․ զի մի՛ դուցէ ամբաստանելով շղինցեն զայս դատաւորի 'ի հնայել յընծայս մեր․ ահա՛ առ այս հարկէ Տէրն, երթալ նախ հաշտիլ ընդ եղբօրն, և ապա մատուցանել զպատարագն։

(1) Ովսէ․ ե․ 12․ ժէ․ 6։ (2) Յոբ․ խբ․ 8։ (3) սղմ․ ծ․ 18։



Այս միտ՝ նախ քան զէական բան պատարագին՝ որով փոխանակելոցն ընծայն 'ի խորհուրդ, հրամայէ եկեղեցին զողջոյն հաշտութեան ընծայել միմեանց, զի մի՛ զրկեսցուք յառաջիկայ շնորհաց սրբոյ պատարագին․ ամբաստանելով զմիմեանս՝ զի թէ ոչ թողուցումք միմեանց, և ոչ հայրն երկնաւոր ընկալեալ զպատարագն թողցէ մեզ զյանցանս մեր։ Ոչ ասաց թէ՝ եթէ ունիցիս զխէթ․ զի որ ունի զխէթ՝ ոչ է պէտոյ սպասել հրամանի, այլ ինքնին փութալ 'ի հաշտութիւն որպէս պարտաւոր 'ի վճարել ըզպարտս իւր, և առ 'ի լաւապէս տպաւորել 'ի միտս մեր զբանս իւր, յաւել տէրն մեր և զօրինակ իմն հարկաւոր՝ Ե՛ր իրաւախոհ։ այսինքն իրաւունս խոկա՛ ընդ ոսոխի քում։

Ոսոխն է խէթ ունող․ յայնժամ իրաւունս խոկամք, մինչ համարիմք զմեզ պարտաւոր հաշտելոյ ընդ նմա, կամ՝ վճարմամբ, կամ բանիւ և կամ խոկալով թէ գուցէ զառիթն 'ի մէնջ իցէ ընկալեալ քինակալութեան, կամ պարզապէս խոնարհելով առաջի նորա․ որ է լրումն արդարութեան․ ըստ այնմ, *Թո՛յլ տուր, զի այսպէս վայելէ մեզ լնուլ զա̃մ արդարութ̃ի (1)․ այսինքն խոնարհութեամբ․ իսկ թէ որ ասացէ՝ նա պարտի խոնարհիլ, ոչ է իրաւախոհ, այսինքն՝ միաբան և համախորհուրդ ընդ ոսո-

(1) Մատ․ գ․ 15։

կի իւրում(1)։

Բազումք են ոսոխք մեղաւորաց․ նախ՝ որդին աստուծոյ, որ զոմանց ուրանայ առաջի Հօր, և զոմանց ամբաստանէ․ եթէ կամիս՝ թէ բա֊րեխօս լիցի սա ըզքէն՝ (որպէս և զեկեղեցւոյն հասարակաբար բարեխօս է միշտ, ըստ այնմ,* որ է ընդ աջմէ աստուծոյ, որ և բարեխօս իսկ է վասն մեր(2)․ և ըստ Յովհաննու, *Եթէ ոք մեղիցէ՝ ունիմք բարեխօս զարդարն և զա֊նարատն (3)․ այսինքն երբ զղջանայ) պարտիս զղջալ ՚ի մեղաց, և պահել զամենայն պատ֊ուիրանս նորա․ ապա թէ ոչ՝ ունի խէթ զքէն որպէս թշնամի։

Արդ՝ ուսկամ թէ որպէս իրաւախոհ լինել պարտիս․ այսինքն հաշտ և միաբան․ զի մի՛ ՚ի մատուցանելն ըզպատարագ․ քոյ ամբաստանե֊ցէ զքէն առաջի Հօրն երկնաւորի։

Երկրորդ՝ հրեշտակք, թէ վասն այլոյ՝ որք մինչ տեսանեն զպահպանեցեալն յինքեանց արհամարհեցեալ ՚ի մէնջ, ամբաստան լինին ա֊ռաջի երկնաւորի Հօրն ըստ այնմ․ *Զգոյշ լե֊րուք, գուցէ արհամարհիցէք զմի ՚ի փոքրկան֊ցդ յայսցանէ․ զի հրեշտակք նոցա հանապազ տեսանեն զերեսս Հօր իմոյ, որ յերկինս է(4)․ եւ թէ վասն մեր՝ որպէս ամբաստան եղեն ըզ բաբելոնէ՝ որոյ էին վերակացուք, ասելով՝

(1) Մատ․ Ե․ 32։ (2) Հռովմ․ Ը․ 34։ (3) Ա․ Յովհ․ Բ․ 1։ (4) Մատթ․ ԺԸ․ 10։



*Բժշկեցաք զբաբելոն՝ և նա ոչ բժշկեցաւ(1)․ քանզի պահապանք մեր տեսանեն՝ որ ինչ է յի֊րենց կողմանէ․ իսկ եթէ մեք յամառիցիմք ոչ համահետեւելով ազդմանց նոցա, յայնժամ ամբաստանեն զմէնջ․ ապա պարտիմք իրաւա֊խոհ լինել ընդ նոսա, զի և նոքա բարեխօս լի֊ցին՝ որպէս զէմէ, ըստ այնմ,*Մինչև յերբ ոչ ողորմիս երուսաղէմի(2)։

Երրորդ՝ ոսոխք են սրբքն՝ որք չարախօս լի֊նին զմեղաւորաց․ ըստ այնմ,*Մինչև յերբ տէր ոչ դատես և առնուս զվրէժ արեան մերոյ ՚ի բնակչաց երկրի(3)։ Որպէս և Մովսէս չարախօ֊սէ զձեզ ըստ տեառն բանի(4)․ որպէս մեծն Երեմիաս զիմաստնոտեաց և զորդէա ազգէն մեր֊մէ․ ապա պարտ է զնոսա ևս ՚ի մեր կոյս շրջել՝ զի մի՛ առ մեծարանս երեսաց նոցա դառնիցէ զմեզ ատեալ։

Չորրորդ՝ ոսոխք են հասարակ եղբարք վշտա֊ցեալք ՚ի մէնջ․ պարտիմք ապա և ընդ նոսա իրաւախոհ լինել և ոչ թշնամանադիր․ զի մի՛ չարախօսիցեն․ զի որպէս ՚ի միոյ կայծակէ զօ֊րանայ հուր, այնպէս և ՚ի միոյ չարաբանէ, որ խօսիցի առ դատաւորն՝ սաստկութի՛ սաստ֊կանայ հուր բարկութե՛ նորա․ յորմէ յաւա֊քանայ խստագոյն դատաստան․ վասն որոյ զգուշա֊

(1) Երեմ․ ԾԱ․ 9։ (2) Զաքար․ Ա․ 12։ (3) Յայտ․ Զ․ 10։
(4) Յովհ․ Ե․ 45։

ցուցանէ իմաստունն * Մի՛ թշնամանաւէր լինել ՚ի տարապարտուց՝ զի մի՛ չար ինչ գործիցէ քեզ (1). և յաղագս այսորիկ յորդորէ մեզ առաքեալն աստուածային Պօղոս, * Եթէ հնար իցէ, ընդ ամ մարդկան զխաղաղութիւն ունիցիք :

Չորրորդ՝ ուսոյ լինին և օրէնքն անտես արարեալ լինի իրաւախոհ լինիմք ընդ նմա՝ եթէ արասցուք զայն :

Արդ՝ զայսոսիկ հնգեսին եթէ ՚ի մեր կողմն ունիցիմք, զգլխաւոր ուսոյն՝ ընդ որում ոչ է այլ իրօք հնար իրաւախոհ լինել, դիւրաւ յաղթահարել առ դատաւորին՝ որ է սատանայ յատուկ չարախօս մեր. բստ այնմ, * Կացէք հակառակ չարախօսին (2). և թէ՝ անկաւ չարախօսն (3). և սրբազանն Պետրոս ասէ. * Ոսոխն ձեր սատանայ առիւծաբար գոչելով (4). սա ոչ լսէ՝ եթէ ոչ գտցէ զիրաւունս չարախօսելոյ. սուտ չարախօսէ զմեզ, որպէս Յոբաւ ծանուցանի (5). վասն որոյ ոչ լսէ նմա արդար դատաւորն. զի յորժամ դատաւոր արդար նստցի յաթոռ՝ ոչ առաջի նորա կարէ կեալ ամ չարագործ (6). այսինքն բելիարն դիւաց :

Վաղագոյն նախ քան ՚ի հասանել առ դատաւորն, հաշտիցուք ընդ նմա ՚ի ճանապարհին :

(1) Առակ. գ. 30 : (2) Յակ. դ. 7 : (3) Յայտն. ժբ. 10 :
(4) Ա. Պետ. ե. 8 : (5) Յոբ. ա. 9 : (6) Առակ. ի. 8 :



Արդ՝ ճանապարհն է երեքկին. նախ՝ Քրիստոս. բստ այնմ, * Ես եմ ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք (1). երկրորդ՝ օրէնքն աստուածային, բստ այնմ, * Հաստատեա՛ զոտս իմ ՚ի ճանապարհի քում (2). և երրորդ՝ այս կենցաղս է, բստ այնմ, * Երանեալ են ամբիծք ՚ի ճանապարհի և որք գնան յօրէնս տեառն (3). և թէ՝ երանեալ է այր ՚ի կենցաղս յայս՝ որ ոչ գնաց ՚ի խորհուրդս ամբարշտաց, և ՚ի ճանապարհի մեղաւորաց (4). յորում պարտիմք նախ քան զմեռանիլն մեր՝ իրաւախոհ լինել ընդ հրնդիկ ամբաստանողաց. գուցէ մատնիցէ ուսոյն դատաւորի : Գնացողք ՚ի դրունս մարմնաւոր դատաւորաց որչափ զգուշութեամբ հոգան. զի թէ հնար իցէ՝ զամ մարդիկ, որք են ՚ի դրունս դատաւորաց՝ ՚ի կողմն իւրեանց դարձուցանիցեն, զի մի՛ չարախօս գտցին անդէն. այսպէս պարտ է առնել և մեզ աստ. զի մի՛ անդէն անպատրաստ գտեալ, բռնեա ինչ որ աստ ՚ի կողմանէ դատաւորին՝ մատնիցէ անդէն. այլ աստ պարտիմք իրաւախոհ լինելով առաւ ողջախոհն և գերծանիլ ՚ի նմանէ. և այն՝ զղջմամբ և ապաշխարութեամբ :

Եւ ոմանք պատուիրանք, որք թուին յայս մեր ուսոյն. գուցէ նորա ուսոյ լեալ անդէն, մատնիցեն դատաւորի. վասն որոյ զգուշացանէ եւ

(1) Յովհ. ժդ. 6 : (2) Սաղ. ժզ. 5 : (3) Սաղ. ճժը. 1 : (4) Սաղ. ա. 1 :

տարէն հոգւ տանելի է։

Ըստ պատուոյն պահծի։ Սա բազում անգամ մնա-
նեալ լինիմք, բայց բազում անգամ դէպ լինի՝
զի կամ ՚ի ձեռն փառաց, կամ բարեխօսից և
կամ կաշառաց շքեղմք զմիրտ դատաւորին. բայց
անդ միանգամ ամբաստանել՝ անհնար է զերծա-
նել. զի ոչ ոսոխն ասէ, և ոչ դատաւորն կարէ
խաբել կամ համոզել. վասնորոյ յետ մատնելոյն՝
ընկալոյն տայ ՚ի ձեռս դահճի. ուստի ասէ։

*Ուղղեայր ոչ մերկէ, և ոչ մերկէ մարդ (1)։
Դժոխին ամբաստանութիւն չէ ընդունելի. զի
բազում անգամ ասէ. ոսոխն, որում տալ պար-
տիմք զհաշիւն՝ ոչ է յանկարծապէս դեւն, զի ընդ
նմա անհնար է խրատախոհ լինել և հաշտել.
զի է անհաշտ ոսոխ. այլ մեղքն են՝ որոց ամ-
բաստանութի ընդունելի է։

Պահպանէ կրկին. նախ առ կամ փորձիչ
դևք, կամ բռնաւորքն, կամ այլ արարածք. որ-
պէս գազանք, սարերք և այլք. միւսն անդ՝ զո-
րոց ասէ. *Ոչ հոգիք, որք առ ՚ի վրէժ խնդրու-
թիւն ստեղծան։ *Ի ժամանակում կատարա-
ծի հեղցեն զզօրութիւն և զբարկութի նր,
որ արար զնոսա՝ հանգստութացուցեն(2)։

Սոփոնիայի ՚ի բանս։ Ըստ դարձայն և բանտն՝
է կրկին. մին է եկեղեցին, որ և կոչի քաղաքան.
զի անդ կրկին կերպիւ մատնին ՚ի բանդ. նախ՝

(1) մատ․ իը․ 8։ (2) սիրաք․ լԹ․ 33։



՚ի նեղութիւն մատնեալ յաստուծոյ՝ ամբաստա-
նութեամբ զրկելոց, ըստ այնմ *Ո՛չ լքեալն ՚ի
ձէնջ աղաղակէ. և բողոք հնձողաց եհաս յա-
կանջս տեառն զօրութեանց(1). երկրորդ՝ յա-
պաշխարութիւնս կամաւ մատնեալ ՚ի յառէնի
խոստովանութեան. յայս բանդէս յետ բա-
արարութեան ելանել կարելի է. և զայս նե-
ղութիս մարգարէն դաւիթ աղաչէ զտէր՝ հա-
նել ՚ի բանդէ զանձն իւր(2). քանզի կրկին են
յանցանք՝ մեծ և փոքր. վասն փոքունց առա-
տանջէ, զի ապրեսցին՝ ըստ այնմ, *Հաւատալիկ
ես արկանել զնոսա ՚ի նեղութիս մեծամեծս՝
զի ապաշխարեսցեն։ Իսկ վասն մեծամեծացն
ասէ, *Ըստ անհնայն կնքեալ պահի ՚ի գանձի
իմում. յաւուր վրիժուց հատուցման հատու-
ցից նոցա. այն է բանդն անելանելի. զի ոչ կա-
րէ հատուցանել՝ զի ելանիցէ։

Նաքարակիան և բնիոնն է յետոյն մատն
պարտեաց. այսպէս և թագաւորք երկու ունին
բանդս. ՚ի մին մատնին փոքր յանցաւորք և
ելանեն, իսկ ՚ի միւսն՝ քրէական յանցաւորք,
և անելանելի մնան մինչև ցմահ։ Արդ՝ եթէ
կամիս գիտել, թէ ունիցի զքէն խէթ և կամ
դու զումէք, հարց ցխղճմտանս քո, զի նա տե-
ղեակ է յոյժ զումէք ատամանէ զքեզ. հաշ-
տեաց և խրատախոհ լեր ընդ խղճիդ՝ այնքան,

(1) յակոբ․ Ե․ 4։ (2) սաղմոս․ ՃԽԱ․ 7։

մինչև ոչ սովորանիցէ զքեզ. և յայնժամ ունիցիս համարձակութիւն առ նմ ըստ աւետարանչին: Արդ՝ վասն Քրիստոսի պատգամաւորիմք, հաշտեցարուք ընդ այ միջնորդութեամբ Քրիստոսի:

# ՑՈՅՑ ՏԱՅ ԹԷ ՈՐՊԷՍ ՉԱՐ Է ԽՍՏԱՄՏՈՒԹԻՒՆ:

## ԳԼՈՒԽ Գ.

Երկնային իմաստութիւնն Քրիստոս՝ որ նման իւր արար զմարդն, ուսանելով մեզ ապականեալ, և քան զամ արարածս անարգ-գոեալ՝ զմեծ ազնուութիւն մեղաւորին յայտնելով իբրու վարանեալ ի միտս իւր՝ ասէ,

Ո՞ւմ նմանեցուցից զազգս զայս: Մատ. ժա. 16:

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Զի որպէս գերազանցեալ զարարածովք, նմանի արարչին, ըստ այնմ թէ՝ * Ես ասացի թէ աստուածք իցէք: Նոյնպէս մեզ քան զամ արարածս յանարգութի իջանէ. վասն որոյ իմաստութիւնն հօր ոչ գտանէ ի մէջ արարածոցս համեմատ նմա. յաղագս որոյ իբր անձարացեալ՝ նմանեցուցանէ ի վախճանի դարձեալ նոյնոյ տեսակի. Ի ձայն է մանկանց:



Արդ՝ ազգն հրէից նմանեցաւ մանկանց, նախ՝ զի մանուկն ոչ ճանաչէ զօգուտն իւր. այսպէս և նոքա ոչ ծանեան զժամանակ այցելութեն իւրեանց. * Եթէ գիտէիր դու զխաղաղութի քո. բայց այժմ ծածկեցաւ ի քէն

Երկրորդ՝ մանուկն զերեւելին միայն նկատէ. այսպէս և նոքա զերեւելին Քի գիտելով՝ գայթագղեցան. և ոչ եղև նոցա յայսմ մասին քար գայթագղութե:

Որք նստիցին ի հրապարակս: Այսինքն՝ յընդարձակ տեղիս քաղաքին, ուր սովոր են բազմութիւնք ամբոխից եկանել ի վաճառ. և քանզի մանկական բարքն ազատ գոլով ի զբաղմանց աշխարհիս, մինչ ի խաղս պարապին ուր ուրեք և իցէ, և մինչ պատահի երբեմն նա և ի մէջ ամբոխից հրապարակին յօրինել զխաղս. ի տեսանելն զհասակակիցս իւրեանց եկեալս ընդ ամբոխին՝ որք դեռ մնեալ ի մանկութէ, և ի զբաղմունս առից և արոց արդէն անկեալ, և զառհաւատչեայ շահուցն նորապէս առեալ, զանց առնեն զնոքօք. իսկ նոքա ի վախճանի խաղուցն կարդան զընկերս իւրեանց այսինքն՝ կոչեն զնոսա և ասեն, մեք խաղացաք, ընդէ՞ր և դուք ընդ մեզ ոչ խաղացէք. Փողս հարաք և ոչ յօրինեցաք, իսկ դուք և ոչ զմին ըղձակերտեցիք. որպէս ինձ թուի՝ այս է:

Իսկ որքան առ խորհրդական միտ բանին՝ գիտելի է, զի մանկունքն են Քս և Յովհան-

1577-2014

նէս. *Ահաւասիկ 'ի միտ առցէ մանուկ իմ(1). և թէ. *Ժողովեցան 'ի վերայ սրբոյ մանկան քո(2). սոքա նստան 'ի հրապարակս եկեղ՝ որ է մեծ թատրոն աստուածային 'ի մէջ աշխարհի. էին իբրև երկու մեծաբարբառ փողք աննուաղեցիկք. քանզի ընդ ամ երկիր ել բարբառ նոցա, և ընդ ծագս տիեզերաց խօսք նոցա:

Մին ողբաձայն գոչէր ասելով, ապաշխարեցէք և աղաղակեաս անձամբք 'ի յողբ և 'ի կոծ հրաւիրելով ասէր, *Արարէք այսուհետև պտուղ արժանի ապաշխարութեան: Յովհաննէս քարոզէր յանապատին զմկրտութիւն ապաշխարութեան:

Միւսն՝ քաղցրաձայն զեղանակ երկնային հարսանեացն փողէր, *Մի թէ մարթ ինչ իցէ մանկանց առագաստի սուգ առնուլ՝ մինչ փեսայն ընդ նոսա իցէ(3): Սոքա կոչեցան մանկունք, զի էին ըստ մանկական բարուց ազատք 'ի զբաղմանց աստի ունայնութեանց. իսկ նոքա՝ որոց սիրտք 'ի զբաղմունս մեծամեծս այսինքն փառաց՝ հեշտութեանց և ագահութեանց կենցաղոյս հեղձեալ էին, ոչ շարժեցան 'ի քաղցրեղանակ և յորդորական փողոյ աստի. զի էին սիրտք նոցա մոլեալք մեղօք: Մեծն Աղէքսանդր պատերազմականն զեղանակ լուեալ յե-

(1) Եսայի. ԾԲ. 13: (2) Գործ. Դ. 27: (3) Մատ. Թ. 15:



րաժշտէն՝ յառնէր 'ի խրախճանէն 'ի մարտ. իսկ և զուարճական լուեալ նուագ՝ անդրէն 'ի բազմականսն ձեմէր. բայց խստասիրտքն և ոչ 'ի միոյն յերկուց շարժեցան. զսիրտս սոցա բազմութիւք ախտից դարձուցին յապառաժ. վասն որոյ յամառեալ էին 'ի կամս իւրեանց:

Տրամախոհն՝ մինչ տեսանէ, զի ոչ շարժին ողբականաւ՝ զուարճականն բաղխէ զմատունս. քարոզէն՝ մինչ ոչ շարժին 'ի դժոխոց՝ զարքայութեան աւետէ. դատաստանն՝ մինչ ոչ յաղթին յողոքանաց՝ զպատուհասն 'ի կիր արկանէ. զայս ամ 'ի ձեռն էառ Քրիստոս և ոչ միայն եղանակ ինչ, զոր ոչ նուագեաց աւագափողն. բայց ոչ շարժեցան՝ զի էին խստապարանոցք և անթլփատք սրտիւք. և ջիլք երկաթիք էին պարանոցք նոցա. և ունէին զսիրտ խիստ և չար՝ ապստամբ լինել յայս կենդանւոյս, սոքա՝ այսինքն դպիրք և փարիսեցիք կոչեցան ընկերք Քի և Յովհաննու՝ զի էին համազգիք:

Փողս հարաք ձեզ, ընդէ՞ր ոչ կաքաւեցէք: Ով խստասիրտք, մի՞ թէ խառնաձայն արձակիւր փողն երկնային որպիսի էր ձերն. վասն որոյ ոչ կամեցայք պատրաստիլ 'ի պարս. զի եթէ եօթն հրեշտակքն 'ի փողելն զփողս իւրեանց, երկինք հրդեհէին, աստեղք անկանէին և ծովք խռովէին 'ի մեծ ազդմանէն, ապա քանի՞ ևս սաստիկ էր ձեզ ազդումն ընդունել 'ի փողել մեծի հրեշտակի խորհրդոյ. բայց զի կարծրագոյն քան

զապառածն էիք, զինչ ինչ առնել պարտ էր ձեզ՝ և ոչ արար. քանի ձեռս եղանակեաց ձեզ 'ի զարթուցանել, և ոչ զարթեայք 'ի մահաբեր քնոյ չարութեց ձերոց. վասն որոյ ես նախանձայոյզ որդիս խնամատութե հօր՝ վկայեմ հոգւոյս, եթէ անպարտ է նա և արդար, զի որ ինչ էր 'ի ձեռն կողմանէ՝ արար ձեզ:

Հոգևոր փոքր եկեղեցւոյ՝ են առաքեալք, քարոզիչք և հնչումն զանգակին: Հարսունքն Քրիստոսի ընդ լսել ձայնին պարտին փութալ յեկեղեցին և պարել ընդ հրեշտակս՝ յերգս հոգևորս:

## ԱՌԱԿ ՍԵՐՄԱՆԱՑԱՆԻՆ

### ԳԼՈՒԽ Գ:

Երկնային մշակն՝ յետ որոյ ստացաւ զբանական ագարակս, և խոփով խաչին ակօսաբեկ արար, հաճեցաւ 'ի նմա սերմանել և զսերմն բարի.

Ահա՛ ել սերմանահան, Մատթ. ԺԳ. 4:

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Սերմանացան ոչ ասէ. զի սերմանացանն կարէ նշանակել և զ'ի փորձու կալեալ մշակն՝ որոյ ոչ իւր իցէ սերմն. իսկ սերմանահանն նշանա-



կէ զհեղինակն սերմանեաց. սերմանահան է տէր. սերմն է բանն աստուծոյ. շտեմարան՝ յորմէ հանէ զսերմն, է խորքն և ծածուկ խորհրդով լցեալ միտն ա͞ծայինն. իսկ սերմանացանն՝ են առաքեալքն և վարդապետք. որոց շտեմարանք, յորմէ հանեն զսերմն, է խորհրդապէս ա͞ծաշունչ ս͞բ գիրքն: Մի՛տ դիր աստ, եթէ ոչ սերմանիցէ սերմանացանն, ագարակն մեր ըստ ինքեան ոչ կարէ բերել զբարի պտուղ, բայց միայն զփուշ մեղաց. որպէս զդալի ագարակն Թարց բարի սերման զմոլախոտս բուսուցանէ և զփուշ. ուստի յայտ է՝ Թէ ամ բարի արդիւնք յառաջանայ 'ի շնորհաց ա͞յ, Թէպէտ և գործակցութեամբ մերով. զի Թէ անձնիշխան կամքն մեր հնազանդութ͞ե ոչ լիցի որպէս արդաւանդ երկիր՝ ոչ աճի:

Եւ 'ի սերմանելն իւրում՝ էր, որ անկաւ առ ճանապարհաւ: Ոչ ոք կարէ առաւել գիտել զզօրութի բանին, քան զայն, որ ասէ. ապա պարտ է միտ դնել մեկնութեան տեառն. արդ՝ տէրն մեր զայս բան իւր այսպէս մեկնէ, * Ամենայն որ լսէ զբան արքայութե և ոչ առնու 'ի միտ, գայ չարն և յափշտակէ զսերմանեալն 'ի սիրտ նորա. այն է՝ որ առ ճանապարհաւն սերմանեցաւ: Աստէն պարտիմք ուսանել՝ թէ որքան զգուշութ͞ե և հեզութ͞ե սրտի պարտիմք 'ի միտս մեր ընդունել՝ և ամփոփել զբանն ա͞յ. զի եթէ տպաւորեսցի 'ի միտս մեր զօրութի

բանին, ոչ եւս կարէ յափշտակել չարն. իսկ եթէ ոչ մնասցէ 'ի միտս մեր զօրութիւն եւ ուժ բանին, այլ միայն սոսկ հնչումն պատկերակերպեսցի յերեւակայութեան, յայնժամ չարն, որ լինի միայն երեւակայութեան եւ ոչ մտաց, ամբոխելով զերեւակայութիւնն բազմապատիկ տեսակաւ ունայնութեանց, զորս միշտ տպաւորէ առ 'ի մոլորեցուցանել. յափշտակէ, այսինքն՝ եղծանէ զտիպ բանին. որպէս սերմն, որ անկանի առ ճանապարհաւ, որ երթեւեկաց կոխմամբ կարծրացեալ մնալով յերեսս հողոյ՝ թռչնոց լինի կերակուր. վասն որոյ հրամայէ առաքեալն, *Հեզութեամբ ընդունիջիք ըզբանն ընդաբոյս՝ որ կարողն է կեցուցանել զոգիս ձեր (1): Մերձ հողոյն է միտքն. իսկ ճանապարհն՝ երեւակայութիւն. արդարեւ եթէ կամիս, թէ սերմն բանին մնասցէ 'ի քեզ՝ եւ ոչ լիցի կեր դիւաց, թէ յընթեռնուլն թէ 'ի լսելն զաւետարանն, կամ զքարոզս, 'ի մի՛տ առ սիրով եւ պահեա՛ յօժարութեամբ. յայս միտ յընթեռնուլն զաւետարանն՝ ասի, օրթի. այսինքն ուղի՛ղ ունկնդիր լիցուք. պռօսխումէ, ուշ դիցուք. եւ երկիւղածութեամբ լուարուք:

Բարոյականապէս՝ բղջախոհն է ճանապարհ դիւաց, որ ընդ աչս եւ ընդ ականջս մտանեն 'ի սիրտ նորա, եւ յափշտակեն զբանն 'ի նմանէ.

(1) Յակ. ա. 21:



զպայմանն առէ: *Նստէիր 'ի ճանապարհս իբրեւ ագռաւու միայնացեալ թափուր (1):

Ստուգաս իմա՛, թէ ազնուութիւն աստուածային բանից՝ որչափ վեհ է մարդոյ. քանզի թէպէտ ունկնք լսմանցն եւս լուեալ զանց առնեն, բայց բառ մեծի մասին յիմարքն են, որ չառնուն 'ի միտ:

Եւ այլ անկաւ յապառաժի. Ըստ մեկնութեան տեառն՝ ապառաժն է անհաստատ մարդն. ոչ ասաց 'ի քարուտ տեղիս, որ եւ նշանակէ զայն սիրտ՝ որ ընդ մեղաց ունի եւ բարեգործութեան հող. յորում երբեմն սերմն զօրանալով՝ ձգէ զարմատս 'ի խոր եւ աճի, այլ յապառաժի. զի լինի յամանս ագարակս այնպիսի տեղիս՝ յորս ընդ հողով թաքուցեալ լինի ապառաժ վէմ, յոր անկեալ սերմն՝ ջերմութեամբ վիմի եւ խոնաւութեամբ ուռոգմանն՝ դիւրաւ բուծանի եւ բուսանի. բայց 'ի ծագել արեւու տապացեալ՝ ոչ այնքան ինքն՝ որքան վէմն որ ընդ նովաւ, ոչ ունելով զարմատս հաստատութեան՝ չորանայ:

Արդ բարոյականապէս՝ վէմն է երկմտութիւն սրտին, որով մարդն է անհաստատ. ըստ այնմ, *Այր երկմիտ անհաստատ է յամենայն ճանապարհս իւր (2). եւ նման ծովու միշտ տատանութեամբ եւ թախծութեամբ ծփի, վասն որոյ 'ի լսելն զբանս ինչ մխիթարութեան՝ իբր-

(1) Երեմ. գ. 2: (2) Յակ. ա. 8:

դութե՛ և միամտաբար ընդունելի և ջերմու-
թե՛ հեռանել, կարծելով թէ՝ որպէս 'ի սկզ-
բանն խնդութեամբ ընկալաւ, մինչ այնպէս
խնդամիտ մնալոց է: Նա 'ի ծագել արեւուն, նշանակէ
փորձութիւն և եռանդն նեղութեան՝ զոր ած-
ծագէ՝ կամ թոյլ տայ դիւին յարուցանել.
զի որպէս արեգական տապն է հարկաւոր յա-
ճումն բուսոց, այսպէս և նեղութիւն յա-
ճումն առաքինութեանց. վասն որոյ տայց 'ի մէ-
նիլ նեղութեան վասն բանին, և այլուր թէ՝ պարտ է
գալ գայթակղութեանց:

Տապացաւ. Նմանին մրգնուեցաւ և ամբոխե-
ցաւ. և սկսաւ յուսահատիլ և տրտմանալ երկ-
միտն, զի ոչ ունէր զկարծիս ինչ՝ նեղութե
դիպիլ. 'ի գալն՝ վաղվաղակի գայթագղին. որ
լսէ զբանն՝ եթէ կամի պտղաբերել, պարտ-
նախ մտածմամբ ամենայն պարագայից ընդու-
նել. երկմտան և անհամբերին ոչ նախատեսանեն
զպարագայսն՝ ապա թէ ոչ, ոչ ընդունէին. ո-
մանք յերկմտաց բղձալով անհոգ կեալ մնալ,
մտանեն խնդութեամբ 'ի կրօնս, և մինչ ճաշա-
կեն անդ զնեղութիւնս, խակոյն դառնացեալ 'ի
բաց հրաժարին և տապացեալ չորանան. ոմանք
'ի հրէից և 'ի տաճկաց գան 'ի հաւատն. և մինչ
հանդէպ նեղութե շօշափէ զնոսա, տապացեալ
չորանան. ոմանք սիրով և խնդութեամբ մտա-
նեն 'ի յուսումն. և մինչ խրթնութի եղծուա-
բութի ընտանեաց երևին՝ տապացեալ չորանան,



զի չունէին հող բազում. այսինքն զընդունակու-
թիւն մտաց ընդ խոնարհութե և հեզութե:

Իսկ այլն անկաւ 'ի մէջ փշոց: Նա առաւել բանի
փուշքն են հոգք աշխարհի և պատրանք մեծու-
թե. զի որպէս փուշքն պաշարելով զարմատ
բուսոյն և ընդդիմանալով տապոյ և հողմոյ,
հեղձուցանեն զբոյսն, այսպէս և հոգք աշխար-
հիս զհոգին պաշարելով 'ի տապոյ սիրոյն քրիս-
տոսի, 'ի հողմոց շնորհաց հոգւոյն սէր զրկե-
լով ընդդիմանալովն հեղձուցանեն ոչ այնքան
զբանն, որքան զհոգին. *Ձեց ունէրաց, (այս-
ինքն, զօրութեանց հոգւոյն) սիրա հոգած (1).
վասն որոյ խրատէ ասելն, *Մի հոգայք զկերա-
կրոյ և զհանդերձէ: Իբրու թէ արգելլով զա-
ւելորդ հոգսն և ոչ զչափաւորն, որ լինի հան-
դարտութեամբ հոգւոյ: Պատրանք մեծութեց է
կրկին. նախ՝ զնոսա պատրեն, որք փութանըն-
տանալ զմեծութիւն. և որք ցանկան մեծանալ՝
անկանին 'ի փորձութիս սատանայի. ահա պատ-
րեալն, որ բաց յաշխարհէինայց՝ դառնին և այսպի
ոմանք ախտաւոր եկեղեցականք. երկրորդ՝ զնո-
սա, որք արդէն տապացեալ ունին. զի գեղեցկու-
թեամբն իւրեանց պատրեն զգայութիւնս, որք
առաւել հեշտանան այնու՝ քան բանիւն աս-
տուծոյ. վասն որոյ 'ի լսելն զբանն՝ անփոյթ ա-
րարեալ պատաղին 'ի հոգս մեծամեծս 'ի տա-

(1) Ղուկ. ժբ. 30:

ցուամն ցանկալեաց․ զի տուեալ սիրեն զմարմին քան զհոգին ։ Այսպիսի էր պատասխանին, որ կամէր ընդ մեծութեանցն և զիմաստասիրութիւն ունելոյ զաւետարանական(1)․ և մինչ յանհնարինս փակեաց աչքն առ մեծ սիրոյն, որ առ ինքն՝ էհեղձ զբանն, թէպէտ տրամութեամբ․ թշնամին նենգութեամբ խնդրէ զամբոյն՝ խոստանալով զխաղաղութիւն և զհանգստութիւն․ բայց մինչ ՚ի ձեռս բերէ, թափէ զթոյնն․ այսպէս և մեծութիւնն խոստանայ զխաղաղութիւն և հանգստութիւն, բայց մինչ գրաւէ զսիրտն, ընու անչափ հոգովք․ մանաւանդ՝ վշտօք և բզբաղմամբք․ այս է պատրանք մեծութե։ Պաշձեալ բարոյապէս՝ փուշք են յատուկ կամք մարդոյն, որք զբարի բոյսն ծածկեն և ոչ թողուն ընդ ինքեանց աճել․ զի որպէս փուշքն ծածկեալ զբոյսն և ինքեանք համարձակ երեւին, այսպէս և ախտիւք ապականեալ անձնիշխան կամքն մեր, ըստ բաղձանաց իւրոց կամի գործել՝ յորմէ հեղձանի բանին հրաման։

Իսկ այլն անկաւ յերկիր բարւոք։ Սա աւետարան բանի՝ երկիր բարի է այն, որ լսէ զբանն և ՚ի միտ առնու․ մին իցէ այսպիսի՝ իմաստութենն, ըստ օրոմանէ, *Անխնդիր լինի խրատու իմաստութենն․ երկրորդ՝ հնազանդն, որոյ պտուղն հարիւրաւոր․ երրորդ՝ խոնարհն, որոյ պտուղն վաթսնաւոր․ զայսպիսին ասէ առաքեալն Պօղոս, *Գերեմք զմիտս ՚ի հնազանդութիւն Քրիստոսի․

(1) Ղուկ․ ԺԲ․ 16։



խոնարհաց միայն հնազանդելն բանիցն Քրիստոսի․ չորրորդ՝ հեզն, որոյ պտուղն է երեսնաւոր․ ըստ այնմ, *Հեզն է ժառանգ երկրի։

Որպէս երկիրն ընդունի զանձրև, այսպէս և հեզն ոչ միայն զբանն ընդարբոյս, այսինքն՝ զբնական օրէնսն, այլև զսերմն բանին կենաց․ երկիր բարի է այն սիրտն, որ չէ կորդացեալ յարձակմամբ ախտից, և ոչ ապառաժուտ երկմտութեամբ և անհամբերութեամբ․ ոչ և փշաբեր՝ բնական բաղձանօք ձգեալ յունայնութիւն աշխարհիս․ այսպիսի սիրտ ունի զերիս աստիճանս՝ է բարի՝ բնական օրինօք, այս է երեսնաւոր․ է բարեգոյն՝ յաւելեալ գրաւորականին, այս է վաթսնաւոր․ և է բարեգունեղ՝ յաւելեալ և աւետարանականին․ այս է հարիւրաւոր․ և ըստ շնորհաւոյն, օրինաւորն՝ երեսնաւոր․ կուսութիւնն՝ վաթսնաւոր, և մարտիրոսքն՝ հարիւրաւոր․ դարձեալ ՚ի նոյնոյ․ բարեգործն, որ առ՝ երեսնաւոր․ որ ՚ի գրաւորին՝ վաթսնաւոր․ և որ յերկինս այսինքն ՚ի սէրն աստուծոյ՝ հարիւրաւոր․ բարեգործն աշխարհականաց՝ երեսնաւոր․ վանականաց՝ վաթսնաւոր․ անապատաւորաց՝ հարիւրաւոր․ դարձեալ՝ սկսողացն՝ երեսնաւոր․ զարգացողացն՝ վաթսնաւոր․ և կատարելոցն՝ հարիւրաւոր։ Արդ՝ երկիր այս բարիս որ զայսօրինակ բերէ զպտուղ՝ ոչ է թարց

փորձանաց. քանզի առ այս ևս ծագի մեծա-
տապ արեգակն. և շնչէն զօրեղ հողմունք դի-
ւրին. բայց արձակեալ գոլով զարմատն իւր 'ի
խոր, ընդդիմանայ փորձանաց և տայ զպտուղ
'ի վեր՝ համբերութեամբ: Ղուկ. ութնուհնգետասն: Այս-
ինքն բանն եղ 'ի հօրէ, եկն յագարակ աշխար-
հիս մարդեղութեամբ, և զսերմն բանին ան-
խնայ առատութեամբ սերմանեաց ոչ միայն 'ի
բարի երկիր հաւատացելոց, այլ և 'ի ճանա-
պարհս հրէից, յապառաժս հեթանոսաց և 'ի
փուշս տաճկաց. *Քարոզեսցի աւետարանն
արքայութեան ընդ ամենայն տիեզերս: Տե՛ս
զգութ երկնաւորի հօր քո, որ ծագէ զարե-
գակն Քրիստոս և ածէ զանձրև բանի նորա 'ի
վերայ արդարոց և մեղաւորաց անաչառապէս:

## ՅԱՂԱԳՍ ՍԿԶԲԱՆ ԵՒ ԿԱՏԱ-ՐԱԾԻ ՄԱՐԴՈՅՆ:

### ԳԼՈՒԽ Ա:

Ազգական վարդապետն տիեզերաց տէրն մեր
յիսուս քրիստոս՝ տեսանելով զմարդկային բը-
նութիւնս մոլորեալ 'ի պէսպէս կարծիս սկզ-
բան և կատարածի մարդոյ, (զի ոմանք
ոչ ընծայելով հաւատս աստուածային սուրբ



գրոց, զսկիզբն մարդոյ ասէին լինել 'ի նորա-
ստեղծ արգասաւոր հողոյ՝ զօրութ. արեգականն.
իսկ 'ի կատարածն զգալապէս դիտեալ, ըստ այլ
կենդանեաց կարծէին ոչնչանալ մարդոյս. այս-
պիսիք էին սադուկեցիք և հետևողք նոցին,
որք ասէին չիք յարութի ) (1), առ 'ի ուղղել
զկարծիս ողջամիտ մարդկան և յանդիմանել
զմոլորութիւն այնպիսեաց և յայտնի առնել
օրինակաւ զխորհուրդ յարութեան՝ ասաց զա-
ռակս զայս:

*Նմանեցաւ արքայութիւնն երկնից առն՝ որ սերմանեաց սեր-
մն բարի յագարակի իւրում:

## ՍԿԶԲՆՈՒԹԻՒՆ:

Նկարագրապէս առեալ՝ քրիստոս է արդարև
արքայութիւն երկնից. արքայութիւն երկնից
կայանայ 'ի տեսութեան հօր, ըստ այնմ, *Որ
ետեսն զիս՝ ետես զհայր (2): Քանզի տեսութ.
քրիստոսի է դրախտ հոգևոր, յայսմ իմաստ առեալ
լինի աստ բանն այն՝ զոր ասաց ցաւազակն, *
Այսօր ընդ իս իցես 'ի դրախտին. զայսպիսի նը-
կարագրական մեկնութիւն մերժեն ոմանք,
բայց ոչ է պարտ, զի բոլոր խորհուրդն յայս-
միկ կայանայ: Խորհրդապէս նշանակէ զ զինա-

(1) Մարկ. ԺԲ. 18: (2) Յովհան. ԺԴ. 9:

ւորեալ եկեղեցին. զի որպէս մինչ սանձք թա֊
գաւորութեան պարսից, իմանի ազգն պարսից.
այսպէս մինչ ասի արքայութիւն երկնից՝ իմանի֊
եկեղեցին քրիստոսի. ՚ի վերայ որոյ թագա֊
ւորէ քրիստոս, և ոչ իշխէ թագաւորութիւն
դժոխոց ըստ իմաստնոյն բանի, որք՝ սորին ըն֊
կէցքն և կատարած՝ աշխի, նման առն սերմանողի
զսերմն բարի յագարակի իւրում:

Այլաբանօրէն նշանա֊
կէ զտէր ագարակին, այսինքն՝ զքն. սա ասի
ննջել այլաբանօրէն. զի ոչ տուեալ լինի նմա
ճշմարիտ քուն. նշանակէ թոյլ տալ թշնամւոյն.
* Զարթի՛ր ընդէ՞ր ննջես տէր (1): Յայտէս եր֊
բեմն յս ննջէր ՚ի խելս նաւուն. * Նոյն շարժումն
մեծ ՚ի մէջ ծովուն. իսկ մինչ աղաչեցին՝ զար֊
թեաւ որպէս ՚ի քնոյ տէր, և սաստեաց ծո֊
վուն (2): Ննջելն էր թոյլ տալն. շարժումն՝ էր
փորձանաց գալն. զի թէ ոչ ննջէ թոյլտուու֊
թեամբ, ոչ համարձակի երբեք որոմնացանն
գալ: Նաւորդականապէս նշանակէ զթուլամորթ
առաջնորդսն՝ զորս կացոյց տէրն ՚ի վերայ գեր֊
դաստանաց իւրոց. որ անփոյթ արարեալ զպաշ֊
տօնէիցն՝ ուտեն, ըմպեն, արբենան, և ՚ի մեղս
ննջեն. որոց յագարակս թշնամին որոմնացան
արձակերասան խաղոյ. որք պահապանք կար֊
գին այգւոյ, բայց զայգին իւրեանց ոչ պահեն.

(1) Սաղմոս. ԽԳ. 24: (2) Մարկ. Դ. 38:



Զարձեալ՝ բարոյականապէս նշանակէ և զանձն
իւրաքանչիւր. զի սիրտ մարդոյն է որպէս ագա֊
րակ՝ ընդունակ սերման բանին աստուծոյ, և
միաքն է մշակ. պարտի արթնութեամբ պահել
զդրունս ականջաց և աչաց, զի մի՛ որոմնացանն
մտեալ գայցէ. վասն որոյ ասէ. * Ամենայն պահ֊
պանութեամբ պահեա՛ զսիրտ քո, զի ՚ի սմանէ
են ելք կենաց 1): Երանութեան է արժանի
ծառայն՝ եթէ տէրն եկեալ գտցէ զնա ար֊
թուն. ՚ի ժառանգել զայս երանութիւն, ս֊
սէր եայլ փափագանօք. * Պիտէ զի պահել
զոճ մորոյ ագարակի. թէպէտ քրիստոս վասն
պատերազմող թշնամեացն, անարգեալ
զագարակն ազգին իւրոյ:

Ոչ սերմն բարի սերմանեցեր, ուստի՞ ունիցի որոմն:
Զարմացող ծառայքն են հրեշտակք, որք զար֊
մանան ընդ բազմութիւն մեղաւորաց. նա և
վարդապետք. մեղաւորն գործէ զմեղս՝ բայց
ոչ զարմանայ, զի ոչ գիտէ զծանրութիւնն.
քանզի խաւարեալ է իմացականն. այսպէս Մի֊
քայէլ չհանդուրժեաց հպարտութեան դա֊
տաստանին՝ ոչ ինքն հայհոյեաց. և ոչ ՚ի դի֊
ւէն լսէլ կամեցաւ:

Կամի՞ս զի երթիցուք քաղեսցուք զայն ՚ի բաց: Եթէ
երկայնամիտ չլինէր աստուած, այլ թոյլ տայր
հրեշտակաց, ՚ի վայրկենի սպառէին զմեղա֊

(1) Առակ. Դ. 23:

ւորման. զի ոչ հանդուրժէին. այսպէս և սուրբք զարմանան, մինչ տեսանեն 'ի բարի սերմա-նէ առեալն՝ յառաջ եկեալ որոմն, ըստ այնմ, * Զիա՞րդ եղև պոռնիկ՝ քաղաքն հաւատարիմ Սիոն(1): Տէրն ոչ թողու, նախ՝ զի են նիւթք կրթութեան առաքինեաց. երկրորդ՝ արտահա-նէ անտի զբարիս. երրորդ՝ որոմանց արմատն է հաստատ յոյժ, ըստ այնմ. * Տնկեցեր զնոսա և արմատացան(2): Նաև արմատք բազում ցորենոյ 'ի նոսա, կամ մերձ նոցա հաստատեալք կան. ուստի՝ եթէ խլեսցի յարմատոյ, ցորեանքն միա-սին. զորօրինակ՝ եթէ թագաւորն տանիցէ 'ի բաց խլեսցէ որպէս որոմն՝ բազումք 'ի մեծամեծ քրիս-տոնէից, որք ընդ հովանեաւ նորա խաղաղու-թեամբ վարեն զկեանս՝ միասին:

Ի ժամանակի հնձոցն՝ ասացից ցհնձօղսն: Հունձն է կրկին. առանձնական՝ որ է մահ իւրաքանչիւր մարդոյ ցկատարած աշխարհիս. որքան առ այս՝ հրամայէ ժողովել զորոմն և զատել առ 'ի յայ-րումն. տես, զի ոչ ասէ, կապեցէ՛ք 'ի խրձունս նոյ-րեցէ՛ք. այլ թէ առ 'ի այրել. որով ցուցանի՝ թէ մեղաւորք ցկատարած աշխարհի քաղէլք և ժո-ղովեալք 'ի հրեշտակաց, և կապեալ 'ի խրձունս ընդ իւրաքանչիւր տեսակաւ եղեալքն մեղաց, հպարտք առանձինն, նախանձորդք առանձինն, և այլն. ոչ առ ժամայն մատնին 'ի յայրումն,

(1) Եսայի. Ա: 21: (2) Երեմ. ԺԲ. 2:



այլ պահին ցկատարած. երկրորդ՝ ընդհանրա-կան, որ լինի, յորժամ հասանի հունձն մարդ-կայնոյ տեսակի և արկանեն հրեշտակք զման-գաղ յագարակ սորա:

Մատեան աշակերտքն և ասեն. Մեկնեա՛ մեզ զառակ որո-մանցն ագարակին: Ի մէջ առակացն՝ զոր ասաց, այս էր դժուարագոյն. և առաքեալքն ոչ բաւե-լով լուծանել՝ խնդրեցին զմեկնութի. խոնարհ և ուսումնասէր աշակերտի է յայտ-նել զտարակուսանս՝ վարդապետին. որ ոչ կա-մի յաշակերտաց յառաջանալ յուսումն՝ այս-պէս պարտի առնել: Մեկնէ տէրն զառակ իւր. զոր ծածկէր առակաւ 'ի մեծամեծաց՝ յայտնէ այժմ խոնարհաց:

Որ սերմանէ զսերմն բարի՝ է որդի մարդոյ: Նախ ի սեր-մամբ իմանին հասարակաբար ամենայն մարդիկ, որք ըստ բնութե՛ բարի արարան. այսու յայտ-առնէ՝ թէ մարդկան ստեղծման հեղինակն է ինքն:

Իսկ ագարակն՝ աշխարհս է: Յանցեալ առակին սերմն՝ էր բանն Այ. իսկ ագարակն՝ սիրտ մար-դոյ. բայց աստ սերմն են մարդիկ, իսկ ագարա-կըն՝ աշխարհս. վասն որոյ ասէ:

Սերմն բարի նոքա են՝ որք որդիք արքայութեանն են: Նոյն ինքն սուրբք և արդարք և բարեպաշտք: Իսկ որոմն՝ որդիք չարին են, այսինքն՝ հետեւմամբ. եղա-կան բարին կարէ պատուիլ 'ի չարէն՝ ըստ ան-յաղթ փիլիսոփային, և այսպէս բարի սերմն

լինի հար՝ ընդունելով զորդին. բայց ոչ ըստ բնութեան, այլ ըստ յօժարութեան. և հարն կարէ լինել բարի. բազում անգամ՝ որդիքն արքայութեան եղեալ արտաքս՝ լինին որդիք սատանայի որպէս Իսրայէլ՝ որ որդի անդրանիկ էր Այ և այնու որդի արքայութեան, եղեալ արտաքս՝ կամ ընկալեալ զորդին՝ եղև որդի հարին. և բազում որդիք հարին եկեալ յարևելից և յարևմտից՝ ընդ աբրահամու լինին որդիք արքայութե(1). ուստի որդին աստ նշանակէ զհրապուրանս սատանայի. և ոչ թէ հարեալ սկիզբն իցէ սատանայ՝ ըստ մանիքեցւոց:

Թշնամին, որ վարեաց զայն՝ սատանայ է: *Քրիստոս վարէ և հերկէ զմիտսն՝ ճշմարտութիւն յառաջադրելով. իսկ սատանայ յանժամ վարէ՝ երբ պատրուակեալ բարեաւն բանիւ ՚ի հաւանութիւն ածելով մտանէ յագարակ սըրտին. և ապա ըստ կամաց իւրոց ցանէ զորոմն չարութեան. է յատուկ թշնամի մեր. ուստի պարտիմք զգուշանալ:

Հունձքն կատարած աշխարհիս է: *Որձակապէս նըշանակէ զկատարած կենցաղոյս. բանիւ տեառն, յայտ է թէ գոյ իսկապէս կատարած աշխարհիս. ընդդէմ հին փիլիսոփայից, որք ծնունդ և ապականութիւն աշխարհիս ասէին գոլ յաւիտենական:

(1) Մատ. իա. 31:



Հնձողքն հրեշտակք են: *Նարդենս հնձողքն վարդապետքն են, որք ընդ սակաւ մշակաց աշխատելոյն՝ հնձեցին զագարակն սատանայի և ածին ՚ի կալն քրիստոսի, ըստ այնմ, *Հունձք բազումք են և մշակք սակաւ(1): Իսկ ՚ի կատարածի՝ հրեշտակք են հնձողքն, որք հնձեն զագարակ մարդկան գերանդեաւ հրամանին քի. *Նաքեաց զգերանդի իւր, որ նստէրն ՚ի վերայ ամպոյն՝ և հնձեցաւ երկիր(2):

Որպէս ժողովէր որոմն՝ Նոյնպէս ժողովեսցին մըղաւորք ՚ի հրեշտակաց յարքայութենէ քրիստոսի, այսինքն՝ ՚ի հաւատացելոց, որք են արքայութիւն քրիստոսի. զի ՚ի նոսա թագաւորէ կամօք:

Զամ՟ գայթագղութիւնս այսինքն՝ զայնոսիկ, որք գործեն զանօրէնութիւնս: Երկին գայթագղութիւնք. զի գայթագղեցան ՚ի բանէն՝ այլաթաքելով ՚ի քարոզքն. և զի եղեն գայթագղեցուցիչ բազմաց, ոչ ստուելով ՚ի բանէն. թէ՝ *Որ ոք գայթագղեցուցանէ զմի ՚ի փոքրկանցս:

Արկցեն ՚ի հնոց հրոյ: Այսու բանիւ նախ՝ ցուցանի թէ՝ յանժամ են անկանելոց ընդ առաջին կապեալ խրձանցն ՚ի հուր. երկրորդ՝ ցուցանի թէ՝ գոյ և յարութիւն յետ հնձելոցն մահուամբ. երրորդ՝ թէ գոյ դժոխք և արքայութիւն. յարքայութենէ նոցա. ըստ որում մեկնե-

(1) Ղուկ. ժ. 2: (2) Յայտ. ժդ. 16:

ցաք. այսինքն՝ յարդարոց, և ոչ թէ յարքայու֊
թենէն երկնից. զի անդ ոչ կարեն մտանել
որոմունք. զի միւսանգամ ժողովեսցին. երա֊
նի այնմ, որ աստ փախիցէ յայնժամ խառնիլ
'ի շեղջս ցորենոյն. և ըստ այնմ պատրաստէ
զինքն, զի անդ ժողովեսցի ընդ բարի սերմա֊
նեացն 'ի շտեմարանս արքայութեան երկնից։

Անդ եղիցի լալ և կրճտել ատամանց։ Աչքն մինչ
զրկի 'ի լուսոյ՝ թախծանօք մաշի. մեղաւորաց
աչք զրկին յականելոյ 'ի քաղցր լուսոյն քրիստոսի.
վասն որոյ 'ի տխրութիւնս հայցին յաւիտեան.
թէպէտ ոչ լինի անդ արտասուք՝ ոչ գոլով
կերակուր և ըմպելի, բայց լինի կրճտումն ատա֊
մանց 'ի ցրտոյ. թէպէտ լինի իրական ցուրտ
'ի դժոխս որպէս հաստատի յածային գրոց,
բայց աստ այլապէս խօսի։

Արկցեն 'ի հնոց հրոյն։ Այսինքն՝ 'ի մէջ հրոյն ե֊
ղիցի լալ. ապա բաց 'ի ցրտոյն՝ պատճառի կըր֊
ճտումն ատամանց նաև 'ի սաստիկ ցաւոց, զոր
պատճառէ 'ի մեղաւորս բոցն կատաղի, որով
ոչ միայն կրճտեն զատամունս՝ այլ և ծամեն
զլեզուս իւրեանց։ * Հինգերորդ հրեշտակն ե֊
հեղ 'ի սկաւառակէ իւրմէ 'ի վերայ աթոռոյ
գազանին, և եղև թագաւորութիւն նորա խա֊
ւարեալ, և ծամէին զլեզուս իւրեանց յախտէ
ցաւոցն (1)։ Զուրն մինչ այրէ՝ սևացուցանէ,

(1) յայտն. ժզ. 10։



այնէ՝ խաւարեցուցանելն. այլ և՝ լինի 'ի սրա֊
մտութենէ, զոր ունին մեղաւորք 'ի դժոխս.
* Բարկութեամբ վարեալ կրճտեաց զատա֊
մունս իւր 'ի վերայ իմ (1)։ * Զայրանային և
կրճտէին զատամունս իւրեանց 'ի վերայ նր (2)։
Մեղաւորք զայրանան 'ի դժոխս, ոչ միայն 'ի
վերայ միմեանց՝ այլ և 'ի վերայ այ, ուստի և
հայհոյեն. մեղքն է դարձումն յետս յայ, և յա֊
րումն յարարածս. վասն որոյ իրաւամբք զըր֊
կեսցին յաստուծոյ, ուստի լացցեն և տան֊
ջեսցին յարարածոց. որով կրճտեսցեն զատա֊
մունս. վասն որոյ դնէ զայս երկու սեռական
պատիժս, թէպէտ բազումք են պատիժք անդ։

## ՅԱՂԱԳՍ ԳՈՐԾՈՒՆԷՈՒ֊ ԹԵԱՆ ԽՈՍՄԱՆ ԱՐԴԱՐՈՒ֊ ԹԵԱՆ։

### ԳԼՈՒԽ Զ։

Առակաբան երկրորդն սողոմոն գերազանցն
յառաջնոյն՝ մինչ նմանեցոյց զարքայութիւնն
բարի սերման 'ի հասարակի. զի մի՛ ոք տարա֊
կուսիցի թէ՝ արդեօք որո՞յ սերման տիրապէս
նմանի, յառակացուցանէ աստ մանանխով, շա֊
ւիղ հորդելով մեզ առ այլ սերմանեաց նմա֊
նութիւնս։

(1) յոբ. ժզ. 10։ (2) գործ. է. 54։

*Նման է արքայութիւնն երկնից հատոյ մանանխոյ, զոր առեալ մարդոյ սերմանեաց յագարակի իւրում: Մատ. ԺԳ. 31:*

# ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Մանանեխն՝ որ աշխարհօրէն ասի հարտալ, է նման սերման թզոյ, որ փոքր է քան զամենայն սերմանիս. բայց յորժամ աճէ՝ մեծանայ քան զամենայն բանջարս, մինչև թռչնոց երկնից հանգչել յոստս նորա. այլաբանօրէն նշանակէ զաւետրն մեր յիսուս քրիստոս, որ փոքր էր խոնարհութեամբ քան զմարդիկ. բայց մինչ առեալ զայն մարդկան՝ այսինքն, յովսեփայ և նիկոդիմեայ սերմանեցին յագարակի գերեզմանին թաղմամբ, բուսեալ յարութեամբն, աճեաց և եղև մեծ ծառ իբրև ծառն կենաց ՚ի դրախտին.

Սա արձակեաց ոստս ԺԲ. ԺԲ.: Ոստք սորա էին երկոտասան առաքեալքն՝ որք արձակեցան ընդ տիեզերս, և բազումք ՚ի նախատաչմանեալ թռչնոց յիմաստնոց հեթանոսաց՝ հանգեան յոստս նորա հաւատալով. ծառս այս մեծացաւ յոյժ՝ ըստ ծառոյն դանիէլի. բարձրութիւն նորա էհաս յերկինս՝ և լայնութիւն ընդ երեսս երկրի. ՚ի ներքոյ սորա գազանք՝ հեթանոսք բնակին, և յոստս սորա թռչունք հրէից հանգչին. մին ՚ի մեծ ոստոց ծառոյս էր սրբազանն պօղոս, յոր հանգեաւ երկնային թռչունն դիոնէսիոս: Խորհրդապէս նշանակէ զեկեղե-



ցին քրիստոսի, զի սա էր փոքր յոյժ իբրև ըզ-հատն մանանխոյ. բայց մինչ յագարակի աշխարհիս տարածեցաւ կրկին վտակօք կողին քի, աճեցաւ յոյժ, և արձակեաց ոստս սուրբ վարդապետաց, ընդ որոց հովանեաւ վարդապետութեան հանգեան խոնարհ անձինք, որք էին բարձրաթռիչք իբրև զթռչունս. ըստ այնմ, * Պարծեսցի եղբայր խոնարհ ՚ի բարձրութեն իւր: Բարոյականապէս՝ նշանակէ զխոկումն արքայութեն և սուրբ աւետարանին, որ է հայելի արքայութեն քրիստոսի. սա իբրև անկանի ՚ի սիրտ մարդոյ խոկմամբ, է փոքր քան զհատն մանանխոյ ՚ի սկզբանն. բայց եթէ արմատանայ հանապազորդ խոկմամբ, զօրանայ և աճի յոյժ և արձակէ զոստս մեծամեծս առաքինութեց, այսինքն՝ կուսութեան, աղքատութեան, խոնարհութեան և հեզութեան. մինչև գայ երկնային թռչունն քրիստոս և հանգչի յոստս նորա: * Յոս յո՞ հանգեայց, եթէ ոչ ՚ի հեզս և ՚ի խոնարհս: Յու ուր գայ քրիստոս՝ գան և այլ թռչունք: * Բանակք հրեշտակաց շուրջ են զերկիւղածովք իւրովք: Սա նորոյ աւետարանական բանքն, որք ճառեն զարքայութեն՝ նմանին կայծի, որ իբրև զմանանեխս է փոքր, բայց մինչ անկանի յանդաստան սրտի մարդոյ ՚ի միոյ բանէ, որպէս ՚ի միոյ կայծէ՝ զօրանայ հուր սիրոյն քի, և որպէս ՚ի բարոյական մանանխոյ՝ բուսանի ծառն առաքինութեան: Դարձեալ՝ խոկումն

արքայութեան, որ պատճառի 'ի բանէն քրիստոսի, նմանի կաթլեաց անձրևաց, որք փոքր են քան զհատ մանանխոյ, բայց պատճառեն զգետս մեծամեծս շնորհաց, որով ոռոգանի բոլոր հոգին. ուստի՝ յօգուտ մեզ հրամայէ առաքեալն. * Զվերինն խորհեցարուք, ուր քրիստոս նստի ընդ աջմէ աստուծոյ(1). նմանի ևս այնմ աղբեր՝ որ էր փոքր, բայց յորդեացև եղև գետ մեծ(2). իսկ զպատկութեանց մանանխոյն, տես 'ի մեկն. մատ. ժգ. 32: Հաւատաքըն՝ իբրև զմանանեխ բոլորակ, շարժէ զլերինս դիւացն ընդունի զթռչունս աղաւնի հոգին:

(1) Կողոսաց. գ. 2: (2) Եսթեր. ժ. 10:



# ՅԱՂԱԳՍ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԶՕՐՈՒԹԵԱՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ:

## ԳԼՈՒԽ Ի:

Ներքին մեր զաճողական զօրութիւն սուրբ աւետարանին, զառատ զութն իւր և ծայրագոյն խնամն, որ առ ազգ մարդկան ցուցանել կամելով՝ առաց զառակս զայս:

“Նման է արքայութիւնն երկնից խմորոյ, զոր առեալ կին՝ թաքոյց 'ի գրիւս երիս ալեր, մինչև ամ խմորեցաւ: Մատ. ժգ. 33:

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Յատուկ է կնոջ թրել զխմոր. վասն որոյ 'ի կին առակէ. խմորն զերիս նշանակէ, նախ՝ ըղձեղան, թէ սրտնական և թէ ներգործականօրովք առաքականեցաւ աշխարհ. զայսմանէ առէ պօղոս, * Սրբեցէք 'ի բաց զհին խմորն՝ զի իցէք նոր զանգուած(1): Երկրորդ՝ զաղանդն, թէ հրէական և թէ աղտոմկական, յորոյ պարտիմք մեծապէս զգուշանալ՝ որպէս առէ տէրըն, * Զգոյշ լերուք 'ի խմորոյ սադուկեցւոցն և փարիսեցւոց(2): Երրորդ՝ նշանակէ զա-

(1) Ա. կորնթ. ե. 7: (2) Մատթէոս. ժզ. 6:

ւետարանական օրէնն, յոր ծածկեալ կայ ար֊
քայութեանն խորհուրդ․ յայս միտ առեալ լինի
առակս․ զի որպէս խմորն զարձուցանէ յինքն ըզ֊
բոլոր զանգուածն, այսպէս և աւետարանն յին֊
քըն շրջեաց զբոլոր աշխարհն․ 'ի խմորն է երեք
ինչ․ քացախ, աղ, ջուր․ այսպէս աւետարանական
բանքն աղիւ իմաստութե՟ աստուածային համե֊
մեալ, քացախիւ աշխարհական խորհրդոյ հին օ֊
րինաց և մարգարէից զօրացեալ և կենաց ջրով
գիտութե՟ն քրիստոսի զանգեալ՝ եղև խմոր
ազդու և զօրեղ խմորող ամենայն աշխարհի ։

Զոր առեալ կին ։ Բարոյականօրէն նշանակէ
զտէրն մեր քրիստոս՝ որ կոչեցաւ կին․ նաև՝ զի
կինն այնքան գթած է առ զաւակս իւր՝ մինչ
զի ուր ուրեմն մոռանայ․ իսկ տէրն մերոյ
գութ առ հոգևոր զաւակունս իւր այնքան է,
մինչև անհնար է նմա մոռանալ, *Մի թէ մո֊
ռանայցէ կին զզաւակ իւր, կամ ո՛չ գթասցի
'ի ծնունդս որովայնի իւրոյ, և եթէ մոռասցի
զայս կին, սակայն ես ո՛չ մոռացայց զքեզ ասէ
տէր(1) ։ Երկրորդ՝ յատուկ է կնոջ թրել զա֊
լիւր և առնել զհաց 'ի սնունդս զաւակաց և
ընկերաց հիւրոց ։ Ասաց աբրահամ ցկինն սառ֊
րայ, մինչ եկին առ նա երեք յանմարմնու֊
թեն․ *Փութա՛ և թրեա՛ զերիս գրիւս նաշ֊
հոյ ալեր, և արա՛ նկանակս(2) ։ Սա և տէրն
մեր իբրև այլ կին սառրա 'ի մկրտել զպարտա

(1) Եսայ․ խթ․ 15 ։ (2) Ծննդոց․ ժը․ 6 ։



ւոր 'ի պատիւ հիւրոցս՝ յաշխարհի առեալ ըզ
խմոր, այսինքն՝ զէական բան աւետարանին՝ թա֊
գոյց յերիս գրիւս ալեր․ այսինքն՝ յանձն իւր, որ բաղ֊
կանայ յաստուածութենէն, 'ի հոգւոյն և 'ի
մարմնոյն, և արար մեզ նկանակս ։ *Առէք կե֊
րայք․ մինչև ամ֊ խմորեցաւ ։ *Հացն՝ զոր ուտեմք,
ո՛չ ապաքէն հաղորդութիւն է մարմնոյն քրիս֊
տոսի(1)․ որով խմորեալ ամենեքեանս լինիմք
մի նոր զանգուած․ այսինքն՝ խորհրդական մար֊
մին քրիստոսի․ զայս ամենայն առնէ էական բա֊
նքն, *Առէք կերէք (2) ։ Տեսանէք զզօրութիւն
աւետարանին․ խորհրդապէս կնաւն նշանակէ
եկեղեցին, որ է խորհրդական հարսն քրիստո֊
սի ։ *Նշան մի երևեցաւ յերկինս ։ Սա առեալ
զազդու խմոր աւետարանական բանին, թա֊
գոյց 'ի գրիւս, այսինքն՝ յերիս չափս ալեր,
յերիս մասունս աշխարհի, որ է ասիա, ափրի֊
կէ և եւրոպիա, զորս բաժին որդիքն նոյի ծնն֊
դովք իւրեանց ։ Սեմ զափրիկէ, յորմէ ծնաւ
քրիստոս․ ըստ այնմ, *Որ սեմայն(3) ։ Յաբեթ՝
զասիա, յորում են և հայք, որք յուսադրե֊
ցան 'ի նոյէ՝ բնակել 'ի տան սեմայ(4) որով նը֊
շանակի կոչումն հայկազանց 'ի հաւատս քրիս֊
տոսի․ և *Քամ՝ զեւրոպիա․ ըստ որում ե֊
րեք ազգ էին որդիք նոյի․ և 'ի սոցանէ սփռ֊

(1) Ա․ կորնթ ։ Ժ․ 16 ։ (2) Մատթ․ իզ․ 26 ։ (3) Ղուկ․ Գ․ 36 ։
(4) Ծննդոց․ Թ․ 27 ։

ուեցան ընդ ամենայն երկիր. յայտ է թէ՝ երկիր ամենայն խմորեցաւ աւետարանաւն. քանզի և չորրորդ գիւտն, որ է Ամերիգա, այժմ սկսեալ է և նա խմորիլ: Նարոյականաւքս՝ նշանակէ զիւրաքանչիւր անձն՝ որ է հաւատով հարսն քրիստոսի: *Խօսեցայց զքեզ ինձ հաւատով(1): *Կամիմ իբրև զկոյս մի սբ զձեզ յանդիման կացուցանել քրիստոսի(2): Արդ որ հաւատարիմ է և սիրելի հարսն քրիստոսի, պարտի առնուլ զազդու և ծառայական խմորն աւետարանական բանին և թագուցանել յերիս գրիւս ալեր, այսինքն՝ յերիս մասունս հոգւոյն, մինչև ամենայն խմորեսցի. այսինքն՝ բանականն միշտ խորհիցի զվերինն. ցասմնականն միշտ սրտմտեսցի ընդդէմ մեղաց. իսկ ցանկականն միշտ դիմեսցէ սիրով առ բարին Քրիստոս: Նմանի էր դաւիթ, *Ի սրտի իմում թագուցի զբանս քո, զի մի մեղայց քեզ(3): Իսկ արդ՝ դու ո՞վ նորոգ հարսնացեալ քրիստոսի, խանդակաթ բանիւս, բարւոք 'ի միտ առ զխորհրդական խմոր բանիս. որով խմորել բա ամենայն մասանց հոգւոյդ և միացեալ սիրով ընդ սիրելւոյն քո յիսուսի փեսայիդ, լիցիս մի զանգուած. դարձեալ կլինն քրիստոս՝ առեալ զխմոր այսինքն՝ զհացն, թագոյց յեկեղեցին՝ բաշխելով յառաքելսն, որոց հաղորդութեն երեք մասունք աշխարհի խմորեցան:

(1) Ովս. Բ. 20: (2) Բ Կորն. ԺԱ. 2: (3) Սաղմոս ՃԺԸ. 11:



# ՅԱՂԱԳՍ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ԵՐԿՆԻՑ:

## ԳԼՈՒԽ Ը:

Սքանչելի խորհրդական տէրն մեր յիսուս քրիստոս՝ որ մինչ ցմահ ջանայ վն՜ մերոյ փրկութեան, անչափ գթութեամբ շարժեալ 'ի սէր մեր, տեսանելով զմիտս մարդկան բովանդակ գրաւեալ յառերևոյթ բարիս կենցաղոյս, վարի պէսպէս ձեռնարկութեամբ, հնարիւք և օրինակօք, զի թերևս կարասցէ զմեզ համոզել 'ի հաւանութիւն երկնային ճշմարիտ և անանց բարեացն. և այնու կորզել զմիտս մեր ստալի առ ինքն. քանզի յատուկ է իմաստնոյ 'ի ջատագովելն զիր ինչ, վարել պէսպէս փաստիւք 'ի համոզել զմիտս ներհակին. այսպէս խորամանկն սատանայ կամելով հրապուրել զմիտս տեառն, վարեցաւ պէսպէս հնարիւք 'ի փորձութեանն. արդ՝ խնամակալն մեր և հոգևոր մանկութեան մերոյ դաստիարակն՝ կամելով ըղձակերաս առնել մեզ զարքայութիւն և զաւետարան՝ յառաջարկէ պէսպէս առակս և նմանութիւնս, որովք իբրու զանազան մրգօք որսացեալ զզգայական միտս մեր 'ի գիւտ և 'ի խնդիր երկնային և ազնիւ և անապական գանձուն՝ ածէ:

՚Նմանեցաւ արքայութիւնն երկնից գանձի ծածկելոյ յագարակի: Մատթ. ԺԳ. 44:

# ԱՂՔԱՏՈՒԹԻՒՆ

Յարարածոցս ոչ երբէք եղև այնքան սաստկապէս տիրէ և թագաւորէ սրտի մերում, որքան ախտն արծաթոյ. զի արծաթոյ լսէ ամենայն ինչ՝ որպէս ասէ Ժողովողն(1). վասն այսորիկ Տէրըն Աշխարհի փորձառուն սրտից մերոց, առ 'ի մեծապէս շարժել զախտս մեր 'ի սէր աղքատութեան, նմանեցուցանէ գանձի ծածկելոյ յագարակի. թէ որքան խնդութիւն պաշարէ զախտս մարդոյ՝ մինչ ծանիցէ յագարակի իւիք գոլ գանձ, և թէ որպիսի սիրով և փութով՝ թէ և չունիցի զբաւական ինչս առ ձեռն պատրաստ, վաճառէ զամենայն ինչս իւր և ջանայ 'ի ձեռս բերել զագարակն զայն. յայտ է ամենեցուն. այնպէս պարտիս առնել և դու, եթէ ծանիցես՝ թէ յորում յագարակի իցէ գանձն աղքատութեան երկնից. փութա՛ այսպէս ճանաչել թէ ուր իցէ:

Նախարանօրէն՝ ագարակն է սուրբ աւետարաննըն. իսկ գանձն 'ի նմա՝ է ինքն Քրիստոս. որ ոք կամի ստանալ զգանձս զայս՝ պարտի գնել զաւետարանն նախ՝ ուսմամբ, և յայնժամ ծանի-

(1) Ժողով. Ժ. 19:



ցէ արիւնն Քրիստոսի գոլ 'ի նմա անապական գանձ, որով գնեցան 'ի ձեռաց սատանայի ազգ որդւոց մարդկան. *Ո՜չ ի ոչ ապականացու արծաթեղինօք և ոսկեղինօք փրկեցայք 'ի ձերոց ունայնութեանց և 'ի հայրենաւոր գնացից, այլ պատուական արեամբն Քրիստոսի իբրև անբիծ և անարատ գառինն(1): և թէ՝ *Ո՜չ եղար և գնեցեր զմեզ Աստուծոյ՝ արեամբ քով(2):

Երկրորդ՝ զուարթն առնելով, այս է խնկական գին ագարակի աւետարանին, որով տիրապէս ստանայ զգանձն աստուածային: *Ահա եղիցի յառնելըն իւրում երանելի(3): *Որ պահէ զպատուիրանս իմ, ես և Հայր իմ առ նա եկեսցուք, և օթևանս առ նմա արասցուք(4): Ահա՛ գանձն ծածկեալ, յորում ամենայն գանձք իմաստութեան և գիտութեան ծածկեալ կան: Տե՛ս՝ թէ որքան հարկաւոր է ուսումն աւետարանին. վա՛յ նոցա, որք և ոչ զհայր մերն լաւապէս գիտեն. ահա՛ գին այսր ագարակի պահանջի, զի զոր ինչ ունի մարդն՝ վաճառեսցէ. *Ե՛րթ վաճառեա՛ զինչս քո՝ և տո՛ւր աղքատաց, և ունիցիս գանձս յերկինս. և եկ զկնի իմ: Ինչքն մարդոյ տիրապէս են յատուկ կամքն. 'ի կամաց քոց հրաժարեա՛, և գնա՛ զկնի Քրիստոսի: Երրորդապէս ագարակն է եկեղեցին.

(1) Ա Պետ. Ա. 18: (2) Յայտն. Ե. 9: (3) Յակ. Ա. 25:
(4) Յովհան. ԺԴ. 23:

իսկ գանձն 'ի նմա՝ է աստուածային աւետարանն. *Ահա իմաստութիւն և գիտութիւն և աստուածպաշտութի (1), այսինքն՝ աւետարան, այսոքիկ են գանձք արդարութե: *Երանեալ է այր, որ եգիտ զիմաստութիւն այսինքըն՝ զաւետարանն. որ գտանէ զնա՝ գտանէ և զգանձ. առ 'ի գնուլն այսր ագարակի պահանջի, զի ուրացի մարդ զամբարշտութի՝ և զաշխարհական ցանկութիւն. և դիմեսցէ 'ի կաթուղիկէ եկեղեցին քրիստոսի հաւատով, առ 'ի կեալ աստուածպաշտութեամբ. և յայնժամ գտցէ զգանձ աւետարանական, որ է ծածկեալ յեկեղեցին, զոր կուրացեալ հրէայքն և անհաւատքն ոչ կարեն գտանել, մինչև հաւատասցեն, ըստ պօղոսի: *Բարոյականապէս՝ ագարակն է սիրտ առաքինի. յոր ծածկի գանձըն արքայութեան: *Արքայութիւն աստուծոյ 'ի ներքս 'ի ձեզ է (2): Որ ոք կամիցի զայնպիսի ագարակ ունել՝ զի երևեսցի 'ի նմա գանձըն աստուածային, պարտի վաճառել և խըրոտալ զսէր ախտային, և առնուլ զսէրն աստուածային. որով հոգին զտեալ մաքրեսցի 'ի մըրրոյ կենցաղոյս. և որպէս հայելի անախտ պայծառասցի. յորում երևեսցի գանձն արքայութեան աստուած: *Երանի, որք սուրբք են սրտիւք, զի նոքա զաստուած տեսցեն (3). զար-

(1) Եսայի. լԳ. 6: (2) Ղուկ. ԺԷ. 21: (3): Մատ. Ե. 8:



ձեալ ագարակն է աղքատութիւն քրիստոսի, յորում գանձն արքայութեան պարունակեալ կայ. եթէ ոք կամի գտանել զայն՝ պարտի գընել զաղքատութի քրիստոսի լինելով աղքատ հոգւով. որ է հրաժարել յամենայն ցանկութեց կենցաղոյս և մերկանալ յերկրաւոր ըղձիցս, և լինել սրտիւ յերկրաւորացս իբրև թափուր: *Երանի աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւնն երկնից (1):

Սիրտն թափուր յերկրաւորացս՝ ունի գանձս յերկինս. և ուր քրիստոս է գանձն իւր, անդ և սիրտ իւր եղիցի. այնպիսին նա և 'ի թագաւորութե լինի աղքատ. միայն զաստուած խնդրելով՝ և ոչ այլ ինչ: *Զի՞նչ կայ իմ բնաւ յերկինս, կամ 'ի քէն զի՞նչ և ս խնդրեցից յերկրի. ա͞ծ սրտի իմոյ, բաժին իմ աստուած յաւիտեան (2): Որ ոք իցէ առաւել ագահ՝ դիմեսցէ յայն գանձ. զի թերևս յագեսցի լայնապատար բերանն ցանկութեան. այս գանձ նախ ծածկեցաւ յագարակ գերեզմանին. ապա հեղաւ 'ի դաշտն արարատեան. և այժմ է յագարակն երկնից 'ի ներքին կողմն փարագուրին ընդ աջմէ ա͞յ: *Հա՛ տասցի զաւեղին, որ ոք կամի ըստանալ զսա, վաճառեսցէ զհոգս աշխարհի և դիմեսցէ ուխտիւք 'ի սուրբ քաղաքն երուսաղէմ, և 'ի ս͞բ էջմիածին. ընդ որս լինի մուտք հաւատով և սիրով 'ի յերկնային ագարակն:

(1) Մատ. Ե. 3: (2) Սաղ. ՀԲ. 20:

# ՅԱՂԱԳՍ ԳԵՂԵՑԿՈՒԹԵԱՆ ԱՐԱՐՉՈՒԹԵԱՆ ԵՐԿՆԻՑ

## ԳԼՈՒԽ Թ.

Գեղեցիկն յորդիս մարդկան Յիսուս կամելով սիրահարս առնել զմեզ արքայութեան իւրոյ, բացայայտէ զայն ՚ի ձեռն պատուական մարգարէի, որում անունն ոք ցանկայ:

Նման է արքայութիւնն երկնից առն վաճառականի՝ որ խնդրիցէ մարգարիտս գեղեցիկս: Մատթ. ԺԳ. 45:

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Սորին գերազանցութիւն, որքան առաւել իցէ, այնքան և բազում նմանութիւս պահանջէ. որով մարթ լիցի պարզաբանել և բացայայտել յատկութեանց նորա. և քանզի արքայութիւնն է ամենագերազանց, վասն որոյ Տէրն մեր բազմաց իրաց նմանեցուցանէ, առ ՚ի ծանուցանել մեզ զզանազան մեծութիւն նորա. Թէպէտ ոչինչ լինիցի կարէ տիրապէս նմանել նմա, բատ այնմ, *Զոր ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ, և ՚ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զոր պատրաստեաց Ած սիրելեաց իւրոց(1): Նկարագրապէս արքայութիւնն երկնից՝ է տէրն մեր Քրիստոս, *Ես եմ ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք (1): Սա նմանի առն վաճառականի. նախ՝ զի որպէս վաճառականն ելանէ յերկրէն և գնայ յայլ աշխարհ, սոյնպէս և տէրն առէ. *Ելի ՚ի հօրէ և եկի յաշխարհ. երկրորդ՝ խնդրէ զցանկալի ինչս. և տէրն մեր խնդրեաց ըզմարգարիտս գեղեցիկս: Մարգարիտն է այլաբանօրէն հոգին մարդոյ. զի որպէս նա գոյանայ ՚ի ցօղոյ երկնից յասարէս, այսպէս և հոգին մարդոյ իջանէ հանգոյն ցօղոյ ստեղծմամբ յԱյ ՚ի մարմին. *Հոգին դարձցի առ Ած, որ ետ զնա(2): Եւ որպէս նա է գեղեցիկ՝ այսպէս և հոգին, զի է ՚ի պատկերի աստուծոյ, քան զոր ոչինչ գեղեցիկ: Գտեալ մի պատուական մարգարիտ. (այսինքն, զհոգին մարդոյ՝) վաճառեաց զոր ինչ ունէր, Ինչքն Քրիստոսի են, քաղցր կեանքն, զոր եդ ՚ի վերայ մեր, և ամբիծ արիւնն անապական՝ զոր եհեղ վասն մեր առատութեամբ, զի գնեսցէ զպատուական մարգարիտն ադամ. նա և ՚ի ծովէ աշխարհիս զբուսաւորեալ մարգարիտն մարդ-ամ. ըստ այնմ, *Ի ծովային բերմանց՝ շնորհաւորս մարգարիտս: Նոյնմ մասին տէրն մեր նմանեցաւ լուղակի. զի որպէս լուղակն սիրով մարգարտին յանձն առնու զմահ, սուզանի յատակս ծովու ՚ի գիւտ մարգարտոյն իւրոյ

(1) Ա. Կորնթ. Բ. 9:



(1) Յովհան. ԺԴ. 6: (2) Ժողով. ԺԲ. 7:

մարգարտին, այսպէս տէրն մեր սիրով պատ-
կերէ մարգարտի խորոյ՝ յանձն առեալ զխաչ,
մտեալ 'ի ծով չարչարանաց և սուզեալ յան-
դունդս դժոխոց, 'ի վեր եհան զադամ մար-
գարիտն հանդերձ ծննդովք: Այլաբանօրէն՝
ք͞ն է գեղեցիկ մարգարիտ, որ 'ի վերուստ որ-
պէս զցօղ ցօղեալ 'ի յարգանդ սրբասուրբ
կուսին, անտի ծնաւ մեզ լուսաւոր մարգա-
րիտ, ըստ շնորհալւոյն ներսիսի. *Մարգարտա-
բէն ծնունդ կուսին, աստուած և մարդ մի
երկոքին: Մարգարտախնդիր վաճառականքն
են ա͞ծպաշտքն. ըստ այնմ, *Շահավաճառ
մեծ է աստուածպաշտութիւնն(1): Այսպիսիք
են՝ որք վաճառեն զամենայն ինչս, այսինքն՝ մեր-
կանան յերկրաւոր իրաց 'ի ստանալ զքրիստոս
մարգարիտն. և որպէս լուղակք մերկացեալ
յաշխարհէս ըղձից, և մտեալ 'ի ծով ամենաբա-
նական խորին իմաստից, ընդ ախոյեան ալիսն
կռուեալ՝ հանեն բռնութեամբ զանգին մար-
գարիտն. որ է բոլոր աստուածութեամբ գե-
ղեցիկ, մարդկութեամբն անարատ 'ի մեղաց,
և մեծագին յարամնացութեամբ: *Ամենեին
գեղեցիկ ես եղբօրորդի իմ, և արատ ինչ ոչ
գոյ 'ի քեզ(2): Իսկ չարքն շահավաճառ համա-
րելով զաստուածպաշտութիւնն՝ վաճառագո-
րու ա͞ծպաշտուէն 'ի գործ ածելով զխորհուրդ

(1) Ա͞. տիմոթ. Զ. 6: (2) Երգ եր՛: Դ. 7:



եկեղեցւոյ՝ և զայլ բարեգործութիւնս, ժո-
ղովեն զգանձս, որոնեն զհեշտութիւս և խնդրեն
զպատիւ և ասեն, օրհնեալ տէր՝ և մեծացաք.
այսու նմանին չար վաճառականի, զի ոչ խնդ-
րեն զգեղեցիկ մարգարիտն անանց երջանկու-
թեան, այլ զադեղ եղծանելի և բեկանաւոր
խեցեղէնս՝ այսր յաւիտենի ապականութեան
կացուցանելով զերջանկութիւնս իւրեանց 'ի
մեծութիւնս, 'ի հեշտութիւնս և յիշխանու-
թիւնս անցաւորս: Դարձեալ խորհրդապէս՝
արքայութիւնն երկնից է գեղեցիկ մարգարիտ,
այսինքն աստուած. զի եթէ արեգակն՝ որ ա-
րարած է ա͞յ, այնքան գեղեցկագոյն է, ապա
յիրաւի մեծ է տէր և գեղեցիկ յոյժ, որ ա-
րարն զնա. ապա վաճառականք աշխարհիս, մի՛
ընդ դեղ այդ լուսաւոր մարգարտիդ պատրել,
վաճառեսցեն զինչս իւրեանց հեթանոսաց.
այսինքն մի՛ գերեսցեն զմիտս իւրեանց 'ի պաշ-
տօն դորա, այլ անդրաբերցեն զխորհուրդս և
զմիտս իւրեանց 'ի տէր և 'ի պաշտօն դորին ա-
րարչին ճանաչելով, զի որ գեղեցկու͞է ճարտա-
րապետն է, նա հաստատեաց զնա, որոյ գեղեց-
կութիւնն այնքան է, զի որ միանգամ արժա-
նացի տեսանել զնա, այնպէս գրաւեսցի սիր-
տըն՝ և ըմբռնեսցի միտքն 'ի դեղ նորա, մին-
չև ոչ կարասցէ շրջել զակն մտաց իւրոց անտի
յաւիտեան. յայս միտս ասէ, *Ուրախութիւն

ձեր ոչ որ հանդէ 'ի ձէնջ(1): և թէ * Հրեշտակք նոցա հանապազ տեսանեն զերեսս հօր իմոյ որ յերկինս է(2): Աւանդ որոյ ասաց, * Ցոյց մեզ զհայր՝ և շատ է մեզ(3). հապա, փութասցուք գնել զայս անգին մարգարիտ, կոխաելով՝ որ ինչ առ ոտս է: Բարոյականապէս գեղեցիկ մարգարիտ է իմաստութիւնն կամ աւետարանն, ըստ այնմ, * Պատուականագոյն է քան զականս պատուականս(4), զայս թէ ստանամք, մեծանամք մեծ առաքինութեամբ. * զի թէ արդարութիւն որ սիրեաց՝ վաստակք նորա առաքինութիւնք են(5). բայց 'ի ստացումն սորա պարտիմք վաճառել զամ հեշտութիւն և զծուլութիւն: * Արկ զոտս քո յոտնակապս նորա, և յանուրս նորա զպարանոց քո. և մի՛ ձանձրանար 'ի շղթայից նորա (6): Համանմանաբար գեղեցիկ մարգարիտն է ճշմարիտ բարեկամն, յորոյ 'ի ստացումն պարտիմք ոչ խնայել յինչս, այլ և զամ տալ. ըստ այնմ * Կոր՛ զարծաթ քո վասն բարեկամին(7). վա՛յ և երանի՛ գտողին զճշմարիտն:

(1) Յովհան. ժզ. 22: (2) Մատթ. ժը. 10: (3) Յովհան. ժդ. 8:
(4) Առակ. ը. 11. Կամ. գ. 15: (5) Իմաստ. ը. 7:
(6) Սիրաք. զ. 25: (7) Սիրաք. իթ. 13:



# ՅԱՂԱԳՍ ԱՄԵՆԱԿԱԼ ԶՕՐՈՒԹԵԱՆ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ԵՐԿՆԻՑ:

## ԳԼՈՒԽ. Ժ:

Տէրն մեր ցուցանել կամելով մեզ զամենակալ զօրութիւն արքայութեան, կամ աւետարանին՝ ասէ.

Նման է արքայութիւնն երկնից ուռկանի: Մատթ. ժգ. 47:

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Նկարագրապէս խոկումն արքայութեան երկնից նմանի ուռկանի. զի որպէս ուռկանն անզերծանելի պաշարէ՝ զոր ըմբռնէ, այսպէս և խոկումն արքայութեան այնպէս զրաւէ զմիտս մարդոյ, յոր անկանի, մինչև անհնարին լինիլ նմա խուսափել 'ի նմանէ. քան զի մինչ յառաջ եդեալ մտացն է ճշմարիտն, և կամացն բարին, արքայութիւնն երկնից անուամբ և իրօք գոլով ընդ հանուր բարի, ըստ այնմ ըմբռնէ զմիտս մեր, և հաճի կամքն, անհնարին է թողուլ զայն բարին կամակար մտօք, բայց եթէ վրիպմամբ. զի եթէ կեղծեալ բարին զօրէ ուռկանաբար զմիտս մարդոյն զրաւել, որպէս է ցանկութիւն կնոջ՝ որ յափշտակէ զմիտս ան-

զգամաց համգոյն ուռկանի որպէս ասէ սո_
ղոմոն, հանդերձ կնաւն՝ որ է որս՝ և ուռկան
սիրտ նորա (1)․ քանզի եւ խնկական բարին, որոյ
յանկուէ ուռկան զաշխարհ ամենայն յինքն գը_
րաւեալ․ քանզի գրեթէ ամենայն ազգք դիմեն
յարքայութիւն աստուծոյ ջատագովելով ։

Խորհրդապէս նշանակէ աւետարանն քրիս_
տոսի․ քանզի որսորդք են առաքեալք և վար_
դապետք․ ուռկան է սուրբ աւետարանն․ ծով
է աշխարհս․ ձկունք են մարդիկ․ ըստ այնմ,
*Ահա ես առաքեմ ձկնորսս բազումս՝ ասէ
տէր․ որք են առաքեալք․ և յետ այնորիկ առա_
քեցից որսորդս բազումս, և սոքա են վարդա_
պետք, և որսասցեն զնոսա 'ի վերայ լերանց․
և յամենայն բլրոց ։ և 'ի ծակուց վիմաց (2) ։
Այսպէս առաքեալքն պետրոս զաւետարանա_
կան ուռկանն արկանելով միանգամ 'ի ծով
աշխարհիս՝ զերեք հազար ձկունս կալաւ 'ի մի_
հաւանէ 'ի կեանս (3)․ յորոյ օրինակ հրամանաւ
տեառն արկեալ զուռկանն 'ի ծով, զհարիւր
յիսուն և զերիս մեծամեծ ձկունս եհան 'ի
վեր (4)․ ցուցեալ թէ՝ երից յիսնից այսինքն,
երից մասանց աշխարհիս 'ի փառս երրեքանձ_
նեայ էութեան որսալոց են զմարդիկ 'ի կեա_
նըս․ վասն որոյ ասաց տէրն, Յայսմ հետէ ըզ_

(1) Ժողով․ Է․ 27 ։ (2) Երեմիա․ ԺԶ․ 16 ։ (3) Գործ․ Բ․ 41 ։
(4) Յովհան․ ԻԱ․ 11 ։



մարդիկ որսայցէք 'ի կեանս ։

Եւ յամենայն ազգաց ժողովելոց ։ Ուռկանն մինչ ար_
կանի 'ի ծով, ոչ միայն ձկունք, այլ և պէսպէս
զեռունք ըմբռնին 'ի նմա, սոյնպէս և աւե_
տարանն ոչ միայն զհրեայս՝ այլ և զհեթանոսս
ըմբռնեաց․ որ օրինակեցաւ 'ի տեսիլն պետրո_
սի․ որում հրամայեցաւ զենուլ և ուտել (1) ։
ժողովեցին զբարի բարին յամանս ։ Բարի բարին են ըն_
տիր ընտիր սուրբք․ ամանն է արքայութիւնն
երկնից կամ երկինն․ 'ի զինուորեալ եկեղեցւոջ
բազումք են ըմբռնեալք կամ կոչեցեալք․ իսկ
'ի յաղթողին, սակաւք ընտրին․ քանզի սակաւ
է ցորեանն առ բազմութեամբ յարդին․ այնպէս
եղիցի 'ի կատարածի աշխարհի․ ցուցանէ թէ կա_
տարեալ որոշումն բարեաց և չարեաց՝ 'ի կա_
տարածի է լինելոց․ սոյն մեծ երկիւղ պէտք է
մեզ, զուցէ խոտան գտանիցիմք․ քանզի սա_
կաւք են ընտրեալքն․ վասն որոյ պարտ է մեզ
ջանալ՝ բարեաց գործով հաստատուն զմեր
կոչումն և զընտրութիւն պահել ։ Անդ եղիցի լալ
և կրճել ատամանց ։ զայսմանէ տես յառաջին որո_
մանց ագարակի ։

(1) Գործ․ Ժ․ 13 ։

# ԹԻՒ ՈՒԹԵՐՈՐԴ [illegible] ԹԱԳԱՒ. [illegible] ԵՐԿՐՈՐԴ:

## ԳԼՈՒԽ ԺԱ:

Ուրք կարէ ժառանգել զարքայութիւն աստուծոյ՝ եթէ ոչ ողորմութեամբ նորին. իսկ առ ՚ի գտանել մերձին զողորմութիւնն աստուծոյ, որով արժանանամք արքայութեան, պարտիմք պատասխանել նախընթաց ողորմութեան նր. որ հանգոյն արեգական յառաւօտէ կենաց մերոց՝ մինչ ցերեկոյ մահուան անընդհատ ծագէ ՚ի վերայ մեր, ըստ, *Նորոգումն առաւօտու բազմանայ ողորմութիւնք քո տէր (I): Արդ՝ այսմիկ ողորմութեան պատասխանեմք եթէ մեք ևս ըստ կարի ողորմեսցուք եղբարց մերոց՝ որ լինի երկակի, նախ՝ բառնալ զկարիս եղբօրըն կամ՝ քեռն. թէ հոգեւոր, որպէս է ուսուցանել զտգէտս՝ խրատել զմեղուցեալսն. և այլն: և թէ մարմնաւոր. որպէս է կերակրել զքաղցեալս, զգեցուցանել զմերկս. և այլն: Երկրորդ՝ թողուլ զպարտս, թէ հոգեւոր, որպէս է բամբասանք և զրպարտութիւնք. և այլն: և թէ մարմնաւոր՝ որպէս է զրկանք, վնասք. և այլն: առ առաջինն այսինքն՝ ՚ի բառնալ զկարիս՝ ոչ են ամենեքեան բաւական. իսկ առ երկրորդն՝

(I) ողբ. Գ. 23:



որ է թողուլ ՚ի սրտէ զյանցանս, ամենեքեան են բաւական, և այս է հարկաւոր յոյժ. առանց որոյ անհնար է գտանել զողորմութիւն աստուծոյ զվերջին. վասն որոյ ներող փրկիչն մեր ՚ի զգուշութիւն հետեւողաց իւրոց՝ ասաց զառակս զայս:

Վասն այսորիկ նմանեցաւ արքայութիւն երկնից առն թագաւորի՝ որ կամեցաւ համար առնել ՚ի մէջ ծառայից իւրոց: մատթ. ԺԸ. 23:

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Նկարագրայէս՝ ՚ի բազում տեղիս թագաւորք ունէին վաճառականս, որպէս յայտ է յեւրոպիա, որք յարքունական գանձուց իւրեանց տան ծառայիցն առ ՚ի շահեցուցանել. իսկ ՚ի համարատուութեանն՝ եթէ վաստակեալ լինէին, մեծախրախամբք հրամայէր վարձատրել զնոսա և զկինս և զորդիսն և այլն: զի ՚ի նոսա լինէր վատնել արքունական գանձուն. և քանզի կորուսանել զարքունական գանձս, ոչ է իր թեթև, վասն որոյ խստիւ պահանջէին և քաղաքական օրէնքըն ՚ի հնումն հրամայէր ՚ի չքաւոր պարտապանաց զորդիս գրաւել. ըստ այնմ, *Փոխատուն եկն առնուլ զերկոսին որդիս իմ իւր ՚ի ծառայութիւն (I): Արդ՝ յառնուլն զհամար

(I) դ. թագ. դ. 1:

գթած թագաւորին, որ ինչ դիպեցաւ բիւր քանքարոյ պարտապանին, նոյն հոգևորապէս հանդիպի չար մեղաւորին՝ ՚ի քննութեան երկնաւոր թագաւորին. եթէ զանգթութեանն նորա բերցէ զօրինակ։ Արդ՝ հոգևորապէս արքայութիւն երկնից աստ՝ է Հայրն երկնաւոր, որով բաղձանաց արքայութիւնն. սա հանգոյն թագաւորին պահանջէ զքանքարս շնորհաց հոգւոյն ծառայից իւրոց ըստ իւրաքանչիւր կարի. և երբ կամիցի զհամար առնուլ, զոմանս խոնարհեցուցանելով, և զոմանս բարձրացուցանելով, զոմանս պատժելով, և զոմանս փառաւորելով, խորագոյն արդարութեամբ, զոր ոչ կարեմք աստէն ճանաչել։ Մատուցաւ պարտապան մի՝ բիւր քանքարոյ։ Արդ՝ բիւր քանքարն նշանակէ զշնորհսն աստուածային. մի միայն մեղօք մարդն լինի պարտապան բիւր քանքարոյ. այսինքն՝ շնորհաց և պարգևացն աստուծոյ. որպէս է ստեղծումն՝ նորոգումն և լուսաւորումն, որ գերազանց է քան զամենայն զանձս աշխարհի։ Դարձեալ բիւր քանքարն է պատիւն աստուծոյ. վասն զի մարդն մեղանչելով արհամարհէ զնա, որով պարտաւորի անհուն քանքարաց. ըստ որում մեղանչէ ընդդէմ անհունին։ * Յանցանել ընդ օրէնսն՝ զաստուած անարգէ(1). ծառայ իմ արհամարհեաց զիս, որ է քր-

(1) Հռոմ. Բ. 23։



րհական մեզ։ Դարձեալ՝ մարդն մեղանչելով արհամարհէ զերախտիսն քրիստոսի, որով լինի բիւրիցս բիւր քանքարոյ պարտապան. * Զորդին աստուծոյ առ ոտն հարկանեն(1)։ Իբրև ոչ գոյր հատուցանել՝ հրամայեաց վաճառել զնա տէր նորա։ Մեղքն այնպէս կորուսանէ զմարդն ՚ի բարեաց արդեանց, մինչ զի բոլորովին թողու ունայն և չքաւոր. որպէս ասի զանառակ որդւոյն. սկսաւ չքաւորիլ(2). ամենայն բարութիւնքն՝ զորս արար, մի՛ յիշեսցին(3). և սա տէրն ետես՝ զի ոչ ունէր հատուցանել. բայց մեծ չարն է զի առնու և պարտաւոր միայ անհուն քանքարաց. հրամայեաց վաճառել։ Ահաւ մինչ մեղաւ ՚ի խորով, հրամայեաց հանդերձ ծննդովքըն կորուսանել։ Աքար մինչ մեղաւ ՚ի նզովս, հրամայեաց տէր մոխեալ զնոյն առնել։ Նաբաղ միայն մեղաւ առ դաւիթ. բայց երդուաւ չթողուլ ՚ի տանէ նորա, որ միզիցէ զորմով(4)։ Այսպէս դաթան և աբիրոն և այլք հանդերձ ազգայնովքն բնաջինջ եղեն(5). դաւիթ միայն մեղաւ, բայց ՚ի պատճառս նորա անթիւք պատժեցան(6). բարկութիւնն աստուծոյ ոչ միայն տարածի ՚ի ներկայ ծնունդս ամբարշտաց, այլ և ՚ի յապագայս, մինչև ցչորրորդ ազգս. իսկ ողորմութիւնն մինչև ցհազարս(7).

(1) Եբր. Ժ. 29։ (2) Ղուկ. ԺԵ. 14։ (3) Եզեկ. ԺԸ. 24։ (4) Ա. Թագ. ԻԵ. 22։ (5) Թիւ. ԺԶ. 32։ (6) Բ. Թագ. ԻԴ. 15։ (7) Ելք. ԼԴ. 7։

ուսանի առն սուրբ գրոյն՝ *Որդիք ամբարշտաց թերակատարք եղիցին (1). և թէ: *Ծնանիցիք զորդիս յանէծս, և սակս հօր անգթոյ խնդրին որդիք. զի վասն նր են ՚ի նախատինս (2): Պատճառն է, զի աստուած արդարութեամբ վարի յորդիս նոցա, թոյլ տալով երթալ ըստ բընութեան իւրեանց ընդ հասարակ շնորհօք. և զի ապականեալ բնութիւն ոչ կարէ յորդիսն յառաջանալ, վասն որոյ արդարապէս անկանի ընդ պատժով. այսու բանիւ Ճշմարտին այն՝ որ ասէ. *Անձն որ մեղիցէ, նոյն և մեռցի (3):

Զի ոչ եթէ որդի անմեղ դատի՝ վասն մեղաց հօրն դատապարտի, այլ վասն յառաջ մեղաց իւրոց. զոր կամ ՚ի հօրէն ուսաւ՝ կամ ինքըն յաւել ՚ի մեղս հօրն. բայց պատահի ՚ի ծընունդս ամբարշտաց նախատահմանել ոք ՚ի նախատեսեալ արդեանցն, և այն փրկի շնորհօք: Այսպէս էր սբն Գրիգոր լուսաւորիչն մեր, և կոռնելիոս հարիւրապետն, և յովսէփ արիմաթացին, և այլք: Աստուած իրաւամբք վաճառէ զմեղաւորս ՚ի ձեռս սատանայի. զի զոմանս ունի ստեղծմամբ ծառայս, և զոմանս արեամբ գնեալ. և զի են խառնողք քանքարաց և շնորհաց: Որ անկեալ ծառայն երկիրպագանէր նմա և ասէր երկայնամի՛տ լեր առ իս, և զամենայն հատուցից քեզ: Արդ հատուցանել մեղաւորն զամենայն քան-

(1) Իմաստ. Գ. 16: (2) Սիրաք. ԽԱ. 12. 10: (3) Եզեկ. ԺԸ. 4:



քարս պարտուց՝ կամիլ մի արտասուօք, խոնարհեալ յարիւն կողին Քրիստոսի, այլազգ անհնար է. որպէս մագդաղենացին զպարտս բիւր քանքարացն արտասուօք հատոյց. և լուաւ թէ՝ *Թողեալ լիցին մեղք քո (1): Գթացեալ տէր ծառային այնորիկ արձակեաց զնա, և զփոխն եթող նմա: Աստէն ցուցանի մեծ զօրութիւն խոնարհական աղօթից. քանզի ո՜ զքանքարախնդիր բարկացեալ սիրտ թագաւորին շիջեաց ՚ի հեզութիւն և ՚ի գթութի, եթէ ոչ խոնարհական երկրպագութեամբ ազերսանօքն ծառային. եթէ կամիս և դու քոյոյդ պարտուց ընկալնուլ զըշնորհումն, զէջուցանելով ՚ի գթութիւն զերկնաւոր արքայն, խոնարհական ծնրադրութեամբ յաղօթս պարապեա՛. ՚ի միտ առ և զանհուն գթութիւն երկնաւոր հօրն, թէ ո՛րպէս միով ապաշխարութեամբ մեղաւորին, այնքան պարտուց լուծումն շնորհէ, *Զողորմութիւնս քո տէր յաւիտեան օրհնեցից (2):

Ելեալ ծառայն եգիտ զմի ՚ի ծառայակցացն իւրոց, որ պարտէր նմա հարիւր դահեկան: Ցուցանէ տէրն այսու թէ ո՛րքան պարտս կարեն ունել մարդիկ առ միմեանս՝ համեմատութեամբ պարտուցն, զոր կարեն ունել առ ած. է որպէս հարիւր դահեկան առ բազմութի բիւր քանքարացն: Տես դու աստ զխոշորութի մարդոյս, և զմե-

(1) Ղուկ. Է. 38. 48: (2) Սաղմ. ՁԸ. 1:

ծառայութիւն ոյ․ նա միանգամ աղաչելով ըղձ-
ալորս բիւր քանքարացն շնորհէ․ բայց են ո-
մանք խստասիրտք՝ որք թէ և բիւրիցս աղաչե-
ցեալ լինին՝ ոչ զանց առնեն զմիով դահեկա-
նաւ․ այսպիսի է քանքարակորոյս չար ծառայս,
այնքան յիմար, մինչև անգամ 'ի միտ չէ ած
թէ՝ սա որովհետև ծառայակից իմ է, աէրն
իմ զորպիսի խնամս յիս եցոյց՝ զայնորինակ իւր-
նամ ունի և 'ի սա․ գուցէ լուեալ զորսից
իմոց, արտմեսցի կամ զայրասցի աէրն․ սա մինչ
էր 'ի ներքոյ ծանր պարտուց՝ նիրհէր էր ոխն.
և մինչ զերծաւ, արծարծեցաւ․ մինչև մատ-
նել զծառայակիցն իւր դահճի, և արկանել
'ի բանդ․ այսպիսիք են ոմանք չար աշխարհա-
կանք, կամ եկեղեցականք, որք մինչ են 'ի ներ-
քոյ ծանր պարտուց՝ այսինքն, են խեղճ զմի 'ի
հասարակաց, յոմանց ընդունելով զկիրս զոխ
ոյ զմթոյն օձից յիժառարաս սիրտս իւրեանց
մթերեն, իսկ մինչ բարձրանան 'ի պատիւ յայն-
ժամ սկսանին զյանցաւորս իւրեանց խեղդել
նեղել, աքսորել, մատնել դահճի և արկա-
նել 'ի բանդ․ առ այնպիսիսն ասէ՝ * Ողջեա՛
զդատաստան բարձրելոյն և անուս արա զագի-
տութիւն մերձաւորին (1)։

Մնոխակալքն նմանին աղուեսուց, որք ոչ
ունին զեղջիս․ այսպիսի էր արն, որ բամբասել

(1) Սիրաք․ Իը․ 9։



և չարչարեալ՝ ոչ պահէր ոխս, և 'ի խաչին ա-
սէր, * Հայր թող դոցա (1)։ զայնպիսեացն ամ-
բաստանողք բազումք լինին, հրեշտակք և ծա-
ռայակիցք․ և աէրն զթած լսէ ամբաստանու-
թեանց նոցա։ Տեսեալ ծառայակիցն որ ինչ եղեն՝ պատ-
մեցին տեառն։ Բարեպաշտք մինչ տեսանեն զխօս-
կալս և զանիրաւս՝ խեղդել զպարտաւորս իւր-
եանց՝ յիրաւի տրտմին յոյժ, ընդ այնմ՝ * Հայէի
յանագորոյնս և մաշէի զի զպատուիրանս քո ոչ
պահեցին (2)․ նա և ամբաստանեն․ որպէս յայտ է
զեղչեալ, զերեմեալ և զդաւթէ և զայլոց․
յորոց ոմանք ամբաստանեն զմեղաւորաց, և ո-
մանք անիծանեն, այլ և սուրբք յերկինս ամ-
բաստանեն (3), յայնժամ կոչեաց զնա տէրն իւր՝ և ասէ
ծառայ չար, զամ͞ն զպարտսն թողի քեզ, քանն զի աղաչեցեր
զիս։ Թէպէտ ամենայն մեղաւորք են չարք, բայց
չարութեան անուն 'ի վերայ խստասրտաց առա-
ւել յատկանայ․ վասն զի յատկութի է բարւոյն
հաղորդել զինքն այլոց, ըստ որում դիոնէսի-
ոսի, որ լինի սիրով և գթով․ իսկ որ ոչ թո-
ղու զպարտս եղբօրն՝ ոչ զգութ ունի՝ և ոչ
զսէր․ և այսպէս մերկանայ 'ի բանէ բարւոյն,
և զգենու զկերպարան չարին։ զամ͞ն զպարտսն թողի․
ասաէն զերկուս ուսանիմք․ նախ՝ թէ որ աղա-
չէ զտէր՝ զամենայն զպարտս նա թողու․ երկ-
րորդ՝ թէ որ աղաչէ զմեզ, և մեք պարտիմք

(1) Ղուկ․ իգ․ 34։ (2) Սաղմ․ ճժը․ 153։ (3) Գ․ Թագ․ ժը․ 10։

զամենայն պարտս նորա թողուլ. վասն որոյ ա-ռէ, Յորժամ արդ՝ ո՛չ էր պարտ և քեզ ողորմել ծառայակցին քում, որպէս և ես քեզ ողորմեցայ:

Պատասխանն մինչ արդարութեամբ լինի, և ոչ հակառակորդն իմ պարտաւորն կարէ բաց-առել. վասն որոյ եհարց ցչար ծառայն՝ և ոչ կարաց պատասխանել. քանզի ճշմարտութիւնն բռնադատէ զանհաւան միտս յամառողաց. զի որպէս աչքն ոչ կարէ լուսոյն խաւար առնել, այսպէս և ոչ միտքն ճշմարտին ստել. վասն որոյ՝ հերձուածողք միայն արտաքսապէս մար-տնչին ընդ դէմ ճշմարտութեան: Եւ բարկա-ցեալ տէրն նորա՝ մատնեաց զնա դահճացն, մինչև հատուսցէ զպարտսն: Աստուած յաղաչէն մեր թողու ըզ-պարտս. բայց ենթ թէուէ թողլոյ մեր զպար-տս եղբօրն իւրոյ մեզ՝ եթէ ոչ թողումք, և ոչ մերն լինի թողեալ. որպէս ենթ թէութեան ապաշխարութեան սաստ զկործանումն նինուէի. և մինչ ապաշխարեցին, ոչ կործանեցաւ(1). վա-սն որոյ 'ի վախճանի՝ որպէս ոչ թողել՝ խընդ-րէ զպարտս, մատնելով դահճաց դիւաց չհա-տուցանել. և ոչ կարասցէ զիւր քանքարն հա-տուցանել, որոյ վասն 'ի յաւիտեան տանջես-ցի. Նմին իրի տէրն մեր ուսոյց 'ի հայր մերն թէ՝ *Թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց(2): Իսկ ցու-

(1) Յովնան. Գ. 10: (2) Մատթ. Զ. 12:



ցեալ՝ թէ անհնար է առանց թողլոյ եղբօր՝ թողութեան հանդիպիլ. ուստի եզրափակէ. Նոյնպէս և Հայրն իմ երկնաւոր արասցէ ձեզ, եթէ ոչ թողուցուք իւ-րաքանչիւր եղբօր իւրում 'ի սրտից ձերոց զյանցանս նոցա:

## ԱՌԱՒԵԼ ԱՐԺԱՆԻ ԲՈՅՐ ԱՆՈՅՇ ԳՈՐԾՈՑ ՄԻՐՈՅ, ՔԱՆ ՏԱՐԱ-ԾԱՆ ԱՌԱՆՑ ՄԻՐՈՅ:

## ԳԼՈՒԽ ԺԸ:

Տէրն մեր յիսուս քրիստոս առ 'ի ցուցա-նել թէ՝ որքան արդիւնաւոր է սիրով աշխա-տելն 'ի փառս անուան՝ ասաց զառակս զայս,

Նման է արքայութիւն երկնից առն տանուտեառն, որ ել ընդ առաւօտս վարձել մշակս յայգի իւր: Մատթ. Ի. 1:

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Նկարագրապէս այս առնուածքս՝ որպէս ընթացք բանին ցուցանէ, էր յոյժ գթած և ա-ռատաձեռն նաև հոգեւորակ. էր հոգեւորակ՝ զի յառաւօտէ մինչ ցմետասաներորդ ժամն ոչ դադարեաց 'ի տան ծառայութեան, այլ անընդ-հատ էր որմնել զմշակս. և այս 'ի յառաջնալ գործոյն իւրոյ: Այսպէս պարտին առնել և ա-մենայն գործակալք 'ի յառաջացումն գործոյ

իւրեանց ։ Որ և գթած, զի զմետասաներորդ ժամու անկեալսն ՚ի հրապարակի դատարկ՝ գթածաբար յանդիմանէր և յղէր յայգին. այսպէս յանդիմանելն է գործ գթութեան։ Որ և առատաձեռն. զի յայնմ երեկոյի ետ վարձս մշակացն մեծաւ առատութեամբ. վասն որոյ արժանացաւ նմանիլ վերին տանուտեառն։ Վայ խստասիրտ և զրկող տանուտեարց, որ վշտացուցանեն զգործաւորս իւրեանց՝ կամ յամեցուցանելով զվարձս՝ և կամ ոչ ամբողջ տալով։

Խորհրդապէս՝ արքայն երկնից, որով բաղկանայ արքայութիւն, նման է առն տանուտեառն՝ որ ել ընդ առաւօտն ունել. այսինքն ած հանգոյն տանուտեառն՝ ընդ առաւօտս սկզբան աշխարհի՝ յորում տնկեաց զեդեմ, եած անդ զմշակն զադամ. յառաւօտէ մինչ ցերրորդն ժամ՝ է յադամայ մինչև ցնոյ. յերրորդ ժամէ մինչև ցվեցերորդն՝ է ՚ի նոյէ մինչև ցաբրահամ. ՚ի վեցէն ցիննն՝ յաբրահամէ ցմովսէս. յիննն ժամէն ցմետասանն՝ է ՚ի մովսիսէ ցքրիստոս. և ՚ի մետասան ժամէն ցերկոտասանն՝ է ՚ի քրիստոսէ ցկատարած։ Արդ՝ ՚ի ստեղծմանէն ցկատարած՝ իբրև զմի օր դնէ. զի հազար ամն իբրև զմի օր է յաչս տեառն. բստ այնմ, * Հազար ամ յաչս տեառն, որպէս զմի օր երեկի՝ զի էանց. այլ զի մի՛ մեծ համարեսցին զօրն՝ դնէ ևս քան զայն նուազն՝ որպէս պահ մի գիշե-



րոյ(1)։ Տես աստ զանհուն ողորմութիւնն և զսէրն աստուծոյ առ մարդս՝ որ ՚ի սկզբանէ ցկատարած աշխարհիս, մեծաւ նախախնամութեամբ կոչէ զանկեալս ՚ի ծուլութիւն անհաւատութե՝ յայգի եկեղեցւոյ և յաշխարհի գործել զգործ տեառն, զի արժանացին զահեկանի տեառն իւրոյ. ուստի՝ իրաւամբք ասաց ժողովողն. թէ * Ի վերայ ամենայնի է թագաւոր անդաստանի գործեցելոյ(2)։ Նոյնպէս և տէրն ցուցանելով զանչափ գթութիւն հօրն, ասէ. * Հայր իմ մինչև ցայժմ գործէ, և ես գործեմ(3)։ Զբանս այսոցիկ՝ ոչ որք մշտեալ են յայգի տեառն, այլ՝ որք ջերմապէս գործեն ՚ի նմին։ Ընդ մետասաներորդ ժամու ելեալ եգիտ զայլս զի կային դատարկ՝ ասէ, ընդէ՞ր կայք աստ զօրն ցերեկ՝ դատարկ. ասեն, ո՛չ ոք կալաւ։ Մովսիսական օրէնքն որովհետև ոչինչ կատարումն գործեցին, և ոչ եղև նմա մուտ ազնուական յուսոյն, որովք մերձենամք առ աստուած, վասն այսորիկ մերձ գալստեանն քի՝ գրեթէ և ձեռք և ոտք նոցա լքան բստ եսայեայ(4). վասն որոյ իբրու թէ կային դատարկ ՚ի հրապարակս. քանզի յոյս յապաղել՝ նեղէ զանձն և լքանէ յամենայն գործոց։ Տանուտէրն մեծաւ իրաւամբք զպատճառն խնդրեաց դատարկութե՝ ա-

(1) սաղ. ՁԹ. 3։ (2) ժող. ե. 8։ (3) յովհան. ե. 17։
(4) եսայի. լե. 3։

ասելով, ըմպէ՛ք ի սմանէ ամենեքեան․ եւ քանզի ու-
նէին առաջին զհնական եւ զգրական օրինաց այ-
գին, առ որ աստուած բազում անգամ հրա-
ւիրեալ էր, բայց նոքա վասն ծուլութեան
զանց արարեալ էին եւ առ ամօթոյ ասացին․
Զի ոչ ոք կալաւ զմեզ վարձու։ Ըստ նկարագրին՝ բա-
զում անգամ հանդիպի, զի ոմանք ՚ի մշակաց
մնան դատարկ յանձամբ, զի ոչ կալեալ լինին․
իսկ ըստ խորհրդոյն՝ մշակաց մեղքն է, զի ոչ
հեթանոսք եւ ոչ հրէայք, եւ ոչ առաջինք կա-
րեն կարկառել զձեռ անձանց իւրեանց թէ՝
ոչ ոք կալաւ զմեզ, զի զհեթանոսս ընկալնու բը-
նական օրինօք․ * Հեթանոսք՝ որք զօրէնս ոչ
ունին, բնութեամբ զօրինացն գործեն(1)․ ըզ-
հրէայս գրաւորական օրինօք․ որ արտաքէ զայն՝
կեցցէ ՚ի նոսին․ այսինքն ՚ի տասնաբանեայ օրէն-
սըն՝ եւ ոչ յարարողականսն․ իսկ զամենայնսն ա-
ւետարանական օրինօք․ յորմէ հանգոյն հրէից
եւ կոյր առաջինքն՝ ստորագրանօք այսպիսի հազարա-
ւորացն, զայս իւրեանց կախուցին՝ զի մի՛ ծագես-
ցի առ նոսա լուսաւոր գիտութիւն աւետա-
րանական փառացն քրիստոսի։ Աւասիկ զմետա-
սաներորդ ժամու՝ որ նշանակէ զժամանակն
քրիստոսի՝ իրաւամբք յանդիմանեաց զնոսա յա-
սելն․ ըմպէ՛ք ի սմանէ ամենեքեան։ Թէպէտեւ
պատճառեն զպատճառս մեղաց՝ բայց ոչ բաւ

(1) Հռոմ․ Բ․ 14։



իրաւանց․ քանզի աստուած կամի՝ զի ամենայն
մարդիկ կեցցեն եւ ՚ի գիտութիւն ճշմարտու-
թեան եկեսցեն(1)։ Իբրեւ երեկոյ եղեւ՝ ասէ տէր այ-
գւոյն ցվերակացուն իւր․ կոչեա՛ զմշակսն եւ տո՛ւր զվարձս՝
սկսեալ ՚ի յետնոց։ Աստուած երկնից տայ զվարձս
առաքինեաց, նախ՝ աստ ՚ի ձեռն զաւառապե-
տաց, այսինքն՝ վերակացու հրեշտակացն․ զի բա-
րերոյն գինեծախի, միջնորդութեամբ հրեշ-
տակաց հեղու առ մեզ աստուած զլոյս շնոր-
հաց իւրոց․ որքան յաւելուս՝ դահեկանն նշանակէ
զշնորհսն՝ որ առ ամենայնսն է հասարակ․ բայց
յարժանաւորագոյնսն՝ քան յարժանաւորսն առա-
տագոյն հեղու զշնորհսն․ առ որս գիտեալ բա-
զումք յառաքինեաց, մինչեւ ուսանեն թէ ՚ի
սուղ ժամանակի անտոհմք եւ յիմարք փայլին
մեծամեծ շնորհօք, զայթակղեալ եւ ՚ի միտս
կարծեն զայն ընդ դէմ իրաւանց արարեալ․
վասն որոյ մեծապէս զարմացեալ դժդէին ՚ի մի-
տըս իւրեանց եւ ասեն առ աստուած, Սոքա յե-
տինքդ մի ժամ գործեցին՝ եւ հաւասարս մեզ արարեր, որք
զծանրութիւն աւուրն բարձաք եւ զտօթ․ այսինքն՝ ամ-
բողջ զօրէնս քո կատարեցաք, կրելով զչար ա-
ւուրն եւ զտապ փորձանացն սատանայի․ այլ ած՝
որ գիտէ զջերմագոյն սէր ՚ի մետասան ժամու
եկողացն յայգին՝ եւ ըստ այնմ բաշխէ զշնորհս
արդարապէս, եւ ՚ի բաց թողեալ զանարժա-

(1) Ա․ Տիմ․ Բ․ 4։

նութիւն սոցա՝ զերիս փաստս յառաջ բերէ, որով արդարացուցանէ զինքն. նախ՝ ասէ, ո՛չ դահեկանի միոջ սակ արկեր ընդ իս. Երկրորդ՝ եթէ չիցէ՛ ինձ իշխանութիւն յիմս՝ առնել զի՛նչ և կամիմ. Երրորդ՝ կամ թէ ակն քո չա՛ր է, զի ես բարի եմ. այսինքն, մի՛ թէ պա՛րտ է քեզ ախտանալ յառատութենէ իմմէ. կամ զչարիս մտաց աչօք վասն առատաձեռնութե իմոյ։ Յաջողիւք փառաւորիւք յաղթեաց զդատողսն և զմեղադրանս. յայս դիտեալ՝ սոսաց առաքեալն, * Զյիմարս աշխարհիս ընտրեաց ած, որպէս զի մի՛ պարծեսցի ամենայն մարմին առաջի աստուծոյ(1). և թէ՝ ո՛վ իցէ՝ որ մեղադիր լինիցի ընտրելոցն այ(2). այսինքն՝ անարժանս համարիցի. և մարգարէն ասէ, * Որպէս արդար եղիցիս 'ի բանս քո՝ և յաղթեսցես 'ի դատելն քո։ Յայսու բանիւ զգուշացուցանէ զմեզ տէրն, զի մի՛ 'ի տեսանելն զանապաշաւ ինչ յաշխարհի, իսկոյն սահիցիմք դատել զած, տրտնջելով և տալով անզգամութիւն առաջի այ. զիրաւունս նորա յափշտակելով. քանզի իրաւունքն այ են խորք բազումք, առ որ միտք մեր ո՛չ կարէ հասանիլ. վասն որոյ պարտիմք գերել զմիտս մեր 'ի բանս տեառն, և որ ինչ անկարգութիւնք լինին յաշխարհի, իրաւունս համարել. ըստ խրատու իմաստնոյն, * Եթէ զըրպարտութիւն տնանկաց, և զյափշտակութի

(1) ա. կորն. ա. 27 ։ (2) հռովմ. ը. 33 ։



իրաւանց, և զանարդարութի տեսցես յերկրի, մի՛ զարմասցիս 'ի վերայ իրացն. զի զբարձունս 'ի վերայ բարձանց պահէ, և զբարձրութիւն 'ի վերայ նոցա. և 'ի վերայ ամի է թագաւոր անդաստանի գործեցելոյ, և դու հաւատարիմ լեր 'ի ծանր յափշտակելոյն(1)։ Կամի ասել թէ՝ այն, որ երևի քեզ անարդար՝ մի՛ զարմացիս, զի քան զքեզ բարձրագոյն իմաստութե է արդարութիւնն. ապա եթէ անզգամաբար ժպրհիս դատել, մոլորիս յոյժ, ըստ այնմ, * Զի մեծամեծք և դժուարապատումք են գործք քո տէ՛ր. վասն այսորիկ անձինք անխրատից մոլորեցան(2)։ Երկրորդ՝ 'ի հանդերձելումըն, և յայնժամ դահեկանն նշանակէ զերանական տեսութիւն այ՝ որ առեալ լինի մեզ. բայց ըստ յատկութեան սիրոյն, որով փայլէ միտքն՝ տեսանեն մեքն. որպէս որք պայծառ ունին տեսանելիս, առաւել տեսանեն զմակերևոյթ ծովուն քան զըժտոսն. յայնժամ թէպէտ յղանան մեքն 'ի միտս իւրեանց զարմացուածս առ ամենս, բայց անդրէն հաստատին՝ մտածելով զարդարութիւն և զողորմութի տեառն։ զերկու վարձս առաջնոցն։ * Որ եկեսցէ զկնի իմ, հարիւրապատիկ առցէ աստ, և զկեանս յաւիտենականս ժառանգեսցէ անդ(3). պատճառն՝ եթէ վասն էր յետնոյն նախ հրամայեաց

(1) ժողով. ե. 7 ։ (2) իմաստ. ժէ. 1 ։ (3) մատ. ժթ. 29 ։

տալ, է՛ նախ՝ զի յետինքն նշանակեն զքրիստո_
նէայսն. որք վասն այն աւելին մի ժամ գործել.
զի լուծն քրիստոսի քաղցր է՝ և բեռն փոքրո_
գի. իսկ առաջնոյքն նշանակին հրէայքն, որք
զանտանելի ծանրութիւն լծոյ օրինաց բառ_
նալով՝ չկարացին յաստիճան քրիստոնէից ժա_
մանել. երկրորդ՝ մի ժամու գործքն քրիստո_
նէից՝ գերազանց է քան զմիոյ աւուր գործս
հրէից, արդեամբք և շնորհօքն քրիստոսի. եր_
րորդ՝ զի նոքա ջերմն սիրով գործեցին քան զա_
ռաջինսն. ուստի առաւել քաղցրացան յաչս ա_
տուծոյ. որ առաւել դիտէ յեղանակ գործոյն՝
քան ՚ի գործն. զի ոչ որ գործէ. այլ որ բարե_
պէս գործէ՝ գովելի. առ այս ասի յայլերուն. մակ_
բայք՝ բայից են իշխանք, ուր գոն արդիւնաւոր
կեանք: Նա երևի այլ ինն խորհուրդ. զի յա_
ռաւօտու եկեալքն ունին համարձակութիւն
առ աստուած, վասն որոյ բացորոշեցաւ վարձք
նոցա. իսկ ՚ի ծերութեան եկեալքն ոչ բաց_
որոշեցան. զի յոյս նոցա է միայն՝ ողորմութ̅ին
աստուծոյ. վասն որոյ ոչ է պարտ վասն նախա_
պէս տալոյն՝ յետնոցն յանդգնացանել զվարձս.
յառաւօտու մանկութ̅ե դառնալն արդիւնա_
ւոր է. զի ոչ ամենեցուն այսպէս պատահի,
որպէս և ոչ ամենայն աւազակաց. որ ինչ պա_
տահեցաւ աջակողման աւազակին (1):

(1) Ղուկ. ԻԳ. 43:



Բարոյականապէս՝ կեանք մարդոյն է իբրև
զմի օր. առաւօտն է մանկութ̅ին. երրորդ ժամն
է պատանեկութիւնն. վեցերորդն է երիտա_
սարդութիւնն. իններորդն է ծերութ̅ին. իսկ
մետասաներորդն՝ զառամութ̅ին: Հայրն գթած՝
ըստ իւրում արդար իրաւանցն զոմանս ՚ի ման_
կութեան կոչէ. զոմանս ՚ի պատանեկութեան,
զոմանս յերիտասարդութ̅ե և զոմանս ՚ի ծե_
րութեան. և զոմանս ՚ի զառամութեան. որոյ
պատճառն անյայտ է ՚ի մեզ: Պարծեալ՝ վս̅
մեծի գթութեան ՚ի մանկութեան կոչէ. մինչ
յամառին՝ ՚ի պատանեկութեան. և այնպէս
մինչ ՚ի խորին ծերութ̅ի ոչ թողու ՚ի ձեռաց.
ըստ այնմ. * Մինչև ցծերութիւն ես եմ. և
մինչև կարի իսկ ծերասջիք՝ սակայն ես եմ, ոչ
թողից զձեզ, ասէ տէր (1): ՚Ի վերն ասացաք,
թէ դահեկանն, որ է վարձն՝ է երանականու_
թիւն ա̅յ. քանզի աստուած է վարձ սրբոց,
ըստ այնմ, * Ես վարձատու եղէց քեզ, և
վարձք քո մեծ յոյժ (2): այսպէս եղիցին յետինքն՝ ա_
ռաջինք. և առաջինքն՝ յետինք:

Խորհրդապէս՝ հրէայք էին առաջինք, և հե_
թանոսք յետինք, որք եղեն յետոյ առաջինք
քան զհրէայս:

Բարոյականապէս՝ ամենք ՚ի մանկութեան
սկսանելով զգործս բարիս՝ լինին առաջինք և

(1) Եսայի. ԽԶ. 4: (2) Ծննդոց. ԺԵ. 1:

հեղգանալով կատարել՝ լինին յետինք, իսկ այլք 'ի ծերութեան սկսանելով՝ լինին յետինք. բայց մեծաւ սիրով և հաւատարմութեամբ ծառայելով տեառն, լինին առաջինք: Դարձեալ 'ի մէջ որոց ոմանք են նախ ընծայք՝ բայց չափաւոր արդեամբք. իսկ ոմանք՝ յետագայք, բայց գերազանց արդեամբք. սոքա լինին առաջինք 'ի փառս, իսկ նոքա յետինք. յայս մին առեալ լինի սատէն. բայց ոմանք տրտնջօղք խմանան զմեղաւորս և ասեն. վասն այսորիկ ասաց. Եթէ ակն քո չար է. զի ես առատ եմ. իսկ զահեկանաւ խմանան զմարմնաւոր բարիս, իբր թէ առաջին կոչեցեալքն անհաւատարմաբար աշխատելով 'ի ծառայութիւն տեառն՝ զմարմնաւոր բարիս առեալ 'ի բաց խոստեցան. վասն այսորիկ ասաց փրկիչն. Բազումք են կոչեցեալք, և սակաւք են ընտրեալք: Այլ մեզ այսպէս համոյ թուեցաւ՝ որպէս եդաք:



# ԹԻ. ԵՐԿՐՈՐԴ ՅԱՄԵՆԱՅՆ ՏԱՃԱՐԱՑ ԽՆԴՐՈՅ ՕԳՏՈՒԹԵԱՆ:

## ԴԻ ՔԱՐՈԶ ԺԴ.

Եւ տեսեալ զթզենին մի 'ի ճանապարհին՝ եկն 'ի նա, և ոչ եգիտ 'ի նմա պտուղ, բայց միայն տերև. և ասէ ցնա՝ մի այսուհետև 'ի քէն պտուղ եղիցի 'ի յաւիտեան:

Մատթ. իա. 19:

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Ասիցես, թզենին գոլով միայն 'ի ժամանակին խուռամ յարմար տալոյ զպտուղ, որովք իրաւամբք եկն ընդ անիծիւք՝ պատասխանեմ, վասն երկուց պատճառաց. նախ՝ զի որովհետև ստեղծողն երթայ առ նա՝ պարտ էր նմա իսկոյն ընծայել զպտուղ՝ թէ և չիցէր ժամանակ. որպէս ծովն տիբերեայ մինչ ետես՝ զստեղծողն էջ 'ի վերայ իւր, ընդդէմ բնութեան իւրոյ եբարձ զնա. սա՝ զի ոչ արար, իրաւամբք անէծս ընկալաւ. երկրորդ՝ որպէս տանուտէրն ունի իշխանութի հատանել յայդւոյ իւրմէ զորս և կամի, այսպէս և Քրիստոս, որ է տէր աշխարհիս. իշխանաբար կամեցաւ և չորացոյց զթզենին, և ոչինչ է անիրաւութի:

Խորհրդաբար՝ թզենին նշանակէ զհրէայսն որք ոչ ունին զպտուղ բարեաց գործոց, բայց

միայն զտերս մախաղական օրինաց. և հրէական անուանց, որք ասեն զինքեանս հրէայս գոլ՝ և ոչ են. այլ են ժողովք սատանայի. և յիսուս քաղցեալ գոլով պտղոյ բարեաց գործոց. մինչ ոչ եգիտ 'ի նմա՝ արգել զհրաման շնորհացն. որով չորանան հանգոյն թզենւոյն և պատրաստին 'ի հուրն: Ոչ հեթանոսք կարեն պատճառել՝ թէ չեմք քրիստոնեայ, որոյ սակս չէ ժամանակ պտղոյ. և ոչ հրէայք, քանզի յիւրաքանչիւր հասակէ խնդրէ զպտուղ:

Քրիստոնեայքս՝ անպտուղ և տերևազարդ թզենեաւն նշանակին այնք քրիստոնեայք, որք միայն և եթ ունին զհաւատս, և ոչ զբարի գործս. զի որպէս տերևն է նշան ծառոյն, այսպէս և հաւատն է նշան քրիստոնէին. քրիստոս մեծաքաղցիւ գայ 'ի հոգիս մեր խնդրել զպտուղ առաքինութեան. թէ 'ի պատանեկութեան մերում, թէ յերիտասարդութեան և թէ 'ի ծերութեան. այլաքէն հոգ տարցուք անպտուղ չգտանիլ, զի մի և զմեզ չորացուսցէ հանգոյն թզենւոյն. այնպիսի անպտուղ քրիստոնեայքն զանուն կենդանւոյ ունին, բայց մեռեալ են հոգւով. են բազում կրօնաւորք, որք արտաքին զգեստուք տերևազարդք են, բայց եթէ մերձեսցի անկողն յուզել զխնդրելին՝ գտցէ ունայն 'ի բարեաց: Քրիստոս 'ի չորացուցանելն զթզենին՝ կամէր ասել այսպէս. չորասցին ամենայն անպտուղ մարդիկ.



որպէս և հրեշտակն յընկենուլն զքարն 'ի ծով, ասաց՝ *Այսպէս ընկղմեսցի բաբելոնն 'ի դըժոխս (1):

## ԹԻՒ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾՈՅ ԿԻՐԱԿԷԻ ՄԵՆԻ. ՕՐՀՆ. ՕՐ ՈՒՆԻ:

### ԳԼ. ՈՒԽ ԺԴ:

Ներս մեր զանհաւատարմութիւնն մշակաց այգւոյն խորհելի յանդիմանելով ասաց զառակս զայս.

Այլ առակ լուարուք. այր մի էր տանուտէր, որ տնկեաց այգի, և ցանկով պատեաց զնա. փորեաց 'ի նմա հնձան և շինեաց աշտարակ, և եբաղ զնա մշակաց և գնաց 'ի տարաշխարհ. Իբրև մերձեցաւ ժամանակ պտղոյն... և յղեաց զծառայս իւր առ մշակսն առնուլ զպտուղ նորա. մատթ. իա. 33:

## ԱՊՇՆՈՒԹԻՒՆ

Զայս երգ՝ զոր այժմ երգէ յիսուս զխորհուրդ այգւոյ՝ կանխաւ երգեաց եսայիաս. բասանմ *Երգեցից սիրեցելոյ այգւոյ իմոյ կանխաւ զերգս սիրեցելոյ նորա(2):
Սիրեցեալ այգին՝ է իսրայէլ. երգ սիրեցե_

(1) յայտն. ժը. 21: (2) եսայ. Ե. 1:

բոյն՝ է երգն յիսուսի՝ որ է՝ սիրելի փեսայ:

Այլաբանօրէն՝ այգին է եկեղեցի · տանու-տէրն տնկողն այգւոյ՝ է աստուած, որ յեգիպ-տոսէ փոխեաց և յերկիրն աւետեաց տնկեաց· ըստ այնմ, * Որթ յեգիպտոսէ փոխեցեր՝ և զնոսա տնկեցեր, հաներ զհեթանոսս (1):

Մշակք այսր այգւոյ են դպիրք և փարիսե-ցիք՝ որք նստան յաթոռն մովսիսի · 'ի սոսա յանձ-նեաց աստուած հայր զայգին · մինչև մով-սիս կացոյց զղևտացին՝ քահանայս սինագով-գային՝ զոր ցանկով օրինացն պատեաց և փո-րեաց 'ի նմա հնձան, այսինքն՝ սեղանն զոհից՝ ուր լինէին դաւանաղենութիւնք, և շինեաց աշտարակ՝ որք էին քերովբէքն փառաց · որք միշտ հսկէին՝ իբրև յաշտարակէ · 'ի նոսա ա-ւանդեաց զծառայս 'ի ժամանակի պտղոյն այ-սինքն՝ զմարգարէս · նոքա տեառն արժանի ըզ-բարեգործութեան պտուղ խնդրէին յայգ-ւոյն · այլ զի մշակքն չար էին, ոչ հաճեցան ընդ նոսա · զի քարոզութիւնք նոցա էին ընդ-դէմ մշակաց անաւակ վարուցն · վասն որոյ կալեալ զոմն տանջեցին, զոմն սպանին և զոմն քարկոծեցին · որպէս երևի վախճան մարգա-րէիցն ազգի ազգի մահուամբ: Յուսալ յետոյ առաքեաց զորդին իւր և ասէ, Թերևս ամաչեսցեն յորդւոյ աստի իմմէ · այսինքն՝ թերևս բանից որդ-

(1) սաղ · ՀԹ · 10:



ւոյ իմոյ ունկն դնիցեն · և 'ի մեծամեծ հրա-շից նորա յաղթահարեալ հաւատասցեն · և զինքեանս մշակ ճանաչելով՝ տայցեն զպտուղ հնազանդութե · բայց ամբարիշտ մշակքն զորդի այգետեառն սպանանելով՝ սեպհականել խոր-հէին · վասն որոյ մինչ զգործս և զհրաշս մեծա-մեծս քրիստոսի տեսանէին՝ ծանեան թէ՝ սա՛ է ժառանգն · սա՛ միայն կարէ կորզել զայգին 'ի ձեռաց մերոց · ուստի ասէին՝ * Ահաւասիկ աշխարհ ամենայն զկնի նորա գնաց · վասն որոյ թէ թողումք այնպէս, ամենեքեան հաւատա-ցեն 'ի նա, գայցեն հռոմք և բառնայցեն զազգ մեր և զտեղի (1) · թէպէտ և խորամանկութե ա-սէին զայս · վասն որոյ խորհուրդ արարին սպա-նանել · զի իւրեանց լիցի ժառանգութիւնն · այսինքն՝ զի 'ի յաւիտեան վայելեսցեն զժողո-վուրդն · և տարեալ հանին արտաքոյ քան զայգին և սպանին · որպէս զի՝ արդարասցեն թէ ոչ ինքեանք են սպանեալ · հանեն արտաքոյ այգւոյն յայս միտս՝ զի ցուցցեն թէ ոչ ունի մասն 'ի ժողովրդե-նէն՝ և ոչ է հայազատ որդի օրինաց՝ այլ է մոլորեցուցիչ · յայս միտ ասէին, * Ամենայն՝ որ խոստովանեսցի զնա, 'ի բաց կացցէ 'ի ժո-ղովրդենէն (2) · Արդ՝ յորժամ եկեսցէ տէր այգւոյն, զի՞նչ արասցէ մշակացն այնոցիկ՝ զչարս չարաւ կորուսցէ՝ և տացէ զայգին այլոց:

(1) յովհան · ժա · 48: (2) յովհան · Թ · 22 ·

Օ վճխուն ՚ի բերանոյ նոցա լսողըն՝ զի մի՛ գտանիցեն ամենեքին տալ պատասխանի. այսպէս և Նաթան արար Դաւթի. մինչ կամէր յանդիմանել վասն բերսաբեայ. և դաւիթ որպէս և դատեաց զբանս այնմ և դատապարտեցաւ. այսպէս և սոքա որպէս և դատեցին՝ այնպէս և դատապարտեցին զանձինս. այն է՝ զոր ասաց, *Օ վէմն՝ զոր անարգեցին շինողքն, նա եղև գլուխ անկեան(1): Եւ թէ՝ *Վասն այսորիկ ասեմ ձեզ, զի բարձցի ՚ի ձէնջ արքայութիւնն, և տացի ազգի՝ որ առնիցէ զպտուղ նր: Հրէայքն յետ վճռոյ տալոյն հարցմանն քրիստոսի՝ ապա ծանեան թէ զինքեանց ասէր, վասն որոյ ասեն. քաւ մի՛ լիցի: Ըստ՝ այս եղև յորժամ տէր այգւոյն եկն յետ օրէնս տալոյն. և կարգս սինագովգային հաստատելոյն՝ աներևոյթ եղև. և որպէս թէ՝ այնու գնացեալ էր ՚ի տարաշխարհ. և մինչ զգալապէս եկն յայց այգւոյն, մշակքն աւերողք և ոչ շինողք, զայս վէմ ըմբռնեալ անարգագոյն մահուամբ ըսպանին. բայց լուսափայլ յարութեամբն եղև գլուխ անկեան. և յորժամ տէր այգւոյն եկն, զչար մշակսն չարեօք՝ տիտոսիւ և վեսպիանոսիւ կորոյս. և զայգին ետ այլոց մշակաց՝ մինչ ասաց, *Երթայք, աշակերտեցէք զամենայն հեթանոսս՝ և մկրտեցէք զնոսա յանուն հօր և

(1) սաղմ. ճժէ. 21:



որդւոյ և հոգւոյն սրբոյ(1):

Խորհրդապէս՝ այգին է եկեղեցին. պարիսպըն է աստուած. ըստ այնմ, *Ես եղէց նմա պարիսպ հրեղէն շուրջանակի: Հնձանն՝ է սուրբ սկիհն ՚ի վերայ սուրբ սեղանոյն. ուր գինին լինի արիւն անմահ գառինն. և աշտարակն՝ է՛ սուրբ խաչն. մշակք են առաջնորդքն և անհաւատարիմ զանձինս արածողքն, որպէս որք զանարաս վարձս և զանձինս խակ ՚ի տեսչութենէ վերնոյն աքսորանօք, տարաժամ մահուամբ և փառահամբաւութեամբ կորուսանեն և այգին աւերալ լինի հաւատարիմ մշակաց, *զի բերցեն հազարս ճշմարտին սողոմոնի, և երկերիւրս ինքեանց(2): Քրիստոսի արտաքոյ այգւոյն ըսպանանելն եղև խորհրդաւոր. զի որոց անասնոց արիւնքն հեղանէին, և նոցին մարմինն արտաքոյ դրանն այրէին. նոյնպէս և քրիստոս՝ զի իւրով պատուական արեամբն սրբեսցէ զժողովուրդն՝ արտաքոյ դրանն չարչարեցաւ(3). Ըստ՝ եկայք և մեք ելցուք սիրովն քրիստոսի արտաքոյ աշխարհիս յանձնառեալ զնախատինս՝ զարհամարհանս և զչարչարանս քրիստոսի, որով և մեք արժանի եղիցուք սրբիլ և ազատիլ ՚ի մեղաց, և մտանել յառագաստն լուսոյ. և վայելել զերանական տեսութիւն իւր՝ ՚ի հայր և յամենասուրբ հոգին, յանզրաւ յաւիտեանըս ամէն:

(1) մատթ. իը. 19: (2) երգ. ը. 12: (3) եբր. ժգ. 11:

# ԹԷ ՈՐՊԷՍ ՉԱՐԻՆ ՅԱՄԵՆԱՅՆ, Ի ԿՈՉ ԵՐԿՆԱՅԻՆ ՀԱՐՍԱՆԵԱՑ:

## ԳԼՈՒԽ ԺԻ:

Տէրն մեր զմեծ միտան և զանմտութիւն հրաւիրելոց և անհաւատից՝ այսու առակաւ բացայայտեաց:

«Նմանեցաւ արքայութիւնն երկնից՝ առն թագաւորի, որ արար հարսանիս որդւոյ իւրում: Մատթ. ԻԲ. 2:

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Արքայն երկնից հանդոյն թագաւորի միոյ՝ որոյ զարարն ընթացք բանին ցուցանէ, արար հարսանիս որդւոյ իւրոյ: Այս հարսանիքն նշանակէ զմարդեղութիւն Քրիստոսի. զի որպէս ՚ի հարսանիսն լինի զգալապէս միաւորութի, այսպէս և ՚ի մարդեղութեանն եղև յարգանդ կուսին իմանալապէս միաւորութիւն աստուածային և մարդկային բնութեանց՝ յանձն բանին աստուծոյ. աստուած և արգանդ կուսին կոչի հարսնարան. յայս միտ խորհուրդ պսակին տիրապէս նշանակէ զխորհուրդ մարդեղութե. ապա զՔրիստոս և զեկեղեցին: Եւ առաքեաց զծառայս իւր՝ կոչել զհրաւիրեալսն ՚ի հարսանիսն, և ոչ կա-



մէին գալ. հրաւիրեալքն էին յաբրահամէ անտի մինչև ցգալուստն քրիստոսի, ՚ի ձեռն մարգարէից բազմազան օրինակաւ կոչեցեալքն ՚ի հաւատ գալստեան մեսիային. և թէպէտ նախ մեծապէս ըղձային, բայց մինչ եկն՝ և առաքեց զառաքեալս և զյոհաննէս՝ կոչել ՚ի հաւատըս գալստեան իւրոյ՝ նոքա ամբարշտեալ ոչ կամեցան գալ. Դարձեալ առաքեաց այլ ծառայս և ասէ, ասացէ՛ք հրաւիրելոցն, ահաւասիկ ճաշ իմ պատրաստեցի, զուարակք իմ և պարարակք զենեալ են. և ամենայն ինչ պատրաստ է, եկա՛յք ՚ի հարսանիսն: Այս այն է զոր նախագուշակեաց իմաստունն թէ՝ *Իմաստութիւն շինեաց իւր տուն՝ և կանգնեաց սիւնս եօթն. եղէն զզենն ևն. և առաքեաց զծառայս (1): Երկիցս անգամ առաքելն զծառայս՝ ցուցանէ զճշմարիտ սէրն առ հրաւիրեալսն. ձայնն՝ է աւետարանն քրիստոսի, *Ոչ միայն հացիւ կեցցէ մարդ, այլ ամ բանիւ՝ որ ելանէ ՚ի բերանոյ աստուծոյ: Զուարակն. է ինքն ուխտեալ զուարակն քրիստոս. և պարարակքն են եօթն խորհուրդք եկեղեցւոյ. թէ առ հրէայս՝ և թէ առ հեթանոսս, միշտ առաքէ զծառայս. բայց մեծ հրաւիրումն եղև ՚ի գալստեան իւրում. Եւ նոքա յուլացեալ գնացին՝ ոմն յագարակ իւր, և ոմն ՚ի վաճառ իւր, և այլք կալեալ զծառայս նորա թշնամանեցին և սպանին: բառ մեծի մասին հրէայք մինչ կոչեցան՝

(1) Առակ. Թ. 1:

ոչ հաւատացին զպատուիրան նորա · Իւրաքան-
չիւր 'ի գործս իւր գնայ · և ոմանք 'ի ծերա-
կուտիցն ոչ առեալ խոստութէ բանիցն ծա-
ռայից՝ Թշնամանեցին · այսինքն , Թշնամութիւն
արարին և սպանին · որպէս զյոհաննէս , և զյա-
կոբոս (1)։ Սոքա ոչ կամեցան Թողուլ զանզգա-
մութի , և ոչ ընտրեցին փառսութէ՛ զհանճար , և ոչ
երանութէ զանձինս արժանիս արարին · ըստ այնմ ,
զոր ասէ · * Երանելիք են՝ որք կոչեցեալք են
յընթրիս հարսանեաց գառինն (2)։ Յիմարք է-
ին և անզգամք , քանզի զօգուտս իւրեանց ոչ
գիտացին մինչ զի՝ զրկեցան 'ի Թագաւորական
ընթրեաց։ Երկրորդ՝ զի ոչ խորհեցան, Թէ գու-
ցէ բարկասցի Թագաւորն , և մեծս հատուցէ
մեզ , այսպիսիք են այնք անզգամք , զորս բազ-
միցս կոչեմք 'ի խոստովանութիւն և 'ի հա-
ղորդութիւն և ոչ գան։ Իսկ Թագաւորն իբրև լու-
աւ , բարկացաւ , և առաքեալ զզօրս իւր՝ սատակեաց զսպա-
նողսն , և զքաղաքս նոցա այրեաց։ Աստուած մինչ ե-
տես՝ զի ոչ կամեցան գալ հրաւերքն 'ի հարսա-
նիս որդւոյն, այլ և զհրաւիրական սպանին՝ բարկա-
ցաւ յոյժ , և առաքեալ զզօրս իւր , այսինքն զախտս
և զմեռախտս՝ սատակեաց զսպանողսն և զքա-
ղաքս հրէից այրեաց · այսպէս Նաբուգոդո-
նոսոր և կիւրոս գաւազան կոչեցան աստու-

(1) Գործ. ժբ. 2։ (2) Յայտն. ժԹ. 9։



ծոյ՝ զի նոքօք կատարէր զվրէժխնդրութիւն
նա և բաժակ զատնութեանս, զի նոքօք Թափէր
զբարկութիւն իւր · բայց յատուկ զօրք աս-
տուծոյ , են հրեշտակքն։ Բարկութիւն աստ-
ուծոյ փոխանակ գործոցն և ոչ կրիցն, որ ոչ ան-
կանի յաստուած։ Յայնժամ ասէ ծառայս իւրս հար-
սանիքս պատրաստ են, և հրաւիրեալքն չէին արժանի · աս-
տուածախնամմամբ Թէ սաստիկք և հրաւիրեալքն որք ոչ
գան առ.քո՞՝ չէին արժանի։ Արդ՝ երթայք յանցս ճա-
նապարհաց · և զոր միանգամ գտանիցէք , կոչեցէք 'ի հարսա-
նիս։ Աստ ցուցանի կործանումն հրէից , պատ-
ճառ լեալ կանչման հեթանոսաց · իսկ ըստ
պօղոսի՝ եԹէ * Անկումն նոցա եղև պատճառ
կանչման հեթանոսաց · իսկ զինչ լիցի յառ-
նումն , եԹէ ոչ 'ի մեռելոց 'ի կենդանութի (1) ·
այսինքն · բովանդակ տիեզերաց յարութիւն 'ի
հաւատս։ Յորժամ Թէ դարձցին նոքա , զի բո-
վանդակ տիեզերս առաջնորդեսցեն 'ի հաւատս ·
քանզի կարի դժուարին է հնազանդիլ այնմ ,
յորմէ ընտանիքն ապստամբք են , և եղեւ ծա-
ռայքն յանցս ճանապարհի , ժողովեցին զամենեսեան՝ զոր և
գտին · զչարս և զբարիս , և լցան հարսանիքն բազմականօք ·
յայնժամ ելին ծառայքն յանցս ճանապարհաց՝
մինչ ասաց * Գնացէք այսուհետև աշակերտե-
ցէք զամենայն հեթանոսս (2)։ Ուստի լականեքա-
րութիւնն հանգոյն ուրախնի ժողովեաց զա-

(1) Հռովմ. ժա. 15։ (2) Մատթ. իը. 19։

մենայն ազգս 'ի տուն հարսանեաց հաւատոյն քրիստոսի․ բարիքն գան 'ի հարսանիսն՝ հանդիսաւոր և փառաւոր առնել զհարսանիսն և ըզթագաւորն․ իսկ չարքն ոչ ունելով զայնմանէ փոյթ՝ 'ի սակս որկրամոլութեան գան․ այսպէս ոմանք գան 'ի հաւատս քրիստոսի ոչ վասն փառաւորելոյ զորդին աստուծոյ, այլ սակս լցուցանելոյ զկարիս իւրեանց․ այսպիսիք են և ոմանք յուխտաւորաց․ որք մտանեն 'ի կարգ կղերօնի ոչ առ ջերմեռանդութե՝ այլ սակս զօշաքաղութեան ։ Եմտեալ Թագաւորն հայել զբազմականօքն, ետես անդ այր մի՝ որ ոչ էր զգեցեալ հանդերձ հարսանեաց ։

Որպէս թագաւորն առ ուրախութեան սրտին եմուտ 'ի տուն 'ի զուարճութիւն բազմականացն, այսպէս առնէ և երկնաւոր թագաւորն․ զի միշտ աչք իւր գթած է յեկեղեցին հաւատացելոց 'ի մխիթարութի․ հանդերձն որպէս պատիւ հարսանեացն քրիստոսի՝ է սէրն այ․ զի որպէս հանդերձն ծածկէ զմարմինն, այսպէս և սէր ծածկէ զբազմութիւն մեղաց․ զայսմ հանդերձէ ասի ։ ※ Զգեցարո՛ւք զպատմուճանս, զի մի՛ մերկս շրջիցիք, և երևեսցին ամօթանք ձեր (1)․ զայս հանդերձ՝ որ ոք ոչ ունի՝ ոչ վայելէ նմա մտանել 'ի տուն հարսանեաց երկնաւոր թագաւորին․ զի թէ 'ի պալատն արտաքին թագաւորին ոչ մտանէր ոք աղտեղի

(1) Յայտն․ 4․ 18 ։



հանդերձիւք (1)։ քանի՜ եւս քին․ բայց այլ մի յանդգնաբար մտեալ եղև աղտեղի հանդերձիւք միայն վասն որկրամոլութեան․ ընդ էր մի այր գտեալ եղև յայնքան բազմութեան․ ցուցանէ թէ յառաջին քրիստոնեայսն սակաւ գտանիւր մեղաւոր․ կամ 'ի մի այր զամ մեղաւորս առակէ, և ասէ ցնա՝ ընկե՛ր զիա՛րդ մտեր աստ, զի ոչ ունիս հանդերձ հարսանեաց, և նա պապանձեցաւ․ միմիայն 'ի քաղցրագոյն հարցաբանութէն պատճառի պապանձումն, այսպս զինչ լինիցի՝ յորժամ յահաւոր բեմին որոտասցէ ահեղ և սոսկալի բարբառով հզօրն․ յայնժամ ասէ ցպաշտօնեայսն, կապեցէ՛ք զդորա ձեռս և ոտս, և հանէ՛ք 'ի խաւարն արտաքին։' Ի ձմեռնան ժամանակին լինի բամեծի մասին հարսանիքն՝ վասն բարեաց առատութեանն, ուր արտաքին ցուրտն սաստկանայ, և մինչ յերեկոյին լինի ընթրիքն, խաւարն եւս առատանայ․ կապեալն մինչ անկանի արտաքնոյ վասն խաւարին․ կրճտէ զատամունս առ խստութեան ցրտոյն, կապեալն ուր անկանի, անդ մնայ․ այսպէս և մեղաւորն անկանի 'ի դժոխս, որ է արտաքոյ այցելութե այ, և անդ մնայ յաւիտեան ։ ※ Փայտն ուր անկցի՝ անդ կացցէ (2)․ այսու առակաւ ցուցանի թէ՝ այլ է դատաստանն անհաւատից․ այլ հրաւիրելոց և ոչ եկելոց, և այլ՝ անդ աղտեղա

(1) Եսթ․ ա․ 6 ։ (2) Ժողով․ Թ․ 10 ։

զգեստից. նաև ցուցանի թէ՝ այնոքիկ՝ որք ե-
ղանեն յեկեղեցւոյ և ուրանան զհաւատոյն,
են անարժան եկեղեցին 'ի Հարսանիսն ։ Ո՞րա-
նի՛ր ևս, զի Հարսանիքն նշանակէ զմիւսանգամ
գալուստն Քրիստոսի. *Եկին Հարսանիք Գառինն
և կին նորա պատրաստեաց զինքն(1) ։ Բազմա-
կանաց տուն է ձորն գեթսեմանի, ուր չարք
և բարիք կոչեցեալք լինին. մի այրն անզգեստ՝
նշանակէ զբազմութիւն մեղաւորաց. մի այր
կոչին վասն միաւորս լինելոյն. որք մինչ ա-
ռաքելին 'ի խաւարն արտաքին, մնացեալքն
ցնծան 'ի Հարսանիսն յաղթող փառօքն ։ Զի բա-
զումք են կոչեցեալք. թէ՝ համեմատութեամբ չե-
կելոցն՝ և թէ՝ մեղապարտեալոցն՝ յոյժ սակաւք են
ընտրեալքն. դու աղօթեա՛ զմեզ զգեստն փառաց
Քրիստոսի, մկրտութեամբ զգեցեալս՝ չմերկա-
նալ մեղօքն, զի 'ի թիւս ընտրելոց գտցիս համարի ։

# ՎԱՍՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ԳԱԼՍ-ՏԵԱՆ ՏԵԱՌՆ ։

## ԳԼՈՒԽ ԺԹ. ։

Եւ առաքեսցէ զհրեշտակս իւր փողով մեծաւ. և ժո-
ղովեսցեն զընտրեալս իւր 'ի չորից հողմոց, 'ի ծագաց երկնից
մինչև 'ի ծագս նոցա ։ Մատթ. իդ. 31 ։

(1) յայտն. ժթ. 7 ։



# ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ։

Տէրն մեր 'ի գալստեան իւրում հրամայէ
ըստ ոմանց, հրեշտակապետին գաբրիէլի հար-
կանել զփող իւր. որոյ ձայնն այնքան սաստիկ
է լինելոց, մինչև ժամանել յանդունդս դժո-
խոց, և յամենայն ծագս տիեզերաց առ 'ի զար-
թուցանել զամենայն զմեռեալս. զայսմանէ
ընդ հանուր յարութենէն մարգարէացաւ ե-
սայի՝ յասելն, *Յաւուր յայնմիկ հարցեն փող
աւագաւոր, և ժողովեսցին ցրուեալքն յերկ-
րին յուդայ (1) ։ Ի ձայն փողոյ հրեշտակապե-
տին ըստ վարդապետաց լինի այս բան, *Արիք
մեռեալք. որով յառնեն ամենեքեան ։ Ասի-
ցես, ապա ձայնիւ հրեշտակապետին զիարդ յառ-
նեն մեռեալքն՝ պատասխանեմ, ձայնն միայն
է հրեշտակապետին՝ իսկ բանքն Քրիստոսի. զի
որպէս լեզուն դաւթի էր գրիչ արագագիր
Դպրի հոգւոյն սրբոյ՝(2) որով զմարգարէութիւս
թարգմանէր, այսպէս և ձայն հրեշտակապետին
լինի գործիք բանին Քրիստոսի, վասն որոյ և ա-
ռաքեալն զձայնն հրեշտակապետին ասաց, և ըզ-
փողն՝ աստուծոյ յասելն ։ *Ինքնին տէր
'ի ձայն հրեշտակապետի և 'ի փող աստուծոյ
իջանէ յերկնից(3) ։ Աստի թէպէտ փողն է հրե-
շտակապետին, բայց ձայնն՝ Քի. ըստ այնմ,

(1) Եսայի. իէ. 13 ։ (2) սաղմ. խդ. 3 ։ (3) Ա. թեսաղ. դ. 15 ։

* Եկեսցէ ժամանակ՝ յորժամ լուիցեն ձայնի որդւոյն այ, և որք լուիցենն՝ կեցցեն (1)։ Եւ զոր օրինակ մինչ զէական բանս խորհրդոյ եկեղեցւոյ արտաբերեմք ասելով, եւ միում այս անուն՝ յանուն Հօր և որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ *Առէք կերէք.ք.և թէ՝ *Արբէք 'ի սմանէ. ոչ եթէ զօրութբ բանից մերոց առնուն խորհուրդքն զկատարումն, այլ զօրութբ բանիցն քրիստոսի, զոր աւանդեաց. այսպէս և հրեշտակապետն 'ի փողելն՝ արիք մեռեալք. ոչ եթէ 'ի բանից իւրոց յառնեն, այլ զօրութեամբ բանին քրիստոսի, զոր հրամայէ. և բանքն այն այնպէս գործունեայ լինի 'ի յարուցանել, որպէս և բանքն աստուածային 'ի սկզբանն, որոյ յասելն՝ եղիցի լոյս, եղիցի հաստատութիւն՝ իսկոյն եղեն։ Հրեշտակք 'ի չորից հողմոց ժողովեն զմարմինս, այսինքն, 'ի չորից ծագաց երկնի և աշխարհի, որք են, արևելք, արևմուտք, հիւսիս և հարաւ. յորոց չորս գլխաւոր հողմունք հնչեն. իսկ զմեղաւորսն դևքն բերեն առաջի քի։ Ասեն զի ընտրեալքն ունելով զօժխան յարութեան՝ ընդ հրեշտակաց արագ ընթանան, իսկ մեղաւորքն 'ի դևաց բարձեալ բերին։

(1) յովհան. ե. 28։



# ՕԳՆԱՑՏԵՂԵԱՆ ՔՐԻՍՏՈՆԻ։

## ԳԼՈՒԽ ԺԱ։

Յայնժամ նմանեսցի արքայութիւնն երկնից տասն կուսանաց, որոց առեալ զլապտերս իւրեանց՝ ելին ընդ առաջ փեսային և հարսին։ Մատ. իե. 1։

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ։

Այսինքն՝ յորժամ համբարձեալ լինի քրիստոս ծագել 'ի յերկնից հանգոյն փայլականն և գալ 'ի դատաստան, յայնժամ նմանեսցի արքայութիւնն երկնից՝ (որ նշանակէ զեկեղեցի՝ զհաւատացեալս իւր 'ի սկզբանէ աշխարհի մինչև ցայժմ,) տասն կուսանաց, որք ընդ առաջ ելին փեսային, միտք բանին է, թէ որպիսի անցք անցին ընդ տասն կուսանսն, նոյնն անցցէ յայնժամ ընդ հաւատացեալս իմ։ Արդ փեսայն է քրիստոս, հարսն է սբ աստուածածինն, որ յարուցեալ ընդ փեսային իւրում է յերկինս. (թէպէտ հասարակապէս եկեղեցին ևս է հարսն) տասն կուսանքն են բովանդակ հաւատացեալքն, զի կոչին կուսանք. վասն զի՝ կոյս աղջկունք ջանան լինիլ սուրբ՝ հոգւով և մարմնով, վասն որոյ առաքեալն զհաւատացեալս նմանեցուցանէ կուսի յասելն, *Խօսեցայ զձեզ առն միում, իբրև զկոյս մի սուրբ յանդիման կացուցանել

քրիստոսի(1)։ Տասն թիւն՝ դնի առ 'ի փոխանակ բազմութե. ըստ այնմ * Եփեսցեն տասն կին զհաց ձեր 'ի միում թոնրի(2). այսինքն, բազում կանայք։ * Ո՛չ լաւ եմ ես քան զտասն որդիս(3). այսինքն, բազում որդիս։ արդ՝ հաւատացեալ կուսանք, որք հաւատով խօսեցեալք են Քի, յայնժամ առնուն զլապտերս իւրեանց՝ մինչ մկրտին յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, ուր իւղով սուրբ մեռոնին մինչ կնքինըն՝ վառին և լուսաւորին լապտերք հոգւոյ իւրեանց շնորհօք սուրբ հոգւոյն. վասն որոյ զգուշացուցանէ առաքեալն ասելով, * Զհոգին մի՛ շիջուցանէք, որով կնքեցայք յաւուրն փրկութե(4). այսինքն յաւուրն մկրտութե. և քանզի գիշեր է կենցաղս, ուր թանձրամած խաւարն մեղաց և ագիտութեան, վասն որոյ ընդառաջ երթալ օրհնողացն քրիստոսի՝ պարտ է լինել 'ի ձեռս լապտեր վառեալ։

Մասնաւորապէս՝ կուսանօք նշանակին վարդապետք և կուսանք՝ ուխտաւորք զմարմնական կուսութիւն. որքս տիրապէս ընդառաջ երթանեն առ նմանաւոր կոյս փեսայն քրիստոս, առեալ 'ի ձեռս զլապտերս կուսութեան, զի երթայցեն զհետ գառինն՝ ուր և երթիցէ(5). քանզի կուսութիւն հանգոյն լապտերի լուսա-

(1) Բ. կորն. գլ. 2։ (2) Ղեւտ. իզ. 26։ (3) Ա. թագ. Ա. 18։ (4) Ա. թեսաղ. Ե. 19։ (5) յայտն. ժդ. 4։



ւոր երեւեցուցանէ զենթակայն 'ի գիշերի մեղաց կենցաղոյս։

Հինգն 'ի նոցանէ յիմարք էին՝ և հինգն իմաստունք։

Յիմարք՝ սոքա նշանակէ զանխոհեմս. զի անխոհեմն ոչ նկատէ զվախճան իրին, և ոչ նախատեսանէ զապագայն, և ոչ մտածելով ինչ՝ բարւոք կարգաւորէ շուրջ զայնոքիւք զգործս իւր. ուստի ասէ իմաստունն։ * Որ անմիտն է՝ ընդ խաւար գնայ(1). և առաքեալն, * Ո՛չ գիտեն, վասն որոյ անդեալն են(2)։ այսպիսիք էին յիմարքն, զի ոչ զմտաւ ածին թէ՝ գուցէ յամեսցի փեսայն՝ և ձէթ լապտերին չիցէ բաւական. այլ զներկայական վայելումն հրագին զխաւելով, կարճմտութեամբ բաւական համարեցան։ Այսպիսիք են ոմանք 'ի յիմար հաւատացելոց, որք զվառումն հաւատոյն և զմանկական բարեգործութիւնն բաւական համարեալ 'ի փրկութիւն անձանց՝ անհոգանան. որպէս և ոմանք 'ի սոսկ կուսակրօնից անւամբ միայն պանծացեալք։ Իսկ իմաստունքն ցուցանեն խոհեմքն, որոց գործ է նախատեսանել զապագայն՝ և զվախճան իրին նկատել, և այնու զմիջոցն բարեպէս կարգաւորել շուրջ զվախճանաւ. զայսպիսեաց ասէ իմաստունն. * Իմաստնոյ աչք 'ի վերայ գլխոյ իւրոյ. և թէ՝ իմաստութե մարդոյ լուսաւոր առնէ զերեսս

(1) Ժողով. Բ. 14։ (2) Ա. տիմոթ. Ա. 7։

իւր(1)։ Նոյն հետևեն 'ի միւսայն. զի որ զաչս միայն իւրոց դնէ 'ի գլուխ գործոյն՝ բարեպէս կարգաւորէ զմիջոցսն, որով լուսաւորի երեսն իւր. այսպիսի են իմաստուն հաւատացեալքն, որք վասն 'ի վեր պահելոյ զպատուէրս հաւատոյն, անընդհատ պատրաստեն զիւր բարի գործոյն, մտածելով զյամեցուածս փեսային և զայլ պարագայս. նմանապէս այնոքիկ՝ որք արարին զանձինս իւրեանց ներքինիս վասն արքայութեան, հաւատարմաբար պահելով զիւր ջերմեռանդութեան իւրեանց։ Յիմարքն առին զլապտերսն, և ոչ էին ընդ իւրեանս ո՛չ ձէթ։ Այսպիսիքս վատթարագոյնք են քան զմիջինսն, որք նախահօգան զպարագայից։ Իսկ իմաստունքն առին ձէթ ամանօք ընդ լապտերս իւրեանց. զմտաւ ածեալ զայն առած թէ՝ * Պատրաստեցայ և ոչ խռովեցայ(2)։ Յեմարն բաւական համարի զիւր աւազանին. իսկ իմաստունքն զայն ենթադրեալ՝ զայլս ևս պատրաստէ, և իբրու զյետոյսն մոռացեալ 'ի յառաջադէմսն նկրտի. և 'ի յամել փեսային, նիրհեցին ամենեքեան և 'ի քուն մտին։ Քունն աստ զմահուն առէ, ամենայն հաւատացեալք ունելով զպատուէր հաւատոյն, ննջեն մինչև ցգալուստ Քրիստոսի։ 'Ի քուն առակէ. զի որպէս դիւրին է մեզ զննջեալսն զարթուցանել, նոյնպէս և Քրիստոսի՝ զ'ի բազում դարուց հետէ զմահա_

(1) Ղուկ. Ի. 24։ (2) Սաղմ. ՃԺԸ. 60։



ցեալն. վասն որոյ սովոր է տէրն զմեռեալսն ննջեցելոյ նմանեցուցանել. * Ղազարոս բարեկամ մեր ննջեաց(1). * Ոչ է մեռեալ աղջիկդ այլ ննջէ(2)։ Բայց ըստ Յովհաննու՝ Երանի՛ մեռելոց՝ որք պատրաստութեամբ իւրոց բարեաց գործոց 'ի տէր ննջեցին(3). սոքա 'ի մահուան իւրեանց ըստ իմաստնոյն, քաղցր 'ի քուն լինին, որպէս ասէ սաղմոսերգուն. * Յաժամանակի մահուան, որպէս տացի քուն սիրելեաց իւրոց(4)։ Իսկ անպատրաստքն ննջեն խեթիւ, և 'ի յարութեան արհաւիրք զարհուրեալ զարթնուն։ և 'ի մէջ գիշերի եղև բարբառ, ահաւասիկ փեսայ գայ, ելէ՛ք ընդ առաջ նորա։

Փեսայն սովոր է յոմանս անդիս երթալ յերեկոյին 'ի տուն հարսին, և առեալ զհարսն՝ անտի դառնալ. որ բազմիցս հանդիպի 'ի մէջ գիշերի. զի յամեցուցանեն զփեսայն. այսպէս և երկնաւոր փեսայն էջ 'ի տուն հարսին մարմնով՝ որ է աշխարհս. ըստ այնմ, * Մոռա՛ զժողովուրդ քո և զտուն հօր քո, զի ցանկացաւ թագաւորն(5)։ և առնել զհարսն՝ գնաց յերկինս. և անտի առնել զհարսն՝ գալոց է 'ի դատել. որ լինելոց է 'ի մէջ գիշերի ըստ վարդապետաց. որպէս և ծնունդն և յարութիւնն. բարբառն այն լինի 'ի փողն գաբրիէլի, որ նախ

(1) Յովհան. ԺԱ. 11։ (2) Մատթէ. Թ. 24։ (3) Յայտն. ԺԴ. 13։
(4) Սաղմ. ՃԻԶ. 4։ (5) Սաղմ. ԽԴ. 13։

բարբառէ, որքան առ հասարակ ազգ մարդկան, մրկք մեռեալք: Իսկ որքան առ հաւանեցեալսն քրիստոսի հաւատով՝ բարբառէ. ահա՛ փեսայ գայ, ելէ՛ք ընդ առաջ նորա: Յայնժամ պատրաստքն որպէս սիրահարք փեսային՝ ջերմ սիրով փութապէս ընդ առաջ ելանեն. յայս միտս ասէ առաքեալն. * Փող հարկանի և մեռեալք 'ի Քս՞ յարիցեն յառաջագոյն(1): Մանաւանդ զի՝ ունելով զպատուէրս վառ, այսինքն, զօժիտս յարութեան, փոյթ ընթանան առ քրիստոս: Յայնժամ յարեան ամենայն կուսանքն, և կազմեցին զլապտերս իւրեանց:

Ի յարութե՛ ամենայն հաւատացեալք մատուցեն զհաւատալ իւրեանց 'ի քրիստոս և յամ անորէնութիւն նորա. այս է կազմելն զլապտերս. և զի՝ առ նաեմախայք է հաւատն հանգոյն ձիթոյ, որ տացէ զլոյս իւր 'ի խաւարային տեղւոջ. իսկ անդ՝ տիւն լուսաւորի և մեծապայծառ արուսեակն քս ծագի 'ի սիրտս ամ հաւատացելոց, որով պայծառանան միտք ամենեցուն շուրջ զհաւատալեօք. այս՛ է կազմելն ամ կուսանաց զլապտերս իւրեանց. ասեն յիմարքն ցիմաստունսն, տո՛ւք մեզ ձիթոյ ձերմէ. զի ահա՛ շիջանին լապտերքս մեր:

Իմաստունքն յիմարաց՝ զորմէ ասա անփոյթ առնէին, որքան բաղձէր զսիրտս իւրեանց,

(1) Ա. Թեսաղ. Դ. 15:



յայնժամ խնկապէս վկայէ, թէ՛ ոչ ունին զիւղ բարեգործութե. վասն որոյ և լոյս հաւատոյ նոցա շիջանի, և իբր մեռանի. այսինքն՝ զի ճանաչեն անդ խնկապէս, թէ հաւատն ոչ ունի զօրութիւն առանց գործոց. վասն որոյ զինքեանց անյոյս եղեալ՝ զընկերսն ողոքեն. ոչ գիտելով թէ՝ * Եղբայր ոչ փրկէ՝ և ոչ փրկէ մարդ, և ոչ տայ այլում զգինս փրկանաց իւրոց անձին(1): Զանզի հագիւ կեցցէ անդ նաև կարի իսկ արդարն. և ո՞ւր կարասցէ օգնել մեղաւորին. ուստի պատասխանի տան. գուցէ՛ մեզ և ձեզ ո՛չ իցէ բաւական. երթա՛յք 'ի վաճառականս և գնեցէ՛ք ձեզ: Յիմարաց ասեն. քանզի ո՞չ ունիցի անդէն այնքան համարձակութիւն, մինչև և զմեղաւորս ջատագովել. որովհետև յաւելոր բերմն և զօրութիւք երկնից շարժին. ո՞վ աղաչեսցէ զերեսս նորա. զի մի բան՝ հազար բանից պատասխանի ոչ տայ. գնել 'ի վաճառականաց՝ առ յարմարութիւն առակին՝ առ բարբառով ասացին. քանզի 'ի մէջ գիշերի ո՞ւր իցէ վաճառական՝ զի գնեսցեն. զայնմ գիշերոյ ասաց ակերն՝ *Գայ գիշեր, յորում ոչ ոք կարէ գործել: Այլ դու՝ զայն սոսկալի գիշերն խոկալով՝ առաւել ուղղեա՛ զխոստմանս քո, և քննեա՛ զինքնին, գուցէ լոյս հաւատոյդ՝ որ 'ի քեզ է, խաւար իցէ. այսինքն՝ առանց իւղոյ բարեգործութե.

(1) Սաղմ. Խը. 8:

ստա քոյ վաճառականաց․ այսինքն՝ աղքատաց․ տուր
զողորմութիւն, և առ զիւղ բարեգործութե՛
՚ի նոցանէ․ և պատրաստեա՛ զլապտերս քո․ զի
վառ լապտերօք ընդառաջ ելանիցես երկնաւոր
փեսային։ Բազումք ՚ի կամաւոր ներքինեաց
ոչ ունելով անդ զիւղն զօրութեան, առաւել
՚ի պէսպէս ախտաթաւալելով, և թառամեալ
զանթառամ պսակն՝ և ոչ ապաշխարե՛լ՝ մինչ
անդ չէջեալ լապտերօք։ Իբրև գնացին նոքա գնել՝ ե-
կն փեսայն և պատրաստքն մտին ընդ նմա ՚ի հարսանիսն՝ և
փակեցաւ դուռն։

Որովհետև յիմարք են՝ ոչ մտածեն՝ թէ ան-
դէն անհնար է գտանել զողորմութիւն, զի
հանց ժամանակն․ այլ մնոջ թափառին այսր
և անդր․ զորոց ասէ մարգարէն․ *Սովեսցին
որպէս շունք և շրջեսցին զքաղաքաւ (1)։ Նա-
քին բանք ոչ ունէին այնքան մեկնութեան տե-
ղիք, այլ միայն ըստ պահանջման առակին ե-
դեալ լինին։ Արդ՝ երկու դասք լինին անդէն՝
օրիորդաց կամ կուսանաց․ մին խաւարեալ և
սևացեալ հանգոյն այծեաց․ իսկ միւսն պայծառ
և լուսաւոր հանգոյն ոչխարաց․ յարփիափայլ դի-
մաց փեսային՝ չէջեալքն հալածին որպէս ըզ-
ջղջիկանս․ իսկ պատրաստքն մտանեն ընդ նմա
յերկնային առագաստն հարսանեաց և փակի դու-
ռըն ողորմութե՛, և արգելանի դուռն գթած

(1) Սաղ․ ԾԸ․ 8․ 18։



ստեղծողին, և մնան արտաքոյ․ մնալն յարտա-
քին խաւարի՝ է անկանիլ ՚ի դժոխս, որ անուա-
նի խաւար արտաքին․ բայց աստ ներգործու-
թեամբ ոչ դնէ, զի զրկիլն յարփիափայլ փե-
սային դիմաց՝ ահարկու է քան զբուն դժոխս,
ըստ ոսկեբերանին․ վասն որոյ միայն զրկումն
եդ։ Յետոյ գան և այլ կուսանքն և ասեն՝ տէ՛ր տէ՛ր բա՛ց մեզ։
յատկութի՛ է յիմարաց ոչ նախամտածել զա-
պագայն և զղջալ խելոյն, մինչ ընդդէմ կամաց
նոցա իրինչ հանդիպի ՚ի գործն յառաջադրե՛լ․
որպէս պատահեցաւ յիմար կուսանացն, մինչ
տեսին զրկեալ ՚ի փեսայէն՝ ՚ի լուսաւոր ըն-
կերացն, և յուրախութենէ հարսանեացն, հա-
րան ՚ի սուգ և ՚ի զղջումն․ ըստ այնմ, *Զղջա-
ցին ՚ի սիրտս իւրեանց, և առ նեղութեան ան-
ձանց՝ յոգւոց հանիցեն (1)․ և սկսան բաղխել
զդուռն ողորմութեան, բայց անօգուտ․ զի որ
աստէն բաղխէ՝ անդէն բացեալ գտանէ։ և ասեն
տէ՛ր տէ՛ր բա՛ց մեզ, իսկ նա զինչ՝ ոչ գիտեմ զձեզ։
Նա՛ զձեզ ՚ի կեանս յայս կոչէր՝ և ոչ լսէիք,
վասն որոյ իրաւունքն պահանջէ, զի և դուք կար-
դայցէք առ նա՝ և նա ոչ լուիցէ ձեզ։ *Քան-
զի կոչէի՝ և ոչ լսէիք․ երկարէի զբանս իմ՝ և
ոչ անսայիք, իջէ՝ զի կարդայցէք առ իս, և ես
ոչ լսիցեմ ձեզ․ խնդրեսցեն զիս չարք՝ և ոչ
գտանիցեն (2)։ Դու արդէն բաց զականջս քո,

(1) Իմաստ․ Ե․ 3։ (2) Առակ․ Ա․ 24․ 28։

և ըստ որ՝ զինչ խօսի աստուած. զի և նա անդ. լուիցէ քեզ : Նա պատասխանի ետ և ասէ, ամէն ամէն՝ ասեմ ձեզ, թէ՝ ո՛չ գիտեմ զձեզ: Բաղխմամբ դրան յիմար կուսանացն՝ իմանի զդիւրին մեղաւորաց 'ի դժոխս և միօք թախանձելն զաստուած : Ամենա պատասխանէ նոցա զճշմարիտն . ամէն ասեմ ձեզ, այսինքն, զստոյգն ասեմ ձեզ, թէ այսուհետև որքան աստուած եմ, ո՛չ գիտեմ զձեզ, և յիրաւի աստուած ո՛չ ճանաչէ խնամօք ըզմեղաւորս, նախ զհպարտս, *Զբարձունս 'ի հեռաստանէ ճանաչէ(1). երկրորդ՝ զնախանձոտս, *Որ ասէ զեղջայր իւր՝ զաստուած ո՛չ ճանաչէ, ապա և ոչ աստուած զնա, և երրորդ՝ զղջախոհս. *Նոքա չճանաչեցին պահեցեն ըզխաւար(2), յայտ է՝ զի 'ի խաւարի դժուարին է զիրն ճանաչել. թէպէտ աստուած լոյս է, և ճանաչէ զդատապարտս խաւարին, բայց զինչ միաբանութիւն է լուսոյ ընդ խաւարի: Աստանօր բաց նկարագրին, եթէ կուսանքն այնքան ճգանց տարեալ, միայն ո՛չ ունելով զիւղ սիրոյ և այլոց առաքինութեանց, մնան արտաքոյ առագաստի հարսանարանին, արդ զինչ կատարած այնոցիկ իցէ, որք և զկուսական լապտերն ընկեցին, և ո՛չ առաջնորդեցին 'ի փառս աստուծոյ: Արթուն կացէք. զի ո՛չ գիտէք զօրն և ո՛չ զժամն:

Աղաչեմ առաւելիս էր զգուշացուցանել ըզ-

(1) Սաղմ. ճլէ. 6: (2) Յովհ. իբ. 15:



մեզ, զի մի՛ անպատրաստ նիրհեսցուք հանգոյն յիմար կուսանացն. և արդ՝ մեծի զգուշութեան պէտս ունիմք, քանզի ծառայ ոք կամ ժողովուրդ. եթէ գիտիցէ զգալուստ տեառըն իւրոյ, կամ թագաւորի հարկաւորապէս, և զժամանակն անգիտանայցէ, պարտի՛ յամենայն ժամ զգոյշ լինել, զի մի՛ յանգէտս եկել- անպատրաստ գտանիցի. և յայնժամ զպատիժ պատուհասի ածցէ 'ի վերայ նոցա. ըստ այնմ. *Եկեսցէ տէր ծառային այնորիկ, յաւուր՝ յորում ո՛չ ակն ունիցի. և 'ի ժամու՝ յորում ո՛չ գիտիցէ, ընդ մէջ կտրեսցէ զնա (1): Արդ՝ քանզի ո՛չ գիտեմք զօր մահուան մերոյ, և ո՛չ զժամանակ գալստեան փեսային, յամենայն ժամ լիցուք պատրաստք, զի մի՛ զչարծառային և զյիմար կուսանացն կրեսցուք զպատուհասն:

Աւարտ մեկնութեան առակիս:

(1) Ղուկ. ժբ. 46:

# ԱՂԷՏ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՆԿՄԱՆ ԵՒ ԿԱՆԳՆՈՒՄՆ ՆՈՐԻՆ։

## ԳԼՈՒԽ ԺԲ։

Այր մի իջանէր յԵրուսաղեմէ յԵրիքով, և անկաւ ՚ի ձեռս աւազակաց, որք մերկացուցին զնա և վէրս ՚ի վերայ եդին, և թողին կիսամահ և գնացին։ Ղուկ. Ժ. 30։

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Նկարագրապէս՝ Տէրն մեր զայս առակ ասաց օրինականին, որ խնդրէր զճանապարհ փրկութեան. և իբրև յառաջադրեաց զսէր Աստուծոյ և ընկերին՝ և զայլ օրէնսն, նա կամեցաւ զանձն արդարացուցանել ասելով, և ո՞վ է իմ ընկեր. իբրու Թէ ասիցէ, և ո՞վ իցէ իբրև զիս օրինապահ. այլ Յիսուս դիտելով՝ զի Թէպէտ պահեալ էր զօրէնսն, բայց զի ոչ ունէր բաւական սէր և գութ առ ընկերսն. այսու պատմութեամբ զաղէտ անկելոյն և զգութ սամարացւոյն ծանոյց նմա և հրամայեաց հետեւիլ այնմ, որ արար զողորմութիւն. և այնու հասանիլ փրկութեան. զայն և պատանեկին՝ որ ասաց։ *Զայդ ամենայն պահեցի ՚ի մանկութենէ իմմէ (1), հրամայեաց և պատուիրեաց։

(1) Ղուկ. Ժ. 20։

Խորհրդապէս միով արամբ նշանակի մարդկային բնութիւն. և այս բազում ուրեք ասանի, որպէս մի դրամ կորուսեալ, մի ոչխար մոլորեալ և մի անառակ որդի, որք զնոյն նշանակեն(1). իսկ յառաջագոյն նշանակէ զԱդամն. Երուսաղէմ թարգմանի տեսիլ խաղաղութեան, և է տեղեաւ բարձր քան զԵրիքով. նշանակէ զդրախտն՝ որ է բարձր 'ի վերայ ամենայն երկրի. վասն որոյ և երկին անուանի. բստ այնմ; * Մեղայ յերկինս և առաջի քո: և է տեղի խաղաղութեան, այսինքն աստուծոյ. զի անդ բնիկքն կային(?) աստուած երևելի մարդոյն: Կոչեալ՝ որպէս Երուսաղէմ է մայրաքաղաք վերին(?) ստեղծման բստ այնմ, * Սիոնին ասէ մայր, և մարդ ծնաւ 'ի նմա(2). այսպէս և դրախտն է մայրաքաղաք ստեղծման մերոյ. զի մայրն մեր եղաւ անդ ստեղծաւ. և մինչ հրապուրմամբ օձին պատրեալ սխալ իջանել յԵրուսաղէմէ՝ մնաց անմայր. յայս միտ ասէ. * Ո ձայնամբ(?) պարանոցն ճաշակեալ 'ի պտղոյն, և եղև վայրաբնակիլ մայրաքաղաքն յԵրուսաղէմ. այսինքն 'ի դրախտն: Որ ընդ առաջ ելանեն երեք դժուարութիւնք. նախ՝ զի ինքն գոլով արտաքսեալ, վասն էր ասէ իջանէր իբրու կամաւ, որով ցուցանի թէ՝ պատիժ մեղաւորին հեանի(?) կամացն. ուստի ոչ է մեղադրելի աստուած,

(1) Ղուկ. ԺԵ. 4. 13. 18: (2) Սաղմ. ՁԶ. 5:



զի ինքն կամեցաւ զմեղս. որոյ հարկաւորապէս հետևեցաւ արտաքսումն. վասն որոյ կամաւ էջ 'ի դրախտէն՝ և ոչ ակամայ. այսպէս գողն մինչ անձն(?) 'ի կախաղան՝ է բստ կամաց իւրոց. երկրորդ՝ մինչ էր 'ի դրախտին՝ շօշափեցաւ յաւազակէն՝ վասն էր յետոյ գնէ. պատասխանեմ. 'ի դրախտին թէպէտ օձն պատրեաց՝ բայց ոչ ախտեաց, գոլով 'ի շնորհս և 'ի խնամս աստուծոյն. իսկ մինչ արտաքսեցաւ որքան 'ի դրախտէն՝ այնքան և 'ի խնամոցն այ. յայնժամ աւրապետեաց և թագաւորեաց 'ի նմա, բստ այնմ * Աստուած եթող զնա՝ հալածեցէք և հասջիք նմա՝ զի ոչ ոք է, որ փրկէ զնա: Վասն որոյ 'ի դրախտին յօձ ձևացաւ՝ որ է խորամանկութեան կերպարան. իսկ արտաքոյ՝ աւազակ, որ է բռնութեան ցոյց. երրորդ՝ մերկացումն. քանզի եղև 'ի դրախտին: * Բացան աչք նոցա, և ծանեան զի մերկք էին(1): վասն էր արտաքոյ գնէ. մերկացուցին զնա, պատասխանեմ. ասէ իմաստունն, * Ամենեքեան՝ որք զնովաւ են, զգեցեալ են զկրկին պատմուճան. վասն որոյ սուրբքն զնովաւ են. աստուած փառաւորեալ է 'ի խորհուրդս սրբոց իւրոց, մեծ և ահաւոր 'ի վերայ այնոցիկ՝ որք շուրջ են զնովաւ: Որք զգեցեալ են զկրկին պատմուճանն՝ մին զաստուծոյ սիրոյն, և միւսն՝ զընկերին. այսպէս և

(1) Ծնն. Գ. 7:

մարդկայինս բնութիւն 'ի դրախտին , զպատ_
մուճան սիրոյն աստուծոյ մերկացաւ , իսկ ար_
տաքոյ՝ զմնկերին . ուստի այնքան մարաք , արիւն_
հեղութիւնք և մարդասպանութիւնք , են , ե_
թէ ոչ՝ յատելութենէ միմեանց , * Էաք բը_
նութեամբ որդիք բարկութեան՝ այսինքն 'ի բնէ
ատեցեալք , և զմիմեանս ատէաք (1) . Երի_
քով՝ որ թարգմանի լուսին , փոփոխման նշա_
նակէ զաշխարհս , որ հանգոյն լուսնի միշտ փո_
փոխի . * Ծագեսցի յաւուրս նորա արդարու_
թիւն , բազում խաղաղութիւն մինչև կա_
տարեսցի լուսինն (2) , այսինքն՝ ցկատարած աշ_
խարհի ։ Արդ՝ այրն ադամ յերուսաղէմէ դրախ_
տին՝ յիջանելն յերիքով յաշխարհս , անկաւ 'ի
ձեռս աւազակաց դիւաց՝ հանդերձ ծննդովքն .
որք թողին կիսամահ . և մերկեալ նախ 'ի ըզ_
գեստէ եղբայրական սիրոյն . երկրորդ՝ 'ի ըզ_
գեստուց ձրիական պարգևաց . երրորդ՝ 'ի զար_
դուց բնական օժտից . քանզի բանականն , ցան_
կականն և յաւիտենականն մերկացուցան 'ի կար_
գաւորեալ զօրութենէ իւրեանց , և զգեցան
զբարս անասնոց . յայս միտ առեալ լինի թէ՝ *
Մարդ 'ի պատուի էր և ոչ իմացաւ , հաւա_
սարեցաւ անասնոց անբանից և նմանեցաւ նո_
ցա (3) . և ես 'ի դրախտին մերկացուցին 'ի ս_
կզբնական արդարութենէ , իսկ 'ի քաղաքական

(1) Եփես. Բ. 3 ։ (2) Սաղմ. ՀԱ. 7 ։ (3) Սաղմ. ԽԸ. 12. 21 ։



և 'ի մաքրողական արդարութենէ՝ արտաքոյ են ։
և վէրս 'ի վերայ եդին . զհոգին խոցոտեցին 'ի բա_
նականն՝ ագխոութեամբ , 'ի ցասմնականն՝ բար_
կութեամբ , և 'ի ցանկականն՝ ախտիւք . և 'ի
վերայ այսր զնետս ամ մեղաց 'ի նմա բազմա_
նալով . Թողին կիսամահ և գնացին ։

Խնդրեցես՝ թէ մարդկային բնութիւն 'ի
դրախտին աւի մեռեալ 'ի սկզբնական արդա_
րութենէ և 'ի շնորհաց ։ ըստ այնմ . * Յորում
աւուր ուտիցես 'ի նմանէ՝ մահու մեռանի_
ցիս (1) . ապա ընդէ՞ր աստ կիսամահ ասէ , պատաս_
խանեմ , կեանք մարդոյն է կրկին՝ հոգևոր և
մարմնաւոր . ըստ հոգւոյն մեռուցին ըստ մա_
ւին 'ի դրախտին , և ըստ մահին արտաքոյ . և
ըստ մարմնոյն՝ թողին կենդանի . և որ զպաօրի_
նակ ունի կեանս՝ աւի կիսամահ ։ Դարձեալ՝
'ի դրախտին մարդն էր անմահ . իսկ արտաքոյ՝
մարմինն եղև մահկանացու . և այսպէս մնաց
մարդն կիսամահ . զայս արարին աւազակքն ։
Դարձեալ՝ որպէս 'ի բեկանել զեկեն՝ նաւն
լինի իբրու կիսամեռ , այսպէս մինչ կուրացու_
ցին զբանականութիւն մարդոյն մեղօք , և ծա_
ռայեցուցին արարածոց , հանգոյն անասնոց ե_
ղև մարդն կիսամահ . իսկ ըստ սերոյն իգնատի_
ոսի շնորհալից վարդապետին մերում՝ մինչ
միով արամբն նշանակեաց զմարդկային բնու_

(1) Ծննդ. Բ. 17 ։

թիւնս, յայտ է՝ զի բազումք ՚ի նեղութենէս ՚ի զանազան դարս՝ հզօր ձեռամբ ամենակալին, ազատ մնացին ՚ի բռնաւորութենէն Թուրքաց. և ոչ երբէք չէջաւ նշոյլ շնորհացն Այ ՚ի մէնջ. վասն որոյ կիսամահ մնացաք: * Բայց եթէ տեսանեն զօրութեանց ոչ էր թողեալ մեզ զաւակ (զկոյսն կենաց քրիստոս) յայնժամ բոլորովին մահացեալք՝ իբրև զսոդոմ լինէաք և գոմորայ նըմանէաք(1): եւ գնացին. որպէս աւազակք թողուն զվիրաւորեալսն, այսպէս և դուքն լքանեն,զոր խոցոտեն: դէպ եղեւ քահանայի միում իջանել ընդ նոյն ճանապարհ, և տեսեալ զնա՝ զանց արար,

* Քահանայն նշանակէ զահարոն իւր ցեղաւքըն. ընդ նոյն ճանապարհ իջանելն, որ է յերուսաղէմէ յերիքով, նշանակէ ՚ի սկզբնական մեղս ծննդեամբ իջանելն. իսկ պատճառ զանց առնելոյն նախ՝ զի վէրքն էին հոգեկանք. իսկ սպեղանիք հին քահանայից էին մարմնականք. ոչինչ կատարումն գործեցին օրէնքն, և ոչ մուտ ազնուական յուսոյն՝ որով մերձենամք առ Ած: Արիւն ցլուց և մոխիր երնջոց՝ զպղծեալսն սըրբէր առ ՚ի մարմնոյ սրբութիւն(2). Երկրորդ՝ զի անմարմին էր խոցել զնա. վասն այն՝ մարմնաւոր մարդ ոչ կարէր բժշկել. Երրորդ՝ ընդդէմ աստուծոյ մեղաւ և խոցեցաւ. վասն որոյ աստուած միայն կարէր բժշկել զնա: Նոյն-

(1) Եսայ. ա. 9: (2) Եբր. թ. 3:



պէս և ղեւտացի մի եկեալ ընդ նոյն տեղի՝ զանց արար:

Իսկ՝ ղեւտացին նշանակէ զմովսէս, հանդերձ ամենայն մարգարէիւք. նոյնով պատճառաւ և սոքա զանց արարին. Զի բան հզօր ցաւոց վիրին, հզօր դեղոց պիտոյ էին. յոր զդեղել ակար մարմին, ապաքինել ոչ բաւէին:

Սամարացի ոմն ճանապարհորդեալ ընդ նոյն և տեսեալ զնա՝ գթացաւ:

Սամարացին անուանէ զինքն, թերևս՝ որով նախատէր հրէական տոհմն ժողովրդն. որ եկն ընդ նոյն ճանապարհ՝ ընդ որ եկեալ այրն՝ անկաւ. զի որպէս նա յերուսաղէմէ էջ, այսպէս և սա ՚ի վերին երուսաղէմէ՝ յերիքով աշխարհս. որպէս հօվիւ ընդ հետ մոլորեալ ոչխարին: Եւ տեսեալ զնա՝ գթացաւ, զի էր կիսամահ եղեալ ՚ի ճանապարհի կենդանոյս. ոչ ունելով դարմանիչ, և ոչ ոք էր, որ փրկէր՝ ըստ եսայեայ(1): վասն որոյ և գթալոյ էր արժանի: Դարձեալ՝ ընդ նոյն ճանապարհ եկն, ընդ որ ամ՝ մարդկայ յաշխարհ ծննդեամբ. թէպէտ նա անսերմնաբար. և այս վասն երկուց պատճառաց. նախ՝ զի աստուածային կրիւքն հատուցէ զպարտս մեր. երկրորդ՝ զի աստուածային արեամբն բժշկեսցէ զ՚ի հոգի խոցեալսն: Եւ այսոցիկ անհնար էր լինել, եթէ ոչ հաղորդեալ էր մարմնոյ և արեան՝ որով կրելոց էր զկիրսն. թէպէտ սա

(1) Եսայ. ա. 6:

ուածային բացարձակ զօրութեամբն ամենայն ինչ կարելի և հնարաւոր է:

Եւ հաստատեալ պտղոյն ունելոյ նորա, որքէր ունէր և ըղձիւն՝ և եղեալ ընդ ՚ի վերայ գրաստու խորոյ, եւս ընդ ՚ի պատրաստ է՝ և պատմանելոյ ընդ:

՚Ի հնումն այս պատճառ և ձէթ ոչ գոյր. վասըն որոյ խղխայթէր մարդկայինս բնութիւն վիրօք: ուստի ողբայր Եսայի. *Ոտից մինչև գլուխ չիք ՚ի նմա առողջութիւն. վէրք, այտուցք, և հարուածք խոցոտեալք. ոչ ձէթ և ոչ պատանիս ՚ի վերայ դնել (1). Հա՛ Եսայի եւ զբնութիւնս մեր մարդկային՝ միով արամբ նշանակէ. զողորմութիւն և փառք մարդասիրին աստուածոյ, զի այնպիսի ժամանակի դիպեցաւ՝ յորում երկնային բժիշկն վիրաւորելոյս առաքեալ բաշխէ զաստուածային ապեղանիսն. Թէպէտ ոմանք նեխեալ վիրօք՝ զայս բժիշկն մերձ ունելով, ոչ խնդրեն զապեղանիսն. այնու զի ոչ ճանաչեն զվէրս իւրեանց: զայսմ ձիթոյ հառաչէր Եսայի: Ի մի՛ս առ ասա զբժշկր Մարդասիրութիւն փրկչին. որ ընդ տեսանելն խոցոյն գթացեալ պատեաց. ձիթովն նշանակի շնորհք հոգւոյն սրբոյ, պատուիրեալ ՚ի հինն և ՚ի նորս ՚ի զանազան իւղս, որովք օծանէին Թագաւորք և քահանայք. Եւ: այս ձէթ սպառել էր ՚ի բնութենէս, *Ո՛չ մնասցէ հոգի իմ ՚ի

(1) Եսայ. Ա. 6:



դոսա՝ վասն լինելոյ դոցա մարմին(1): Եւ քրիստոսի առաքելոյս, *զի չև՛ էր հոգի, քանզի յիսուս չև՛ էր փառաւորեալ (2): *Ուղարկեցից զաւետիս հօր իմոյ առ ձեզ. վասն որոյ կոչի անուն նորա իւղ թափեալ: Նա և ձէթն ունի զզօրութիւն բժշկական. վասն որոյ՝ ՚ի բժշկաց ՚ի բազում դեղորայս ՚ի գործ ածի: Նոյն ձիթոյն նշանակէ զփրկական արիւնն քրիստոսի, որ ՚ի կենարարէր վիրաց անօր հոսեալ բժշկեաց զմեզ. *Նորա վիրօքն բժշկեցաք(3): Մեծ ըմպեղանիք եկեղեցւոյն սոքա են. զի ձիթով հոգւոյն բժշկիմք ՚ի մկրտական վիրաց, իսկ զինեաւ արեամբն՝ ՚ի ներգործականաց. զրաստն քրիստոսի՝ է սուրբ խաչն, *Զխուարեալ ՚ի վերայ բուսաբեր արմատոյն: Պանդոկն է եկեղեցին. յայնժամ դնիմք ՚ի վերայ գրաստուն՝ մինչ ածիմք յաւազանն, որ է խորհուրդ խաչին. ուր անկակից լինիմք նմանութեան մահուն նորա: *Թաղեցաք ընդ նմին մկրտութեամբ ՚ի մահ(4). և ապա դնիմք ՚ի պանդոկի, այսինքն լինիմք որդիք եկեղեցւոյ: Եւ ՚ի վաղիւ անդր իբրև ելանէր անտի. հանեալ ետ ցպանդոկապետն երկուս դահեկանըս՝ և ասէ, դարմանեա զդա, և զոր ինչ ծախեսցես ՚ի դմա՝ ՚ի դառնալ իմում հատուցից քեզ:

Ելանելն նշանակէ զհամբարձումն քի. պան-

(1) Ծննդ. Զ. 3: (2) Յովհան. Է. 39: (3) Եսայ. ԾԳ. 5:
(4) Հռովմ. Զ. 4:

ղոկպետանէ գլխաւորն եկեղեցւոյ, որում յանձ-
նէ զբուժելն, ըստ այնմ. * Արածեա զգառինս
իմ (1), նաև ՚ի համբառնալն ասաց. * Մկրտե-
ցէք զնոսա յանուն Հօր և որդւոյ և Հոգւոյն
սրբոյ (2): Իսկ այժմ պանդոկապետքն են ամե-
նայն քրիստոնէից կաթուղիկոսունքն. որպէս՝
Հայոց. Հասպէշից. ասորւոց. ղպտեաց. Փռան-
գաց. յունաց և այլոց: քանզի զազրալուր իմն
է ասելն, թէ ամենայն ազգաց կաթուղիկո-
սունքն մոլորեցան. և միայն պապն հռոմայ անմո-
լար. որովհետև ամենեքեան ունին յառաքելոց
անտի սահմանեալ զերկոտասան հատուածս հա-
ւատոյ: երկու դահեկանն՝ նշանակէ զհին և զնո-
նոր կտակարանն, որովք պարտին կաթուղիկո-
սունք, որք են եկեղեցւոյն քրիստոսի պանդո-
կապետք՝ կրթել և դարմանել զեկեղեցին քրի-
ստոսի ՚ի սէր աստուծոյ և ընկերին:
Իսկ երանի թէ՝ հաւատարմաբար ծառայեսցեն
եկեղեցւոյն. զի ՚ի միւսանգամ գալստեանն քրի-
ստոսի հանդոյն արեգական եղական փառօք
պայծառացեալ երևեսցին ՚ի մէջ մանկանցն,
և համարձակ ասասցեն * Ահա ես և մանկունք
իմ: և յայնժամ զո՛ր ընդ որոց առնուցուն յայս-
մանէ՝ որ ասացն. ՚ի [illegible] հա-
[illegible]: Իսկ եթէ հեղգանայցեն ՚ի դարմա-
նել զվիրաւորսն, և յարածել զանձինս պարա-

(1) յովհ. իա. 15: (2) մատ. իը. 19:



պետսցին, վա՜յ նոցա: քանզի զեկեղեցին ՚ի վարձուցն-
քին, և ընդ այնր նախատինս առնուցուն: որ-
ո՞չ յերեցունց [illegible] ՚ի չեռա-
ապականաց:
՚Ի մի՛ա առ մի՛ հրէայ, որ ժպրհեալ սամա-
րացի կոչէս զՅիսուս, և ՚ի մոլեկս պարծիս.
այրն հրէայ անկեալ ՚ի ձեռս աւազակաց, ոչ
՚ի քահանայէն ահարոնէ, և ոչ ՚ի ղևտացւոյն
մովսէսէ՝ որք էին մերձաւորք նորա, այլ ՚ի սա-
մարացւոյն մերժէ եգիտ զողորմութիւն:
Նարոյականապէս՝ այրն յերուսաղէմէ իջեալ
յերիքով, է նա՝ որ յարդարութենէ արշաւէ
՚ի մեղս. որպիսիք են ոմանք խոստովանեալք և
հաղորդեալք, որք անդրէն դառնան ՚ի փախստն
խուրեանց. արդարև այնպիսիքն կրկին անկանին
՚ի ձեռս աւազակաց դիւաց, և խոցոտեալ
սատակին չարաչար. ըստ այնմ, * Որ արտաքն-
թանայ յարդարութենէ ՚ի մեղս, աստուած
պատրաստեսցէ զնա ՚ի նիզակս (1): Յօրինակ այսմ,
Սեմէի զղջացեալ, հրամայեցաւ կալ յերու-
սաղէմ. և մինչ ել արտաքս՝ սպանաւ: Դար-
ձեալ՝ իւրաքանչիւր կրօնաւորի երուսաղէմ՝
է իւր վանքն. եթէ ելցէ առանց հրամանի՝ ան-
կանի ՚ի ձեռս աւազակաց դիւաց, և վիրաւորի
չարաչար. թէպէտ մերձաւորք ընդունիք իւր. քա-
հանայն և ղևտացին հանդիպին նմա՝ բայց զանց
առնեն. ուր ուրեմն պատահի սամարացին քրիստոս:

(1) սիրաք. իզ. 27:

# ԹԻՒ ՅԵՐԵՔՇԱԲԹԻ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ ԱՌԱ-ՋԻՆ ՕՐԻՆ ԽՆԴՐՈՑ:

## ԳԼՈՒԽ ԺԹ:

Եւ ասէ ցնոսա, ո՞ ՚ի ձէնջ՝ որոյ իցէ բարեկամ, եւ եր-թիցէ առնա ՚ի մէջ գիշերի, եւ ասիցէ ցնա, բարեկամ, փո՛խ տուր ինձ երիս նկանակս: ղուկ. ժա. 5:

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Բազում խնդրոյ աշակերտացն՝ մինչ զերդանակ աղօթիցն ուսոյց, եւ ՚ի նմա պատուիրեաց ըզ-հանապազորդ հացն խնդրել եւ զթողութիւն պարտուց, ՚ի համառօտութի իւրայն ասաց զա-ռակս զայս. զի օրինակաւ բնութեանս քաջա-լերեսցին թէ՝ զոր խնդրենն՝ անխափան առնու-ցուն. ուսանի զօրինակն ՚ի խոնարհագունից դնէ. այսինքն, ՚ի մարդկանէ. զի առաւել պնդեսցին ՚ի բանն. զի եթէ մարդ՝ ակարութեամբ եւ կա-րեօք զգածեալ, ՚ի թախանձելն՝ առ ձանձ-րութեան տայ զխնդրելին, որպէս եւ դատաւո-րըն անիրաւ, քանի՜ եւս Հայրն երկնաւոր. վասն որոյ յաւելու ՚ի վախճանի, իսկ եթէ դուք՝ որ չար էք. գիտէք պարգեւս բարիս տալ. ևն:

Խորհրդապէս՝ բարեկամ է մեզ Հայր ած. երեք է յատկութիւն բարեկամին. նախ՝ հա-ղորդակից առնել բարւոյն իւրոյ՝ զոր ունին.



այսպէս արար աստուած առեղծմամբ՝ հաղոր-դելով բարւոյն իւրոյ. այսինքն՝ կենաց եւ մը-տաց. ըստ այնմ, *Զհանդուրժել բնութեամբ բարւոյն. երկրորդ՝ ՚ի նեղութեան ՚ի թիկու-նըս հասանել, *Այնքան սիրեաց աստուած զաշխարհս, մինչեւ զորդին իւր միածին ետ(1): Երրորդ՝ խորհրդակից առնել. *Հոգին՝ զոր առաքեաց Հայր, նա ուսուսցէ ձեզ զամե-նայն(2): Ըստ այսց երից յատկութեանցս՝ բա-րեկամ է մեզ եւ Որդին մեր. նախ՝ հաղորդե-լով բարւոյն իւրոյ. *Հա՛յր զոր ետուր ինձ՝ ետու նոցա: Զի երիս ետ նմա Հայր. զաստուա-ծութիւն, զմարդկութիւն եւ զհոգին. զառա-ջինն ետ մեզ՝ մինչ ասաց. *Առէք կերէք(3): իսկ զհոգին փչելով եւ առաքելով. *Առէք զհոգի սուրբ(4): Երկրորդ՝ ՚ի թիկունս հասա-նելով. *Մեծ եւս քան զայս սէր ոչ ոք ունի. եթէ ոք զանձն դիցէ ՚ի վերայ բարեկամաց իւրոց(5): Երրորդ՝ խորհրդակից առնելով իւ-քեան. *Դուք բարեկամք իմ էք. զի զամե-նայն, զոր լուայ ՚ի Հօրէ իմմէ՝ ծանուցի ձեզ(6): Ընդ այսպիսի բարեկամս յոր պահու եւ երթի-ցեմք աղօթիւք՝ պատրաստ է տալ զխնդիրս. վասն որոյ յորդորէ յամենայն ժամ աղօթս առ-նել *Պա՛րտ է յամենայն ժամ յաղօթս կալ եւ

(1) յովհան. գ. 16: (2) ժդ. 25: (3) ղուկ. ԻԲ. 19:
(4) յովհան. Ի. 22: (5) ժե. 13: (6) ժե. 15:

մի՛ ձանձրանալ (1)։ Նաև ՚ի գրուածս երկրաւոր ուղևորաց գնացուցքն՝ բազմիցս ունայն դառնան. բայց դժուարին է, եթէ ՚ի մէջ գիշերի իցէ խնդիրն. քանզի յայնժամ շաւիղքն փակեալ լինին, և մանկունքն յանկողնի. որով և յառնելն դժուարին։ Նմանի այնմ, որ ունիցի նախապատրաստութիւն հոգևորապէս և զգուշութիւն յամենայն ժամ. զի ՚ի գալ բարեկամին չամաչիցի, մանաւանդ՝ զի չգիտեմք երբ գայ. յիշեա՛ * Ոչ գիտես թէ երբ տէր տանն գայցէ. յերեկորեայ, եթէ ՚ի մէջ գիշերի, և այլն (2)։ վասն որոյ՝ պիտոյ է մեզ միշտ արթնութիւնապաշխարութեան յամենայն ժամու պատրաստ գտանիլ։ Առդ՝ մէջ գիշերն զերիս նշանակէ. նախ՝ զկեանքն մեղաւոր երիտասարդաց, յորում ամենեքին պակասի լոյսն բանականութեան, որպէս ՚ի մէջ գիշերի լոյսն արեգականն։ * Ոչ գիտեմ զճանապարհ առն մեղաւորի յերիտասարդութեան իւրում (3)։ Երկրորդ՝ նշանակէ ըզկեանս չարեօք ծերացելոց. որոց ո՛չ միայն լոյսն հոգւոյն՝ այլ և մարմնոյն աչաց պակասեալ խաւարեն ՚ի տուընջեան՝ որպէս ՚ի հասարակ գիշերի. Երրորդ՝ նշանակէ զժամն հոգեվար մեղաւորի, յորում սկսանի սպառիլ լոյսն կենաց. յայսպիսիս մինչ գայ բարեկամն, այսինքն՝ հոգեպահանջ հրեշտակն, որ է բարեկամ ազգի

(1) Ղուկ. ժը. 1։ (2) Մարկ. ժգ. 3։ (3) Առակ. լ. 19։



մարդկան՝ մինչդեռ մահու և յարութեան. ՚ի տեսանելն զտուն բարեկամին դատարկ՝ տրտմի յոյժ, և յորդորէ ՚ի զղջումն։ Այլ՝ առաջին բարեկամն մեր այնքան քաղցր է, մինչ զի յայնմիկ պահու ևս՝ եթէ ոք դիմեսցէ առ նա զղջմամբք և աղօթիւք հեծեծանաց խնդրելով զերիս նըկանակս՝ տայ, որ ունի զերկուս խորհուրդս մի՝ զերրորդութեան բաց շնորհալւոյն. * Տուր ինձ ընդ երիս նկանակին՝ զդաւանութի՛ երից անձին։ Երկրորդ՝ զորբազան պատարագին, յորում է երեք նկանակ, այսինքն՝ ածութիւնն, հոգին և մարմինն, * Տուր զմարմին քո երկնայինն՝ որով ծանեաք զերիս դիմին։ այսինքն՝ յերից մասանց հոգւոյն սեղան պատրաստել բարեկամին. զի եթէ չունիցիմք զայլ բարիս՝ գէթ աքին պարտին գտանիլ ՚ի հոգիս մեր. այսինքն դաւանութիւն երրորդութեանն, և հաղորդութիւն կենարարի խորհրդոց մարմնոյ և արեանն քրիստոսի. յայնժամ թէպէտ առ բարէ և յանդիմանէ զարտաժամ դիմեալսն, բայց ո՛չ ընդունայն արձակէ. զի թախանձէ թէ՝ Բարեկամ իմ եկն առ իս յուղւոյ. և ո՛չ ինչ ունիմ դնել առաջի նորա, (այսինքն սեղան բարեգործութե։) և ՚ի ներքուստ պատասխանի տայցէ և ասիցէ, մի՛ աշխատ առներ զիս, զի դուռնդ փակեալ են, և մանկունքս ընդ իս են յանկողնի. ո՛չ կարեմ յառնել և տալ քեզ։

Այսու ցուցանի թէ՝ կարի դժուարին է և յայնպիսի պահու ընկալնուլ զխնդիրն. և թէ՝

բայց առ Ած մեղաւորին յայնժամ․ և այս մի երից պատճառաց․ նախ՝ զի մինչ մեղաւորն հասանի ՚ի խորս չարեաց, և մինչ ժամանէ ժամ՚ն պահանջման հոգւոյն, սկսանի դրունք ողորմութեանն Աստուծոյ փակել․ և յայնժամ լսէ բա ենթադատման խղճմտանացն իւրոց, դատարկ փակեալ են։ Երկրորդ՝ որքան մեղաւորն է կենդանի, Աստուած միշտ կայ առ դրան խղճի մտաց նորա և բաղխէ, * Ահա հանապազ կամ առ դրունս քո և բաղխեմ(1)։ Իսկ մինչ յամառեալ անկանի ՚ի հոգւոց պարզումն, Աստուած ևս մնանէ յանկողին հանգստեան իւրոյ․ այսինքն՝ դադարի ՚ի բաղխելոյ զսիրտ նորա․ և յայնժամ եթէ ինքն կարդայ առ նա՝ և նա պատճառէ զաշխատութիւն․ Ի՛ աշխատ առնէր չի․ երկրորդ՝ սաստկութիւն մեղացն նշանակէ զմէջ գիշեր․ և զի՝ մեղաւորն ՚ի ժամու աւանդման հոգւոյն խորհի թէ ՚ի մէջ գիշերի բաղխէ զդուռն ողորմութեան Աստուծոյ, վասն այսորիկ յամէ Ած յառնել և տալ, յայս մի ատի․ * Աշխատեցուցեր զիս ՚ի չարիս քո(2)։ Քանզի մեծ աշխատութիւն է զամբարիշտն արդարացուցանել․ այն զի մեղաւորն ոչ յառնէ յանկողնոյ հեշտութեան բանալ նմա ասելով թէ՝ * Մերկացայ զպատմուճան իմ, զիարդ զգեցայց զնա(3)։ Տես, քանի աշխատութիւն է Աստուծոյ՝ այնպիսւոյն յառ-

(1) Յայտն․ Գ․ 20։ (2) Եսայ․ Է․ 23։ (3) Երգ․ Է․ 3։



նել և բանալ․ նա՛ զի՝ և մանկունք ընդ իւրև կան ՚ի քուն․ այսինքն՝ հրեշտակք և սուրբք, որք որպէս զձագս ընդ թևօք հաւուն կան յանկողնւոջ հանգստեանն Աստուծոյ, որպէս զագարս ՚ի գոգն Աբրահամու։ Անկողինն միաւորութե է նշանակ․ առաքինիքն և սուրբքն միանան և զուգաւորին մօք ընդ Աստուծոյ յաւիտեան։ Ցուցանի ևս թէ ընդ ննջելն Աստուծոյ՝ անտես առնելով, հրեշտակք և սուրբք ընդ նըմա ննջեն․ և ոչ ոք գտանի օգնական մեղաւորին։ Եթէ կամիս արթուն գտանել զնա՝ * Մի՛ տայցէ ՚ի սասանութիւն զոտն քո, զի մի՛ ննջեսցէ պահապան քո(1)։ Այս զմօր բերէ զօրինակ, զի որպէս մայր գգուէ զմանուկն և ննջէ, այնպէս գգուեսցէ տէր՝ որ արժանանայ նորին անկողնոյ փառաց։ Ընէ նա՛ արթնեցոյց բաղխելով, ասէ՛ ձեռ, եթէ ո՛չ յարուցեալ տայցէ նմա վասն բարեկամութեան, սակայն վա ժտութեան՝ յարուցեալ տայցէ նմա, որչափ և պիտոյ իցէ։

Այսու բանիւ՝ մեծապէս յուսադրեաց տէրն զմեղաւորս, և խրախուսեաց յարատևել յաղօթս․ զի թէ ոչ առ բարեկամութեան՝ գոնեայ առ ժտութեան առնումք զխնդիրն, որ զինչ պիտոյ է․ որով ուրախ դիմօք ճանապարհորդեմք զբարեկամն։ Եթէ ՚ի տարաժամու սակայն այսքան զօրաւոր է, որքան ևս ՚ի ժամու․ այսպէս և այլն յաճախելով զերթն և թախան-

(1) Սաղմ․ ՃԻ․ 3․։

ձեռով զդաստառորն՝ ընկալաւ զգաստն(1)․ և քա-նանուհին 'ի շառնուլ զխնդիրն յառաջինն նուա-գին՝ անընդհատ աղաղակելով զհետ քրիստոսի՝ էառ(2)․ այսինքն՝ զբժշկութիւն դստեր իւրոյ։ Այս տէրն մեր զերիս պարագայս յառաջադրէ․ նախ՝ զի խնդրեսցէ զհարկաւորն, *Տո՛ւր ինձ զե-րիս նկանակս։ զոր և յաղօթական բանին հրամա-յեաց․ զհաց մեր հանապազորդ․ երկրորդ՝ խոնար-հեցուսցէ զանձն՝ ոչ ինչ ունիմ ասելով․ երրորդ՝ ստիպեսցէ ժտելով․ զի և աղքատք ժտելով առնուն։

Բարոյականապէս, 'ի գալ հրեշտակին՝ հո-գին բաղխէ զդուռն աղերսելով, զի առցէ ըզ-դաւանութիւն երից անձանցն, և զերիս նկա-նական հաղորդութեան ընկալցի․ որով իւրքն հո-գին յերիս զօրութիւնս իւր ընկալեալ իբրու զերիս նկանակս, որպէս բարեկի առեալ զիցի առաջի հրեշտակին․ իսկ նա պատասխանէ, դուռք խղճի մտացս փակեալ են և դադարեալ, և ման-կունք մեր ընդ իմս կան յանկողնի անդորրու-թեան, և աշխատութիւն է ինձ 'ի քնոյ մերոյ յառնել, քանզի մերկացայ զպատմուճան շնոր-հաց․ և զոտս յառաքինական կոշկաց․ զիա՞րդ զգեցայց վերստին․ այլ թէ ստիպեսցէ՝ յառ-նէ 'ի զղջումն վասն ժտութեան։ այսպէս այ-րի հոգին թախանձանօք զարթոյց 'ի զղջումն, որպէս ասէ Իգնատիոս սուրբ վարդապետն մեր։

(1) Ղուկ. ժա. 5։ (2) Մատթ. ժե. 28։



# ՎԱՍՆ ՊԱՀՈՑ։

## ԳԼՈՒԽ Ա.

Տէրն մեր ուսանելով զպատիկ յարուսմն ագահաց յինչս իւրեանց՝ իբրու թէ կեանք նո-ցա ընչից կախեալ իցէ, 'ի զգուշութիւն մեզ առաց զառակս զայս։

Առն ուրումն մեծատան բարւոք անդք ուռճացան։ (այս-ինքն՝ բերրիս և բեղմնաւորս։) Ղուկ. ժբ. 16։

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Աստի ցուցանի՝ թէ մեծութիւնքն են յաս-տուծոյ․ ըստ այնմ։ *Ինձ մեծամեծք մեծա-նան․ և թէ՝ *Մեծութիւնք և փառք իմ են, ստացուածք բազմաց և արդարութիւն(1)․ ա-պա ոչ է հպարտանալի։ մեծութիւնք տուեալ լինին 'ի ախորժանս և 'ի մխիթարութիւն ոչ մի-այն իւրեանց, այլ զի և զայլս մխիթարեսցեն․ բայց անզգամք չարաչար վարելով զայնպիսին 'ի նո-սին․ և լինի 'ի մէջ արարածոցն աստուծոյ հան-գոյն կուոց՝ որդայլթ ստից անզգամաց(2)։ ու-ստի մեծութիւնքն նմանին գինւոյ, որ զոմանս առնէ զգօնս՝ հեզս և առատաձեռնս․ իսկ զո-մանս՝ խրոխտս, անառակս, բարկացողս և այսա-

(1) Առակ. ը. 16. 18։ (2) Իմաստ. ժդ. 11։

հօրս ։ Նոյնպէս են ոմանք, որք որքան մեծանան՝ այնքան խոնարհեցուցանեն զինքեանս որպէս զոստս բազմապտուղս ․ այսպէս ասաց յակոբ ․ * Եթէ տայցէ ինձ տէր հաց ուտելոյ և հանդերձ զգենլոյ՝ եղիցի ինձ տէր՝ յաստուած (1) ։ Իսկ են ոմանք, որ մինչ մեծանան՝ զաստուած ուրանան ։ յորմէ երկնչէր սողոմոն ․ * Զի մի՛ մեծացայց և ասացից՝ ո՞վ է տէր (2) ։ Վասն որոյ զգուշացուցանէր տէր մովսիսիւ զժողովուրդն ․ * Զգոյշ լեր, գուցէ ժառանգեսցես զերկիրն, և բազմանայցեն քեզ արջառք ․ ․ ․ և մոռանայցես զտէր աստուած ։ Որդ՝ մոռացող երախտեաց գտաւ այս մեծատունն, յասելն ․ Զի՞նչ գործեցից ․ զի ո՛չ գոյ տեղի՝ ուր ժողովեցից զարդիւնս իմ ։ մեծատունն եթէ բարի ոք իցէր՝ բաց ՚ի բակելոյ զշտեմարանն, զոյր առաջի նորա այլ հնար դիւրապատրաստ ․ այսինքն զաւելորդն տալ աղքատաց՝ որք են երկնային շտեմարանք, յորս զանձեալն մնայ անապական ․ Թէպէտ գովելին է ՚ի հարկաւորացն տալ ․ * Սա գոյիւ չափ էարկ զկեանս իւր (3) ։ Բայց ձեռն նորա կարկամ, և ո՛չ յաւելորդացն տարածեցաւ առնուլ և արկանել ՚ի սիրտ քաղցելոց ․ երկրորդ՝ հնա՛ր էր գէթ զաւելորդն հանել բաժին աստուծոյ, թէպէտ սերմն անդուլքն հանդերձ իցէ նորա ․ * Պատուեա՛ զտէր ՚ի քոյոց արդար վաս-

(1) ծնն․ իը․ 20 ։ (2) առակ․ լ․ 9 ։ (3) մարկ․ ժբ․ 44 ։



տակոց (1) ։ * Հո՛ւր զբաժին եօթանց այլև՝ ութից ։ Իսկ թէ տակաւին ես մնայ աւելորդ՝ լո՛ւր իմաստնոյն ․ և * Արձակեա՛ զհաց քո ՚ի վերայ ջրոց ․ զի թէ բազումք իցեն աւուրք՝ քո՛ գտցես զնա (2) ։ Այլ նա զայսցանէ և ո՛չ զմի խորհեցաւ ․ քանզի ագահութեամբ այնքան յարեալ էր յինչս, մինչև զաստուած զկնովին մոռացեալ, զկեանս ՚ի նմանէ կարծէր ․ վասն որոյ և ո՛չ զաղքատաց ինչ փո՛յթ ունէր ․ քանզի և ինքն իսկ ՚ի մեծութեան իւրում էր աղքատ, զի իբրև զաղքատ՝ հոգայր զապրուստից իւրոց և ասէր Զի՞նչ գործեցից ։ Որդ՝ սա ո՛չ ունէր յոյս յաստուած, և ո՛չ հաւատայր, թէ նովաւ կեայ անձն իւր ․ այլ կարծէր զկեանս իւր ՚ի մթերից ընչից իւրոց ․ վասն որոյ և ո՛չ զյագուրդ ունէր ՚ի ժողովելն ։ զայսպիսեացս ասի, * Զաւատացելոյն՝ աշխարհ ամենայն ընչիւք լի է ․ իսկ անհաւատին՝ և ո՛չ դանկ մի (3) ․ * Որ սիրէ զարծաթ, ո՛չ յագեսցի նովաւ (4) ․ և չէ՛ զարմանք զի որոյ աչքն միշտ ագա՛հ է, նա և ՚ի թագաւորութեան իւրում լինի աղքատ ․ ո՛չ միայն յընչից՝ այլև յիմաստից ․ վասն որոյ յիմարութի՛ գտանել զհնար՝ ասէ, գիտեմ զինչ արարից, քակեցից զշտեմարանս իմ, և մեծամեծս շինեցից ․ և ժողովեցից զանդ իմ ։ Զայսքան աշխատութիւնս յանձն առնու,

(1) տոբ․ դ․ 9 ։ (2) ժողով․ ժա․ 2․1 ։ (3) առակ․ ժէ․ 4 ։ (4) ժողով․ ե․ 9 ։

քակէ զշտեմարանս, և զմեծամեծս շինէ, և ժողովէ զարդիւնս վասն երից, հանգչելոյ ուտելոյ և ուրախանալոյ. ա՛յս է գլխաւորն ամենայն ագահաց՝ որ խնդրեն զինչս որոց հանդիստըն է 'ի մեղս. *Ո՞ւսար հանդերձ 'ի մտարըս իւր: սեղանն է 'ի մեղս. վա՜յ՝ որք յառնեն ընդ առաւօտս՝ և զհետ լինին ցքւոյն՝ և երեկոյանան 'ի նմին. զի գինին զնոսին անդէն այրէ(1). այսինքն՝ մեղօքն զհոգիսն. և թէ՝ *Ո՞ւմ է վայ, որ յամենայ 'ի գինւոջ(2): Սոյնպէս և ուրախութիւն նոցա է 'ի մեղս, *Ուրախ լինին ընդ չարիս, և թէ՝ *Վա՜յ որք ծիծաղիքդ(3): Սոյնպէս էր և անողորմ մեծատունն. երանի՛ թէ՝ վասն անանց հանգստեան և ուրախութեան զմտան լինէր յայս ծանր աշխատութեանց յանձն առնուլինու. և զիւրքը շտեմարանն 'ի նորայ անանց լուսեղէնս շինէլին: դարձեալ և սէր կենացս հանեալ էր 'ի մտաց նորին զյիշատակ մահուան, ուստի յուշ առնէ աստուած. ասէ ցնա աստուած, ա՛նմիտ՝ յայսմ գիշերի զոգիդ 'ի քէն 'ի բաց պահանջիցեն, և զոր պատրաստեցեր՝ ո՞ւմ լինիցի:

Իրաւի՝ զի որ ո՛չ մտածէ զաղագայս ըստ ամբարշտութեան՝ է անմիտ. զի ո՛չ կարէ ըստ պատշաճի պատրաստել զմիջոցն, որով հասանիցի առ այն. զորօրինակ՝ եթէ նաւապետն միայն զերկարութիւն ճանապարհին նկատիցէ՝ և

(1) եսայի. ե. 11: (2) առակ. իգ. 29: (3) ղուկ. զ. 25:



ո՛չ զալեկոծութիւնն, զուռճիկն միայն պատրաստէ՝ և ո՛չ զխարիսխ, որով զերծանիցի յալեկոծութենէ. այսպիսի են մրջիւնք, որք բնական իմն ազդմամբ՝ թէպէտ հոգան զապագայիցն, և զբազում համբարս դնեն 'ի հունձըս, բայց ոչինչ է փոյթ նոցա վասն հեղեղացն՝ որք 'ի յառնելն ո՛չ միայն զհամբարս նոցա ողողեն, այլև զինքեանս հեղձուցանեն. այսպիսի էր և այս մեծատունն. որ նման մրջման ունելով զմիայն զգալի աչս, զապրուստիցն միայն հոգայր. անգիտացեալ զարկածից մահուան, որ զրկէ յամենայնէ՝ յորս ջանայր 'ի ներքոյ արեգական: Հանգիտաբար խօսի սիրաք զայսպիսեաց անմիտ ագահաց՝ յասելն. *Է՛ որ փարթամանայ անխնայաբար առնլով, և այն է մասն վարձու իւրոյ. ըստ այնմ, զոր ասէ. *Գտի զհանգիստ ինձ. և այժմ կերից 'ի բարեաց իմոց միայնակ. և ո՛չ գիտէ թէ ժամանակ անցանելո՛ց է, և մահ մերձենալոց և թողցէ զամենայն այլոց՝ և ինքն մեռանիցի (1): Սաղմոսերգուն խնդրէ իմանալ զաւուրս իւր. *Ծանո՛յց ինձ տէր զկատարած իմ, և գիտացեալ թէ եօթանասուն ամ է՝ ընծայելոց երգէ. *Ահա՛ չափով եդեր զաւուրս իմ... և որպէս ոչինչ համարելով՝ եզրակացուցանէ՝ *Սակայն որպէս 'ի պատկերի շրջի մարդ. գանձէ և ո՛չ գի_

(1) սիրաք. ժա. 18. 19:

տէ ում ժողովէ (1)։ Հնար է աչօք բացօք ան-ջատիլ սրտիւ՝ նախքան զմեռանիլն հանգոյն ի-մաստնոյն. գիտացեալ թէ՝ յակամայ կամաց թողլոց եմք. վասն որոյ ասէ. * Դարձայ հրա-ժարեալ սրտիւ իմով յամենայն վաստակոց ի-մոց. զի թողում զայն մարդոյ՝ որ լինելոց է զկնի իմ (2)։ Բայց յետ հրաժարելոյն սրտիւ՝ պարտիմք յուսով փառացն արքայութեան բաշ-խել աղքատաց, * Սփռեաց և ետ աղքատաց, արդարութիւն նորա մնայ յաւիտեանս յաւի-տենից և եղջիւր նորա բարձր եղիցի փառօք։ Ապա թէ ոչ՝ յակամայ կամս թողցէ. ըստ այ-նմ. * Մեծութիւն անիրաւութեամբ խառ-նեալ՝ 'ի կէս աւուր թողցէ զնա։ Որ կատա-րեցաւ յայս ագահ մեծատունս, որում և ոչ օր մի ներեցաւ վայելել յանխրատ ստացուա-ծոցն։ այսպէս լինի և նոցա՝ որք գանձեն ան-ձանց՝ և ոչ յԱծ։ Աստուստ երևի թէ՝ մա-ծուածն մահուան որքան օգտակար լիցէ. զի ան-ջատէ զսիրտ մարդոյ 'ի զգալեաց. վասն որոյ ասէ, * Որդեակ յիշեա զվախճան քո՝ և յաւի-տեան ոչ մեղանչիցես։

(1) Սաղ. ԼԸ. 5։ (2) Ժող. Բ. 20։



# ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ Ի ՍԿԶԲԱՆ ԳՈՐԾՈՅՆ։

## ԳԼՈՒԽ ԻԱ։

Ո՞վ ոք 'ի ձէնջ կամիցի շինել աշտարակ. ո՛չ նախ նստեալ համարիցի զծախսն, եթէ ունիցի բաւական 'ի կատարումն, զի գուցէ իբրև արկանիցէ հիմն՝ և ո՛չ կարասցէ կատարել. ամենեքեան՝ որ տեսանիցեն, սկսանիցեն ծաղր առնել զնա և ասել եթէ՝ այս այր սկսաւ շինել՝ և ո՛չ կարաց կատարել։ Ղուկ. ԺԴ. 28։

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Նկարագրապէս յայտնի է բանն. զի հարկ է յամենայնում զվախճան իւրն նկատել, և ապա ձեռնարկել 'ի նոյնն։

Բարոյականապէս՝ աշտարակն առաքինութեան՝ որ պահպանէ յաշխարհական և 'ի դիւական յա-րուցմանց, խնդրէ զբազում ծախս, բայց բա-ւական 'ի կատարումն է աղքատութիւն. որ սկսա-նի, զայս աղքատութիւն պարտի խորհիլ։ Դար-ձեալ՝ յաւուրս աշակերտ լինել քրիստոսի է մեծ աշտարակ, որ պահանջէ զբազում ծախս առաքինութեանց. այսինքն՝ զկեանս, զուրացու-մըն անձին և զաղքատութիւն։ Որ ոք չիցէ բա-ւական առ այս մեծ ծախս՝ մի՛ հիմն արկցէ այն մեծ աշտարակին. քանզի չունելով զմեծ ծախ-սն բաւական 'ի կատարումն, այսինքն զկատար-

եալ հնազանդութեն, կատարեալ աղքատութեն, և կուսութեն, յանցաւոր աշխարհականաց ծաղր լինի․ որպիսի են այժմեայս անուամբ և եթ աշակերտաքն, որք պարծին յամբարտաւանութիւն և յինքս՝ և ո՛չ յամենազօրելի փառս Քրիստոսի, այլ բաւական համարիցի ընդ ցած տամբ աշխարհականութեն միայն․ քան թէ անբաւական գոլով ելանել յաշտարակ աշակերտութեան Քրիստոսի․ յայս միտ առաց պօղոս․ *Ապա թէ չունիցին ժուժ՝ ամուսնասցին․ զի լաւ է ամուսնանալ՝ քան զջեռնուլ: Բայց զկատարեալ կուսութիւն բանիւս ընթերցիր ՚ի սբն Իգնատիոս:

## ՅԱՂԱԳՍ ԵՐԿՈՒՑ ՄԱՐՏԱԿԻՑ ԹԱԳԱՒՈՐԱՑ:

### ԳԼՈՒԽ ԻԲ:

Կամ ո՞ր թագաւոր երթեալ տալ պատերազմ ընդ այլում թագաւորի՝ և ո՛չ նախ նստեալ խորհիցի, եթէ կարո՛ղ իցէ տասն հազարաւ ընդդէմ ունել այնորիկ՝ որ գայցէ քսան հազարաւ: ապա թէ ո՛չ՝ մինչդեռ հեռագոյն իցէ՝ հրեշտակութիւնս առաքեսցէ աղաչել ՚ի խաղաղութիւն: Ղուկ. ժդ. 31:

### ՄԽԻԹԱՐՈՒԹԻՒՆ,

Նկարագրապէս յայտնի է բանս քանզի՝ մեծ



յիմարութիւն է ընդդէմ հզօրագունի ձեռն ամբառնալ: Այլաբանօրէն թագաւոր է Քրիստոնեայն․ *Արար զմեզ քահանայս և թագաւորս․ զի եմք անդամք թագաւորին Քսի(1)․ *Այլ դուք ազգ էք ընտիր, թագաւորութիւն, քահանայութիւն(2): Ծանի՛ր եւ՝ մինչ բարձրանայ յաշակերտութիւն Քրիստոսի: Նմանապէս՝ սատանայ կոչի ապստամբ թագաւոր և իշխան աշխարհի, այսինքն մեղաւորաց: Որ կամիցի յատուկ աշակերտ լինել Քրիստոսի հրաժարելով յաշխարհէ՝ յառնէ ընդդէմ չարին, որ գայ ՚ի վերայ նորա քսան հազարաւ․ որոյ տասն է յաջըն գթող․ և տասն յահեակն․ վասն որոյ և նա պարտի սպառազինիլ գոնեայ տասն հազարաւ․ այսինքն՝ տասն պատուիրանաւն աստուծոյ․ և ՚ի վերայ այնր ունելով զաւետարանական աղքատութիւն, որով մերկանայ յամենայն ընչից․ զոր զէն եթէ զգենուցու՝ յայնժամ հզօրապէս յաղթեսցէ չարին․ վասն որոյ ասիմք եզրակացուցանէ տէրն զառակն ասելով․ Ասէ՝ այսպէս ամենայն որ ՚ի ձէնջ, եթէ ո՛չ հրաժարեսցէ յամենայն ընչից իւրոց՝ ո՛չ կարէ իմ աշակերտ լինել: Աղքատութիւն է մեծ զէն, որով եթէ ոք կարիցէ սպառազինիլ մտցէ ՚ի հանդէս․ ապա թէ ո՛չ՝ հրեշտակութիւնս առաքեսցէ, այսինքն՝ զանձն անբաւական համարելով՝ նստցի խաղաղութեամբ ՚ի տան աշ-

(1) Յայտն․ ե․ 10: (2) Ա․ Պետ․ բ․ 9:

խարհականութեան. որ թէպէտ նոքա ևս չեն ապահով յարկածից չարին, բայց առ մերս հա_ մեմատելով՝ իբր խաղաղութիւն է նոցայն։ Զայս երկու առակս յառաջ եբեր Քրիստոս, որովք խրատեալ ամենայն ոք կշռեսցէ զանձն իւր՝ և ապա 'ի հանդէս մտցէ. զի մի՛ անհա_ մարեալ որպէս զաղն՝ արտաքս անկեալ կոխան լիցի. ոչ միայն աշխարհականաց՝ որք ասիցեն, Այս այր սկսաւ շինել՝ և ոչ կարաց կատարել, այլ և քը_ սան հազարաց չարին. և այնու լինիցի որպէս փայտ որթոյ անպիտան 'ի հուր արկանելի(1)։ Աստուստ յայտ է, թէ որքան մեծ անօրէնու_ թիւն է ստիպել զոք 'ի սարկաւագութիւն, կամ յաբեղայութիւն՝ դնելով 'ի մեծ վտան_ գի. նա և ուսանիմք զմատաղատունկն անձամբ ընծայեալս ոչ դիւրաւ ընդունել 'ի կարգ հը_ րեշտակականս. զի նոքա զանձինս կշռել ոչ գի_ տեն. ուստի անկարծիք՝ ձեռնադրողքն են պար_ տաւոր այնպիսեաց, թէ և նոքա աղաչիցեն։ Վերջապէս՝ տասն հազարն է տասն օրէնքն, իսկ դիւրին՝ վասն այն դնէ ի՛ հազարս, զի ը՛ դէմ միոյ օրինի՝ երկու կերպիւ մարտնչի հանգոյն երկու ծայրից. մի ըստ առաւելութեան և մի ըստ նուազութեան։ Երբեմն՝ յամենայն աս_ տիճանս՝ որպէս քահանայութիւն, վարդապե_ տութիւն, առաջնորդութիւն, եպիսկոպոսու_

(1) Եզեկ. ԺԵ. 5։



թիւն, և կաթուղիկոսութիւն, զգուշութե՜ կշռել պարտ է իւրաքանչիւր ոք զանձն իւր, և ապա յանձն առնուլ և ընդունել շնորհօք ա՜յ։

## ՅԱՂԱԳՍ ՈՉԽԱՐԻՆ ԵՒ ԴՐԱ_ ՄՈՅՆ։

### ԺԵ. ՂՈՒԿ. Դ։

Ո՞վ իցէ 'ի ձէնջ այր՝ որոյ իցէ հարիւր ոչխար, և ե_ թէ կորուսանիցէ զմի 'ի նոցանէ՝ ո՛չ թողուցու զիննսուն և զինն յանապատի, և երթիցէ զհետ կորուսելոյն, մինչև գտա_ նիցէ զնա. և իբրև գտանիցէ՝ դնէ 'ի վերայ ուսոց իւրոց խըն_ դալով, և երթայ 'ի տուն. կոչէ զբարեկամս և զդրացիս և ասէ՝ ուրա՛խ լերուք ընդ իս, զի գտի զոչխարն իմ զկորուսեալ։

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.

Նկարագրապէս՝ դժուարին իմն է գտանել զայնպիսի հովիւ, որ չերթայցէ զհետ կորու_ սելոյն՝ թողեալ զանմոլարսն։ Այլաբանօրէն՝ հովիւ քաջ է ինքն տէրն մեր յիսուս քրիստոս. ըստ այնմ. *Ես եմ հովիւն քաջ(1). Նա և թէ՝ *Տաց ձեզ հովիւ ըստ սրտի իմոյ(2)։ Հարիւր ոչխարքն են հրեշտակք. այլև՝ ոչխարք են մար_ դիկ. յոչխար առակէ զնոսա վասն անմեղութե՜ նոցա, որոց ընդհանրական հովիւն է տէրն. զի

(1) Յովհ. Ժ. 11։ (2) Եզեկ. ԼԴ. 23։

նուէր հաստատեցաւ որ ինչ յերկինս՝ և որ ինչ յերկրի։ Այն՝ 'ի սուրբ գիրս՝ տասն, հարիւրն, հազարն, են բազմութեան նշանակ. վասն որոյ՝ մերթ տասն թուով անուանէ զնա՝ որպէս տասըն դրամն. մերթ՝ հարիւր ոչխար. և մերթ՝ հազարք հազարաց, ևն։ Մին 'ի հարիւրոց մոլորեալն՝ է մարդկայինս բնութիւն, որ առ նոքօք այնքան փոքր է, որքան մի՝ առ հարիւրովըն. վասն որոյ երկնային հովիւն քաջ և բարի զմոլորեալն սորա խնդրել՝ եթող զանմոլար հօտ իւր 'ի լեառն երկնից և իջեալ 'ի խնդիր ըստ Դաւթի, որ զմարդկային բնութենէս ասէր, *Մոլորեցայ ես որպէս ոչխար կորուսեալ. խնդրեա՛ զծառայս քո, զի ոչ խաղաւ մոռացայ զսէր քո(1)։ յայց եւ մոլորեալս՝ ոչ թողով թափառիլ ընդ զաղանաց դիւաց՝ յանձրդի վայրս կատարածութեան 'ի կորուստ կենաց, և գտեալ 'ի լեառն գողգոթայ խաչելութե՛ն՝ եդ 'ի վերայ ուսոց իւրոց խնդալով, և եբեր 'ի սեպհական տունն իւր յերկինս՝ կոչելով զբարեկամս զհայր և զհոգին՝ ըստ յարմարութե՛, և զզօրացն հրեշտակաց՝ և ասէ՝ ուրա՛խ լերուք ընդ իս, զի գտի զոչխարն իմ կորուսեալ։ Այնպէս ուրախանայ աստուած, եթէ մեղաւոր ոք՝ կամ անհաւատ դարձցի և ապաշխարեսցէ. յայս մտա յաւելու և զայլս եւս՝ 'ի հաստատութիւն ի-

(1) Սաղմ. ճժը. 178։



րայցն՝ ասելով,

Կամ ո՞ր կին է՝ որոյ իցեն դրամս տասն. եթէ կորուսանիցէ 'ի նոցանէ դրամ մի՝ ո՞չ լուցանիցէ ճրագ, և ածիցէ աւել 'ի տան, և խնդրիցէ ստէպ՝ մինչև գտանիցէ. և իբրև գտանէ՝ կոչէ զբարեկամս և զդրացիս և ասէ, ուրա՛խ լերուք ընդ իս, զի գտի զդրամն իմ՝ զոր կորուսի։

Նկարագրագէս. արդարև ո՛վ իցէ մարդ՝ կամ կին, որոյ դրամ՝ ցանկալի գոլով կորուսեալ՝ ոչ որոնիցէ մեծաւ ջանիւ. և թէ լինիցի գտանել՝ ուրախութեամբ մեծաւ ուրա՛խ լինի. և ոչի՛նչ իրի գիւտ է այնքան ըղձալի՝ որքան դրամոյ. ոչ ապաքէն մարդն զծածկեալ գանձն մինչ եգիտ՝ թաղոյց 'ի խնդութենէն(1)։

Այլաբանօրէն՝ կին կոչէ զինքն վասն զթու բարուցն. ըստ այնմ, *Ես մայր գեղեցիկ տարփման(2)։ Կինն ունի զերկուս ատինս. այսպէս և ահեղն, նախ՝ զաւազանն, երկրորդ՝ զսուրբ արիւնն, որով գնեաց իւր եկեղեցի մաքրի և անանի։ սա ունելով զդրամ տասն՝ զինն դասս հրեշտակաց, և զմին մարդիկ՝ 'ի դրամ առակէ. զի դրամն ունի զպատկեր թագաւորի. ըստ այնմ, *Ոյր պատկեր է այս կամ գիր, ասեն կայսեր. այսինքն՝ թագաւորի։ Սոյնպէս հրեշտակք և մարդիկ են ստեղծեալք 'ի պատկեր այ. զհրեշտակաց ասէ եղէկինել՝ *Այնպէս ա-

(1) Մատթ. ժգ. 44։ (2) Սիրաք. իդ. 24։

ակ տէր, դու կնիք նմանութեան իմոյ(1)։ Այսօ-
ւր ըստ խորհրդոյն զաստուածայնելն. իսկ զմարդոյն՝
յայտնի է բանն։ Դարձեալ՝ դրամ բանաւոր-
դարձեալ լինի մարդ, զոր կորոյս կինն յի-
սուս. դրամն թէպէտ ըստ ինքեան անկանի 'ի
քանկէ, բայց աւելի՝ կորուսալ. այսպէս մար-
դըն ինքեամբ կորեաւ՝ բայց ատի, կինն կորոյս, եւ թէ
մէ էր 'ի տանն կորեաւ դրամն, պատճառն է, զի կնոջ
յատկութի է 'ի տան լինիլ. թէպէտ ոմանք լերբք
առաքելոյ շրջիլ սովոր են. տունն նշանակէ զաշ-
խարհս. ըստ այնմ, * Ո՛ իսրայէլ մեծ է տունն Այ-
եա։ Արդ՝ զայսպիսի ցանկալի դրամն մինչ կո-
րոյս, ոչ ժուժեաց սիրոյն՝ այլ խնկոյն եւ 'ի
խնդիր՝ յաւելեն. ուր ես ասեմ։ Եւ լուցեալ ճշմ-
ութեանն լուսով զճրագ մարմնոյն՝ եած զա-
ւել 'ի տան աշխարհիս մեծաւ ջանիւք հարցա-
րանացն, եւ գտեալ 'ի յաղբեւս զժոխոց զդրա-
մըն պատկերագիր զմիակ, զայն զորմէ ասէ.
* Արար զմարդն 'ի պատկեր իւր. եւ լուացել
'ի տղմոյ մեղաց՝ կրկնակի աղբերբք կենսաբեր
կողին, հոգւոյ շնորհիւն եւ զգեցոյց՝ (զորոց սաացաւ)
ուրախացաւ ընդ նոսա։ այս երկու առակօք պարտին
ուսանիլ հովիւք եւ միջնորդք, թէ որպիսի ցա-
ւակցութբ որոնելի է զմոլորեալն 'ի հօտէն
քրիստոսի. նմա եւ վանահարք պարտին մեծաւ ըղ-
գուշութեամբ եւ սիրով շահել զմիմեանս եւ

(1) Եզեկ. ԻԸ. 12։



զկրօնաւորան, զի մի՛ արտաքս ելեալ մոլորի-
ցին. զի ոչ գոյ այնքան հաւատարիմ հովիւ՝ որ
զկնի մոլորելոյն գնասցէ, դարձուցանիցէ կամ
զկորուսեալն նման կնոջ որոնիցէ։ ուրեմն * Զ-
գոյշ լերուք հօտիդ՝ յորում եդ զձեզ հոգին
սուրբ տեսուչս(1)։ Դարձեալ՝ հարիւր ոչխա-
րօք եւ տասն դրամովք՝ իմանի զինուորեալ ե-
կեղեցին. յորոց թուոյ եթէ մին մեղօք մոլո-
րիցի, կամ անկցի՝ այնքան է հոգաբարձութի
երկնային տեսչին, մինչեւ հանդոյն քաջ հովուին
եւ գթածին կնոջ զմոլորեալն եւ զկորուսեալն
աներեւոյթ շնորհօքն գտանել. ըստ այնմ. * Ո՛ ո-
րոց ետուր ինձ՝ ոչ կորուսից 'ի նոցանէ եւ ոչ
մի(2)։ Բայց այս լինի՝ երբ մոլորեալն եթէ իցէ
համակամ խնդրողին. ապա թէ ոչ՝ լուիցէ զայն,
որ առ հրէայսն ասաց՝ թէ * Քանիցս անգամ
կամեցայ ժողովել զձեզ՝ զորօրինակ ժողովէ
հաւ զձագս իւր ընդ թեւօք իւրովք՝ եւ ոչ կա-
մեցայք(3)։ ուրեմն է իրաւամբք՝ եթէ լուի-
ցեն. * Այսուհետեւ թողեալ լիցի ձեզ տուն
ձեր աւերակ. որպէս եւ լուաւ ըստ իրաւանցն.
եւ յայսմանէ՝ զի բազում մոլորեալք եւ ուրա-
ցողք իսպառ կորնչին. զի ոչ համաձայնեին ա-
մենաքաղցր ձայնի կոչողին Քի թէ՝ * Ապաշխա-
րեցէք, զի մերձեալ է արքայութիւն երկնից։
Ո՛ն՝ ապաշխարեսցուք եւ մեք, զի ուրախ լիցի

(1) Գործ. Ի. 28։ (2) Յովհ. ԺԸ. 9։ (3) Մատթ. ԻԳ. 37։

ստուած և հրեշտակք 'ի միութիւն մեր, ըստ այնմ․ *Ուրախութիւն է յերկինս հրեշտակաց վասն միոյ մեղաւորի, թէ ապաշխարիցէ:

# ՅԱՂԱԳՍ ԱՆԱՌԱԿ ՈՐԴՒՈՅՆ:

## ԳԼՈՒԽ ԻԴ:

Այր մի ունէր երկուս որդիս: Ղուկ. ԺԵ. 11:

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Նկարագրապէս՝ յայտնի է բանն․ զի որ 'ի կրտսերութեան ոչ հնազանդի հօրն, այլ անշզութեամբ և մանկական բարուքն որոնէ զհաճոյս կամաց իւրոց, յիրաւի պատուհասի այնչափ վտանգաց․ վասն որոյ յիրաւի ասաց իմաստունն թէ՝ *Որդի անհնազանդ 'ի կորուստ եղիցի(1):

Այլաբանօրէն՝ այրն նշանակէ զԱստուած․ զի որպէս հաճի միշտ զորս սիրելիս աստուած անուանել: ըստ այնմ, *Ես ասացի թէ աստուածք էք․ այսպէս հեշտութիւն իմն է նոցա՝ անուամբ սիրելեաց անուանիլ: Դարձեալ՝ զի ըստ իմացական մասին աստուածք՝ հրեշտակք՝ և

(1) Առակ. ԺԳ. 1:



մարդիկ՝ աստուածանք են․ վասնզի յորդիկ ըստ մեզ զինչանի․ ըստ այնմ, Նորա ազգ իսկ եմք: Երկոցուն որդւոցն՝ նշանակեալ իմանին հրեշտակքն, զի նոքա նախ ստեղծան․ վասն որոյ և ծերաստեղք անուանին․ ըստ այնմ, *Յորժամ եղեն աստեղք ծերք, ամենայն հրեշտակք աստեղաց օրհնեցին զիս մեծաձայն, և ամենայն հրեշտակք իմ գովեցին(1): Իսկ կրտսերումն իմանին մարդիկ, որք յետոյ արարան․ ուստի ասէ *Փոքր ինչ խոնարհ արարեր զնա քան զհրեշտակս քո(2): Երասեր եմք նաև այսու, զի նոքա բարձր և ազնիւ են իմացականութեամբ․ մանաւանդ զի՝ ըստ սրբոյ հրեշտակակրօն վարդապետին՝ են աստուածնեայ պաշտօնեայք երկնաւորին աստուծոյ․ յաղագս այսորիկ՝ պարզ իմացմամբ ըմբռնեն․ իսկ մեք խոնարհ․ զի ոչ պարզ նկատմամբ՝ այլ հաւաքաբանութեամբ տրամաբանութեամբ ժամանեմք 'ի սկզբանց առ եզրակացութիւն:

Ասէ կրտսերն 'ի նոցանէ ցհայրն, Հա՛յր տո՛ւր ինձ բաժին, որ անկանի յընչիցդ, և նա բաժանեաց նոցա զկեանսն:

Դնեմք առակիս այսպէս բերէ․ զի Աստուած ողորմութեամբ իւրով զհրեշտակս և զմարդիկ ստեղծ, որով և հայր անուանեցաւ․ ըստ այնմ: *Ո՛չ սա ինքն է հայր քո՝ որ ստացաւ զքեզ, արար զքեզ և ստեղծ զքեզ(3): Իսկ ըստ իւ-

(1) Յոբ. ԼԸ. 7: (2) Սաղմ. Ը. 7:
(3) Բ. օրէնս. ԼԲ. 6: ըստ [illegible]:

բաքանչիւր աստիճանի ելից շնորհօք. և այս է բաժանելն նոցա զկեանս. զի աստուած կամ-լեաց քան զխնդիրն մեր. ըստ այնմ. * Տայ առա-ւելապէս քան զոր խնդրեմք և իմանամք: կարէ ևս ասել թէ՝ կամք մեղաւորին մինչ խոտորի յայն, աստուած բառնայ 'ի նմանէ զձիրս բնականս, զոր իբրև բաժինս տուեալ է նմա, որպէս յայտ է 'ի դևսն՝ և յադամ. որպիսի է բանականու-թիւն, և անմահութիւնն հոգւոյ. անձնիշխա-նութիւնն և ընդունակութիւնն շնորհաց. Եւ զայսոսիկ ամենայն՝ մինչ մարդն է 'ի շնորհս՝ ու-նի ըստ իւրեան յատկութեան զբանականու-թիւնն սուր, զհոգին պայծառ, զիղձ մտաւորն մաքուր, զանձնիշխանութիւնն ազատ և զկամն ուղղաւոր. բայց մինչ յամէ 'ի մեղս երկար սո-վորութեամբ՝ բնաւքն խանգարին և մարդն ան-կանի 'ի կարգէ բանականաց, և զգենու զյատ-կութիւնս անբանից. զզայական մասին ծառա-յելով. այս է՝ զոր ասէ, Եւ յետ ոչ բազում աւուրց ժողովեալ զամենայն՝ գնաց յաշխարհ հեռի. Նոյնպէս իմա-նամք թէ ասէ 'ի զրկանս փափկութե դրախ-տին չիցէ վայելեալ 'ի բազում ժամանակս: հեռի յաշխարհ գնալն է 'ի դրախտէն անկա-նիլ յայս աշխարհ. ըստ մտաց՝ չիք տեղի հեռի յաստուծոյ. քանզի աստուած է յամենայն ու-րեք ներկայ. զի ըստ ծիրանազգեաց մարգարէ-ին * Ընդ ամենայն տեղիս է տէրութիւն նորա, և թէ՝ եթէ ելանեմ յերկինս դու անդ ես,



ռն(1): ապա մեղքն խաւարոյ արկանեն ընդ մէջ. ըստ այնմ, * Ես աստուած մերձաւոր եմ և ոչ հեռաւոր: այլ մեղքն ձեր որոշեն ընդ մէջ իմ, և ընդ մէջ ձեր (2): և թէ * հեռի է 'ի մե-ղաւորաց փրկութիւն. այսինքն աստուած հե-ռի է 'ի մեղաւորաց, զի զօրէնս նորա ոչ պա-հեն (3): Եւ անդ վատնեաց զինչս իւր, զի կեայր ան-առակութեամբ: Անառակութիւն ասելն զամենայն մեղս պարունակէ, ևս յատկապէս իմն զպոռ-նկութիւն. ինչքն մարդոյն են յատկապէս եր-կու, այսինքն աստուած և հոգի իւր: մեղա-ւորն կորուսանէ զաստուած ըստ այնմ, * Եւ հոգի տեառն վերացաւ 'ի սաւուղայ(4): այս-պէս մարդկայինս բնութիւն կորոյս զհոգին ա-նառակութեամբ, և իրաւամբք լուաւ թէ * Ոչ մնասցէ հոգի իմ 'ի դոսա վասն լինելոյ դոցա մարմին(5). նա և զհոգին իւր ըստ ամե-նայն յատկութեանցն ապականելով 'ի մեղս. այսինքն զմիտն կուրութեամբ, * Լոյս նորա խաւար 'ի յարկի իւրում(6). զանձնիշխանու-թիւնն ծառայեցուցանելով. * Որ առնէ զմեղս՝ ծառայ է մեղաց(7). զբանականութիւն բթա-ցուցանելով. * Հոգիք ըմբռնեալք 'ի մեղս՝ 'ի մտաց ևս անկանին, և զհոգին բծիւք մեղաց՝

(1) սաղմ. ճլը. 6: (2) եսայ. ծթ: (3) սաղմ. ճժը. 155:
(4) ա. թագա. ժզ. 14: (5) ծնն. զ. 3: (6) յոբայ. ժը. 6:
(7) յովհան. ը. 34:

համակ սևացուցանեն. *Սեւացան քան զածուխ տեսիլք նց(1): Օ այսօրինակ ախտացեալ մարդկային բնութի, վատնեաց զգերբնական և ըղբնական բարին իւր. ըստ այնմ, *Նուաղանեցան և պղծեցան յանօրէնութեան իւրեանց(2). վասն որոյ 'ի գլխոյ մարդկութեանս ասէր. *Խոնարհեցո՛ տէր զունկն քո և լո՛ւր ինձ, զի աղքատ և տնանկ եմ ես(3). զգալուստն յիսուսի հայցելով. Թէպէտ ինքն էր հարուստ հոգւով և մարմնով:

Նա իբրև ապաշխարողաց պատճենայն՝ եղև առ սատանի յաղթահարին յաղթէ, և սխալ ինքն չյաղթեցի:

Ամէն բաժանի յերկուս, 'ի հոգևոր՝ և 'ի մարմնաւոր. հոգևորն է անըմբռնելի յոյժ. զի ըղձմաց գործէ զոգւոյ՝ զըկելով 'ի շնորհացն. քանզի կայանայ 'ի պակասութեան բանին աստուծոյ՝ որ շարաբերէ զշնորհս. ըստ այնմ *Տա՛ց ձեզ սով ոչ հացի և ոչ ջրոյ, այլ լսելոյ զբանն տն: Նա այս եղև յաշխարհ անաւակի բնութեանս մինչև ցաբրահամ. ուր ոչ տեսիլ, և ոչ մարգարէութիւն, և ոչ բան աստուծոյ, և բնութիւնս չքաւորեալ յամենայն գիտութեանց և 'ի բարեգործութեանց, որք են նըպար հոգւոյ: Իսկ ժամանակս սովու եթէ ձեռնհաս լիցէ որք ընչից, ոչ այնքան վտանգի. բայց աղէտ մեծ է, թէ և ինքն լիցէ չքաւոր, որպի-

(1) ողբ. դ. 8: (2) սաղմ. ժդ. 2: (3) սաղմ. ձե. 1:



սի էր բնութիւնս: *Նուաղեցաւ 'ի տկարութենէ զօրութիւն իմ, և ոսկերք իմ խռովեցան: Ի նուաղել մարմնոյն՝ զգայութիւնքն թուլանան. իսկ 'ի սովել հոգւոյն՝ ներքին ոսկերք իմացականին թմբրեալ ընդարմանան: Նա փնտռէր յարեգաւ 'ի դ ամն յաղաւթայն աշխարհին այնորիկ, և յղեց զնա յափշտակ իւր տրտմել զնոյն: Որպէս մինչ միջնս զաւուրն յետս դառնայ 'ի ստեղծողէն՝ յարի 'ի ստեղծուածս, և ոչինչ է ընդ մէջ, այսպէս Ը եղանելն յաղքայութենէն աստուծոյ, մտանէ ընդ պետութեամբ սատանայի. զորօրինակ՝ Ը եղանելն 'ի սահմանաց պարսից՝ իսկոյն մտանեմք 'ի սահմանս այլ թագաւորի, այսպէս դիպեցաւ անառակի բնութեանս. զի մինչ էր 'ի հովանաւորութենէ գթածագոյն հօրն անհնազանդութեամբ, հարկեցաւ յարել դժոխային քաղաքացւոյն. Թէպէտ նախ քան զյարելն տիրեալ էր 'ի նմանէ, բայց սա բովանդակին եթարկելն նշանակէ կամաց նորին: Այլ նա՝ որ 'ի սկզբանէ ոխացեալ ընդ պատկեր մեր, կամելով ըզվրէժ քինուն՝ որ առ աստուած, 'ի մեզ կատարել, 'ի նախատինս աստուծոյ յղեաց արածել զխոզսն, Խոզիւքն նշանակին բղջախոհքն. արօցուցանի, զի թէպէտ ամենայն մեղաւորք են ըստացուածք նորա, բայց սեպհական ժառանգք նորա են բղջախոհքն: Պարծեալ՝ թէպէտ ամ մեղք հեշտացուցանեն զնա, բայց և՛ս առաւել բղջախոհութիւն. վասն այսորիկ առաքէ 'ի խոզսն,

քանզի և բնակութիւն նորա է խաւ 'ի խոզսն, ըստ այնմ, *Առաքեա՛ զմեզ 'ի խոզսն: Այսու ցուցանի թէ մարդկային բնութեանս ծանրագոյն մեղքն՝ որով քան զամենայն արարածս անարգ գոլք, որպէս խոզն 'ի մէջ կենդանեաց, էր անխտիր խառնակութիւն, յոր չարաչար ծառայեցոյց սատանայ. որով բարկացեալ ած՝ զայնքան պատիժս էած 'ի վերայ, զջրհեղեղին ասեմ, և զհրախառն ծծմբոյն. քանզի որքան սիրելի է այս մեղք դիւին՝ այնքան գարշելի է սատանայ: Յայսմանէ պարտին ուսանիլ մանկունք, թէ որքան մեծ վտանգ է թողուլն զհայր, և ինքնագլուխ շրջիլն յօտարութեան. մանաւանդ հեռանալն անառակութեան. զի նա է որ վատնէ զամենայն բարիս, զհոգւոյ շնորհս և զհանդերձս. նաև զմարմնոյ ինչս՝ զարմատական խոնաւութիւնս ընդ բնական ջերմութեան. որով արագէ զծերութիւն և վաղվաղէ զմահ. ըստ այնմ, *Հուր վառեալ յանդգամս նորա, ընդ որ կայս հասցէ՝ յարմատոց խլեսցէ (1):

*Եւ ցանկայր լնուլ զորովայն իւր յեղջերացն, զոր խոզքն ուտէին, և ոչ ոք տայր նմա:

Եղջիւրն՝ որ է ստախարակ՝ երկայն և նեղ պտուղ ծառոյ, զոր ժողովեալ կերակուր խոզից առնէին, է՛ հանգոյն եղջեր այծու. յայն սակս կոչեցաւ եղջիւր, ունի զհամ քաղցր. բայց պա_

(1) Յոբ. Ի. 12:



ճառէ զցաւ որովայնի. նշանակէ զպոռնկութիւն, որ նախ պարարէ որպէս զմեղր, բայց վախճանն յոյժ դառնագոյն է քան զօշինդր: Նշանակն մինչ ունէր զգոյս՝ դիւրաւ գտանէր ըզբաղձալին. բայց մինչ չքաւորեցաւ՝ ոչ կարաց 'ի ձեռս բերել. քանզի սովոր են բոզք՝ կոպէնիւք ընծայել զանձինս: բայց է սատանայի հրապուրել 'ի մեղս, զմեծ հեշտութիւնս խոստանալով. և մինչ ընկղմէ, լքանէ. յայնժամ թշուառականն այն, անյուսացեալ յառաջին շնորհաց՝ յուսահատութեամբ դիմէ 'ի մեղս, զի գոնէ նովաւ բաւականասցի, բայց ոչ գըտանէ. զի կամ բնութիւնն չլինի ձեռնատու, և կամ ուտելիք մեղաց չգան 'ի ձեռս: վասն որոյ՝ անձկացեալ յոյժ համարի դառնալ անդրէն յառաջին կեանսն եկեալ 'ի միտս, քան կալ 'ի նմին: Մանաւանդ այս լինի 'ի խնամոցն այ. որ փակէ զճանապարհն մեղաց, զի դարձցի. քանզի մեղօք յագեալ որովայն զմեղր շնորհացն աստուծոյ արհամարհէ. որպէս բազէն յագեալ, ոչ դառնայ՝ մինչև քաղցեսցի. զայս կարծիս յայտնապէս հաստատէ բանն Տեառն թէ՝ *Վասն այսորիկ ես փակեցից զճանապարհս նորա փշովք և ընթասցի զհետ հոմանեաց իւրոց՝ և մի՛ հասցէ նոցա, և ասասցէ, երթայց և դարձայց առ այրն իմ առաջին, զի յայնժամ բարի էր ինձ քան արդ: Այսպէս մարդկային բնութիւն պոռնկեալ զհետ սատանայի կա_

պաշտութէ, և ընդ զանազան պատժօք նեղել՝ տեսանէր, թէ ոչ գոյ հանգիստ 'ի մեզս, ցանկայր հանգչիլ՝ և ոչ գտանէր. այս է ոչ ըզ տաղըն. յայս միտ առնու և շնորհալին, ըստ այնմ, * Յանկացեալդ ջերմ եղջերուին, քաղցր մեղաց զառնաւունեն: Բայց սուրբն Իգնատիոս եղջերբ իմանայ զբնական առաքինութիւնս և արդարութիւնս անասնոց. որպէս արագիլ արդար, սատարեալ ողջախոհ, ասէ թէ՝ այնքան յանարգութե մտեցաւ բնութիւնս՝ մինչև ցանկայր գէթ 'ի կարգի անասնոց կալ և մնալ՝ և ոչ ժամանէր: (տե՛ս անդ) երկոքեան ևս ունին զատեղն:

Ա՛ռ էջեալ 'ի միտ իւր՝ ասէ, քանի՛ վարձկանք են 'ի տան հօր իմոյ հացալիցք. և ես աստ սովամահ կորնչիմ:

Զայն է կրկին. հաց ցաւոց մեղաց՝ զոր մեղաւորքն մատուցեն ուտեն. ըստ այնմ, * զհաց զաղանի մատուցէք կերիցես(1), խրատէ կինն պոռնիկ. յայսմանէ առնել՝ խնդրէ զհաց շնորհաց, որով վարձկանք են հացալիցք. այսինքն՝ հրեշտակք, որք առաքին 'ի սպասաւորութի. զի առաւել ըստ տեղւոյն փոխի յայլ միտս. այսպէս և մարդիկ մշակք կոչին, որպէս 'ի վերն. այսպէս 'ի բնութէս հայրն արարահամ քննութեամբ յեկեցս ճանաչելով զնախկին պատիւուրն, ըստ պողոսի բանին՝ զհայր գոլն ամենե-

(1) առակ. Թ. 17:



յուն և զ'ի նմանէ կախեալ գոլն ամենեցուն, զբեթէ ասէր 'ի միտս. քանի՛ վարձկանք են 'ի տան հօր իմոյ հացալիցք. երկնայինք և երկրայինք ըստ իւրաքանչիւր կարգի, և ես աստ 'ի պիղծ պաշտօն կռոց սովամահ կորնչիմ. զի որ ծառայէ կռոց՝ ոչ յագի միտքն. զոր միայն անստեղծ էին աստուծոյ պաշտօնն կարէ յագեցուցանել. քանզի զիմարդ այնքան մեծամ միտքն հանգչիլ կարէ 'ի պաշտօն ստեղծուածոյ:

Յարուցեալ գնացից առ հայրն իմ. և ասացից. հա՛յր մեղա՛յ յերկինս և առաջի քո:

Ո՛ այս՝ բնութիւնս մեր յայնժամ ասաց, մինչ նահապետսուն դարձաւ 'ի հնազանդութիւն ստեղծողին. անասունն ոչ ունէր այլ փառաւորիւք արդարանալ և անբասիր լինել. վասն որոյ ըղձմանէ բուռն եհար՝ Մեղայ յերկինս և առաջի քո: Սորա՝ զայս երկինս սուրբ վարդապետքն մեր Իգնատիոս և Գրիգոր տաթևացին և այլք ևս՝ իմանան զդրախտն. վասն զի նախ անդամոր մեղաւ. մինչ զհասարակ որդւոյ իցէ բանն՝ 'ի մեղանչելն առ հայրն իւր՝ նախ մեղանչէ առ հայրըն երկնաւոր:

Ա՛րդ ո՛չ ևս եմ արժանի կոչել որդի քո. արա՛ զիս իբրև զմի 'ի վարձկանաց քոց: Մարդ 'ի մեղանչելն զրկի յորդեգրութենէ հօրն երկնաւորի, և լինի որդի սատանայի. ուստի՝ յասել հրէից, * Մի է հայր մեր աստուած, ասաց Տէրն՝ դուք 'ի հօ-

րէ սատանայէ էք (1)։ Վասն որոյ խրատեմք ա-
սաց անառակն թէ՝ ո՛չ եմ ես արժանի կոչել որդի քո։

Եւ յարուցեալ եկն առ հայր իւր։

Յարեաւ 'ի մահաբեր քնոյն, և յանկմանէ 'ի խորս մեղաց, և մինչդեռ հեռագոյն էր՝ ետես զնա հայրն՝ և գթացաւ. քանզի ետես մերկ, աղքատ, անօթացեալ դիմեալ. ուստի ըստ ամենագութ հայրական բարուցն 'ի գութ շարժեցաւ. նախ՝ հայրն ետես զորդին. որով ցուցանի թէ մինչ մեղաւորն դառնայ սրտիւ, յակոյն աստուած սկսանի քաղցրութ̄բ հայել 'ի նա. այսպէս ընդ դառնալ բնութեանս արքահամաս, իսկոյն աստուած քաղցրութ̄բ հայեցաւ առ նա. ըստ այնմ, * Աստուած փառաց երեւեցաւ հօր մերում աբրահամու մինչդեռ 'ի միջագետս էր, մինչչև բնակեցուցեալ էր զնա 'ի խառան, և ասէ ցնա. ել յերկրէ քումմէ և յազգէ քումմէ՝ և եկ յերկիր՝ զոր ցուցից քեզ (2)։ Եւ այսպէս զանառակն՝ շնորհն աստուածային զարթոյց, և եած 'ի միտս իւր դառնալ։

Յարեաւ և ընթացաւ ընդ առաջ, անկաւ զպարանոցաւ նորա՝ և համբուրեաց զնա։

Որդեակ՝ մինչ մեք դիմեմք զղջմամբ առ ա̄ծ, և նա դիմէ առ մեզ շնորհօք. ըստ այնմ, * Դարձարո՛ւք առ իս, և ես դարձայց առ ձեզ։ Ա-

(1) Յովհան. Ը. 44։ (2) Գործ. Է. 2։



ո՛ր խրատէ սրբազան առաքեալն յակոբոս թէ՝ * Մերձեցարո՛ւք առ աստուած՝ և մերձեսցի առ ձեզ։ Այսպէս անառակն մինչ մերձեցաւ առ յիսուս, և նա դարձեալ հայեցաւ 'ի նա։ Ուրեմն դարձարո՛ւք առ տէր մե՛ղաւորք, և մի՛ յապաղեցիք խոստովան լինել նմա. այսինքն, առաջի խոստովանահօր ձերոյ՝ զմեղս ձեր. ապա՛ որ փրկութեան հոգւոյ ձերոյ, և թողութ̄ե մեղաց. զի մի՛ ոք դարձաւ առ նա՝ և ունայն եղև 'ի նմանէ. զի ինքն իսկ երեմիայիւ յորդորէ յասելն թէ՝ * Դարձարո՛ւք առ իս որդիք՝ և ես ընկալայց զձեզ (1)։ Յիրաւի ճշմարտեցաւ 'ի դարձ անառակին. առ որ և ինքն մերձեցաւ քաղցրագին և ողջամբ ընկալաւ զնա. համբուրեաց աստուած զբնութիւս բերանով մարգարէիցն. թէ պէտ առ արբեալ գոլով ըսիրով՝ խնդրէր զանմիջական համբոյր, որ լինելոց էր որդւո՛յն՝ ասելով. * Համբուրեսցէ զիս 'ի համբուրից բերանոյ իւրոյ։

* Եւ ասէ ցնա որդին, հա՛յր մեղայ յերկինս և առաջի քո։

Խոնարհ մնայ է 'ի մեծարանս զիջանիլ. անառակն զայնչափ սիրոյ նշան տեսեալ, ո՛չ մոռանայ զյանցաւորութիւն իւր. այլ սրտի մօք գոչէ զմեղայն, հաւասար առնելով զանձն վարձկանաց. վասն որոյ և ես ընդունի զշնորհս և զի [illegible]. քանզի բանքն աստուծոյ է զխոնարհս

(1) Երեմ. Գ. 14։

բարձրացուցանել. վասն որոյ խրատէ սիրաք. *Որդեակ՝ որքան 'ի մեծութիւն համանիցես՝ 'ի խոնարհութեան կալ զանձն քո, զի առաջի աստուծոյ գտցես զշնորհս(1):

Ասէ հայրն ցծառայս իւր. Վաղվաղակի հանէ՛ք զպատմուճանն առաջին և ագուցէ՛ք դմա, և տո՛ւք մատանի 'ի ձեռն դորա, և կօշիկս յոտս դորա:

Ծառայք են հրեշտակք. զի միջնորդութբ նոցա տայ աստուած զշնորհս. զի մերթ որդիք կոչին, մերթ վարձկանք և մերթ ծառայք ըստ պահանջման տեղւոյն:

Նման աստեղաց, որք զգեցան և զգեցուցին զլուսեղէնս: Զպատմուճանն առաջին հրամայէ հանել վաղվաղակի. զի մինչ ադամ մնայր 'ի դրախտին՝ զսկզբնական արդարութեան պատմուճանն մերկացաւ. Բացան աչք նոցա, և տեսին զի մերկք էին(2): Նոյնպէս մարդն մինչ մեղանչէ՝ շնորհքն մերկանայ՝ և առ աստուած մնայ. իսկ 'ի դառնալն՝ իսկոյն աննախանձ բնութիւն՝ որ զդարձն կամի մեղաւորաց, վերադարձուցանէ, որպէս արար անառակին ադամայ՝ նոյնպէս առնէ և ամենայն մեղաւորաց: Պատմուճանն առաջին էր սկզբնական արդարութիւնն. և այժմ շնորհ աւազանին՝ որ է հոգինաւորք. *Մի՛ տրտմեցուցանէք զհոգին սուրբ աստուծոյ,

(1) Սիրաք. Գ. 20: Առակ. Գլ. 3:
(2) Ծնն. Գ. 7:



որով կնքեցայք յաւուրն փրկութեան(1):
Մատանին է նշան սիրոյ միաւորութեան որով հօր՝ ընդ որդւոյ. փեսային՝ ընդ հարսին, և եպիսկոպոսի՝ ընդ թեմին, ըստ որում մուծանի ընդ մատն. է և նշան իշխանութե. Հայրն՝ ըստ մեծի սիրոյն՝ 'ի վերայ վարձկանացն իշխան կարգէ զնա, այսու զմատանիւն. նշանակէ և ըղգործնական առաքինութիւնն: Կօշիկն ոչ միայն պահպանակ է ոտից ընդ դէմ կամակոր օձին, առ 'ի կոխել զօձս և զկարիճս, այլև է գեղեցկութիւն նորին *Գեղեցիկ են գնացք քո կօշկօք դո՛ւստր նադաբայ(2): Ոտքն է մշակ մասանց հոգւոյն՝ զոր գեղեցկացոյց հայրն երկնաւոր պատրաստութեամբ աւետարանի որդւոյ իւրոյ. ըստ այնմ, *Ագուցէք զոտս ձեր պատրաստութեամբ աւետարանին խաղաղութեան: Այսու իմանամք թէ հայրն երկնաւոր՝ զանազան բնութիւնս ըստ ամենայն մասանց զարդարեաց:

Եւ ածէ՛ք զեզն պարարակ եւ զենէ՛ք, կերիցո՛ւք և ուրախ լիցուք. զի այս որդին իմ մեռեալ էր՝ և եկեաց. կորուսեալ էր՝ և գտաւ:

Պարարականօրէն եզն է որդին մեր յիսուս քրիստոս, որ կոչի ուխտեալ զուարակ, որ էր պարարեալ աստուածութեամբն, և լիութեամբ հոգւոյն շնորհաց՝ որ է իւղ իմանալի, որ պա-

(1) Եփես. Դ. 30: (2) Երգ. Է. 1:

բարէ ուր հեղանի: Հայրն երկնաւոր առ ու_
րախութեանն հրամայէ զենուլ, * Մինչդեռ սի_
րեաց աստուած զաշխարհն՝ մինչև զորդին իւր
միածին ետ.(1) Միտքն մեռուցեալ էր զընու_
թիւնս յադամ. ըստ այնմ, * Յորում աւուր
ուտիցես՝ մահու մեռանիցիս(2). Ճշմարտեցաւ՝
զի ընդ ուտելն մեռաւ հոգւով. յայս միտ ա_
սաց իմաստունն. * Նախանձու բանսարկուին
եմուտ մահ յաշխարհ(3): և բան ուսեան յայս
դիմաց որ ասէ, * Նա մարդասպան էր 'ի սկզ_
բանէ. Սուտ և պղծոս ասէ. * Թագաւորեաց
մահ յադամայ մինչև ցմովսէս(4), զի յայնմ_
հետէ խորհուրդ փրկութեանն քրիստոսի զօրա_
ցան. որոյ զենմամբն՝ մահուն յաղթութիւն
պարտեցաւ, և ադամ վերստին կենդանացաւ
և լցաւ գիրն, * Ո՞ւր է մահ, յաղթութիւն քո,
ո՞ւր դժոխք՝ խայթոց քո(5): Մանաշարժիկ յետ
զենմանն ասաց. այս որդի իմ մեռեալ էր՝ և եկաց. կո_
րուսեալ էր՝ և գտաւ. քանզի քրիստոսիւ եղև փրր_
կութիւն: Մարդիկ իրօք քրիստոսիւ կատարե_
ցան. իսկ ըստ խորհրդոյն՝ յաբրահամայ սկսեալ
յամենայն մարգարէս և յարդարս. վասն որոյ
ասաց տէրն. * Աբրահամ հայր ձեր ցանկացաւ
տեսանել զօր իմ. ետես և ուրախ եղև. այ_
սինքն՝ իսահակաւ: Նաև՝ առաջին նահապետա_

(1) Յովհան. Գ. 16: (2) Ծնն. Բ. 17: (3) Իմաստ. Բ. 24:
(4) Հռոմ. Ե. 14: (5) Ովսէ. ԺԳ. 14:



քըն, քանզի ամենեքեան հաւատով ծանեան
զգալուստ քրիստոսի, և այնու գտեցան զքրիս_
տոս և եղեն անդամք եկեղեցւոյ: Արդ՝ երբ
ակներևեմ մօք զանատակ բնութիւնս. զի բե_
րանալից շնորհակալ լիցիս զհօրէ: Նոյնպէս
ադամ առ հօրն բարւոյ 'ի դրախտին գտուել,
ապա տարաշխարհիկ 'ի մերկութիւնս՝ և 'ի սո_
վոյ՝ եղջերացն խոզից ցանկութեամբ մաշեալ,
իսկ այժմ կայսերաձահ փառօք պսակեալ. 'ի
յընթրիս երկնաւոր հօրն ճաշակմամբ պարարա_
կեն և արբմամբ անապական գինւոյն զուար_
ճանայլելով զերգս աստուածային իմաստից
աւետարանին: Ո՛վ այս և այլ իմաստք. բնու_
թիւնս մեր հիքացոյն գտաւ քան զանասունն.
զի նա յետ հեռացմանն՝ ոչ ընկալաւ զնշան
ինչ. սիրոյ 'ի հօրէն. քանզի 'ի դարձ նորա ոչ
եթէ որդի՝ այլև ոչ վարձկան առաքեցաւ. այլ
ինքն 'ի սաստիկ սովու լլկեալ՝ դարձաւ առ
հայր իւր. բայց մեք այնքան յամառեցաք յա_
նառակութիւնս մեր, մինչև ծառայիւք անգամ
չդառնալ. քանզի մինչ կամեցաւ զմովսէս ա_
ռաքել՝ դիտելով զանբառականութիւն իւր՝
ասաց, * Աղաչեմ, այլ ոք զօրաւոր ո՛ռ 'ի ձե_
ռըն(1). դիտումն էր առ քրիստոս. մինչ ետես
թէ մովսիսիւ չեղև հնար՝ տարակուսեցաւ զո՞
առաքիցէ. * Զո՞ առաքեցից, և կամ ո՞ երթի_

(1) Ելից. Դ. 13:

ցէ առ այն ժողովուրդ։ Ո՜ որ եսայի չդխաւ-
րով թէ զիակական փրկութենէն խօսէր, յանձն
էառ․ միայն էր զորդւոյ իւրմէ՝ զոր ՚ի փախ-
ճան աւուրցս առաքէց, որով հաղիւ թէ դար-
ձաւ․ և այն՝ ըստ մասին, այլ նա ըստ մեծի
գթոյն՝ այսքան պարգևաց արժանի արար։ եթէ
զարմանս ընդ անոխակալութիւն հօր անա-
ռակին՝ հրաշացիր յաւէտ ընդ սէր երկնաւոր
հօրն,

Եւ էր երէց որդի նորա յագարակի․ ․ ․ լուաւ զձայն
երգոց և պարուց։

Հայրն ցնծայր՝ զի եգիտ զորդին, որդին ցըն-
ծայր՝ զի գտաւ ինքն․ իսկ բնութիւնս ցնծայր
գոհանալով՝ զի գտեալ զհոգին աւուրբ, ըստ
այնմ, *Ցնծասցէ անձն իմ ՚ի տէր, զի զգե-
ցոյց ինձ հանդերձ փրկութեան և պատմու-
ճան ուրախութեան․ իբրև փեսայի եդ ինձ
զպսակ, և որպէս զհարսն զարդու զարդարեաց
զիս։

Կոչեալ առ ինքն զմի ՚ի ծառայիցն՝ հարցանէր, զի՞նչ է
այն․ և նա իրազգած առնէր։

Երէց որդին՝ հրեշտակ, յագարակէ երկնից
կամ օրինաց՝ (զի են ընդ օրինօք ա̄ծային կամաց)
լուեալ զուրախութիւն բնութեանս՝ անգի-
տացեալ զիրն՝ հարցանէ ցծառայսն։ Ծառայս
նշանակին ներքին դասք հրեշտակաց․ զի երբե-
մըն ծառայք կոչին՝ երբեմն որդիք․ զի թէպէտ
ըստ Դիոնեսիոսի՝ անօրէնութեան (?) քրիստոսի՝



նախ՝ հրեշտակք եղեն խորհրդազգածք, բայց
ըստ մասին․ այլ զբոլորն յեկեղեցւոյն ուսան,
այսինքն՝ ՚ի քրիստոսէ, որ է գլուխ եկեղեցւոյ․
ըստ այնմ․ *Ձայն (?) եկեղեցւոյն, այսինքն՝ գլխա-
ւորին(1)։ յայս միտ առ, Եկեղեցւոյ քո ու-
սան զբազմապատիկ զիմաստութիւն քո։ Ներքինքն
ուսեալ ՚ի քէն՝ զվերինսն խորհրդազգած առ-
նէին․ քանզի ներքինքն զբանսն քո տեսանե-
լով՝ տարակուսեալ ասէին․ Ով այս ով է որ
դիմեալ գայ․ իսկ քրիստոս ՚ի ներքուստ պա-
տասխանեալ ուսոյց՝ *Ես խօսիմ զարդարու-
թիւն և զիրաւունս։ *Հնձան հարի միայն ես(2)։
որով ուսեալ հրեշտակքն՝ ուսուցին զվերին-
սըն ասելով․ *Համբարձէք իշխանք զդրունս
ձեր, զի ահա է թագաւոր փառաց(3)։

Բարկացաւ՝ և ո՛չ կամէր մտանել․ և հայրն ելեալ արտա-
քս աղաչէր զնա։

Բարկանալն աստ՝ առեալ լինի ՚ի տեղի զար-
մացման, ըստ որում և զտրտնջող մշակացն ա-
սացեալ եղև։ քանզի հրեշտակք ոչ միայն ոչ
ախտանան նախանձու ընդ կեալն մեր՝ այլ և
ուրախանան ըստ միածնոյն քրիստոսի թէ՝ *Ու-
րախութիւն լինի յերկինս հրեշտակաց վասն մի-
ոյ մեղաւորի, որ ապաշխարիցէ։ Ո՛չ է և ինքեանց
իսկ ջանան վասն մերոյ փրկութեան․ *Ոչ ա-
պաքէն հոգիք են հարկաւորք, որք առաքին ՚ի

(1) Եփ․ գ․ 17։ (2) Եսա․ կգ․ 1։ (3) Սաղմ․ իգ․ 9։

ապաստաւորութիւն վասն այնոցիկ, որք ժառանգելոցն են փրկութի(1)։ Բայց մի ինչ է զի նոքա չև ևս էին տեղեկացեալք անչափ անոխակալութեան՝ գթութեան և սիրոյ հօրն՝ որ ամարդկայինս բնութիւն. վասն որոյ ընդդէմ իրաւանց համարէին զայնքան անառակն միմիայն մեղայիւ յայնքան փառս բարձրացուցանել. և զատէին ի միտս իւրեանց թէ սա՝ որ զայսորինակ փառաւորեցաւ, մեզ քանի՜ ևս վայելէ, որ երբէք զպատուիրանս նորա չանցաք. բայց յայնքան ժամանակ զպատիւ ինչ խնդրեալ զոր ունիմք՝ չընկալաք. այսէ ուլըն։ Բայց յայնմ վրիպեցան ՚ի խորհուրդս իւրեանց. զի անգիտացան զմեծ պատիւն իւրեանց՝ որ է միշտ տեսանելըն զատառածայրն դէմս հօրն. բաս այնմ. *Հրեշտակք նոցա հանապազ տեսանեն զերեսս հօր իմոյ, որ յերկինս է(2)։ Որով զբեթէ վայելէին զամենայն բարիս հօրն, վասն որոյ հայրն գթած՝ յուշ առնէ նոցա զմեծ բարիսն՝ ուրոյն զերացանց. նախ՝ ասելով, դու հանապազ ընդ իս ես։ Եւ երկրորդ՝ որ ինչ իմ է՝ քո է, և ապա զհարկն ուրախութեան առաջի դնէ։

Ուրախ լինել և խնդալ պարտ էր, զի այս որդի իմ մեռեալ էր՝ և եկեաց, կորուսեալ էր՝ և գտաւ։

Որով բուժեալ զխոսան՝ հարկիւ ածէ զնա յուրախութիւն. կորուսեալ էր որպէս զդր-

(1) Եբր. Ա. 14։ (2) Մատթ. ԺԸ. 10։



րամն, անկանելով ՚ի զբաղմանէն յերկիր՝ և սատի ՚ի դժոխս։

Բարոյականապէս՝ ամենայն զխպուած անառակին պատահի մարդոյն՝ մինչ մեղանչէ անհնազանդութեամբ, և այլ մահացու մեղօք. և եթէ դարձցի մեղայիւ՝ անդրէն գտանէ զկորուսեալ բարիսն՝ զոր կորոյս մեղօք, և անթերի վայելէ զառաջին սէր հօրն երկնաւորի։

## ՅԱՂԱԳՍ ՄԵԾԱՏԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԻՆ։

### ԳԼՈՒԽ ԻԵ։

Այր մի էր մեծատուն՝ որոյ էր տնտես. և եղեւ զնմանէ ամբաստանութիւն, որպէս թէ վատնիցէ զինչս նորա։

### ՄԵԿՆՈՒԹԻՒՆ։

Այրն մեծատուն է աստուած, որոյ տունն բաղկանայ յերկնից և յերկրէ. ընդ որ զարմանայ բարուք. * Ո՜ իսրդ մեծ է տունն այ(1)։ և ինքն ասէ. * Մեծութիւն և փառք իմ են. և թէ՝ իմ է արծաթ, և իմ է ոսկի(2)։ Արդ՝ սա արար զերկիս տունս, նախ՝ զիմանալի աշխարհըն, և ՚ի նմա հաստատեաց տնտես՝ զպետս

(1) Բարուք. Գ. 24։ (2) Անգէ. Բ. 18։

հրեղինաց· զորմէ եղեալ ամբարտաւանութե՛ն եհան ՚ի անմահութենէն, և խաւարային կապանօք արգել ՚ի տարտարոս, *Եւ զհրեշտակսն՝ որք ոչ պահեցին զիւրեանց իշխանութիւն, ՚ի դատաստան մեծի աւուրն՝ մշտնջենաւոր կապանօք պահեաց ՚ի խաւարի (1)· երկրորդն՝ զեդեմ. և ՚ի նմա եդ զմարդն առաջին՝ գործել և պահել (2)· զորմէ եւս ամբարտաւանութի՛ւն ելանել՝ թէ եկեր զպտուղն, եհան և արձակեաց ՚ի դրախտէ անտի· երրորդն՝ զխորհրդաւորն զեկեղեցի՝ որ է տուն աստուծոյ, որոյ տունն մեք իսկ եմք, որոյ անուանս կոչուցան նախ՝ մարգարէք, *Մովսէս հաւատարիմ է տան նորա իբրեւ ծառայ(3)։ Երկրորդ՝ առաքեալք, *Խնդրի է ՚ի մէջ հազարապետաց, եթէ ոք հաւատարիմ գտցի(4)· հազարապետք եմք խորհրդոցն այ· *Գիտասցես՝ թէ որպէս պարտ է քեզ ՚ի տան այ շրջել՝ որ է եկեղեցի սիւն և հաստատութի՛ւն ճշմարտութեան(5)։ Երրորդ՝ վարդապետք, որք են քարոզք բանին ճշմարտութեան· զորոց ասէ տէրն. *Իսկ ո՞վ իցէ հաւատարիմ տնտես և իմաստուն· զոր կացուսցէ տէր իւր ՚ի վերայ դերդաստանի իւրոյ՝ տալ ՚ի ժամու զկերակուր(6)։ Սոքա են՝ հայրապետք, հովիւք և առաջնորդք· երանի՝ որք ՚ի ժամու տան զկերակուր առանց զրկանաց· ապա թէ ուտիցեն՝ ըմպիցեն՝ և հարկանիցեն զծառայս, կամ՝ լեզուօք և կամ՝ չար վարուք, ամբարտաւանողք բազումք լինին, և յայնժամ անկանին ՚ի անօրէնութենէն։ Չորրորդ՝ տունն այ է զգալի աշխարհս, յորում անուանեալ կոչուցեալք են թագաւորք. վասն որոյ պարտին ուսանել՝ անաչառ առնել դատաստան և զգուշանալ յանիրաւ զրկանաց· զի մի՛ որբք և այրիք զրկեալ ՚ի նոցանէ աղաղակեսցեն. զի բողոքն հասանէ յականջս տեառն զօրութեանց բառ առաքելոյն։ Վասնորոյ խրատէ զնոսա իմաստունն ասելով, *Լուարուք թագաւորք, և ՚ի միտ առէք, զի ՚ի տեառնէ տուաւ ձեզ իշխանութիւնդ՝ և հզօրութի՛ւն ՚ի բարձրելոյն, որ պահանջէ զգործս ձեր և քննեսցէ զխորհուրդս, ահիւ և տագնապաւ հասցէ ՚ի վերայ ձեր. զի դատաստան անողորմ՝ իշխանաց լինի(1)։ Յայսմիկ զգուշ խօսի զթագաւորաց, զի մի՛ անցցեն զիրաւամբք. և լիցի ՚ի նոցանէ ամբարտաւանութիւն։ Ո՜ թէ՝ որքան վատնիչ արքունի գանձուց գոն անհաւատարիմ և անիրաւ անօրէնք յաշխարհի. Թագաւորք, որք զկեանս աղքատաց կեղեքեալ՝ յապօրինաւորս ծախեն։ Հայրապետք՝ որ զպտուղս անանկաց ժողովեալ, ՚ի զգեստս և ՚ի ծախս անպատշաճս կրօնից վատնեն։ Առաջնորդք և վարդապետք

(1) Յուդ. Ա. 6։ (2) Ծն. Բ. 15։ (3) Եբր. Գ. 5։
(4) Ա. Կորնթ. Դ. 2։ (5) Ա. Տիմոթ. Գ. 15։ (6) Ղուկ. ԺԲ. 42։



(1) Իմաստ. Զ. 2. 4. 6։

փառաւորեալք՝ որ զբանն կենաց 'ի յաղքատ ժո-
ղովրդոց զլացեալք, շնթելով մեծատանց առ-
շնորհուկս 'ի լծախորտակ իշխանս վաճեն.
զպաշտպանեաց արդարև լինին ամբաստանութք.
և երանի թէ՝ նմանիցին անիրաւ տնտեսին:

Աշակերտ՝ և ասէ դէս, զի՞նչ է այսպիսի ըստ նմա պարտեաց փո՛խ-
պարտապան փոխատուութեան էր, զի ո՛չ ես կարեմ լինել փոխել:

Առաջին նախ՝ զպարտանաց տէրն. զինչ է այս. իբ-
րև թէ ասիցէ, զնորդ կարասցէր վաճառել զին-
չս իմ, չերկնչելով լինելն՝ որ եմ տէրքո.
նա և իրաւանց ներհակի, ոչ խնամով ունել
զինչս օտարին. քանզի մարդ առաւել խնամով
պահպան է պահել զինչս օտարին, քան զիւրն՝ վա-
սն երկու պատճառի. նախ՝ զգուշանալով յան-
հաւատարմութէ. երկրորդ՝ 'ի զրպարտութէ.
զի բազումք մեծացուցանեն զկորուսեալն,
վասն որոյ պատահին լալով դիմեաց առ ե-
զիտէ վասն կացնին՝ որ 'ի մարգարէն անկաւ 'ի
յորդանան և ասէր, * Օ՛ այն յանօթ առեալ
էր իմ (1). այսինքն՝ փոխ. իբր թէ՝ եթէ իմ
լինէր, ոչ էր այնքան փոյթ. ուստի՝ որ զայլո-
ցըն վաճառէ՝ զիւրն ամենևին ոչ կարէ պահել:
Յայս մտօ ասէ, * Եթէ օտարին չեղէք հա-
ւատարիմ, զձերն ո տացէ ձեզ: Երրորդ՝ ասէ
պա՛րտք պարտապան փոխատուութեան էր. Թէպէտ աստուած
է տէր ամենայն իրաց, որքան տայ, այնքան ա-

(1) Դ. Թագ. Զ. 5:



ռատանայ և ո՛չ իմիք կարօտի, սակայն ճշմար-
տիւ պահանջէ զհամար ընչից իւրոց հանդերձ
ակնածօք. ուստի քանքարաթաքոյցն 'ի մատու-
ցանել զառեալն՝ դատապարտեցաւ (1). և տէրն
ասէր, * Ժողովեցէք զնշխարեալ կոտորան, զի
մի՛ ինչ կորիցէ (2): Ընչքն են երկու ցեղքս այս-
ինքն՝ հոգևոր և մարմնաւոր. որ է յաստուա-
ծոյ, ըստ այնմ * Փառաւորեցէք զաստուած
'ի հոգի և 'ի մարմինս ձեր՝ զոր ունիք յաս-
տուծոյ, և չէք անձանց տէր: Եւ ո՛չ օրինաւո-
րապէս փորձ յայտոսիկ, է՛ վաճառող ընչից: Չոր-
րորդ՝ ասէ, ո՛չ ես կարեմ լինել փոխել. զի որ ոք է
վաճառող ընչիցն աստուծոյ, չէ՛ արժան անտե-
սութեան. այսպէս թագաւորք և հայրապետք
զխանիչս՝ յիշխանութենէ և յառաջնորդու-
թենէ և 'ի տնտեսութենէ լուծանեն: Հա-
նեալն 'ի տնտեսութենէ՝ է կրկին, կամ յա-
տեանէ, կամ 'ի կենացն. յերկուսն ևս պա-
հանջէ աստուած զհամար խղճմտանաց. զերիս
իրս պարտին հոգալ տնտեսքն, նախ՝ հաւատարմա-
պէս և խնամով ծախել զինչս տեառն. երկ-
րորդ՝ հաւասար բաշխել ըստ իւրաքանչիւրաց
ժամեաց. եւ երրորդ՝ զծախուցն զառիցն և
զորոցն ունել զգիր յիշատակաց պատրաստի
'ի տալ զհամար:

Ասէ ընդ միտս իւր տնտեսն. զի՞նչ գործեցից, զի տէր

(1) Մատ. ԻԵ. 26: (2) Յովհ. Զ. 12:

թէ հանէ զիս 'ի տնտեսութենէս . . . գործել ոչ կարեմ, մուրալ ամաչեմ ։

Նկարագրապէս՝ մինչ գործական որք անկանին 'ի պատուոյն, արդ.ամբք գործել ոչ կարէ՝ և մուրանալ ամաչէ · հնարն՝ է ունել և ստանալ զբարեկամս · զի ընկալցին 'ի տունս իւրեանց ։ Հոգևորապէս ևս մինչ հանէ որք 'ի կենաց, գործել ոչ կարէ, զի անցեալ է ժամանակ արդեան, առ այն ասէ . * Անց ամառն՝ և անցեալ հունձն (1)։ Եւ մուրանալ ամաչէ, քանզի ամենեքեան նախատեն՝ և ոչ տան · ըստ այնմ * Վասն ցրտոյ ոչ կամեցաւ հերկել ծոյլն, յետոյ մուրանայցէ՝ և ոչ որք տայցէ նմա (2)։ որպէս պատահեցաւ մեծատանն՝ և յիմար կուսանացն · այն մեծատունն յիմարաբար հետևեցոյց ասելով, * Քակեցից զշտեմարանս իմ (3)։ Իսկ սա իմաստնաբար հետևեցուցանէ յասելն, Գիտեմ զինչ արարից · զի յորժամ 'ի բաց լինիցիմ 'ի տնտեսութենէս, ընկալցին զիս 'ի տունս իւրեանց ։ ընծայիւք տեառն իւրոյ բարեկամս կամի ստանալ ։

Եւ կոչեաց առ ինքն մի ըստ միոջէ 'ի պարտապանաց տեառն իւրոյ՝ ցառաջինն ասէ · Քանի՞ ինչ պարտիս տեառն իմում · ասէ՝ հարիւր մար ձիթոյ · ասէ ցնա Առ զգիր քո՝ և նիստ գրեա՛ վաղվաղակի յիսուն · դարձեալ ասէ ցմիւսն, դու քանի՞ ինչ պարտիս, և նա ասէ՝ հարիւր քոռ ցորենոյ, և ասէ

(1) Երեմ · ը · 20 ։ (2) Առակ · ի · 4 ։ (3) Ղուկ · ժզ · 24 ։



ցնա՝ Առ զգիր քո · և նիստ գրեա՛ ութսուն ։

Նկարագրապէս՝ զմուրհակսն 'ի ձեռս նոցա տայ, ասելով, կա՛, այսինքն, ա՛ռ կամ կա՛լ զգիր քո, և հրամայէ նուազեցուցանել զպարտսն, զի նոքա ծանիցեն զբարերարութիւնն՝ և ընկալցին 'ի տունս իւրեանց ։ Որպէս պարտի իւրաքանչիւրոք, թէ և իցէ տնտես անիրաւ, 'ի հանելն 'ի տնտեսութենէ մահուամբ, 'ի յանիրաւ ստացուածոց իւրոց բաշխել աղքատաց, և ստանալ զբարեկամս, զի ընկալցին 'ի տունս իւրեանց, այսինքն 'ի յարկսն արքայութեան, որ է սեպհական տուն աղքատաց · ըստ այնմ, * Երանի աղքատաց հոգւով՝ զի նոցա է արքայութիւնն երկնից ։ Յայս միտս եզրակացուցանէ տէր ղուկասն՝ ասելով,

Եւ ես ձեզ ասեմ, արարէ՛ք ձեզ բարեկամս 'ի մամոնայէ անիրաւութեան · զի յորժամ պակասիցէ այն՝ ընկալցին զձեզ 'ի յարկսն յաւիտենականս ։

Անիրաւ ասէ, ոչ ըստ ինքեան՝ զի է բարի · այլ ըստ ստացմանն · զի ըստ մեծի մասին անիրաւութբ ստացեալ լինի և անիրաւաբար պահի ։ Կամ՝ եթէ որք յինչից տեառն իւրոյ բաշխէ աղքատաց՝ այնու անիրաւաբար տայ · բայց զի աղքատաց տայ, վասն այսորիկ է անմեղադրելի և գովութեան արժանի · յայն սակս գովեաց տէրն զտնտեսն անիրաւութեան ։

Խորհրդապէս՝ տնտես է մարդն, իշխանականաւն պերճացեալ պատուով · երկու պար-

տապանք աւազան՝ են հոգին և մարմինն ․ հոգին պարտի հարիւր մար ձիթոյ՝ այսինքն ընդ դէմ հոգւոյն սրբոյ՝ որ ՚ի ձէթ առակի, ՚ի ծայրագոյն աստիճանի գոլով մեղուցեալ ․ իսկ մարմինն պարտի հարիւր քոռ ցորենոյ ․ ընդ դէմ տէրունական մարմնոյն՝ որ ՚ի ցորենոյ փոխարկի ․ և նա գոլով ՚ի ծայրագոյն աստիճանի մեղուցեալ ․ զի որպէս հարիւր ցորենոյ բերքն ըղ-գլուխ արդեանց որբոց նշանակէ ․ այսպէս և հարիւր թիւն՝ առա գլրուամն ջախու մեղաց նշանակէ, որ լինի յայս երկուս մեղանչելոյն ․ վա որոյ ահագինս բարբառի առաքեալն ․ *Իսկ արդ՝ որքան սաստիկ պատժոյ արժանի համարիցիք զայն, որ զարեան նորոյ ուխտին խառնակ համարեցաւ (1)։ Այս առ ցորեանն ․ և զհոգին չնորհաց թշնամանեաց ․ այս առ ձէթն։ Արդ՝ թէ վասն էր ձիթոյն պարտիքն առաւել թողու և ցորենոյն սակաւ, նկարագրական պատճառն է՝ զի ձէթն է առաւել թանկագին՝ որ դժուարաւ վճարի ․ իսկ ցորեանն դիւրագին, որ դիւրաւ վճարի ․ վասն որոյ նորայն չատ թողու՝ և սորայն սակաւ։ Իսկ խորհրդական պատճառն՝ զի մարմինն տկար գոլով, որքան ջանայ զինքն պատրաստել ըստ արժանւոյն առ սուրբ խորհուրդն, տակաւին ՚ի վայր մնայ ․ վա որոյ ոչ է այնքան մեղապարտելի ․ ուստի թէպէտ թողէ-

(1) Եբր ․ Ժ ․ 19։



լինի սմա՝ բայց մնացեալն դիւրաւ վճարի միով մեղայիւ ․ իսկ հոգին իմացական գոլով և տէր իւրոյ գործոյ, մինչ մեղանչէ ընդ դէմ հոգւոյն չնորհաց անձնիշխանաբար նախանձու ը̄ դէմ եղբայրական սիրոյ և ընդ դէմ ճշմարտութեան ջատագովելով, որք են հայհոյութիւնք ընդ դէմ հոգւոյն սրբոյ՝ ծանրագոյնս մեղանչէ ․ վասն որոյ մնայ ՚ի ներքոյ ծանր պարտուց աւազանին չնորհաց ․ ուստի ՚ի քաջալերութիւն նմին թուղու զկէտն, զի յոյս առեալ դիմեսցէ յողորմութիւն տեառն։ Այսպէս և չնորհալին վճռէ ․ *Հոգւոյն զմար՝ ձիթոյն յխառն ․ մարմնոյ քան՝ քոռ ցորենոյն։ Մարն՝ է չափ հեղեղուկ իրաց ․ որպէս ձիթոյ ․ իսկ քոռն՝ ցամաքեղինաց, որպէս ցորենոյ։

Եւ գովեաց տէրն զտնտեսն անիրաւութեան, զի իմաստութեամբ արար ․ զի որդիք աշխարհիս այսորիկ իմաստնագոյնք են քան զորդիս լուսոյ յազգս իւրեանց։

Ամենայն տնտես ՚ի համար տալն՝ ճշդիւ պահանջէ ՚ի պարտապանաց տեառն իւրոյ, զի թէրեւս զերծցի ․ բայց սա յեղանակէ իրացն գիտելով թէ անպատճառ հանի ՚ի տնտեսութէ, ՚ի խորհուրդ մտեալ հնարս գտանէ ․ յետ այնքան վատնելոյ զինչս տեառն՝ տակաւին վատնէ, բայց իմաստնաբար, զի ստասցի զբարեկամս ․ վասն որոյ գովութեան արժանի է, զի իմաստնագոյն գտաւ քան զորդիս լուսոյ, կեցութեան եղանակ գտանելով, և զապաշխարանաց բուռն

հարկանելով, այնու՝ զի քաջալերեալ զհոգին և զմարմինն յուսով յողորմութիւնն Աստուծոյ: Ո՛չ եթէ ինքն զկէան եթող, Աստուած ըզբոլորն թողու, զոր ոչ կարացին չար հրեշտակըք որդիքն լուսոյ՝ առնել 'ի հանելն 'ի անաւրէնութենէն: Նորանն թէ և մեք յիշելով զմահըն՝ յորում հանիմք 'ի անաւրէնութենէն, 'ի ստացուածոյ տեառն մերոյ՝ զոր անիրաւաբար ունիմք, առնիցուք մեզ բարեկամս յաղքատաց, զի ընկալցին 'ի տունս խորանաց յարկան յաւիտենից:

## Ի ՕԳՆՈՒԹԻՒՆ ՄԵՌԵԼՈՏԱՆՑ ԵՒ Ի ՍՓՈՓԱՆՍ ՍԳԱՒՈՐԱՑ:

### ԳԼՈՒԽ ԻԶ:

Այր ոմն էր մեծատուն. Ղուկ. ԺԶ. 19:

### ՄԵԿՆՈՒԹԻՒՆ:

Մեծատունն անկանի 'ի մեղադրութիւն նախ՝ ագահապէս ժողովելով. այնպիսի էր ունողն զոոհմանկանս, որ ասէր, Ո՞ւր ժողովեցից զարդիւնս իմ(1). երկրորդ՝ անիրաւս ստանալով. որպէս տնտեսն անիրաւ(2). երրորդ՝ սաստկապէս սիրելով, որպէս. պատանին՝ որ գնաց

(1) Ղուկ. ԺԲ. 17: (2) ԺԶ. 1:



տրտմութեամբ. չորրորդ՝ շռայլութեամբ 'ի կեր արկանելով. որպէս այս մեծատունս. զորմէ ասէ:

Այր ոմն էր մեծատուն, և ագանէր բեհեզս և ծիրանիս:

Սա ունէր զչորս մեծամեծ մոլութիւնս. նախ՝ զանառակութիւն, զի ագանէր զբեհեզս և զծիրանիս: բեհեզն է նրբաթել վուշըն հանդերձն. իսկ ծիրանին է ասուեղէն կամ մետաքսեղէն հանդերձն՝ ներկեալ 'ի գոյն կարմըրանց, որ լինի յարենէ ծիրանի կոչեցեալ խեցեմորթոյ ձկան, որ միայն թագաւորաց պատկանի: *Ահա որք զփափուկս զգեցեալ են՝ 'ի տունս թագաւորաց են: զայսպիսիս դատէ Աստուած, ըստ այնմ. *Այց արարից 'ի վերայ ամենեցունց որք զգեցեալ են զհանդերձս պատարուսկանս: *Հանդերձք ձեր կերակուր ցեցոյ. և թէ՝ *Հանցէ տէր զզարդ օտարոտի հանդերձից նոցա: Ողջամիտն թէ և իցէ մերկ՝ է զարդարեալ որպէս զշուշան վայրի՝ և ոչ ամաչէ: *Երկոքեանն էին մերկ՝ և ոչ ամաչէին: Մեղաւորն խնդրէ ծածկել, զի մի երևեսցի տգեղութիւն իւր: Երկրորդ՝ ունէր զորկրամոլութիւն, զի ուտէր և ըմպէր, յորոց իբրև յակնաղբերանց բղխին ամենայն գէշք մոլութեանց: *Այս է անօրէնութիւն Սոդոմայ քեռ քո. պատրաստութիւն հացի և լիութիւն գինւոյ(1):

(1) Եզեկ. ԺԶ. 44:

վասն որոյ ասէ․ և ուրա՛խ լինէր հանապազ աստուածպէս։ Զի ուրախութիւն բղխի ՚ի զեղխութէ գինւոյ․ թէպէտ յետոյ բերէ զտրտմութիւն․ ուստի ասէ․ * Վա՜յ որք ծիծաղիքդ այժմ, զի սգայցէք և լայցէք (1)։ Երրորդ՝ մոլութ̄ ծառայեալ էր ՚ի գինարբուս ուրախ լինիլն, ոչ երբեմնապէս, որ անմեղադրելի է, այլ հանապազ․ ոչ չափաւորապէս՝ որ վայելէ է պարկեշտից, այլ առատապէս․ այսինքն՝ չափազանցօրէն, քան զորչէ վտանգ կենաց․ զայսպիսեաց ասէր Եսայի, * Վա՜յ որք յառնեն ընդ առաւօտս և զհետ լինին ցքւոյն․ որք երեկոյանան ՚ի նմին (2)․ և սողոմոն ասէ․ * Ո՞ւմ է վայ, որ յամենայ ՚ի գինւոջ (3)։ Չորրորդ ունէր զանողորմութիւն այնքան խստագոյն, մինչև առ դրան իւրոյ անկեալ ողորմուկ աղքատին զղազարու ևս չողորմիլ ։ Այսպիսի մեծատունքն են որպէս ասացաւ ոսկեայ լցեալ աղբով, յաչս աշխարհի մեծ, իսկ յաչս քննողին գաղտնեաց մարդկան պիղծ գոլով՝ անկեալք են յաչացն Աստուծոյ․ վասն որոյ զանուն նոցա ոչ առնէ յիշատակաց արժանի ըստ այնմ, * Ո՛չ յիշեսցին անուանք նոցա ՚ի շրթունս իմ։ Երկրորդ՝ զի անուանք նշանակեն զգոյացութիւնն հանդերձ որակութեամբ․ ընդ կորնչիլ նշանակեալ գոյացութեանն՝ կորնչի և

(1) Ղուկ․ զ․ 25 ։ (2) Եսայ․ Ե․ 11 ։ (3) առակ․ իգ․ 29 ։
(4) սաղմ․ ժե․ 5 ։



անուանն․ զորօրինակ՝ անուն ուրուք գոլով յովհաննէս՝ որ նշանակէ շնորհ, եթէ ինքն իցէ ապաշնորհ՝ ոչ վայելէ անուանն նմա․ այլ պարտ փոխել և ջնջել անուանն առաջին․ ուստի աղէքսանդրր՝ ցհոմանուն երկչոտ պատանին ասաց, ո՛վ պատանի, կամ զանունդ կամ զբարսդ փոխեա։ Վասն այսորիկ այս մեծատունն՝ ունելով զգործներհակ անուանն, ոչ արժանացաւ յիշատակի։ Երրորդ անուանն մեղաւորաց ջնջի ՚ի մատեան Աստուծոյ․ զի այլ ոչ ևս անկանի մեղաւորն ՚ի միտս Աստուծոյ, յետ դատապարտութեանն․ ըստ այնմ, * Ջնջեսցին նոքա ՚ի դպրութենէ քումմէ կենաց ։ ընդունայն ջանայ չար մեծատունն, ՚ի տապանակէմն քանդակելով զանունն՝ զի կարդասցի ՚ի հողս իւր ։

Եւ աղքատ ոմն անուն ղազարոս՝ անկեալ կայր առ դրան նորա վիրաւորեալ․ և ցանկայր յագել ՚ի փշրանաց, որ անկանէին ՚ի սեղանոյ մեծատանն․ այլ և շունք ևս գային և լիզուին զվէրս նորա ։

Աղքատութիւնն է յետին թշուառութիւն անտանելի․ ուստի բազումք ասացին ՚ի հեթանոսաց թէ՝ լաւագոյն է անկանիլ ՚ի վիհ, քան յետին աղքատութեամբ ծնդիլ ․ Այս կարէ ասել զհեթանոս աղքատաց, բայց ոչ զհաւատացելոց․ որք համբերեն անխռով մտօք յուսով արքայութեան, որ պատրաստեալ է նոցա․ ըստ այնմ, * Պատրաստ արարեր քաղցրութ̄ քով աղքատի Աստուած․ առ որ ուրախութ̄

ածեալ եղև զՂազարոս։ Որոյ՝ աղէտ աղքատութեան կարի ծանրագոյն էր. քանզի բաց յաղքատութենէն՝ էր վիրաւոր և անխնամ, մինչև շանց գալ և լիզուլ զվէրսն. բայց զայսքան վտանգ ներէր 'ի փառս աստուծոյ. ուստի հոգին նորա 'ի վէրալից մարմնին թագաւորեալ կայր որպէս զաստղ պայծառ 'ի մառախլապատ ամպս, որպէս զոհար 'ի խորս հողոյ. որպէս մարգարիտ լուսափայլ 'ի մէջ ոստրէի. որպէս ոսկի ամփոփեալ 'ի սէպէթ երկաթեայ. վասն որոյ ցանկալի գոլով անուն նորա աստուծոյ՝ 'ի յիշումըն ածէ. զի որպէս անուանն աստուծոյ ցանկալի է սրբոց. ըստ այնմ, *Տէր յիշեցաք զանուն քո 'ի նեղութեան ցանկութեամբ ոգւոյ, որում ցանկացան անձինք մեր(1). այսպէս և անուանն սրբոց ցանկալի է աստուծոյ անդրադարձաբար, այն զի գրեալ է 'ի կամարն երկնից, յոր միշտ ընթեռնու, և 'ի դպրութեան կենաց, այսինքն 'ի միտս աստուծոյ, ուր անեղծանելի մնայ յաւիտեան։

Եղև մեռանիլ աղքատին և տանիլ հրեշտակաց զնա 'ի ծոցն աբրահամու։

Տիրապէս մարդ՝ հոգին է, վասն որոյ տարան զնա անդ. զհոգին թէպէտ մի հրեշտակ տանէր, բայց 'ի պատիւ սրբոց բազումք ուղեկցին. վասն որոյ աստ տանիլ հրեշտակաց.

(1) Եսայ. իզ. 16։



որպէս յարքայութեան են օթևանք բազում. այսպէս և 'ի դժոխս. և կամ որպէս 'ի քաղաքի, են՝ որ 'ի պատուի են, և են՝ որ 'ի նախատինս. այսպէս և 'ի դժոխս, են՝ որ 'ի նախատինս գլխաւոր են, և են՝ որք ընդ պահպանութեամբ հրեշտակաց. քանզի 'ի պատիւ հոգւոց արդարոց բարի հրեշտակք ևս առաքեցան 'ի դժոխս, զի մի՛ անդէն տանջեսցին. վասն որոյ աբրահամ և այլք էին 'ի խաղաղութե՛ օթևանի՝ ուր և զՂազար հանգուցին. այսպէս և երեմիա և եզեկիէլ ընդ ժողովրդեանն առաքեցան 'ի գերութիւն, զի մի՛ անգիտս մոլորեսցին։ Սահն է վախճան ամենայն թշուառութեանց, և ելք ճգնանց մարտիրոսաց, *Երանի որ աւետեաց մինչև ցմահ, զի յետ այնորիկ զայլ զմեծ բարութիւնս. և կամ լեր հաւատարիմ մինչև ցմահ, և տաց քեզ զպսակն կենաց(1)։ Այսպէս Ղազարոս առկաց դառնագոյն կերցն, իսկ մահն՝ բարի դատաստան արար նմա. զի եհան յաղցաւոր կենաց, 'ի վիրաւոր մարմնոյն 'ի բազմակարիք կենցաղոյս, և հանգոյց 'ի ծոցն աբրահամու հաւատով, զի էր նորա որդի հաւատոյ. ուստի ասէ սիրաք. *Ո՛վ մահ՝ բարի է դատաստան քո մարդոյ կարօտելոյ, և որ նուաղիցի 'ի զօրութենէ(2)։

Մեռաւ և մեծատունն և թաղեցաւ։

(1) Յայտն. բ. 10։ (2) Սիրաք. խա. 3։

Օ՛ Թաղումն իշոյ թաղեցաւ, զի որպէս էշն քերթի և անկանի 'ի կեր գազանաց, այսպէս մեծատունն յիւրոյն՝ 'ի մահուան. 'ի պատուական ծիրանեացն մերկացուցանի, և իբրև քերթի և միով պատանաւ դնի 'ի գերեզմանի. յորում ժառանգեն զնա օձք, դեւք զհոգին զոր առին, և գազանք զմարմինն՝ եթէ իցէ արտաքոյ մնացեալ. և որդունք, եթէ իցէ 'ի շիրմի որպէս սիրաք ասէ, *Որովհետև այս է վախճան մեր, զիմ՛արդ հպարտանայ ոք գոլով հող և մոխիր(1): Եւ քանզի յաւակնութիւն է հպարտ մեծատանն՝ ընդ մեռանելն անկանել 'ի դժոխս, վասն այսորիկ ոչ յիշէ զանունն իւր աւելորդ:

Եւ 'ի դժոխս մինչ 'ի տանջանս էր՝ համբարձ զաչս իւր և եբես զաբրահամ 'ի հեռաստանէ և զղազարոս 'ի գոգ նորա հանգուցեալ:

Մինչդեռ կենդանի էր՝ փակեալ էր զաչսն, և ոչ դիտէր առ ղազար գթալից աչօք. այլ այժմ բանայ զաչսն տանջանքն, զոր հեշտութիւնն փակեաց: Նա զխորհրդոյ թէ՝ 'ի կենդանութեան փակեալ ունի զաչսն. և մինչ մեռանի՝ բանայ, բայց ընդունայն: Այսպէս և սա յետ մահուանն 'ի զուր ամբառնայ զաչս իւր, զի կորուսեալ էր զժամանակն բանալոյ. վասն որոյ ասէ յոբ, *Մեծատունն ննջեաց, և

(1) Սիրաք. Ժ. 13:



ոչ յաւելցի. զաչս իւր եբաց՝ և ոչ ևս իցէ(1). այսինքն՝ օգնական. ոչ յընչից՝ և ոչ 'ի բարեկամաց: Ի դժոխս է սաստիկ տապ յահագին հրոյ անտի. որ պատճառէ զսաստիկ ծարաւ. 'ի մէջ այն տօչորից տապոյն էր, վասն որոյ պապակէր լեզուն 'ի ծարաւոյ. 'ի հեռաստանէ տեսանէ զղազար. զի հեռի է 'ի մեղաւորաց փրկութիւն, 'ի տեսութէ արդարոյն սաստկանայ յոյժ ցաւ մեղաւորին. ըստ այնմ, *Արդարութիւն նորա բարձրեսցի փառօք: *Մեղաւորն տեսցէ և բարկասցի, զատամունս իւր կրճտեսցէ և հալեսցի, և ցանկութիւն մեղաւորաց կորիցէ(2): և թէ՝ *Տեսեալ զնա խռովեսցին անհնարին երկիւղիւ:

Եւ նա աղաղակէր և ասէ, հա՛յր աբրահամ, ողորմեա՛ ինձ, և առաքեա՛ զղազարոս, զի թացցէ զծագ մատին իւրոյ 'ի ջուր և զովացուսցէ զլեզու իմ, զի տապակիմ 'ի բոցոյ աստի:

Սաստիկ նեղութի զմիտս մարդոյն այնպէս պաշարէ և աղմկէ՝ մինչև ցնորել և չգիտել զինչ խօսիլն. և զի է 'ի դժոխս տանջանք անտանելի, ուստի պատճառին ցնորք, որպէս երևի աստ, նախ՝ զի խնդրէ զղազար յիմարաբար. երկրորդ՝ զկաթիլ ջրոյ. և այն զի՛նչ է առ սաստկութեամբ տապոյ դժոխոցն. թէպէտ նկատմամբ ողորմութեն աստուծոյ՝ կաթիլ մի ջուր

(1) Յոբ. Իէ. 19: (2) Սաղմ. Ճժա. 9. 10:

գթութեան Նորա կարէ շիջուցանել զմեծա-
բոց հնոցն դժոխոց. որպէս ցօղաբեր հողմն զբո-
հուրն բաբելոնի(1). նաեւ թէպէտ լուաք 'ի
դժոխս գոլ տառապանս ցրտոյ՝ բայց եւ ոչ ջուր
զովացուցիչ: Ըստ սաստկութեան ցաւոյն ծա-
մէր զլեզուն. ըստ այնմ, *Ծամէին զլեզուս
իւրեանց 'ի յախտէ ցաւոյն: (2) Խնդրէր զո-
վանալ, կարօտեալ կաթիլ մի ջրոյ այն՝ որոյ կը-
նորդն քաղցրանայր ճաշակմամբ մեղու, եւ ըն-
դուն հեշտանայր յըմպելեաց քաղցրաւենեացն
օշարակաց. իսկ այժմ ըմբռնէ զնա ծարաւ ըղ-
ձուր կարօտութիւնն, մանաւանդ զայն անդա-
մըն՝ որով որպէս հրով զգիրս բազում աղքա-
տաց տոչորեալ էր հայհոյութեամբ եւ մեծա-
բանութեամբ: Արդ՝ առնու զչափ իւրոյ անըզ-
գամութե, ըստ այնմ, *Որչափ փառաւորեաց
զինքն՝ այնչափ հատուցէք դմա զտանջանս(3):
Հայր կոչէ զաբրահամ եւ ոչ ամաչէ, որդի գո-
լով տառապանայր, զի զգործս տառապանայի գոր-
ծեաց: Ըստ իւրում սովորութեանն մարդե-
լոյզն այն՝ խորամանկ, կեղծաւորաբար ընթէ
հայր կոչելով զնա, որպէս զի շարժեսցէ 'ի
գութ:

Ասէ ցնա աբրահամ որդեակ, յիշեա՛ զի ընկալար դու
զբարիս քո 'ի կեանս քում, նոյնպէս ղազարոս զչարչա-
րանս. արդ՝ սա աստ մխիթարի, եւ դու աստէն պապակիս:

(1) դանի. գ. 50: (2) յայտն. ժզ. 10: (3) ժը. 7:



Աստուած յայտ է թէ՝ 'ի դժոխս հոգւոյն 'ի
գործ առնէ զզօրութիւնս, այսինքն՝ զիմացա-
կանութիւն եւ զյիշումն. բայց 'ի պատիժ իւր.
քանզի իմանալով զփառս ղազարու եւ յիշելով
զիւր առաջինն՝ տոչորի:

Ասելովն՝ որդեակ յիշեա՛. կամի ասել, ես ըստ
իմս բարուց պատրաստ եմ ողորմել, բայց ի-
րաւունքն աստուածային ոչ թողու. զի դու
անդ զմարմինդ պարարեալ յղփացուցեր, եւ ըղ-
մտաց կամիս աստէն հանգուցանել. զի այս
հանգիստ ղազարանման աշխատաւորաց է. *
Սոքա են որք գան 'ի վշտաց մեծաց(1): Դու-
վասն այսորիկ աղաղակես լալով, վասն զի անդ
'ի կեանս քում ծնծաղէիր եւ խնդայիր. իսկ սա
վասն այսորիկ մխիթարի աստ, զի անդ էր սգա-
ւոր: Բազէն մինչ կենդանի է՝ պատուի յոյժ.
իսկ հաւն անարգի. յետ մահուանն՝ բազէն ան-
կանի յաղբանոց. իսկ հաւն հանի 'ի սեղան թա-
գաւորաց. այնպէս մեծատունն 'ի կեանս յայս
հանգոյն աւուրաւ բազէի էր 'ի պատուի.
իսկ աղքատն ըստ հաւու՝ յանարգութե. իսկ
անդ ընդհակառակաբար: Գեղեցիկն յովսէփ
'ի հիւանդութե հօր իւրոյ յակոբայ՝ մատոյց
զանդրանիկն մանասէ յաջակողմն, իսկ զեփրեմ
'ի ձախակողմն՝ զի օրհնեսցէ. իսկ նա փոփոխեաց
զձեռսն, զաջն արկանելով զեփրեմաւ, ձախն

(1) յայտն. է. 14:

զմանաւանդիւ (1)․ այսպէս յայս կեանս մեծատունքըն թէպէտ են ՚ի յաջ և աղքատքն ՚ի ձախս, իսկ ՚ի հանդերձելումն ներհակաբար․ Սա աստ մխիթարի, և դու այդր պատժիս։

Եւ ՚ի վերայ այսր ամենայնի՝ վիհ մեծ է ընդ մեզ և ընդ ձեզ․ եթէ կամիցին՝ աստի առ ձեզ անցանել՝ ոչ կարեն․ և ոչ այտի առ մեզ անցանել։

Ի դժոխս են մեծամեծ վիհք, յորս զետեղին դասք դասք մեղաւորաց բաժանեցեալքն․ * Անդ Ասուր և ամենայն բազմութիւն նորա ՚ի շուրջանակի գերեզմանի նորա․ այսպէս Մոսոք և Եղամ։ Վիհըն՝ որ ընդ մէջ էր ՚ի մեծատանէն ցաբրահամ, էր ձոր մեծագոյն՝ ընդ որ անհնար էր ումեք անցանել։ Խորհրդապէս՝ է վճիռն աստուծոյ, բաժանումն, * Եթէ անկցի փայտն ՚ի հարաւ կամ ՚ի կողմն հիւսիսոյ, յոր կողմն և անկցի՝ անդ կացցէ, Փայտն անկեալ ՚ի հարաւ՝ է արդարքն մնացեալ ՚ի շնորհս աստուծոյ․ իսկ ՚ի կողմն հիւսիսոյ անկեալն՝ է մեղաւորն։ Երկրորդ՝ վիհն է արդիւնքն մեղաւորաց և արդարոց, յորս գոյ մեծ զանազանութիւն։ Երրորդ՝ արդարն է բարձրակայ որպէս զարեգակն, որ ոչ կարէ խոնարհիլ յերկիր․ իսկ մեղաւորն է ծանրագոյն քան զերկիր, որ ոչ կարէ մերձենալ յարեգակն․ զայս երկրորդ պատճառ եբեր աբրահամ․ զի անմերձադրելի առասցէ զինքն և հար-

(1) Ծնն․ խբ․ 13։



ցէ զլոյս նորա․ յիրաւի՛ ասաց տէրն․ * Դիւրին է մալխոյ ընդ ծակ ասղան անցանել, քան մեծատան յարքայութիւն աստուծոյ մտանել։

Եւ ասէ, արդ աղաչեմ զքեզ, զի առաքեսցես զդա ՚ի տուն հօր իմոյ։ Են իմ անդ եղբարք հինգ, որպէս զի տացէ նոցա վկայութիւն, զի մի՛ և նոքա հասցեն յայս տեղի տանջանաց։

Յիրաւի՛ է թէ՝ որով ոք մեղանչէ, նովիմբ և տանջի․ աղքատն հանդէպ դրան մեծատանն անկեալ, միշտ տեսանէր զնա և ոչ ողորմէր, և ոչ ոք մխիթարէր զնա․ իսկ այժմ ներհակաբար հանգոյն արեգական կացեալ ՚ի վերուստ ճառագայթիւք փառաց իւրոց կիզու զնա․ ըստ այնմ, * Յայնժամ կացցէ արդարն բազմահամարձակութեամբ հանդէպ նեղչաց իւրոց, և որոց անգոսնէին զվաստակս նորա․ տեսեալ զնա խռովեսցին անհնարին երկիւղիւ։ Ուստի որով մեղուցեալ էր՝ նովիմբ և տանջի․ վասն որոյ հնարէ յերեսաց իւրոց ՚ի բաց մերժել առնելով զայն․ կամ ունելով զեզերս՝ թերևս հաղթեր անմտաբար․ վասն որոյ ասէ, Ունին զՄովսէս և զմարգարէս՝ նոցա լուիցեն։ զի սուրբ գիրք բաւական են հաւատացելոց։

Եւ նա ասէ, ո՛չ հա՛յր աբրահամ, բայց եթէ ոք ՚ի մեռելոց յարիցէ՝ նմա լուիցեն։

Որպէս այժմ բազումք են յայս մտաւորական խաբին․ զի եթէ բանից կենդանւոյն յաւիտենից յարութենէն ոչ հաւատան, զիարդ ՚ի մեռելոց յարուցելոյն հաւատասցեն, և ոչ հա-

ժամերացին յնորեալս, այսահարս և մոլեւ-վառն՝ որոյ իրաւամբք առաց:

Եթէ Մովսէսի և մարգարէիցն ո՛չ լսեն, և ո՛չ եթէ ՚ի մե-ռելոց ոք յառնիցէ՝ հաւանեսցին:

Եւ այս յայտ է ՚ի ղազարու, որով փոխանակ հաւատալոյ, զղազարէ խնդրէին սպանանել. Հերովդէս զլուրն յիսուսի լուեալ՝ կարծէր զ յովհաննէս յարուցեալ ՚ի մեռելոց. և մինչ տեսան զնա՝ փոխանակ հաւատալոյ և ապա-շխարելոյ, արհամարհեալ յղեաց առ պիղատոս:

Ծանիր աստ՝ զի երկնային իմաստութիւն յաղ-մարէ զաւակս զայս Ճշմարտաձայն, ընդդէմ որոյ հակառակիլն մեծ յանդգնութիւն է. մա-որոյ ո՛չ իշխեսցի ասել թէ պատմէ զեղելոց իբրև զեղելոց և կամ այլ ազգ. այլ մնաց բա-նին հեզաբար հանդիպելով ասեմ թէ՝ օթե-անք հոգւոց արդարոց՝ զոր և կոյանք կոչեմք, զօրուէ առաւելին տարբերի ՚ի տեղւոյ հոգւոց մեղաւորաց:

## Զ. ԶՕՐՈՒԹԻՒՆ ՅԱՐԱՏԵ-ՒԱՂՕԹԻՑ:

### ԳԼՈՒԽ ԻԶ.

Ասաց առակ մի նոցա առ այն թէ՝ պարտ է յամենայն ժամ կալ յաղօթս և մի՛ ձանձրանալ: ղուկ. ժը. 1:



## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Երեք կերպիւ մեկնի, նախ՝ յամենայն ժամս աղօթից, զոր սահմանեաց եկեղեցին՝ որ է ինն, պարտ է յաղօթս կալ և մի՛ ձանձրանալ: Երկ-րորդ՝ ՚ի մտի ունիլ յամենայն ժամ զաստ-ուած, և միշտ գոհանալ զնմանէ: Երրորդ՝ ՚ի խնդրելն զիր ինչ յաստուծոյ, յարատեւել ՚ի նմին մինչև ցառնուլն. առ այս բերէ զառակն՝ զի մի՛ լքանիցիմք յաղօթս:

Դատաւոր մի էր ՚ի քաղաքի ուրումն. յաստուծոյ ո՛չ երկնչէր, և ՚ի մարդկանէ ո՛չ ամաչէր:

Դատաւորք ժամանակիս բազում մեծի մասին են այսպիսիք. զորս եթէ ո՛չ թախանձիցեն զր-կեալք, ո՛չ երբէք առնեն զդատն. եթէ առ-նեն ևս, առ օգտի իւրեանց:

Խորհրդականապէս՝ քաղաք է մարդն. և մա-նաւանդ իմաստունն. զի որպէս ՚ի քաղաքի զոր ինչ խնդրէ ոք՝ գտանէ, այսպէս ամենայն իր-րաւք, ամենայն սպասաւորութեանց լուծումն և ամենայն քաղաքավարութիւն առ իմաստունս գտանին. վասն այսորիկ ոմն զառաքեալն կոչէ քաղաք. ըստ այնմ՝, Ո՛չ կարէ քաղաք թաք-չիլ, որ ՚ի վերայ լերին կայցէ. այսինքն ՚ի վե-րայ լերին սրտին:* Քաղաքավարութիւն Ճշմա-րիտ՝ ասացի գտանիլ յիմաստունս, զի կայանայ ՚ի սէր աստուծոյ և ընկերին, և ՚ի հպատակել հրամայն աստուծոյ. որով բարձրանայ քաղաք

ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ, որ իմաստնոյ է գործ։ Բայց այժմ այնքան ապականեալ է մարդկայինս բնութիւն, և յանարգութի միտեալ, մինչ զի զկեղծաւորութիւն շողմոգաց և զշողոքորթութիւն մարդելուզաց՝ քաղաքավարութիւնս անուանեն, թէպէտ է քաղաքաւերութիւն։ Իսկ դատաւոր այսր քաղաքի կացուցեալ է միայն՝ զի իրաւունս արասցէ ՚ի մէջ հոգւոյ և մարմնոյ. ուստի մեա կշռոյ է միայն արդարոյ, ոչ պարտի հակիլ այսր կամ անդր. առնլայն միոյ մարդկան, այսինքն մեղաւորաց, հաստատեալ գոլով ՚ի խնամս չարին ՚ի մանկութենէ, բնականաբար ըստ բուսոյ բարուցն առաւել խնամս առնի մարմնոյն՝ քան հոգւոյն. և թէպէտ գիտէ զաստ աստուածային արդարութեան, բայց կապեալ գոլով ՚ի սէր մարմնոյն, ոչ երկնչի յԱստուծոյ, և ոչ ամաչէ ՚ի մարդկանէ. ա՛յլ միայն ըստ խորհրդոկան մեղացն՝ այլ և ըստ ներգործականին. զի այնչափին անամօթացեալ է առ ամենեսեան հանդէպ պոռնկի։ Տես դու աստ զյամառութիւն մտաց մեղաւորին, զի ՚ի մարմնաւոր դատաւորէն, որ միայն ունի իշխանութիւն սպանանել զմարմինն՝ երկնչի. իսկ յԱստուծոյ, որ ընդ մարմնոյ և զհոգին կորուսանէ ՚ի գեհենի՝ ոչ երկնչի։ Երկիւղն է սանձ մտաց, որով խոտորի ՚ի չարէն. * Երկիւղիւ տեառն խորշի ամենայն ոք ՚ի չարէ։ Իսկ ամօթն է առ ազգաստ



որով թագուցանէ զինքն ՚ի մեղաց. եթէ սոքա չիցեն՝ միայն արձակերասան խաղայ յասպարէզ մեղաց. որով հոգին զրկի՝ և մարմինն պարարի. այրին սրտամբ՝ և ոսկերն բեկնի։

Եւ այրի մի էր ՚ի նմին քաղաքի, գայր առ նա և ասէր, դատ արա ինձ յոսոխէ իմմէ։

Այրի աստ նշանակէ զհոգին, որոյ այրութի՛ կրկնակի իմանի. մի՝ զի մինչ միայն յարի ՚ի մարմինն, հոգևոր կապակցութիւնն ընդ փեսային իւրում Յիսուսի՝ լուծանի ՚ի միջոյ. երկրորդ՝ զի միայն է որպէս այր ՚ի մէջ երկուց կանանց՝ այսինքն՝ հոգւոյ և մարմնոյ. ՚ի կատարել զցանկութիւն միոյն՝ միւսն մնայ այրի. * Մարմին ցանկայ հակառակ հոգւոյ(1)։ Այրին գայ առ դատաւորն, երբ հոգին խղճիւն յառաջադրէ և առաջիկէ մտացն զմեղս և զանիրաւութիւնս յիշեցուցանելով. իսկ ՚ի չհաւանիլ նորա՝ առ յիշատակս մտացն յաճախէ զխայթելն, և լալելեայն տանջէ զնա և խածանէ։ Զայսմիկ ոյ ասէ Դաւիթ. * Դարձայ ՚ի թշուառութիւն, զի հարան յիս փուշքւոր է յիշումն մեղաց. և որպէս զհուր առնորէ. ըստ այնըմ. * Հանից ՚ի միջոյ քումմէ զհուր, որ ուտիցէ զքեզ(2)։ Բայց միայն սաստկաբար հեշտութեամբ զգայականին իւր քաղցր քնով ըմբռնեալ ոչ կամի զարթնուլ. վասն որոյ ասէ։

(1) Գաղ. Ե. 17։ (2) Եզեկ. ԻԸ. 7։

Եւ ոչ կամիր 'ի բազում ժամանակս: Բայց քանզի յարդարչէն բնութենէն եդեալ է խիղճն որպէս անաչառ դատաւոր, և անդուլ նշանակիչ, խթանօք մեղացն անհանգիստ առնէ զմարդն ըստ բանին Եսայեայ, * Ամբարիշտք իբրև զծով ծփեսցին, և զհանգիստ ոչ գտցեն (1): Ամենայնիւ մինչ տեսանէ, թէ 'ի տուէ և 'ի գիշերի է 'ի կասկածի ըստ Եսայեայ, և յիշատակ մեղացն զօրհանապազ տանջէ զինքն՝ թէ և ոչ 'ի փառս աստուծոյ կամ՝ զթալոյ 'ի հոգին, գէթ առ զերծանելոյ 'ի խղճէն՝ քաջորոշէ առնել զատ հոգւոյն: Աստուստ բազումք 'ի մեղաւորաց դառնան յապաշխարութիւն. վասն որոյ ասէ,

Յոբ այսօրինակ ասէ 'ի նոյն խորհուրդ; Ընդէ՞ր յարտաքուստ ոչ երևիցին 'ի նորա կեանս ոչ անուշէն, գոնէ ձայն ահաւոր առնելոց ականջաց նորա՝ ... թէ 'ի խաղաղութեան եկեսցէ կործանումն նորա:

Աստուած երևի թէ՝ քանի՜ խաղաղական կեանս վարէ արդարն. զի որոյ միտքն ոչ ամբաստանէ, այսինքն՝ խղճմտանքն ոչ տանջէ, զհամարձակութիւն ունի առ աստուած ըստ յովհաննու (2). և որոյ միտս ունի զայս յոյս՝ է իբր 'ի մէջ խաղաղութեան: Հապա և մեք արասցուք զատ մերոյ զրկելոյն, որքերեալ զախտս մեր 'ի մեռեալ սիրտ խորհրդոյ, 'ի հանգստեան

(1) Եսայ. ԾԷ. 20: (2) Ա. յովհ. Գ. 21:



զխիղճ մտացն, զի գէթ վայելեսցուք զխաղաղութիւն անձնական:

Եւ ասէ տէր, լուարուք զինչ դատաւորն անիրաւութեան ասէր. իսկ աստուած ո՞չ առնիցէ զվրէժխնդրութիւն ծառայից իւրոց՝ որք աղաղակեն:

Զայս առաւել վասն երկուց պատճառաց աղերսանաց՝ զի ստանիցեմք եթէ զոր ինչ խնդրեմք, եթէ ժառելով թախանձիցեմք՝ առնումք. զի նկատեալ խնդիրն և այլեն ժառանգէ ընկալան(1). Երկրորդ՝ զի ծանիցուք թէ՝ ոչ ինչ զրկեալ մնայ անդստ յամենայն արդար դատաւորութեանն աստուծոյ. զի եթէ դատաւորն անիրաւութեան 'ի վախճանի ոչ եթող անդատ, և այն ոչ խղճելով այրւոյն՝ այլ առ հանգստութեան անձին, քանի՜ ևս աստուած, որ արդար է և զարդարութիւն սիրէ. և գթայ առ ամենեսեան, զոր ուրար: Նոյնպէս պարտին քաջալերիլ զրկեալք և աղքատք, գիտելով թէ աստուած դատ առնելոց է ինքեանց՝ թէ՛ առաւ, և թէ՛ անդ. և ոչ իսպառ երկայնամիտ լինելոց. յայտնէ ևս պարտին ուսանիլ աշխարհիս դատաւորքն, առնել իրաւունս զրկելոց. Ամենք ընդ աղօթեսցեն ապաւէն խնդրոյն, բայց ըստ այրւոյն յամենայն ժամ՝ կալ պատրաստ է յաղօթս և ոչ ձանձրանալ. զի թերևս մեռայն Յիսուս հաղորդեսցի ընդ մեզ և ուսուսցէ

(1) Ղուկ. ԺԸ. 8:

զհրաւէրսն իւր մտաց մերոյ առնել դատաստան արդար ընդ ոսոխի մարմնոյ մերոյ։

# ՕՐԻՆԱԿ ԱՂՕԹԻՑ։

## ԳԼՈՒԽ ԻԲ։

Երկու արք ելին ի տաճարն կալ յաղօթս, մին փարիսեցի՝ և միւսն մաքսաւոր։ Ղուկ. ժը. 10։

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Սովորաւոր յայտ է թէ՝ ի հնումն առանձնաբար ևս եղանէին ի տաճարն կալ յաղօթս, որպէս այժմ ազգն տաճկաց ևս առնէ. իսկ մերս և ոչ ի հասարակ ժամու աղօթից երևին յեկեղեցւոջ։ Փարիսեցիք ընկալան զանուն իւրեանց ի փարիսէ՝ որ թարգմանի բաժանումն. զի բաժանէին զանձինս իւրեանց ի մեղաւորաց՝ և յամենայն աղտեղի իրաց, յորոց յառաջ եկեալքն անուանէին յանուն նախնեացըն՝ փարիսեցի. որպէս սերունդն էօմերին՝ անուանի էմիր. բայց որպէս էմիրքն՝ այսպէս և փարիսեցիքն յանուանէ առատ յղանային ըզ-անախառնութի. յորոց մինն ամբարտաւանութեամբ լցեալ՝ մատչի յաղօթս զայսօրինակ։

Փարիսեցին կայր մեկուսի և զայս առանձինն աղօթէր առաստուածոյ՝ թէ գոհանամ զքէն, զի ո՛չ եմ իբրև զայ-



լոց ի մարդկանէ յափշտակողս և զանիրաւս և զշնացողս, կամ իբրև զայս մաքսաւոր. այլ պահեմ երկիցս ի շաբաթու, և տամ տասանորդս։

Հաւաստի է թէ՝ զոր ինչ ասէն, արդարեւ իցէ. բայց զի յաղօթս յիշէ զբարեգործութիւն՝ խելագարութեան է նշան և ամբարտաւանութեան, վասն այսորիկ մեղադրի և պարսաւի։ Սա յաղօթս իւր երեքկին յանցեաւ, մի՝ մեղադրելով զմաքսաւորն. քանզի աղօթողն պարտի զինքն պարտաւոր իմանալ. երկրորդ՝ յիշելով զյառաջ բարեգործութիւն, որ է մեծ ամբարշտութիւն. ուստի ասէ յոբ. *Եթէ ձեռն եդեալ ի վերայ բերանոյ իմոյ՝ համբուրեցի(1)։ Իբրու թէ ասիցէ, եթէ երբէք զգործ ձեռին իմոյ գովեցի. երրորդ՝ հպարտանայր ի միտս իւր զինքենէ՝ որոյ առաջի երկինք ևս չեն անարատ. ուստի զինքենէ խորհիլ մեծամեծս՝ մեծ մեղք է. վասն որոյ ասէ յոբ. *Եթէ գաղտ խաբեցաւ սիրտ իմ. այսինքն՝ հպարտացաւ. և սիրաք խրատէ ասելով. *Մի՛ զքեզ հպարտացուսցես ի խոկման անձին քո իբրև զցուլ մի. գուցէ լափեսցի զօրութիւն քո ի ձեռն յիմարութեան, և զտերևս քո կերիցէ, և զպտուղս քո կորուսցէ, և թողցես իբրև փայտ չորացեալ յանապատի(2)։ Այս ամենայն պատահեցաւ փարիսեցւոյն զի հպարտա-

(1) Յոբ. լա. 27։ (2) Սիր. զ. 2։

Նաւրոմն կորոյս զամենայն բարիս՝ զոր ունէր, և դատապարտեցաւ. քանզի * Տէր ամբարտաւանից հակառակ կայ, տայ շնորհս խոնարհաց (1):

Եւ մաքսաւորն կայր մեկուսի, և ո՛չ կամէր և ոչ զաչսն ընդ երկինս ամբառնալ. այլ կոծէր զկուրծս իւր և ասէր, Աստուած քաւեա՛ զիս զմեղաւորս:

Համբոյական աղօթից կերպարան նկարեալ կայ յաղօթս մաքսաւորիս. վասն զի՝ ճշմարիտ աղօթողն պարտի ճանաչել նախ զմեծութիւն այնմ, առ որ մատչի յաղերս. և այնու՝ զանարժանութիւն իւր, և կալ առաջի նորա դողութեամբ, և զայս արար մաքսաւորն, մինչ ոչ իշխեաց զաչսն յերկինս ամբառնալ. քանզի ծանեաւ թէ ո՛վ է յերկինս. և ո՛վ ինքն, որ կայր առաջի նորա. բազումք ՛ի ժամ աղօթիցն չհանելով զերկիւղ՝ զաչս իւրեանց այսրանդր յածեցուցանեն, և չէ զարմանք՝ զի * Աչք անմտին զվայրք յածին (2): Երկրորդ՝ պարտի ճանաչել զինքն ամ պարտաւոր. ունելով ՛ի մտի կրել զամ պատիժս՝ եթէ տէրն հրամայեսցէ. և զայս արար մաքսաւորն՝ բաղխելով զկուրծըն. որով ցուցանէր զանձն պարտաւոր ամենայնի. քանզի և աղքատք թէ ոչ ցուցանեն զվէրս և զպարտս՝ ոչ ընդունին զողորմութիւն: Երրորդ՝ խնդրել զհարկաւորն: Աստուած՝ քաւեա՛ զիս զմեղաւորս. քանզի մեղքն է հրաճին և

(1) առակ. Գ. 34: (2) առակ. ԺԷ. 24:



արգելք ամենայն բարեաց. եթէ բարձցի ՛ի միջոյ՝ յայնժամ որպէս դիմակալ ՛ի բաց վանել յերեսաց Տեառն՝ վտակք հոգւոյն զեղանին առ մեզ: Բայց աստ գոյ այլ իմն խորհուրդ. զի՛նչ է, զի փարիսեցին ասէ՝ Աստուած իմ, իսկ մաքսաւորն՝ Աստուած. նա հպարտութեամբ կարծելով զինքն արդար՝ զԱստուած իւրն համարէր. իսկ սա ճշմարտապէս գիտելով զինքն մեղաւոր՝ վարկանէր յԱստուծոյ անջատեալ. վասն զի մարդն մինչ մեղանչէ, Աստուած բաժանի ՛ի նմանէ. ըստ Սաւուղայ. * Եւ Տէր մեկնեցաւ ՛ի նմանէ (1). և թէ * Մեղքն ձեր որոշեն ՛ի մէջ իմ և ՛ի մէջ ձեր (2). յայն սակս Դաւիթ ՛ի մեղայական բանս իւր ամենեւին ոչ ասէ՝ Աստուած իմ, այլ՝ Աստուած. * Ողորմեա՛ ինձ Աստուած . . . և զհոգի քո սուրբ մի՛ հաներ յինէն:

Ասեմ ձեզ, էջ սա արդարացեալ ՛ի տուն իւր քան զնա. զի ամենայն, որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեսցի:

Փարիսեցին բարձրացոյց զանձն՝ խոնարհեցաւ. մաքսաւորն խոնարհեցոյց՝ բարձրացաւ: Խոնարհեցուսցուք ուրեմն և մեք զմեզ յաղօթս ընդ հզօր ձեռամբ Աստուծոյ, զի զմեզ բարձրացուսցէ ՛ի ժամանակի:

(1) Ա. Թագ. ԺԶ. 14: (2) Եսայ. ԾԹ. 2:

# ԶԳՐԿԱՑՆՄՏՈՒԹԻՒՆՍ ԸՍ ԱՍՏՈՒԾՈՅ:

## ԳԼՈՒԽ ԻԹ.

Թզենի մի էր ուրուք տնկեալ յայգւոջ իւրում. եւ եկն խնդրել զպտուղ ի նմանէ՝ եւ ո՛չ եգիտ: Ղուկ. ԺԳ. 6:

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Խորհրդածեա՝ այգին նշանակէ զեկեղեցին. ըստ այնմ, * Այգի տեառն զօրութեանց՝ տուն Իսրայէլի է (1): Իսկ բարոյական տունկք են ի նմա իւրաքանչիւր անձինք. ուստի՝ յարէ ի նոյնն մարգարէն. * Եւ մարդն Յուդայ՝ նորատունկ սիրելի: Արդ՝ ի յայգւոջ լինին բազմազան ծառք. այսինքն որթ, նուռն, եւ խնձոր բարեխառնութեան, եւ թզենի սիրոյ. քանզի թզենին ըստ որում ունի զքաղցր պտուղ, նշանակէ զսէրն՝ որ քաղցրագոյն առ ամենեսեան. վասնայսորիկ ի թզենի առակէ, զի ծանիցուք թէ յամենեցունց զսէր պահանջէ, զորմէ կախեալ կան ամենայն օրէնք: Եկեղեցին նմանի դրախտին, զի որպէս անդ ոչ գոյր անպտուղ ծառ. զի եթէ կայր, ոչ ասէր, * Յամենայն ծառոց, որք են ի դրախտի այդր՝ ուտելով

(1) Եսայ. Ե. 7:



կերիցես: Այսպէս եւ ի նորատունկս դրախտ՝ ոչ պարտի գտանիլ ծառ անպտուղ. եւ սակայն ընդ անիծեալ թզենւոյն երեւեցաւ թզենի մի անպտուղ. զի ոչ եգիտ տէրն ի նմա զպտուղ:

Ասէ ցայգեգործն. ահա՛ երեք ամք են՝ յորմէ հետէ գամ խնդրել զպտուղ ի թզենւոջդ, եւ ո՛չ գտանեմ. արդ կտրեա՛ զդա, ընդէ՞ր եւ զերկիրդ խափանէ:

Առաջին՝ զարմանալի է ընդ երկայնմտութիւն Աստուծոյ թէ զիա՛րդ մինչեւ ցծերութիւն բանաւոր անպտուղ ծառոյն երկայնմտէ սպասելով՝ զի թերեւս գայցէ զպտուղ, ըստ այնմ, * Ահա մշակ երկայնամտէ սպասէ պատուական պտղոյն, մինչեւ առցէ զկանուխն եւ զանագանն (1): Առաջին ամն նշանակէ զմանկութիւն. երկրորդն զերիտասարդութիւն. իսկ երրորդն՝ զծերութիւն. զի թէպէտ պտուղն որ յերիտասարդութեան պատուականագոյն է քան ի ծերութեան, որպէս մեղրն ծաղկաց մեղուաց առաւել է քան զմոմն, բայց աստուած ծերութեան պտղովն եւս բաւականանայ, եթէ տայցեն, Երկրորդ՝ զարմանալի է ընդ քաղցր ներողութիւն Աստուծոյ. թէ զիա՛րդ երկայնմտեալ, չածէ ի վերայ անպտղութեան որդւոցս խաւարի զարժանահան պատիժ. քանզի մարդ յորմէհետէ ծանեաւ զինքն՝ ժամ է պտղաբերել, ըստ այնմ, * Չէր ժամանակ յամենայն ժամու պատրաստ է (2). այն զի առ աստուած է

(1) Յակ. Ե. 7: (2) Յովհ. Է. 6:

հաստատել, թէ ամենայն ծառ՝ որ ոչ առնէ պտուղ բարի, հատանի և 'ի հուր արկանի(1). այլ զի* աստուած դատաւոր արդար՝ հզօր և երկայնամիտ, որ ոչ ածէ զբարկութիւն իւր զօրհանապազ(2), զի թերևս ծանիցուք՝ թէ քաղցրութիւն և երկայնմտութիւն աստուծոյ զմեզ յապաշխարութիւն յորդորէ. այլ թէ անզեղջ սրտիւ խստացեալ ոչ դարձցուք առ նա, զսուր իւր սրեալ է, որով հրամայէ, կրակեալ զնա, և թէ տապար առ արմին ծառոյ դնի: Երրորդ՝ զարմանալի է յաւէտ ընդ գեղեցիկ կարգ աստուածային խրատանացս, թէ զիարդ ինքն ոչ հատանէ՝ այլ հրամայէ մշակին հատանել. և այս՝ վասն երկու պատճառի. նախ՝ զի ոչ կամի զհատանելն, վասնայսորիկ հրամայէ. զի այս բարք է աստուծոյ. զոր ոչ կամի պատժել՝ ծանուցանէ. այսպէս զմահն եզեկիայի ծանոյց՝ զի աղաղակեսցէ(3). զկործանումն նինուէացւոց՝ զի ապաշխարեսցեն(4). զմովսէս ասէր, *Թոյլ տուր՝ զի ջնջեցից զդասս, և զքեզ արարից յազգ մեծ. զի բարեխօսեսցէ(5): և աստ ասէ մշակին՝ զի աղերսեսցէ. իսկ 'ի սոդոմ, քանզի կործանելոց էր՝ ոչ առաքեաց զքարոզիչ որպէս 'ի Նինուէ: Չորրորդ՝ կարգ աւետերաց պահանջէ՝ զի իւ_

(1) Ղուկ. Գ. 9: (2) Սաղմ. Է. 13: (3) Եսայ. ԼԸ. 1:
(4) Յովնան. Ա. 2: Գ. 2: (5) Բ Օրին. Թ. 24:



րաքանչիւր ոք իւր գործ գործեսցէ: Եʼրդ հատանելն՝ մշակին վայելէ. վասն այսորիկ նմա հրամայէ հատանել: Զայսմ կարգէ սպառնի ուսանիլ թագաւորք և հայրապետք՝ զպատիժ անզղջալին թողուլ իշխանութեան նոցա, որոց միանգամ յանձնեցին զթեմ. կամ թէ հարկէ պահանջէ՝ ձեռամբ նոցին պատժել:

[illegible]

Տէր՝ հատանող մշակին է նախ՝ հրեշտակն, որ մահուամբ հատանէ զանպտուղ ծառն 'ի կենաց. երկրորդ՝ հայրապետք, առաջնորդք և վարդապետք. *Եթէ ուրուք թողուցուք՝ թողեալ լիցի. և եթէ զուրուք ունիցիք՝ կալեալ լիցի(1). և կամ թէ *եթէ եկեղեցւոյն ոչ լուիցէ, եղիցի քեզ իբրև զհեթանոս(2): Այս զատաստան հայր ետ որդւոյն, և նա՝ մեզ. զի ամենեքեան պատուեսցեն զորդի՝ և զմեզ: Հրամայէ կտրել նախ՝ զի անպտուղ զուգ՝ է անդիտան և 'ի հուր պիտանացու. երկրորդ՝ զի զերկիրն խափանէ. մինչ է մարդն երիտասարդ՝ թէ և իցէ անպտուղ ոչ այնքան խափանէ զերկիր, կամ լինի պատճառ գայթակղութեան. զի առանողքն զանոյ առնեն ասելով, զի եւ ես մանուկ է և երիտասարդ. բայց մինչ լինի ծածերութեամբ, յայնժամ մեծապէս խափանող է երկրին, այսինքն՝ եկեղեցւոյն լինի մեծ գայ_

(1) Մատ. ԺԸ. 18: (2) Յոհ. Ի. 23:

թակչութիւն. քանզի կեանք ծերոց է հայելի մանկանց. վասն որոյ եթէ իցէ ծեր ոք ապականեալ վարուք, քան ժանտախտ և քան զհին խմոր առաւել ապականէ զեկեղեցին։ Ո՜հ թէ որպիսի ծանր է պատիժ այնպիսւոյն. Լաւ էր նմա, եթէ զերկան իշոյ կախեալ զպարանոցէն անկանէր ՚ի ծով. քան գայթակղեցուցանել զմի ՚ի փոքրկանցս յայսցանէ։ Ապա սրբելի է խրատամբք ՚ի բաց զայնպիսին։

Նա պատասխանի ետ և ասէ, Տէ՛ր թո՛ղ զդա յայս ամ ևս, մինչև շուրջ զդովաւ բրեցից և արկից զաղբ. թերևս արասցէ պտուղ. ապա թէ ոչ՝ յամին ևս, հատցես զդա։

Որպէս իմն է այգեգործին աշխատութիւն հաստուցանել զծառ՝ և ոչ վայելել զպտուղ նորա. այն զի երկայնմտութիւն ապաւէ սորոյն. ապա քանի՛ ևս ծանրագոյն իցէ պահապան հրեշտակին չվայելել զբեր ինչ բարի յոգիմանէ, յորում ՚ի ծնէ ցծերութիւն աշխատեցաւ. վասն որոյ յաղերս մտաց. ժամանակ անուս արուեստի երկրագործութեան, համա զէ զմիտս տեառն՝ առելով. բրեցից զդովաւ։ Այլ մանկունք մանաւանդ ՚ի մէջս ծերացելոց և աւուրբք չարութեան հնացելոց ընդարմանայ և դադարի ՚ի հարկանելոյ։ Հրեշտակն պահապան շարժելով զերեւակայութիւն տեսակաւ մեղացն՝ զարթուցանել յանձն առնու զխղճմտանսն, և արկանել զաղբ այսինքն՝ զխրատակ մեղացն, որ թէպէտ ՚ի կամս երիտասարդաց է



որպէս մեղր. *Մեղր կաթէ ՚ի շրթանց պոռնկի, բայց ՚ի քիմս ծերոց դառնագոյն է քան զլեղի(1). երկուքն ևս են զօրեղ շարժառիթք. քանզի յիշատակաւ մեղացն ապաշաւել խղճմտանքն զանդամանդեայ մտան նուաճէ և զխստութիւն սառուցեալ յամառ կամացն լուծանէ ՚ի զղջումն արտասուաց։ Ահա այսքան է փոյթ և հոգ զերկուց թենէ մերմէ՝ ամեներախտ դաստիարակացն մերոց պահապան հրեշտակաց։ Դարձեալ այգեգործքն են քարոզիչք բանին Աստուածութեան, որ յայգւոջ եկեղեցւոյ, զարքայութէ՝ զդժոխոց և զմահուանէ խօսելով զարթուցանեն զխղճմտանս անպտուղ ծառոյ. և այնու իբր բրեն զարմա նորա, իսկ զգարշութենէ մեղացն և զապաշխարութենէ խօսելով, իբրու արկանեն զաղբ զնովաւ. որով մինչեւ զարթուցեալ զարթնու ՚ի պտղաբերութիւն. մինչ մշակն ասաց, Թո՛ղ յայս ամ ևս, թարց ընդ դիմութեան լսելով աղերսանացն, եթող տէրն. քանզի ոչ կամի զմահ մեղաւորի՝ այլ զդառնալ նորա ՚ի չար ճանապարհէն, և զկեալն։

Առակ. Ե. 3. 4։

# ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ:

## ԳԼՈՒԽ Ա.:

Այր ոմն ազնուական գնաց յաշխարհ հեռի՝ առնուլ իւր թագաւորութիւն և դառնալ: Ղուկ. ԺԹ. 12:

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Խորհրդածեա՝ յայսմիկ առակի խօսս զինքենէ տէրն մեր յիսուս քրիստոս. անուանէ զինքն այր վասն Աստուածային մարդեղութեանն՝ և ազնուականութէ ըստ ծնութեանն, որ ըստ էինքեան է ազնուագոյն ՚ի մէջ էից. և այս այնքան, մինչև է այն անուն նմա միայն յատկանալ. ըստ այնմ. * Ես եմ որ էն(1) : և թէ ըստ մարդկութեանն, զի յղացաւ ՚ի հոգւոյն սրբոյ յանարատ կուսէն. ուստի սա է աղամնն ընծայէ, * Ազնուագոյն էր(առ. առաջինն) և ելի ՚ի մարմին անարատ(2). (առ. երկրորդն:) Այնքան է ազնուութիւն քրիստոսի, մինչև անճառելի է մեզ: * Զազգատոհմն նորա ո՞ պատմեսցէ(3): Յոլով առաւել ազնուական քան զամենայն արարածս վասն մեծութե., իմաստութեան և արդարութե.(4). այլ զինչ առնելի է

(1) Ելք. Գ. 14: (2) Իմաստ. Ը. 19: (3) Եսայ. ԾԳ. 8:
(4) Յովհ. Ա. 3:



զքրիստոսէ. վասն որոյ առէ սկիզբն. * Մեծ ազնուութիւն իմաստութե. իւրոյ վայելչացոյց, որ է նախ քան զյաւիտեանս(1) : Մերոյն ազնուութի ոչ ծանեաւ ազգ մարդկան. * Զի եթէ էր ծանուցեալ, ոչ արդեօք զտէրն փառաց ՚ի խաչ հանէին(2): Նաև քանզի թագաւորութի իւր ոչ էր յայսմ աշխարհէ, այլուր՝ զի յառաջին գալստեանն, * Ոչ էր եկեալ պաշտօն առնուլ՝ այլ պաշտել. և տալ զանձն փրկանս փոխանակ բազմաց(3). և զի՝ զայս պաշտօն մադիւր կատարեաց, վասն որոյ իրաւամբք թագաւորեցոյց զնա հայր իւր ՚ի վերայ ամենեցուն. վասն որոյ առէ առաքեալն. * Հնազանդ եղև մահու չափ՝ և մահու խաչի. վասն որոյ և աստուած զնա առաւել բարձրացոյց: Զի յանուն յի. քի ծունր կրկնեսցի երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց(4): Զի թէպէտ ՚ի սկզբանէ ունէր զայս իշխանութիւն, բայց շնորհօք չարչարանացն առաւել արդիւնաւորեցաւ. վասն որոյ ասաց ՚ի յարութեան. * Տուաւ ինձ ամենայն իշխանութի յերկինս և յերկրի(5): Զի եթէ ոչինչ բարեգործութիւն մնայ առանց պատկերոյ, քանի ևս չարչարանքն քրիստոսի: Արդ՝ երկիցս ընկալաւ որդի ՚ի հօրէ զայս իշխանութիւն. նախ՝ ՚ի յարու-

(1) Առակ. Ը. 21: (2) Ա. Կորն. Բ. 8: (3) Մատթ. Ի. 28:
(4) Փիլիպ. Բ. 8. 9. 10. 11. (5) Մատթ. ԻԸ. 18:

թեան, որպէս ասացաք· ուրոյն ծածկաբար վա-
րէ զթագաւորութի իւր յաշխարհի· ըստ առ-
հանաց ջուրց զմիրս թագաւորաց և հայրապե-
տաց ըստ կամաց իւրոց դարձուցանելով· յայս
միա ասէ· Ահա ես ընդ ձեզ եմ մինչև ցկատա-
րած աշխարհի: Երկրորդ՝ ՚ի միւսանգամ գա-
լստեանն յայտնապէս, և որքան առ այս՝ ասէ·
Գնաց յաշխարհ հեռի՝ առնուլ իւր թագաւորութիւն դառ-
նալ: այսինքն՝ համբարձմամբն եմուտ ՚ի ներքին
կողմն վարագուրին, որ է անցեալ ընդ հաստա-
տութիւն՝ զոր կոչէ վարագոյր, եմուտ ՚ի բուն
իւր յերկինս և նստաւ ընդ աջմէ հօր, որ կոչի
աշխարհ հեռի, մի՛ վասն առաւել հեռաւորու-
թեանն· զի եթէ յերկրէս մինչև ցաստղալից
երկինքն՝ են 107,958 միլիոն·ապա քանի՛ ևս ան-
ափ յաթոռ աստուածութեանն, որ անթուե-
լի է: Երկրորդ՝ վասն յամեցման գալստեանն իւ-
րոյ կոչէ աշխարհ հեռի· այլ ինքն ՚ի կէտն ե-
հաս ՚ի համբառնալն:

Եւ կոչեաց զծառայս իւր ետ նոցա տասն մնաս՝ և ասէ
ցնոսա վաճառեցէ՛ք զայդ, մինչև եկից:

Տասն մնասիւ նշանակին տասնաբանեալ օրէն-
քըն, յորս պարունակին գրեթէ ամենայն օրէնք
և մարգարէք· զայս աւանդէ ծառայից իւրոց
յարգել՝ առնելով և պահելով: Դարձեալ
տասն թիւն, ըստ որում է ընդհանրական՝ որ-
պէս յայտ է, նշանակէ զաւետարանն՝ որ ընդ-
հանրապէս պարունակէ զամենայն կատարելու-



թիւն: Այս է գանձն և մնասն քրիստոսի, որ
՚ի համբառնալն իւրում եթող յեկեղեցի իւր,
զի արդիւնաւորեսցեն մինչև ցմիւսանգամ գա-
լուստն իւր· զոր ՚ի մատթէոսի՝ անուամբ քան-
քարաց բաժանէ ըստ իւրաքանչիւր առանձա-
նի, ումեմն ե, ումեմն բ, և ումեմն ա(1): Քան-
զի երեք են առանձինք մարդկային մտաց· այս-
ինքն սուր, միջակ և գուլ· ըստ զօրութ ծնն-
դականին տրամադրութեան·վասնայսորիկ յե-
րիս բաժանէ զքանքարս շնորհացն, ըստ իւրա-
քանչիւր արժանեաց·զի և բանաւոր երկրի ար-
դիւնքն յերիս բաժանին· յերեսնաւոր, ՚ի վաթ-
սնաւոր և ՚ի հարիւրաւոր: Իսկ հինգ քանքարն
պատկանի եպիսկոպոսաց· երկուքն՝ քահանայից,
և մին՝ աշխարհականաց: Նաև ըստ այսմ զանա-
զանութիւն է ՚ի մէջ վարդապետաց, դարձեալ՝
որպէս բաժանեաց զքանքարն ըստ արժանեացն,
այսպէս և զմնասն· բայց գիտելի է, զի իւրա-
քանչիւր ոք պարտական է շահել զտասն մը-
նասն· բայց ըստ իւրաքանչիւր կարի· վասնորոյ
ոմանք զտասն շահեցան, ոմանք զհինգ:

Եւ քաղաքացիքն նորա ատէին զնա· առաքեցին հրեշտակս
զհետ նորա և ասեն՝ ոչ կամիմք թագաւորել դմա ՚ի վե-
րայ մեր:

Ատեցին զնա՝ բայց ՚ի տարապարտուց· առա-
նախանձու մատնելով· *Յիւրսն եկն, և իւր-

(1) Մատ. իե. 15:

քըն զնա ոչ ընկալան(1): Յայնժամ ոչ կամեցան զթագաւորութիւն նորա, երբ ուրացան առաջի պիղատոսի, թէ *Ոչ ունիմք մեր թագաւոր բաց 'ի կայսերէ(2). և թէ՝ *Մի գրեր թէ՝ Թագաւոր է Հրէից(3). և զինի համբարձմանն պատժելով զաշակերտսն և պատուիրելով՝ յանուանն յայն ոչ ուսուցանել(4). յայս կէտ հասոյց զնոսա ատելութի, զի թէպէտ ծանեան զյայտնութիւն, բայց նախանձն ոչ եթող հաւատալ:

Սա եղև պատճառ նոցա ամենայն չարափառութեանն, և կորուսեալ զծառայութիւն, որով պատուեալ էր յորդոցն, զի փրկութեան Բէ՝ ո՛ չինչ լանճեցաւ:

Այս լինի 'ի միւսանգամ գալստեան. յորժամ տայցի 'ի ձեռս նորա թագաւորութիւն աստուծոյ հօր, *Յայնժամ տեսցեն զորդի մարդոյ նստեալ ընդաջմէ զօրութեան աստուծոյ, և եկեալ ընդ ամպս երկնից զօրութեամբ մեծաւ և փառօք բազմօք(5): Որ և նստեալ յաթոռ փառաց իւրոց քննեսցէ զծառայսն:

Զինչ ասացին և ուսուցեր՝ նշանն ևս արար փառն նոցա:

Երկին մտօք մեկնի, նախ՝ համարակաբար. իբրու թէ տասն մնասն համարակաբար բաշխեալ լիցի առ ամենեսեան, որով նշանակի առաքելոց նոցա օրէնքն և աւետարանականն. որ առ ա_

(1) Յովհ. Ա. 11: (2) Յհ. ԺԹ. 15: (3) Յհ. ԺԹ. 21:
(4) Գործ. Դ. 18. 21 (5) Մարկ. ԺԴ. 26:



մենեսեան բաշխեալ լինի. վասն որոյ անորոշ դնէ տասն զմնասն: Զայս մնս առեալ են ոմանք, որք հասին 'ի կատարելութիւն աւետարանին. և այս գերադրականութեամբ. սիրելով զթշնամինս, բարի առնելով ատելեաց. և սոքա են՝ որք զտասն մնասն շահեցան: Դու են ոմանք, որ միայն 'ի սահմանաբանեալ օրէնսն հասին և ոչ կարացին ժամանել 'ի կատարելութիւն աւետարանական խրատուցն. և սոքա սահմանաբաշխական արդարութեամբ կենդանացուցանելով իւրաքանչիւր ումեք. թէ աստուծոյ թէ ընկերին, թէ ինքենց զիւրն բաշխեալ՝ զհինգ մնաս շահեցան: Իսկ են ոմանք՝ որ յերկուցն և վերջացեալ՝ ամենևին ոչ 'ի գործ ածին զմնասն աստուածային պատուիրանաց: Երկրորդ՝ յատկաբար ըստ իւրաքանչիւր կարի առեալ, որպէս քանքարն, այսպէս և մնասն. յայս մնս առեալ՝ նշանակէ զհոգւոյն շնորհս, որ ըստ երից աստիճանաց մարդկան բաշխեալ լինի ըստ չափու ընդունակութեան նոցա. քանզի թէ 'ի մէջ աշխարհականաց, և թէ 'ի մէջ վարդապետաց են եռակի զանազանութիւնք. թէ ըստ մարմնականին. և այսպէս ոմանք առաւել հարուստ են, ոմանք միջակ, և ոմանք նուազ. և թէ ըստ հոգեկանին. Առաւել լինի գիտութիւն, որ նմանապէս յերիս աստիճանս է բաժանեալ: Երրորդ՝ ըստ որում ոմանք հնգից արժանաւորին, ոմանք երկուց և ոմանք միոյ, ըստ

այնմ, որ ասան մնաս շահեցաւ, հինգ առեալ էր, շահն կրկնապատիկ եղև, զի որ 'ի գործածէ զմնասն գիտութեան, մի՛ ինքն շահի, և միւս՝ ընկերն. քանզի որպէս կայծն միջով արծարծանի, այսպէս և գիտութիւն ուսուցանելով: Նա դարձեալ մի՛ վասն աշխատանացն առնու զվարձս. և միւս՝ վասն ուսուցանելոյն. վասն այսորիկ ասէ՝ * Երիցունք կրկին պատուոյ արժանի եղիցին, մանաւանդ՝ որ աշխատիցին բանիւ և վարդապետութեամբ (1): Այսպէս որք սիրեն զինչս, մի՛ արդարութե պայծառանան. և միւս՝ միաւօք միայնին: * Սփռեաց և ետ աղքատաց. արդարութիւն նորա մնայ յաւիտեանս յաւիտենից և եղջիւր նորա բարձր եղիցի փառօք (2):

Նա ասէ ցնա, ա՛ռնիր ծառայ բարի և հաւատարիմ, զի 'ի փոքու հաւատարիմ եղեր, լինիջիր իշխանութիւն ունել 'ի վերայ տասն քաղաքաց:

Սովոր են՝ և որ 'ի մեզ են իշխանք, զ'ի փոքուն հաւատարիմն 'ի վերայ բազմաց կացուցանել. որ գործէ զառաքինութիւն, լինի ազնիւ և բարի. զի մեղքն գռեհիկ առնէ զմարդն. և որ մեղանչէ՝ 'ի չարէն է. այս անուանք պատկանի աստուծոյ. բայց որք հաւատարիմ են բանին աստուծոյ՝ յափշտակեն յինքեանս: Ով որքան մեծ է անուամբ ազնուի և բարւոյ զրուատիլ

(1) Տիմոթ. Ե. 27: (2) Սաղմ. ՃԺԱ. 9:



բերանովն աստուծոյ. ո՛ն եկայք և մեք շահեսցուք զմնասն: Ու վասն այսորիկ գուն գործեց լինիլ ազնուական, զի ազնուականի իմն ցանկացեալ էր. այսինքն՝ երկնաւոր քաղաքին. վասն այսորիկ զբաղձալին տայ ասելով. Լինիջիր իշխանութիւն ունել 'ի վերայ տասն քաղաքաց: Տասն ըստ որում է կատարեալ թիւ՝ նշանակէ զերկնային քաղաքն, զորոյ զիշխանութիւնն տայ առաքինեաց, և կամ այսու ցուցանէ զմեծութի վարձուցն հաւատարմաց: Նմանք մեծաւորք, որք կարի փոյթ են 'ի պատժել զդաւաճանսն. բայց ոչ՛ր յամրագոյն 'ի պատկել զհաւատարիմսն. ուսցին ուրեմն լինիլ 'ի պատժելն յամըր՝ և 'ի վարձատրելն արագ:

Եկն երկրորդն և ասէ, Տէր մնասն քո արար հինգ մնաս:

Սա զհարկաւորսն գործեաց զօրինաց ըստ իւրում բաւականութեան. ոչ գոլով այնքան վսեմամիտ, հասանիլ առ կատարելութիւն աւետարանական. այլ միայն առաքինացաւ ըզհինգ զգայութիւնսն զսպել յանպատշաճից. վասն որոյ և սա նովին գովեստիւ զրուատեալ պատուի ըստ արժանեացն կացուցանելով 'ի վերայ հինգ քաղաքաց՝ ըստ չափու շահեցողութեանն: Ով թէ որքան մեծ է վարձն և փառք, զոր տայ աստուած առաքինեաց, որք դոյզն ինչ աշխատեցան. ըստ այնմ, * Զի ոչ են արժանի չարչարանք ժամանակիս հանդերձելոյ փառացն՝ որք յայտնելոց են 'ի մեզ: Ահա-

զօրօքն իմանին աստիճանք փառաց երկնային քաղաքին. ուստի ցքանքարաշահն ասաց. Մուտ յուրախութիւն Տեառն քո. այսինքն՝ յերկինս : Ո՛չ ապա ցուցանի թէ՝ է զանազանութիւն փառաց սրբոցն. քանզի ոմանց տուեալ լինի տասըն աստիճան փառաց. ոմանց՝ հինգ : * Աստղ քան զաստղ առաւել է փառօք :

Եկն և միւսն՝ և ասէ, տէ՛ր ահա՛ մնասն քո, զոր ունէի ծրարեալ 'ի վարշամակի, երկնչէի 'ի քէն, զի այր մի խստա- [illegible] ես. Բառնաս՝ զոր ո՛չ եդեր. և հնձես՝ զոր ո՛չ սերմանեցեր :

Աստուած զերկու աչս ետ մարդոյ. յայտ արարեալ թէ պարտի մի մարդոյն զերկու կողմանս խոկալով տեսանել, զաստիս և զհանդերձեալսն. զհոգի և զմարմին. և որպէս թէ զերկու կողմն գրոյն ընթեռնուլ զներքին և զարտաքին. և զատել ըստ իւրաքանչիւր արժանեաց զպիտոյսն : Այլ են ոմանք, որոց աչացն ըստ դժոխայինն պատկան ըղձի կուրացեալ է, և միայն զձախն ունին բաց, տեսանել զաստիս և զմարմին. իսկ զհոգին և ըզհանդերձեալսն անգիտանալով. երանի թէ՝ զաջոյ ակն ունէին բաց, որոյ ճառագայթ իրոյ ցոլացել ջերմեռանդութեանն զսիրտ փեսային քրիստոսի. վասն որոյ ասէ, * Սրտայուցեր ըզմեզ միով ակամբ քով. բայց քանքարաթաղոյցն միայն ունէր զձախ ակն բաց, զի ոչ դիտեաց զերկու ծայրսն առաքինութեան,



յորոց կասեալ 'ի մէջն կայանայր. առաքինութիւնըն ունի զերկուս ծայրս յորս ապականի, երկչոտութիւն և յանդգնութիւն. եթէ 'ի գործ արկանէր զարծաթն, ոչ էր յանդգնութիւն. յայն սակս ասեալ էր, և ո՛չ պակաս էր երկնչիլ, զի ունէր զտէր արիագոյն. վասն որոյ ասէր,

Պա՛րտ էր քեզ արկանել զարծաթն իմ 'ի սեղանաւորս. և ես եկեալ տոկոսեաւ պահանջէի զիմն :

Այլ սա միայն մտածելով զկորուստ արծաթոյն՝ երկեաւ 'ի տեառնէն, և ո՛չ կարաց զմիւս կողմն ևս մտածել, թէ տէրն իմ դալով բացարձակ թագաւոր, եկեալ տոկոսեօք պահանջէ զիւրն յառողջայ. վասն որոյ յիմարաբար կարծելով թէ զինքն մեղադրէ, 'ի յանդիմանութիւն և 'ի բարուրանս տեառն իւրոյ ասէ,

Գիտէի՝ զի այր մի խիստ ես :

Խորհրդապէս՝ նշանակին ծոյլ վարդապետաքն, որք թագուցանեն զքանքար գիտութե 'ի վարշամակի ծուլութեան, ո՛չ արկանելով 'ի սեղանաւորս, ուսուցանելով, և քարոզելով : և այսպէս ունելով զփականս արքայութե, այսինքն՝ զգիտութիւն, ինքեանք ո՛չ մտանեն քան գիտութեանն գործելով, և որք պատրաստ են մտանել՝ արգելուն ո՛չ ուսուցանելով : Որքա զոմանս մեղադրեն յաշակերտաց ըմբամիտս համարելով, և զոմանս 'ի ժողովը-

դոց թերահաւատս և հակառակողս փարկանելով. և այսպէս ոչ ուսուցանեն, և ոչ քարոզեն, բայց խաբեն. զի թէպէտ և այնպէս իցեն, ոչ պարտիմք կասիլ 'ի յուսուցանելոյ. որպէս և ոչ Եսայի կասեցաւ. ըստ այնմ, * Զօր ամենայն ձգեցի զձեռս իմ առ ժողովուրդ անհաւան և հակառակող (1): Յիրաւի Տէրն մեր ոչ արար յոլովս տեղիս զօրութիւն վասն թերահաւատութեան նոցա զոր գիտէր. իսկ մեք՝ քանզի ոչ գիտեմք հաւատացեալս. և թէ գիտէաք ևս, այնպիսին զի յայս պաշտօն կոչեցեալ եմք, պարտ է մեզ քարոզել. ոչ միայն հաւատացելոց՝ այլև անհաւատից. * Վասն զի յունաց և բարբարոսաց իմաստնոց և անմտից պարտապան եմ, այնչափ՝ որչափ իմովսանովն (2). այսինքն ըստ զօրութեան իմոյ քարոզել. եթէ զայս առնեմք և նոքա ոչ դառնան, զանձն մեր ազատեցուցանեմք ըստ Եզեկիելի: Բայց վայ է մեզ, եթէ ոչ աւետարանեմք, քանզի հարկ 'ի վերայ կայ. վասն որոյ ոչինչ մնա կարէ զմեզ արդարացուցանել. եթէ ծուլացուք 'ի պաշտօնէ մերմէ. ուստի ասէ:

Այս ասէ ցնա, 'ի Եբրայեցւոց [illegible] ծառայ անհաւատ. [illegible]:

Անհաւատ կոչէ, զի ոչ հաւատայ յամենակարող զօրութիւն նորա, թէ կարող է ձգել ի-

(1) Եսայ. ԿԵ. 2: (2) Հռովմ. Ա. 14:



պահանջել զիւրն յամենայն յառողաց. և հակառակորդաբար կոչէր զնա խիստ և ստամբակ, որ է խստասիրտ և դառնաբարոյ. [illegible] զոր ոչ եդեր. [illegible]. և այսու անձամբ զանձըն դատապարտէր. զի ոչ մտածէր եթէ առ իւրան խիստ է, քանի՛ ևս առ այլսն. վասն որոյ ասէ՝ 'ի Եբրայեցւոց [illegible] ծառայ՛ անհաւատ: զի եթէ հաւատայր, թէ խստամբակ եմ, ընդէ՞ր ոչ հաւատայր, թէ այնու խստամբակութեն զվաստակս իմոյ միասին՝ պատուհասակից արարեալ՝ տոկոսեօք պահանջել կարող եմ, Զայս յանդիմանութիւն և առ ծոյլ վարդապետսն է պահել. նա և առ այնս՝ որք զաղքատ ոմանս աշխատաւոր համարելով, ոչ բաշխեն ըզմիասն ողորմութե, ասելով արբեցող է, անառակ է, հպարտ է, ևն: Վասնզի բանքարն հաւասարապէս շահի՝ մինչ պարզապէս բաշխել լինի. թէ արդիւնաւորեսցի առողն և թէ ոչ. զի թէ չիցեն արժանի առողքն, անդրէն առ մեզ դառնայ վարձն. ըստ այնմ, յայս միտ ասի. * Ողջոյն ձեր առ ձեզ դարձցի (1), և թէ աղօթք իմ 'ի ծոց իմ դարձցին:

Այս ասէ [illegible], 'ի [illegible], որ [illegible]:

Զայսմանէ խնամք՝ թէ բարի շնորհքն զի մի՛ կորիցէ, տուեալ լինի այլոց. և այս վասն

(1) Ղուկ. Ժ. 6:

այսորիկ՝ զի ընդունակ է շնորհաց և շահեցող․ իսկ միւսն անընդունակ, և իբրև թէ չունող․ վասն այսորիկ ասէ ,

Որ ունիցի՝ տացի․ և որ ո՛չն ունիցի և զոր ունիցին՝ բարձցի 'ի նմանէ ։

Յամենայն առաքինեաց փառքն քանքարաշահից, իսկ ծուլիցն բնաւին հատանի, ծոյլն ունի՝ և ո՛չ ունի․ ունի՝ զի զկարողութիւնն աստուծոյ ո՛չ եթող զնա առանց հանճարոյ շնորհաց․ իսկ ո՛չ ունի, զի ո՛չ 'ի գործ ածէ՝ զոր ունի ։ Այսպէս ծոյլ վարդապետք, զորոց ասէ․ *Լաւագոյն է մարդոյ թագուցանել ըզչարութիւն իւր՝ քան զիմաստութի(1)։ Քանզի զինչ օգուտ գիտութիւն ծածկեալ․ որպէս առասութի խորոխկաց շուրջ զգերեզմանաւ ։ Արդ՝ իմաստագոյն գոլով այսպիսի՝ իբրու ո՛չ ունի․ վասն որոյ զոր ունի՝ արդարադատն բառնայ 'ի նմանէ՝ պատժելով զնա․ զորօրինակ եթէ ոք քրէականապէս իցէ մեղուցեալ՝ մատնի 'ի մահապս, և զոր ունի՝ զրաւեն յարքունուստ․ և 'ի վայելս արքայականաց տան․ այսպէս 'ի դատապարտելոցն բարձեալ լինի ինչք որպէս յանհաւատից՝ օժիտն բնական․ 'ի քրիստոնէից՝ շընորհք աւազանին․ և 'ի վարդապետաց՝ պարգևքն գիտութեան, որք և բաշխին յարքունականն․ այսինքն 'ի հաւատարիմ ծառայսն քո,

(1) Սիրաք․ Ի․ 33։



զի յաւելցին վասն նոցա ։ Արդ՝ եթէ զառեալ Տեառն անձառն տաղանդ առակութին դատապարտի այնու՝ զի ո՛չ շահեցաւ, ապա զի՛նչ, եթէ և զգլուխն իցէ կորուսեալ ։ Արդ՝ ըզգլուխն կորուսանեն վարդապետք, որք բաց 'ի շահեցուցանելոյն ուսուցմամբ, ընդդէմ գիտութեան իւրեանց և մեղանչեն․ այսինքն գիտելով զբարին՝ և ո՛չ առնելով ։ *Որ գիտէ ըզբարին և ո՛չ առնէ՝ մեղք են նմա ։

Բայց զԹշնամիսն իմ զայնոսիկ, որք ո՛չն կամէին թագաւորել ինձ 'ի վերայ նոցա, ածէ՛ք այսր և սպանէ՛ք առաջի իմ ։

Թշնամիք նորա են նախ՝ հրէայք քաղաքացիքն իւր, երկրորդ՝ մահմետականք, որք ո՛չ հաւատան յաստուածային թագաւորութի նորա․ երրորդ՝ չար քրիստոնեայք, որք ասեն ամբարշտաբար, *Ի բաց կաց 'ի մէնջ, զճանապարհըս քո ճանաչել ո՛չ կամիմք (1)։ Սոքա առ հասարակ սպանին 'ի դժոխս, և մնալով կենդանի․ ըստ այնմ, *Մահ հովուեսցէ զնոսա(2)։ Մահ առաջին հովուեսցէ առ երկրորդն ։

ԱՒԱՐՏ ։

(1) Յոբ․ ԻԱ․ 14։ (2) Սաղմ․ ԽԸ․ 14։

# ՑԱՆԿ ԳԼԽՈՑ ՄԱՏԵՆԻՍ

երկու


Գլուխ

Ա. Յաղագս տեսակաւորեալ հա_ւատոյ. 1:

Բ. Յաղագս հաշտութեան. 7:

Գ. Յաղագս թէ որքան չար է խըռ_տասրութիւն. 16:

Դ. Առակ սերմանացանին. 20:

Ե. Յաղագս սկզբան և կատարա_ծի մարդոյն. 28:

Զ. Յաղագս գործունէութե խոկ_ման արքայութեան. 37:

Է. Յաղագս աճողական զօրուէ_ աւետարանին. 41:

Ը. Յաղագս մեծութե արքայու_թեան երկնից. 45:

Թ. Յաղագս գեղեցկութե արքա_յութե երկնից. 50:

Ժ. Յաղագս ամենապըրա զօրու_թեան արքայութե երկնից. 55:

ԺԱ. Թէ որքան հարկաւոր է թո_ղուլ զյանցանս եղբօր. 58:

ԺԲ. Առաւել արժ է րոպէական գործն սիրոյ՝ քան տարեկան առանց սիրոյ. 67:

ԺԳ. Թէ Աստուած յամենայն հա_սակաց խնդրէ զպտուղ. 77:





ԺԴ. Թէ անհաւատարիմ կորու_սանէ զայն զոր ունի. 79:

ԺԵ. Թէ որքան չար է յամառիլ ՚ի կոչ երկնային հարսա. 84:

ԺԶ. Վասն միւսանգամ գալստեան Տեառն. 90:

ԺԷ. Զգալստենէն Քրիս. 93:

ԺԸ. Ըզձա մարդկային անկման և կանգնումն նորին. 105:

ԺԹ. Թէ յարատև աղօթքն առնու_ զոր խնդրէ. 116:

Ի. Վասն ագահաց. 123:

ԻԱ. Նախամտածելի է սկզբնագոր_ծոյ. 129:

ԻԲ. Յաղագս մարտակից թագաւո_րաց. 130:

ԻԳ. Յաղագս ոչխարին և դրա. 133:

ԻԴ. Յաղագս անառակ որդւ. 138:

ԻԵ. Յաղագս մեծատան և Ղազա_րին. 157:

ԻԶ. Ի զգուշութիւն մեծատանց և ՚ի սփոփանս աղքատաց. 166:

ԻԷ. Զզօրութենէ յարատև աղօ_թից. 178:

ԻԸ. Զկերպէ աղօթից. 184:

ԻԹ. Զերկայնմտութէն այ. 188:

Լ. Զարքայութենէ Տեառն մե_րոյ. 194: